

Էմիլ Օրդուխանյան, Հայկ Սուքիասյան

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(ուսումնամեթոդական ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ
ԼԻՍՈՒՇ
2016

Երաշխավորված է տպագրության Խաչատուր Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական
խորհրդի որոշմամբ և Ժողովրդավարության և երկրաքաղաքական
հետազոտությունների կենտրոնի կողմից

Հեղինակներ՝	Էմիլ Օրդուխանյան, Հայկ Սուքիասյան
Սասնագիտական խմբագիր՝	Լ.Ղ. Շիրինյան (քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)
Գրախոսներ՝	Ա.Փ. Ենգոյան (քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) Տ.Տ. Քոչարյան (քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

Օրդուխանյան Է.

Օ-869 Քաղաքագիտություն (ուսումնամեթոդական ձեռնարկ)/ Է. Օր-
դուխանյան, Հ. Սուքիասյան.- Եր.: Լիմուշ, 2016.- 248 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են արդի քաղաքա-
գիտության հիմնական հասկացություններն ու գիտակարգերը: Ուսումնա-
մեթոդական ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, դասա-
խոսների, ինչպես նաև քաղաքագիտության արդի հիմնախնդիրներով
հետաքրքրվողների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏ -----	5
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ -----	24
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ -----	38
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -----	51
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ -----	68
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ -----	81
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 7. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -----	94
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 8. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԳԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ -----	104
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ -----	126
(Հայկ Սուքիասյան)	

ԹԵՄԱ 10. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ -----	136
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -----	146
(Էմիլ Օրդուխանյան)	
ԹԵՄԱ 12. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ-----	162
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 13. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ -----	176
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 14. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ---	188
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 15. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -----	200
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 16. ԳԼՈՒԲԱԼԱՅՈՒՄ -----	212
(Հայկ Սուքիասյան)	
ԹԵՄԱ 17. ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՊՈԼԻՏԻԿԱ) -----	225
(Հայկ Սուքիասյան)	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----	243

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏ

Քաղաքականությունը հետաքրքիր երևույթ է: Այն հետաքրքիր է նախ և առաջ այն պարզ պատճառով, որ բոլոր մարդիկ շատ տարբեր են: Մարդկանց միջև չկա համաձայնություն այն հարցերի շուրջ, թե ինչպես պետք է ապրել, ովքեր, ինչպես և ինչ պետք է ստանան հասարակությունից, ովքեր են արժանի իշխանության, և ինչպես պետք է բաշխվեն հասարակական ռեսուրսները, և, ի վերջո, որն է հասարակական կյանքի հիմքը՝ համագործակցությունը, թե կոնֆլիկտը: Մարդիկ շատ հաճախ չեն համաձայնվում այն հարցերում, թե ինչպես պետք է լուծվեն այդ խնդիրները, ինչպես պետք է մշակվեն հավաքական լուծումները, ովքեր և ինչպես պետք է արտահայտվեն այդ դեպքերում, և, ընդհանուր առմամբ, ինչպես մարդը կարող է ազդել հասարակական կյանքի վրա և այլն: Ըստ Արիստոտելի՝ այս ամենը քաղաքականությունը դարձնում է «արքայական գիտություն», որի օգնությամբ կարելի է բարելավել կյանքը և ստեղծել արժանապատիվ հասարակություն: Հետևաբար՝ քաղաքականությունն առաջին հերթին և գլխավորապես հասարակական գործունեություն է: Այն ենթադրում է մշտական երկխոսություն և ոչ երբևէ մենախոսություն: Քաղաքականություն կարող է լինել միայն այն ժամանակ, երբ կան երկու և ավելի կողմեր, այսինքն՝ այն ուղղված է դիմացինին, առանց որի անհնար է զբաղվել քաղաքականությամբ:

Քաղաքականության հիմքում ընկած տարաձայնությունները, բնականաբար, դրսևորվում են այն ժամանակ, երբ հարց է առաջանում, թե ինչպես պետք է ուսումնասիրել այդ առարկան: Այս դեպքում մենք նորից կանգնում ենք այն տարրնկալման առջև, թե, մասնավորապես, ի՞նչն է այս կամ այն հասարակական խնդիրը դարձնում «քաղաքական», ինչպե՞ս պետք է վերլուծել քաղաքական գործունեությունը և ինչպե՞ս լավագույնս բացատրել այն:

Քաղաքականության սահմանումը: Առավել ընդհանուր իմաստով՝ քաղաքականությունը գործընթաց է, որի շրջանակներում մարդիկ ստեղծում, պահպանում և հարստացնում են իրենց համակեցության կանոնները: Այդ իսկ պատճառով քաղաքականությունն անքակտելիորեն կապված է այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են՝ *կոնֆլիկտը* և *համագործակցությունը*: Դա այդպես է, քանի որ մի կողմից՝ հասարակության մեջ գոյություն ունեցող կարծիքների, կարիքների և շահերի միջև տարաձայնություններն անխուսափելիորեն հանգեցնում են համակեցության ընդհանուր կանոնների միջև տարաձայնությունների, իսկ մյուս կողմից՝ բոլորը հասկանում

են, որ այդ կանոնների փոփոխության կամ, գոնե, դրանց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցել: Այս համատեքստում Հաննա Արենդտը սահմանում է քաղաքական իշխանությունը որպես «համատեղ գործունեություն»: Ելնելով այս բոլոր պատճառներից՝ քաղաքականությունը հաճախ դիտարկում են կոնֆլիկտների կարգավորման գործընթացում, որն այս կամ այն կերպ ուղղված է տարամետ հայացքների և շահերի հաշտեցմանը: Հարկ է նշել, սակայն, որ, քաղաքականության այսպիսի լայն մոտեցման դեպքում քաղաքականությունը պետք է ընկալել ոչ այնքան որպես կոնֆլիկտների կարգավորում, որքան որպես այդ կոնֆլիկտների կարգավորման ուղիների որոնում, քանի որ, հասարակության մեջ գոյություն ունեցող ոչ բոլոր կոնֆլիկտներն են լուծվում կամ կարող են լուծվել: Հետևաբար՝ մի կողմից հասարակական բազմազանության (մենք բոլորս նման չենք իրար), իսկ մյուս կողմից՝ հասարակական ռեսուրսների սակավության (միշտ չէ, որ բոլորն ամեն ինչ ունեն) պատճառով՝ քաղաքականությունը միշտ կլինի մարդկային հասարակության անբաժանելի մասը:

Մակայն «քաղաքականություն» հասկացության իմաստի բացահայտման յուրաքանչյուր փորձ ենթադրում է երկու խնդիրների լուծում: *Առաջին* խնդիրը «քաղաքականություն» եզրույթի բազմիմաստությունն է, քանի որ, ի տարբերություն տնտեսագիտության, աշխարհագրության, պատմության կամ կենսաբանության, քաղաքականության մասին գրեթե բոլորն ունեն «սեփական տեսակետ»: Հաճախ կարելի է լսել, որ քաղաքականության ուսումնասիրությունն ամեննին անկողմնակալ գործ չէ, քանի որ այս առարկան անհնար է ուսումնասիրել առանց գուտ անձնական նախասիրությունների:

Երկրորդ խնդիրն էլ ավելի բարդ է, քանի որ ամենահեղինակավոր գիտնականները դեռևս չեն համաձայնվում այն հարցում, թե որն է քաղաքական գիտության ուսումնասիրության առարկան: Քաղաքականությունը սահմանվում է տարբեր ձևերով՝ որպես իշխանության իրականացում, որպես կոլեկտիվ որոշումների կայացում, որպես սահմանափակ ռեսուրսների բաշխում, որպես ձեռնածության (մանիպուլյացիայի) համակարգ և այլն: Ըստ Էնդրյու Հեյվուդի՝ քաղաքականությունը սահմանվում է որպես ***համակեցության առավել ընդհանուր կանոնների ստեղծում, պահպանում և հարստացում***, քանի որ քաղաքականությունը շատ ընդգրկուն է և ներառում է վերոնշյալ մեկնությունների մեծամասնությունը (եթե ոչ բոլորը):

Քաղաքականության հասկացությունը, լինելով բազմիմաստ, բովանդակում է բազմաթիվ միանգամայն ընդունելի նշանակություններ: Բացի այդ՝ չի կարելի նաև բացառել այն, որ տարբեր սահմանումները, այդ

թվում՝ նաև վերը նշվածները, արտացոլում են միննույն երևույթի միայն տարբեր ասպեկտները: Ինչ էլ որ լինի՝ անհրաժեշտ է շարունակել ուսումնասիրել «քաղաքականությունը», քանի որ այս դեպքում մենք գործ ունենք այդ երևույթն ուսումնասիրած և ուսումնասիրող գիտնականների միջև առկա ինտելեկտուալ և գաղափարախոսական տարաձայնությունների համեմատության հետ: Ուստի, այժմ առանձնացնենք քաղաքականության վերաբերյալ հետևյալ մոտեցումները՝

- քաղաքականությունը որպես պետության կառավարման արվեստ,
- քաղաքականությունը որպես հանրային գործընթաց,
- քաղաքականությունը որպես փոխզիջում և կոնսենսուս,
- քաղաքականությունը որպես իշխանություն և ռեսուրսների բաշխում:

Քաղաքականությունը որպես պետության կառավարման արվեստ:

«Քաղաքականությունը գիտություն չէ, այն արվեստ է», - ասել է Գերմանիայի կանցլեր Բիսմարկը: Այն արվեստը, որը նկատի ունեք Բիսմարկը, պետական կառավարման արվեստն է, հասարակության նկատմամբ պետական վերահսկողությունը, որը տեղի է ունենում կոլեկտիվ որոշումների ընդունման և իրականացման միջոցով: Սա քաղաքականության դասական ընկալումն է, որը սկիզբ է առել հին հույներից:

«Քաղաքականություն» եզրույթը ծագել է հունարեն **պոլիս** (polis) բառից, որը բառացիորեն նշանակում է «քաղաք-պետություն»: Գիտենք, որ Հին Հունաստանը բաժանված էր բազմաթիվ անկախ քաղաք-պետությունների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր կառավարման մարմինները: Այդ քաղաք-պետություններից ամենամեծն ու ամենաազդեցիկը Աթենքն էր, որն արդարացիորեն համարվում է պատմական ժողովրդավարության բնօրրանը: Հետևաբար՝ քաղաքականություն ասելիս պետք է հասկանալ այն ամենը, ինչը կապ ունի պոլիսի գործերի հետ: Այս մոտեցման արդի ընկալմամբ՝ քաղաքականություն ասելիս հասկացվում է այն ամենը, ինչը կապ ունի պետության հետ: Քաղաքականության այսպիսի ընկալումը հաճախ արտացոլվում է առտնին խոսքում, երբ օրինակ՝ ինչ-որ մեկը ստանում է որևէ պետական պաշտոն, ասում են՝ «*նա մտել է քաղաքականություն*»:

Այսօր քաղաքականության նույնականացումն այն ամենի հետ «ինչը վերաբերում է պետությանը», կարծես թե, ինչ-որ չափով առարկայի ընկալման հնացած մոտեցում է, որն արտացոլում է ակադեմիական գիտության վաղեմի հակվածությունը ուշադրությունը կենտրոնացնելու այն բանի վրա, թե ով և ինչպես է աշխատում իշխանական մարմիններում: Քաղաքականության ուսումնասիրության այս մոտեցումը, փաստորեն, նշանակում

է ուսումնասիրել կառավարությունը կամ ավելի լայն՝ իշխանության իրականացումը: Այս ավանդույթը, մասնավորապես, նկատվում է հայտնի ամերիկացի քաղաքագետ Ռեյվիդ Իսթոնի աշխատություններում, ով քաղաքականությունը սահմանում է որպես «արժեքների բաշխում, որն իրականացնում են իշխանությունները»: Այստեղ ենթադրվում է, որ քաղաքականությունը ներառում է միայն այն գործընթացները, որոնց միջոցով կառավարությունը, արձագանքելով հասարակական ճնշմանը, իրականացնում է բարիքների և արժեքների բաշխումը կամ, հակառակը, դիմում է բացասական բնույթի միջոցառումների, իսկ որպես արժեքներ՝ ընկալվում են այն բարիքները, որոնք ընդունված և ճանաչված են հասարակության կողմից որպես պարտադիր: Այս դեպքում քաղաքականության ընկալումն ավելի շուտ մոտենում է անգլերեն «policy» հասկացությանը, որը նշանակում է պաշտոնական որոշումների ամբողջություն, որոնցով իշխանությունը սահմանում է հասարակության գործունեության ուղղությունը:

Այս մոտեցման ակնհայտ թերությունը նրա նեղ իմաստն է: Մտացվում է, որ քաղաքականությունը վերաբերում է միայն հասարակության այն կազմակերպությունների համակարգին, որոնք կենտրոնացած են իշխանության ապարատի շուրջ: Այսպիսի ընկալմամբ՝ քաղաքականությունը իրականացվում է պաշտոնյաների աշխատասենյակներում, օրենսդիր պալատներում, կառավարական գերատեսչություններում, իսկ այն իրականացնում են մարդկանց փոքր և հատուկ խմբերը՝ քաղաքական գործիչները, պաշտոնատար անձինք, լոբբիստները: Մարդկանց մեծամասնությունը, ինստիտուտների և հասարակական գործունեության մեծ մասը դիտվում են քաղաքականությունից դուրս: Գործարարությունը, տեղական ընկերությունները, ընտանիքը, դպրոցը և մյուս կրթական հաստատություններն այս դեպքում ընկալվում են որպես «ոչ քաղաքական» կառույցներ, որոնք որևէ կերպ կապ չունեն «երկրի կառավարման» հետ: Պետական ապարատի հետ քաղաքականության նույնացումը դուրս է թողնում նաև միջազգային բնույթի գործոնները, որոնք ներառում են այն գլոբալ ուժերը, որոնք այսօր ավելացող տեմպերով ներազդում են մեր կյանքի վրա, օրինակ՝ անդրսահմանային տեխնոլոգիաները և վերազգային կորպորացիաները:

Վերը նշված մոտեցման դեպքում խնդիրը նաև այն է, որ, ըստ էության, դրանում նկատվում է նույնիսկ ավելի նեղ միտում. հավասարեցնել ամբողջ քաղաքականությունը կուսակցական քաղաքականության հետ: Հենց այս համատեքստում կուսակցական գործիչներին դասում են «քաղաքական», իսկ քաղաքացիական ծառայողներին «ոչ քաղաքական» գործիչների շարքին: Նույն կերպ, դատավորները ևս համարվում են «ոչ քաղաքական»

գործիչներ, որոնց խնդիրն է մեկնաբանել օրենքները անաչառ և փաստերին խիստ համապատասխան: Մակայն նրանց ևս կարող են մեղադրել «քաղաքականության» մեջ, եթե նրանց որոշումների վրա ազդում են անձնական նախասիրությունները կամ որևէ այլ միտում:

Քաղաքականությունը պետության հետ նույնացնելը բացատրում է նաև այն, թե ինչու հասարակության աչքերում շատ հաճախ քաղաքական գործունեությունը ներկայանում է զուտ բացասական լույսի ներքո, իսկ մարդիկ քաղաքական գործիչների մասին երբեմն խոսում են շատ անհարգալից: Դա տեղի է ունենում միայն այն պատճառով, որ առօրյա գիտակցությունը հակված է հավասարեցնել քաղաքականությունը այս կամ այն քաղաքական գործչի գործունեությանը: Մեզ բոլորիս ծանոթ է իշխանության ծարավ ունեցող փարիսեցի քաղաքական գործչի կերպարը, ում համար առավել կարևոր են սեփական հավակնությունները: Այսօր, ավելին, քան երբևէ, ավելի տիպային է այդ կերպարը, քանի որ արդի ՁԼՄ-ներն ավելի հեշտորեն են ուղղում հանրության ուշադրությունը պետական կառույցների կոռուպացվածության և անազնվության փաստերի վրա՝ քաղաքականության մասին ձևավորելով բացասական ընկալում: Այս ամենը հող է նախապատրաստում **հակաքաղաքականության** (antipolitics) համար: Հաճախ այս առումով հիշատակվում են Նիկոլո Մաքիավելիի աշխատանքները, ով իր «Տիրակալը» (1531) գրքում ցույց է տվել իր ժամանակի տիրակալների նեեզության, դաժանության ու խորամանկության շատ իրական պատկերը:

Քաղաքականությունը որպես հանրային գործընթաց: Քաղաքականության երկրորդ և փոքր-ինչ ավելի լայն ընկալումը դուրս է բերում քաղաքականությունը կառավարչական ոլորտից դեպի «հասարակական կյանքի» կամ «հասարակական գործունեության» ոլորտ: Այս մոտեցման համաձայն՝ «քաղաքականի» և «ոչ քաղաքականի» միջև տարբերությունը համընկնում է կյանքի *հանրային (հասարակական)* և *մասնավոր* ոլորտների միջև տարբերության հետ: Քաղաքականության վերաբերյալ այս տեսակետը բխում է հայտնի հույն փիլիսոփա Արիստոտելի գաղափարներից: Իր՝ «Քաղաքականություն» աշխատության մեջ նա նշում է, որ «մարդն իր բնությամբ քաղաքական էակ է», և մարդիկ կարող են «արժանապատիվ կյանք» վարել միայն այնպիսի հասարակությունում, որտեղ կա քաղաքականություն՝ քաղաքական համայնք: Այստեղ քաղաքականությունը ներկայանում է գերազանցապես իր բարոյական առումով, որտեղ այն դիտվում է որպես «արդար հասարակություն» ստեղծելու գործընթաց. այն, ինչ Արիստոտելն անվանել է «արքայական գիտություն»:

Այստեղ հարց է առաջանում. որտե՞ղ է «հանրային» և «մասնավոր» կյանքի միջև սահմանը: Սովորաբար ասում են, որ այդ սահմանը պետության և քաղաքացիական հասարակության միջև է: Պետական ինստիտուտները (կառավարությունը, խորհրդարանը, դատարանները, ոստիկանությունը, բանակը, սոցիալական պաշտպանության համակարգ և այլն) մենք համարում ենք «հանրային», քանի որ դրանք պատասխանատու են հասարակական կյանքի կոլեկտիվ կազմակերպման համար, և, միևնույն ժամանակ, դրանք ֆինանսավորվում են հասարակության հարկման միջոցով: Իսկ քաղաքացիական հասարակությունը, ինչպես նշում է Էդմունդ Բյորկը Բադկասած է «փոքր բջիջներից», , այսինքն՝ այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ ընտանիքը, ազգակցական համայնքները, մասնավոր ձեռնարկությունները, արհմիությունները, տեղական համայնքները և այլ նմանատիպ կառույցներ: Դրանք համարվում են «մասնավոր», քանի որ ստեղծվում և պահպանվում են մասնավոր անձանց կողմից իրենց սեփական շահերի իրացման նպատակով: Հանրայինի և մասնավորի տարանջատման տեսանկյունից քաղաքականությունն ընկալվում է որպես պետական և հասարակական կառույցների գործունեություն: Այս դեպքում մենք կրկին կանգնում ենք այն փաստի առաջ, որ մարդկային գործունեության այն ձևերը, որտեղ մարդիկ կարող են լուծել իրենց խնդիրները սեփական ուժերով (տնտեսական, սոցիալական, կենցաղային, անձնական, մշակութային և այլ ոլորտներում) դիտվում են ակնհայտորեն «ոչ քաղաքական»:

Իր բոլոր տարբերություններով հանդերձ՝ պետության համեմատությամբ քաղաքացիական հասարակությունը, այնուամենայնիվ, ներառում է «հանրային» մի շարք ինստիտուտներ, որոնք բաց կառույցներ են, գործում են հրապարակայնորեն և միշտ հասանելի են հասարակությանը (օրինակ՝ տնտեսական ինստիտուտները): Այս պարագայում ամենակարևորն այն է, որ տնտեսության փոխանցումը մասնավորից դեպի հանրային ոլորտ զգալիորեն ընդլայնում է «քաղաքականի» մասին մեր ընկալումը: Մենք այսպես, թե այնպես գիտենք, որ քաղաքականությունն իր տարբեր դրսևորումներով գոյություն ունի ամենուր, նույնիսկ մեր աշխատավայրում: Չնայած այն բանին, որ քաղաքականության վերաբերյալ այս մոտեցումը ներառում է և՛ հանրային, և՛ մասնավոր ինստիտուտները, այնուամենայնիվ՝ այն ևս շարունակում է մնալ քաղաքականության ընկալման սահմանափակ մոտեցում: Բանն այն է, որ այս մոտեցման համաձայն՝ քաղաքականությունը ոչ մի կերպ չի ազդում և չպետք է ազդի զուտ «անձնական» գործերի և հարաբերությունների վրա: Մակայն երբ ի հայտ եկավ ֆեմինիզմը, ապա պարզ դարձավ, որ քաղաքականությունն ամեննին էլ չի ավարտվում «տան

նախաշենին»։ այն ազդում է նաև ընտանեկան, կենցաղային և անձնական հարաբերությունների վրա:

Քաղաքականության՝ որպես հասարակական գործունեության հայեցակարգը, իհարկե, միշտ էլ ունեցել է և՛ կողմնակիցներ, և՛ ընդդիմախոսներ: Ըստ Արիստոտելի՝ քաղաքականությունը դիտարկվում է որպես ազնիվ և լուսավորյալ գործունեություն հենց այն պատճառով, որ ունի «հանրային» բնույթ: Ավելի ուշ այս ավանդույթը շարունակեց Հաննա Արենդտը, ով իր «Մարդու գոյության պայմանները» (1958) աշխատանքում գրել է, որ քաղաքականությունը մարդու գործունեության ամենակարևոր ձևն է, քանի որ այստեղ մենք գործ ունենք ազատ ու հավասար քաղաքացիների հարաբերությունների հետ: Նմանատիպ մտքեր են արտահայտել նաև այլ մտածողներ, ինչպես օրինակ՝ Ժան-Ժակ Ռուսոն և Ջոն Ստյուարտ Միլը, ովքեր նույնպես պնդում էին, որ մասնակցությունը քաղաքական կյանքին ինքնին մարդու արժանապատվությունն է և բարիքը: Ռուսոն կարծում էր, որ միայն բոլոր քաղաքացիների ուղղակի և շարունակական մասնակցությունը պետության քաղաքական կյանքին կարող է ծառայել համընդհանուր բարիքին, ինչը նա անվանում էր «ընդհանուր կամք»: Միլը հանրային գործերին մարդու մասնակցությունը դիտում է որպես լուսավորման գործընթաց, որը նպաստում է նրա բարոյական և մտավոր զարգացմանը:

Այս տեսակետին հակադրվում է մեկ այլ տեսակետ, ըստ որի՝ հանրային քաղաքականությունը ներկայանում է որպես մարդու կյանքին միջամտելու չար և անախորժ մի ձև: Այստեղ, մասնավորապես, խոսքը ծայրահեղ լիբերալիզմի տեսաբանների մասին է, ովքեր մշտապես քաղաքացիական հասարակությունը ավելի բարձր են դասում պետությունից հիմնվելով այն գաղափարի վրա, որ «մասնավոր» կյանքն ընտրության, անձնական ազատության և անձնական պատասխանատվության բնագավառ է: Այսօր այս մտեցումն առավելապես դրսևորվում է «քաղաքական» բնագավառը մասնավոր գործունեության ձևերից (օրինակ՝ բիզնես, սպորտ կամ ընտանեկան կյանք) սահմանափակելու կոչերում: Քանի դեռ քաղաքականությունը միջամտում է այն հարցերին, թե ինչպես են ընկերությունները զբաղվում բիզնեսով, ինչպես և ում հետ են մարդիկ զբաղվում սպորտային զվարճանքներով, ինչպես են ծնողները դաստիարակում երեխաներին, նույնիսկ խոսք անգամ չի կարող լինել, որ ծայրահեղ լիբերալիզմի կողմնակիցները քաղաքականությունը ճանաչեն որպես «բարիք»:

Քաղաքականությունը որպես փոխզիջում և կոնսենսուս: Քաղաքականության երրորդ հայեցակարգը վերաբերում է ոչ թե դրա իրականացման ոլորտին, այլ որոշումների կայացման գործընթացին: Քաղաքականությունը դիտվում է որպես փոխզիջման, բանակցությունների և այլ համա-

ձայնողական բնույթի միջոցառումների օգնությամբ հակամարտությունների կարգավորման միջոց, որ դեմ է ուժի կիրառմանը: Հենց այս հայեցակարգը նկատի ունենալով էլ ասում են, որ «քաղաքականությունը արվեստ է հնարավորի մասին»: Քաղաքականության մասին նման պատկերացումը դրսևորվում է նաև առօրեական խոսույթում (դիսկուրսում), երբ խոսում են խնդրի «քաղաքական» լուծման մասին՝ նկատի ունենալով խաղաղ բանակցությունները՝ ի տարբերություն «ուժային» կամ «ռազմական» լուծումների: Ինչպես շատ այլ ավանդույթներ, այս մեկը ևս բխում է Արիստոտելի՝ «պոլիտիան» որպես կառավարման լավագույն ձև սկզբունքից, որը միավորում է օլիգարխիայի և ժողովրդավարության լավագույն տարրերը: Մեր ժամանակներում այս ավանդույթի առաջատար կողմնակիցներից է Բեռնարդ Կրիկը, ով իր՝ «Ի պաշտպանություն քաղաքականության» դասական աշխատանքում գրում է, որ քաղաքականությունը գործունեություն է, որի դեպքում կողմերի միջև առկա շահերի բախումը լուծվում է այն ժամանակ, երբ յուրաքանչյուր կողմին տրվում է իշխանության և ռեսուրսների այն մասը, որը համապատասխանում է նրա բարեկեցության և համայնքի գոյատևման կարևորությանը:

Տվյալ դեպքում քաղաքականության հանգուցային տարրն իշխանության (ուժի) ապակենտրոնացումն է, և որքան այն ընդարձակ է, այնքան ավելի լավ է: Ելնելով այն հանգամանքից, որ շահերի բախումը շարունակական է՝ Բ. Կրիկը ցույց է տալիս, որ հաշտեցման գործընթացը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ կոնֆլիկտի կողմերը տիրապետում են որոշակի իշխանության, քանի որ հակառակ դեպքում, կողմերից մեկը կարող է պարզապես ձնշել մյուսին: Այս համատեքստում քաղաքականությունը բնորոշվում է որպես «այնպիսի լուծում, երբ ընտրությունը կատարվում է հօգուտ հաշտեցման, այլ ոչ թե բռնության և հարկադրանքի»: Այստեղ մենք տեսնում ենք հավատարմությունը լիբերալ-ռացիոնալիստական սկզբունքներին և հավատը հասարակական բանավեճի գործունակությանը, ինչպես նաև տեսնում ենք, որ հասարակությունն ավելի շուտ կողմնակից է համերաշխությանը և ներդաշնակությանը, այլ ոչ թե կոնֆլիկտին: Իսկ եթե հասարակության մեջ առաջանում են կոնֆլիկտներ, ապա դրանք կարելի է լուծել առանց բռնության կամ բռնության սպառնալիքի: Այնուամենայնիվ, Բ. Կրիկի այս տեսակետն արդարացի քննադատության արժանացավ նրա ընդդիմախոսների կողմից, ովքեր նկատում են, որ նա տարվել է արևմտյան պլյուրալիստական ժողովրդավարությունների փորձով և, ըստ էության, նույնացրել է քաղաքականությունն այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են՝ ընտրական գործընթացը և կուսակցական մրցակցությունը: Իսկ ինչ վերաբերում է միակուսակցա-

կան պետություններին կամ ռազմական բռնապետություններին, ապա այս հարցերում նրա այս տեսակետը քիչ բան է պարզաբանում:

Առաջնահերթությունը տալով փոխզիջմանը և կոնսենսուսին՝ այս մոտեցումը քաղաքականությունը բացատրում է զուտ դրական լույսի ներքո: Ո՛չ, այն չի դիտարկվում որպես բոլոր խնդիրների «ուտոպիստական» կատարյալ լուծում (ի վերջո՝ փոխզիջումը, ըստ էության, նշանակում է զիջումներ բոլոր կողմերից, որոնցից յուրաքանչյուրը կորցնում է ինչ-որ բան): Սակայն ինչ էլ, որ լինի, այս մոտեցումն ավելի նախընտրելի է մյուս բոլոր այլընտրանքներից, որոնք միշտ հղի են բռնությամբ և արյունահեղությամբ: Այս մոտեցման համաձայն՝ քաղաքականությունը հանդես է եկել որպես քաղաքակիրթ ու քաղաքակրթող, որը խթանում է քաղաքացիների քաղաքական մասնակցությունը: Սակայն Բ. Կրիկը նշում է, որ այսպիսի քաղաքականության մեջ ևս ընթանում է պայքար, որտեղ գլխավոր սպառնալիքը ցանկացած գնով ամեն ինչի որոշակիացումն ու պարզեցումն է: Արդյո՞ք դա դրսևորվում է ժողովրդավարությանը կույր նվիրվածության, քաղաքական գաղափարախոսությունների կեղծ պարզության, կատաղի ազգայնամոլության և, վերջապես, գիտությանն ուղղված վերջնական ճշմարտության պահանջների մեջ:

Քաղաքականությունը որպես իշխանություն և ռեսուրսների բաշխում:

Քաղաքականության չորրորդ հայեցակարգը միաժամանակ ամենալայնն է և առավել արմատականը: Այս դեպքում քաղաքականությունը չի հանգեցվում որևէ ստույգ ոլորտի՝ լինի դա կառավարությունը, պետությունը, թե «հանրային» կյանքը: Քաղաքականությունը առկա է հասարակական գործունեության բոլոր բնագավառներում, ավելին՝ «ամեն անկյունում»: Ինչպես պնդում է Ադրիան Լեֆտվիչն իր՝ «Ի՛նչ է քաղաքականությունը: Քաղաքական գործունեությունը և դրա ուսումնասիրությունը» (1984) աշխատանքում, «Քաղաքականությունը գտնվում է հասարակական գործունեության (ինչպես պաշտոնական և ոչ պաշտոնական, հանրային և մասնավոր) կենտրոնում, այն առկա է բոլոր սոցիալական խմբերում, ինստիտուտներում և հասարակություններում»: Մենք տեսնում ենք քաղաքականություն հասարակական հարաբերությունների ողջ հյուսվածքում՝ թե՛ ընտանիքում, թե՛ փոքր խմբերում կամ ընկերական շրջապատում, մյուս կողմից՝ նաև ազգային և միջազգային հարաբերություններում: Հետևաբար՝ հարց առաջանում է, թե ինչո՞վ է տարբերվում քաղաքական գործունեությունը մարդկային գործունեության այլ ձևերից, ո՞րն է դրա առանձնահատկությունը:

Այս մոտեցման շրջանակներում տվյալ հարցի պատասխանը հետևյալն է՝ քաղաքականությունը կապված է հասարակության կենսապահովման

համար անհրաժեշտ արտադրության, ռեսուրսների բաշխման և օգտագործման հետ: Մեծ հաշվով՝ խոսքը իշխանության մասին է, այսինքն՝ «ձեռք բերել ամենը» այս կամ այն, կամ էլ ցանկացած միջոցներով: Այս գաղափարը կատարելապես ամփոփված է Հարոլդ Լասվելի գրքի վերնագրում «Քաղաքականություն: Ով ինչ է ստանում, երբ և ինչպես» (1936):

Մարքսիզմը բնութագրում է քաղաքականությունը հասարակության երկու շերտերի՝ «վերնաշենքի» և «բազիսի» տեսանկյունից: Ինքը՝ Մարքսը, քաղաքականությունը նախապես ընկալում էր դասական ձևով՝ այն կապելով պետական ապարատի հետ: Քաղաքական իշխանությունը նա բնորոշում է որպես մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու իշխանություն: Հետագայում, զարգացնելով իր տեսությունը՝ նա քաղաքական հարաբերությունները իրավական և մշակութային հարաբերությունների հետ մեկտեղ տեղավորում է «վերնաշենքում», որը վեր է խոյանում տնտեսական «բազիսի» վրա, ինչը հասարակության իսկական հիմքն է: Ըստ Մարքսի՝ տնտեսական «բազիսը» և «վերնաշենքը» փոխկապակցված են. «վերնաշենքը» ձևավորվում է «բազիսից» և արտացոլում է վերջինիս:

Վերը նշված մոտեցումներում քաղաքականությունը հիմնականում բնորոշվում է որպես մարդու դեմ ուղղված թշնամական ուժ: Այն միշտ ումանց կողմից մյուսներին ճնշելու և ենթարկելու գործընթացն է: Արմատական ֆեմինիզմի տեսանկյունից այդ ուժն ուղղված է կնոջը տղամարդու մշտական ենթակայության տակ պահելուն: Ըստ մարքսիզմի՝ դա այն ուժն է, որը հնարավոր է դարձնում կապիտալիստական հասարակությունում բուրժուազիայի կողմից պրոլետարիատի շահագործումը: Բացի քաղաքականության բացասական ընկալումներից, այս տեսություններում առկա են նաև քաղաքականության դրական բնորոշումներ, օրինակ՝ քաղաքականությունը հասարակական անհավասարությունը հաղթահարելու գործիք է: Ըստ Մարքսի՝ պրոլետարիատի հեղափոխությունը պետք է մեկընդմիջտ վերջ դնի դասերի միջև անհավասարությանը: Ֆեմինիստները կոչ են անում սեռերի միջև փոխհարաբերությունների արմատական վերակառուցմանը: Ցանկացած դեպքում այս հոսանքներում քաղաքականությունը դիտվում է որպես հասարակական կեցության անբաժան մասը:

Քաղաքականության ուսումնասիրության մոտեցումների շարքում տարբերում են *փիլիսոփայական*, *էմպիրիկ* և *գիտական* ավանդույթները:

Փիլիսոփայական ավանդույթի տեսանկյունից քաղաքական միտքը ծագել է Հին Հունաստանում. հենց այստեղ է ծնունդ առել քաղաքական փիլիսոփայությունը, որը մեծ մասամբ ունեցել է էթիկական, կարգադրողական կամ, ինչպես այսօր են անվանում, նորմատիվ բնույթ: Այդ փիլիսոփայության հիմնադիրներն են համարվում Պլատոնը և Արիստոտելը:

Պլատոնին ավելի շատ հետաքրքրում էր կատարյալ (իդեալական) հասարակության գաղափարը, որի գլխում կանգնած է փիլիսոփա-միապետը: Արիստոտելը հասարակության մեջ կարևորում էր «ոսկե միջինի» գաղափարը, որի մարմնացումը նրա առաջարկած **պոլիտիան** էր: Միջին դարերում նորմատիվ փիլիսոփայության գաղափարները իրենց զարգացումը ստացան Օգոստինոս Երանելու (354-430) և Թովմա Աքվինացու (1225-1274) աշխատանքներում:

Այսպես ձևավորվեցին քաղաքականության ուսումնասիրության «ավանդական» մոտեցման նախահիմքերը, ինչը, ըստ էության, քաղաքական մտքի պատմությունն է իր ականավոր ներկայացուցիչների (Պլատոնից մինչև Մարքս) գլխավորությամբ: Այս մոտեցման գլխավոր մեթոդը գրական աղբյուրների քննադատական վերլուծությունն է, իսկ խնդիրը՝ այս կամ այն մտածողների գաղափարների պարզաբանումը, նրանց գաղափարների զարգացումը:

Չնայած այն բանին, որ *էմպիրիկ* կամ *նկարագրական ավանդույթը* համեմատաբար ավելի ուշ է ձևավորվել, քան տեսական ավանդույթը, այն ևս բխում է քաղաքական մտքի սկզբնաղբյուրներից: Դրա տարրերը մենք տեսնում ենք Արիստոտելի՝ պետական համակարգերի դասակարգման տիպաբանության փորձերում, Մաքիավելիի՝ «մանրուքները» պետական կառավարման իրողությունների վերածելու փորձերում, Մոնտեսքիոյի՝ կառավարման և իրավունքի սոցիոլոգիական տեսության մեջ: Շատ առումներով այդ աշխատանքներն այսօր հիմք են հանդիսացել համեմատական պետականագիտության ձևավորման համար: Այստեղ ուշադրության կենտրոնում են գտնվում քաղաքական ինստիտուտները: Օրինակ՝ ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում այն դարձել է քաղաքական գիտության զերակա ուղղություն: Այս մոտեցումը միշտ էլ փորձել է բացահայտել քաղաքական իրականության անաչառ և օբյեկտիվ պատկերը:

Առաջին տեսաբանը, ով փորձեց նկարագրել քաղաքականությունը *գիտական կատեգորիաներով*, Կարլ Մարքսն էր: Օգտագործելով իր, այսպես կոչված, պատմական մատերիալիզմի հայեցակարգը՝ Մարքսը փորձել է բացահայտել պատմական զարգացման շարժիչ ուժը, ինչպես նաև կանխատեսումներ անել ապագայի մասին՝ հիմնվելով, իր կարծիքով, այնպիսի «օրենքների» վրա, որոնք բնական գիտությունների օրենքների նման ևս ունեն գիտական կարգավիճակ:

Քաղաքական գիտությունն իր զարգացման բարձրակետին հասավ 1950-1980 թթ., երբ ամենուր՝ առավելապես ԱՄՆ-ում, մշակվեց քաղաքական վերլուծության մի ձև, որը բխեցվեց **բիենիորիզմից** (վարքաբանություն): Առաջին անգամ քաղաքագիտությունը տրվեց հուսալի գիտական

կարգավիճակ, որը չկար նախկինում, այսինքն՝ օբյեկտիվություն և քանակապես ստուգելի տվյալներ, որոնցով հնարավոր էր ստուգել ցանկացած վարկած: Այնպիսի քաղաքագետներ, ինչպես օրինակ՝ Դեյվիդ Իսթոնը, հայտարարեցին, որ քաղաքական գիտությունն այժմ կարող է ընդունել բնական գիտությունների մեթոդաբանությունը, ինչն էլ զարկ տվեց քանակական վերլուծության սկզբունքներին առավել համահունչ հետազոտությունների տարածմանը, ինչպիսիք են՝ քվեարկության ժամանակ, օրենսդրական ոլորտում, տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքական գործիչների և լոբբիստների վարքագծի հետազոտությունները:

Քաղաքականությունը՝ որպես մարդու կենսագործունեության հատուկ բնագավառ, գործում է հետևյալ մակարդակներում՝ 1) **Մեզաքաղաքական**՝ կարգավորում է միջպետական և ինքնիշխան պետությունների և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Եվրամիություն, Եվրախորհուրդ, ՆԱՏՕ և այլն) հարաբերությունները: Այս մակարդակում քաղաքականության սուբյեկտներն ու գործակալություններն են ինքնիշխան պետությունները, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները: 2) **Մակրոքաղաքական**՝ կարգավորում է տարբեր պետությունների ներսում ծագած կոնֆլիկտային հարաբերությունները: 3) **Մեզոքաղաքական**՝ բնութագրում է առանձին տարածաշրջանների տեղային կառույցներում և ինստիտուտներում ձևավորված խմբային բնույթի կապերն ու հարաբերությունները: 4) **Միկրոքաղաքական**՝ անհատների քաղաքական առումով էական հարաբերությունները, որոնց կարգավորումը պահանջում է պետության միջամտություն: Յուրաքանչյուր մակարդակում ձևավորվում են կոնֆլիկտների և վեճերի լուծման յուրահատուկ ինստիտուտներ, մեխանիզմներ և տեխնոլոգիաներ: Ընդ որում՝ յուրաքանչյուր մակարդակ ունի հարաբերական ինքնուրույնություն:

Քաղաքագիտության առարկան: Ինչպես յուրաքանչյուր գիտություն, քաղաքական գիտությունը ևս ունի իր հետազոտության **օբյեկտն** ու **առարկան**: Մակայն հարկ է նկատել, որ մասնագետները քաղաքագիտության օբյեկտի և առարկայի վերաբերյալ դեռևս չունեն միանշանակ կարծիք: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ այսպիսի մոտեցումը պայմանավորված է քաղաքական գիտության ազգային և տարածաշրջանային դպրոցների ու ուղղությունների ավանդույթներով և առանձնահատկություններով, որոնք էլ հենց ձևավորել են ժամանակակից քաղաքագիտությունը: Ըստ այդ ավանդույթների և առանձնահատկությունների՝ տարբերում են քաղաքական գիտության օբյեկտի և առարկայի վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ:

Առաջին մոտեցման համաձայն՝ քաղաքագիտության օբյեկտը քաղաքականության ինստիտուցիոնալ ասպեկտն է, իսկ առարկան՝ պետության կառուցվածքը և գործունեությունը, պետական իշխանության իրականացման մեխանիզմները և վերջինիս վրա ազդեցության ձևերը:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ քաղաքագիտության օբյեկտը հասարակության քաղաքական բնագավառն է, նրանում տեղի ունեցող բոլոր գործընթացները և երևույթները, իսկ առարկան՝ քաղաքական իշխանության ձևավորման և զարգացման օրինաչափությունները, նրա գործառնության ձևերը և մեթոդները:

Այս երկու մոտեցումների համադրության արդյունքում քաղաքագիտության օբյեկտը սահմանվում է որպես *հասարակության կենսագործունեության քաղաքական ոլորտում առկա կայուն և կրկնվող երևույթների և գործընթացների ամբողջություն*: Իսկ քաղաքագիտության առարկան սահմանվում է որպես *քաղաքական իշխանության կայացման, գործառնության, փոփոխության և զարգացման օրինաչափությունների ամբողջություն*: ***Այսպիսով՝ քաղաքագիտությունը հասարակության սոցիալական բազմազանության պայմաններում քաղաքական իշխանության առաջացման, գործառնության, փոփոխության և զարգացման օրենքների և օրինաչափությունների մասին գիտություն է:***

Քաղաքագիտության որպես առանձին գիտության ճշգրտման հիմնախնդիրը քննության առնվեց 1948 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների համատեղ ժողովում, որտեղ փորձագետներն ընդունեցին հատուկ բանաձև, որը սահմանում էր քաղաքագիտության հետազոտությունների շրջանակները չորս հիմնախնդիրների վերաբերյալ. 1) քաղաքական տեսության և քաղաքական գաղափարների պատմություն, 2) քաղաքական ինստիտուտներ, 3) կուսակցություններ, խմբեր, հասարակական կարծիք, ընտրություններ, տեղեկատվություն, քարոզություն, 4) միջազգային հարաբերություններ և արտաքին քաղաքականություն:

Քաղաքագիտության գործառույթները: Որպես կանոն՝ այս կամ այն գիտության գործառույթների մասին խոսելիս պետք է հասկանալ, թե ինչ դեր է այն կատարում հասարակության պահանջների տեսանկյունից: Քաղաքագիտության գործառույթների շարքում հարկ է առանձնացնել հետևյալները՝

- ճանաչողական,
- կանխատեսման,
- աշխարհայացքային,
- մեթոդաբանական,
- կարգավորիչ,

- արժեքաբանական,
- կազմակերպչական-տեխնոլոգիական,
- կառավարման:

Քաղաքագիտության դերը պայմանավորված է քաղաքականության գործառնության և զարգացման պահանջներով: Նորմալ գործառնող և աստիճանաբար փոփոխվող քաղաքականությունն իր կրողների ռացիոնալ, նպատակաուղղված և գիտակցված գործողությունների մշտական կարիքն ունի: Այդ գործողությունների արդյունավետությունը և օպտիմալությունը հիմնականում պայմանավորված են մարդկանց կողմից ձեռք բերվող գիտելիքների չափով և որակով: Քաղաքագիտությունը համակարգված ձևով մշակում և ձևավորում է քաղաքականության մասին գիտելիքներ և, հետևաբար, կատարում է *ճանաչողական գործառույթ*:

Հասարակությանն անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է իրեն սպասվում ապագայում: Այդ ապագան մեծ մասամբ կանխորոշվում է քաղաքական իշխանության զարգացման միտումներով, որոնց բացահայտումն օբյեկտիվորեն կատարում է *կանխատեսման գործառույթ*:

Հասարակական կյանքի կայունությունը պայմանավորված է նրա անդամների աշխարհայացքային պատկերացումներով: Այս իսկ պատճառով՝ քաղաքագիտությունը, նպաստելով տարբեր սոցիալական դասերի, շերտերի, խմբերի և հասարակության առանձին ներկայացուցիչների մոտ քաղաքական իրականության մասին որոշակի պատկերացման ձևավորմանը, իրականացնում է *աշխարհայացքային գործառույթ*:

Քաղաքագիտական գիտելիքները և եզրակացությունները կարող են հիմք ծառայել քաղաքական կյանքն ուսումնասիրող այլ գիտական դիսցիպլինների (գիտաճյուղ) համար: Այս դեպքում քաղաքագիտությունը կատարում է *մեթոդաբանական գործառույթ*:

Քաղաքագիտության *կարգավորիչ գործառույթն* այն է, որ քաղաքական իշխանության կայացման օրինաչափությունների և օրենքների, դրա գործառնության և զարգացման մասին գիտելիքների հաջող յուրացումն անմիջականորեն ազդում է քաղաքացիների քաղաքական վարքագծի վրա: Այդպիսով՝ քաղաքագիտությունը հնարավորություն է ստանում որոշակիորեն կարգավորել հասարակական հարաբերությունները:

Քաղաքագիտության կողմից մշակված չափորոշիչները թույլ են տալիս գնահատել հասարակության քաղաքական կյանքը, քաղաքական համակարգը, քաղաքական ինստիտուտները, քաղաքացիների քաղաքական վարքագիծը, քաղաքական գործընթացները և քաղաքականության այլ ասպեկտներ: Հասարակության կենսագործունեության քաղաքական իրո-

դությունների գնահատումը վերաբերում է քաղաքագիտության *արժեքա-
բանական գործառույթին*:

Քաղաքագիտության *կազմակերպչական-տեխնոլոգիական գործա-
ռույթը* թույլ է տալիս ստեղծել քաղաքական գործունեության տեխնոլոգիա-
ների ամբողջական շարք, որոնք սահմանում են ստույգ արդյունքների
հասնելու կարգը և հստակ կանոնները:

Քաղաքագիտության *կառավարման գործառույթը* թույլ է տալիս գտնել
ստույգ քաղաքական խնդիրների լուծման բանական և օպտիմալ միջոցներ:
Այս գործառույթի իրականացումը կապված է կառավարչական որոշումներ
կայացնող անձանց հասարակության քաղաքական հարաբերությունների
զարգացման միտումների մասին մշտական տեղեկատվության տրա-
մադրմամբ:

Վերը նշված գործառույթների իրականացումը թույլ է տալիս որակա-
պես և քանակապես ավելացնել քաղաքագիտական գիտելիքների համա-
կարգը: Այս գիտելիքները նախ և առաջ կենտրոնանում են քաղաքա-
գիտության *կատեգորիալ-հասկացական ապարատում*:

Կատեգորիալ-հասկացական ապարատում շատ կարևոր է ընդգծել
հիմնական, համակարգաստեղծ կատեգորիան: Այդպիսի կատեգորիան
կոչված է արտացոլելու քաղաքագիտության առարկայի որակը: Տվյալ
կատեգորիայի առանձնացման շնորհիվ՝ ձևավորվում է քաղաքագիտական
գիտելիքի ամբողջ համակարգի ստորակարգային կախվածության հիմքը,
իսկ հասկացական նյութի ողջ բազմազանությունը ստանում է ամբողջա-
կան և միասնական բնույթ:

Քաղաքագիտության համար այդպիսի կատեգորիա է համարվում
«**քաղաքական իշխանությունը**»: Այս կատեգորիան ճշգրտող կատեգո-
րիաներն են՝ քաղաքականությունը, քաղաքական համակարգը, քաղաքա-
կան կազմակերպման ձևը, պետությունը, քաղաքական կարգը, քաղաքա-
կան վարչակարգը, քաղաքական էլիտան, քաղաքական լիդերությունը,
քաղաքական մշակույթը, քաղաքական գործընթացը, քաղաքական գի-
տակցությունը և այլն:

Քաղաքագիտության կատեգորիաների ու հասկացությունների համա-
կարգը ներառում է տվյալ գիտության բոլոր գիտելիքները և ունի բարդ
կառուցվածք ու ստորակարգություն: Քաղաքագիտական գիտելիքների
ձեռքբերումն անհնար է առանց հատուկ գիտական մեթոդների օգտա-
գործման:

Քաղաքագիտական վերլուծության մեթոդներ: Քաղաքագիտության մեջ
օգտագործվում են հետազոտության տարբեր գիտական մեթոդներ, որոնք
բաժանվում են երեք խմբի:

Առաջին խմբին են դասվում ընդհանուր գիտական մեթոդները: Դրանք բնութագրվում են որպես **«ուսումնասիրվող օբյեկտին անմիջականորեն ուղղված»** մտտեցումներ, որոնց շարքում առանձնացվում են հետևյալները՝

- ինստիտուցիոնալ,
- սոցիոլոգիական,
- պատմական,
- համակարգային,
- բիհեիորիստական (վարքաբանական),
- նորմատիվային,
- հոգեբանական,
- մշակութաբանական,
- կառուցվածքային-գործառնական,
- դիալեկտիկական,
- համեմատական,
- էաբանական:

Ինստիտուցիոնալ մեթոդը թույլ է տալիս հետազոտել քաղաքական իրականությունը պաշտոնական իշխանական հարաբերությունների և քաղաքական որոշումների կայացման ձևական կանոնների վերլուծության միջոցով:

Սոցիոլոգիական մեթոդը օգնում է հասկանալ հասարակական կյանքի սոցիալական գործոններից քաղաքականության իրականացման մեխանիզմների և ձևերի կախվածությունը: Իշխանական հարաբերություններն այս դեպքում վերլուծվում են տարբեր սոցիալական դասերի, շերտերի և խմբերի փոխգործակցության տեսանկյունից, որոնք հետապնդում և իրականացնում են իրենց սեփական նպատակները, պահանջները և շահերը:

Պատմական մեթոդը կենտրոնացնում է հետազոտողների ուշադրությունն անցյալի, ներկայի և ապագայի քաղաքականության հաջորդական փոփոխությունների օրինաչափությունների վրա:

Համակարգային մեթոդն ուղղորդում է քաղաքագետներին հետազոտելու քաղաքականությունը որպես ամբողջություն, որը որոշակիորեն փոխկապակցված է հասարակական կյանքի այլ բնագավառների հետ:

Բիհեիորիստական (վարքաբանական) մեթոդի էությունը քաղաքականության հետազոտությունն է ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ սոցիալական խմբերի վարքագծի վերլուծության միջոցով:

Ըստ *նորմատիվային մեթոդի*՝ հասարակության քաղաքական կյանքը կարող է ներկայացվել որպես քաղաքականության սուբյեկտների կողմից իրացվող նորմերի և արժեքների համակարգ:

Հոգեբանական մեթոդը վերլուծում է մարդկանց քաղաքական վարքագծի սուբյեկտիվ մեխանիզմները՝ դրանց անհատական որակը, շարժառիթները, կրթերը, անգիտակցական հոգեկան գործընթացները, դրդապատճառները և բնավորության գծերը:

Մշակութաբանական մեթոդը բացահայտում է քաղաքական գործընթացների կախվածությունն այս կամ այն հասարակության մշակույթի զարգացվածության մակարդակից:

Կառուցվածքային-գործառնական մեթոդը դիտարկում է քաղաքականությունը որպես որոշակի կառույց, որի տարրերից յուրաքանչյուրը պետք է կատարի իրեն վերագրված գործառնությունները, ինչն ապահովում է հասարակության քաղաքական կյանքի ամբողջականությունը և նորմալ վերարտադրությունը:

Դիալեկտիկական մեթոդը թույլ է տալիս նկատել քաղաքական գործընթացներում տեղի ունեցող առաջընթաց և հետընթաց փոփոխությունները և ուսումնասիրել դրանց մեխանիզմները:

Համեմատական մեթոդը միշտ լայնորեն օգտագործվել է քաղաքագիտական հետազոտություններում: Այս մեթոդի շնորհիվ ժամանակակից քաղաքագիտության մեջ ձևավորվել է նոր ուղղություն՝ համեմատական քաղաքագիտությունը: Այս մեթոդի միջոցով համադրվում և համեմատության են ենթարկվում քաղաքական համակարգերը, քաղաքական վարչակարգերը, քաղաքական որոշումների ընդունման և իրացման տեխնոլոգիաները, ընտրագանգվածի վարքագիծը, տարբեր երկրների կուսակցական համակարգերը, ինչը թույլ է տալիս բացահայտել դրանց առանձնահատկությունները և ընդհանուր գծերը և գտնել վերջիններիս գործառնության և զարգացման համար առավել արդյունավետ և լավագույն տարբերակներ:

Էաբանական մեթոդը կարևորում է քաղաքական հարաբերությունների ծագման, գործառնության և զարգացման հիմքում ընկած էական հատկանիշների վերհանումը:

Մեթոդների *երկրորդ խումբը* վերաբերում է **«ոչ թե քաղաքական օբյեկտների հետազոտությանը, այլ՝ անմիջականորեն ճանաչողական գործընթացի կազմակերպմանը և ընթացքին»:**

Այս մեթոդները կոչվում են ճանաչողության ընդհանուր տրամաբանական հնարքներ, որոնք ներառում են՝ 1) վերլուծությունը և սինթեզը, 2) վերացարկումը, 3) ընդհանրացումը, 4) ինդուկցիան և դեդուկցիան, 5) նմանակումը, 6) մոդելավորումը:

Քաղաքագիտության մեջ օգտագործվող մեթոդների *երրորդ խումբը* ներառում է **«էմպիրիկ հետազոտության մեթոդները»:** Այս մեթոդները հիմ-

նականում ուղղված են քաղաքական իրականության մասին նախնական տեղեկությունների ձեռքբերմանը և մշակմանը: Էմպիրիկ մեթոդների շարքին են դասվում՝ 1) չափումը, 2) հարցումը, 3) հարցազրույցը, 4) կոնտենտ-վերլուծությունը, 5) կոդավորումը, 6) վիճակագրության օգտագործումը, 7) մեկնաբանությունը և այլն:

Այսպիսով՝ քաղաքագիտությունը հանդես է գալիս որպես գիտություն և որպես հասարակական-հումանիտար ցիկլի ուսումնական դիսցիպլին: Որպես գիտություն՝ այն ապահովում է հասարակության կենսագործունեության քաղաքական բաղադրիչի մասին գիտական գիտելիքի ձեռքբերման գործընթացը, իսկ որպես ուսումնական դիսցիպլին՝ կազմակերպում է տվյալ գիտելիքների ուսուցման գործընթացը:

Քաղաքագիտությունը գիտություն է հասարակության սոցիալական բազմազանության շրջանակներում քաղաքական իշխանության ծագման, կայացման, գործառնության, փոփոխության և զարգացման երևույթների, օրինաչափությունների և օրենքների մասին: Այն ունի որոշակի կառուցվածք և իրականացնում է ութ հիմնական գործառույթներ: Այդ գործառույթների իրականացման համար քաղաքագիտությունն օգտագործում է տարբեր մեթոդներ, որոնք բաժանվում են երեք մեծ խմբերի՝ 1) գիտական հետազոտության ընդհանուր մեթոդներ, 2) ճանաչողության ընդհանուր տրամաբանական հնարքներ, 3) էմպիրիկ հետազոտության մեթոդներ:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքականություն
- Քաղաքագիտություն
- Հակաքաղաքականություն
- Միկրոքաղաքականություն
- Մակրոքաղաքականություն
- Մեզոքաղաքականություն
- Մեգաքաղաքականություն

ՀԱՐՑԵՐ ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Եթե քաղաքականությունն իր էությանը սոցիալական է, ապա ինչու՞ ամբողջ հասարակական գործունեությունը քաղաքական չէ:
2. Ինչու՞ քաղաքականության մասին պատկերացումներն ունեցել և այսօր էլ ունեն բացասական ընկալումներ:
3. Արդյո՞ք հնարավոր է «քաղաքականության ավարտը»:

4. Արդյո՞ք հնարավոր է օբյեկտիվորեն ուսումնասիրել քաղաքականությունն առանց որևէ կողմնակալության:
5. Որո՞նք են քաղաքականության ընկալման հիմնական մոտեցումները:
6. Որո՞նք են քաղաքագիտության հիմնական հետազոտական ուղղությունները:
7. Որո՞նք են քաղաքագիտության ճանաչողական հնարավորությունները:
8. Որո՞նք են քաղաքագիտության օբյեկտի և առարկայի մասին մոտեցումների սկզբունքային տարբերությունները:
9. Ինչո՞վ է տարբերվում քաղաքագիտությունը հասարակական մյուս գիտություններից:
10. Ինչ գործառույթներ է իրականացնում քաղաքագիտությունը:
11. Որո՞նք են քաղաքագիտության էմպիրիկ մեթոդները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ղափրամանյան Կ.* Քաղաքագիտություն. բացատրական բառարան: Եր., 2003, 136 էջ:
2. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ*, Պրակ Ա, խմբ. Կ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
3. *Քաղաքագիտություն*: Հանրագիտական բառարան: Եր., 2004, 487 էջ:
4. *Քաղաքագիտություն*: Ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
5. *Аристотель*. Политика. Афинская полития. М., 1997, 487 с.
6. *Вебер М.* Политика как призвание и профессия, Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл. П. П. Гайдено. М., 1990, 808 с.
7. *Гаджиев К.* Политология. Базовый курс. Учебник. 2-е изд., перераб. и доп. М., 2001, 505 с.
8. *Демидов А., Федосеев А.* Основы политологии: Учеб. Пособие. М., 1995, 270 с.
9. *Жиро Т.* Политология. Пер. с польск, Харьков, 2006, 428 с.
10. *Кант И.* Метафизика нравов/Соч. 8, Т. 6. М., 1994, 550 с.
11. *Мухаев Р.* Политология. Учебник, М., 2009, 640 с.
12. *Смирнова А., Тишукова В.* Основы политологии. Учебно-методическое пособие для высших учебных заведений. Новгород, НовГУ им. Ярослава Мудрого, 2002, 166 с.
13. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского, М., 2005, 544 с.

ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պետության «ստվերն» ընկած է մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերի հիմքում: Պետությունը ձևավորում և վերահսկում է ամեն ինչ՝ կրթությունից մինչև տնտեսական կառավարում, սոցիալական աջակցության համակարգից մինչև առողջապահություն և ներքին կարգի պաշտպանությունից մինչև արտաքին անվտանգություն, իսկ որոշ դեպքերում էլ կարգավորում, թույլատրում կամ արգելում է մարդկանց գործունեության որևէ ձև: Նույնիսկ կյանքի այն ոլորտները, որոնք սովորաբար համարվում են անհատական կամ մասնավոր (ամուսնություն, ամուսնալուծություն, կրոն և այլն), այնուամենայնիվ, գտնվում են պետության տեսադաշտում: Ջարմանալի չէ, որ քաղաքական գիտությունը հաճախ ընկալվում է որպես պետության, նրա ինստիտուտների, հասարակության վրա նրա ազդեցության ուսումնասիրություն և վերլուծություն: Իսկ գաղափարական բանավեճերը (դրանց հետ մեկտեղ նաև կուսակցական քաղաքականությունը) ծավալվում են միշտ միևնույն հարցի շուրջ. ինչպե՞ս պետք է առավել ճշգրիտ որոշել պետության գործառնությունը, այսինքն՝ հասարակության մեջ ինչը պետք է արվի պետության կողմից, և ինչը պետք է թողնվի անհատական և հասարակական միավորումների հայեցողությանը: Այսպիսով՝ պետական իշխանության հարցը, ըստ էության, դարձել է քաղաքագիտության կենտրոնական խնդիրներից մեկը:

«Պետություն» եզրույթն ընկալվում է տարբեր նշանակություններով՝ որպես ինստիտուտների ամբողջություն, որպես աշխարհագրական հասկացություն, որպես փիլիսոփայական գաղափար, որպես հարկադրանքի կամ ճնշման գործիք: Այս աններդաշնակությունը մասամբ բխում է այն բանից, որ պատմականորեն ձևավորվել են պետության ընկալման երեք մոտեցումներ՝ *իդեալիստական*, *գործառնական* և *կազմակերպչական*: *Իդեալիստական* մոտեցումն առավելապես արտահայտված է Հեգելի աշխատանքներում, ով առանձնացնում է սոցիալական կեցության երեք «բաղադրյալ» ընտանիք, քաղաքացիական հասարակություն և պետություն: Ընտանիքում, նրա կարծիքով, գործում է «պարտիկուլյար (մասնավոր) ալտրուիզմը», որը ստիպում է մարդկանց մոռանալ իրենց շահերը հոգուտ իրենց երեխաների կամ տարեցների բարիքի: Ի հակադրություն դրան՝ քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս «համընդհանուր եսասիրության» սկզբունքով, որտեղ անհատն իր շահերը վեր է դասում մյուսների շահերից: *Գործառնական* մոտեցումը կենտրոնանում է պետական ինստիտուտների դերի և նպատակների հարցի վրա: Այս դեպքում պետության

հիմնական գործառույթն է դառնում հասարակական կարգի պահպանումը: Պետությունը, փաստորեն, սահմանվում է որպես հասարակական կարգն ու կայունությունն ապահովող ինստիտուտների ամբողջություն: Նման մոտեցումը, օրինակ, բնորոշ է ժամանակակից մարքսիստներին, ովքեր պետությունը դիտարկում են որպես մեխանիզմ, որի միջոցով ինչ-որ կերպ մեղմվում են դասային հակամարտությունները և կապիտալիստական համակարգի գոյատևումը: Պետության ընկալման գործառնական մոտեցման թույլ կողմն այն է, որ այս դեպքում, ըստ էության, պետության հետ նույնացվում է, առհասարակ, ցանկացած ինստիտուտ, որն աջակցում է կարգին (ընտանիք, ՁԼՄ-ներ, արհեստակցական միություններ և եկեղեցի):

Կազմակերպչական մոտեցման համաձայն՝ պետությունը հանդես է գալիս որպես կառավարման ապարատ, այսինքն՝ որպես խիստ ընդգծված «հանրային» բնույթ ունեցող ինստիտուտների համալիր, որոնք պատասխանատու են հասարակական կյանքի հավաքական կազմակերպման համար և ֆինանսավորվում են հասարակության հաշվին: Այս սահմանման առավելությունն այն է, որ վերջինս հստակորեն առանձնացնում է պետությունը և քաղաքացիական հասարակությունը: Պետությունը ընդգրկում է կառավարման տարբեր ինստիտուտները՝ բյուրոկրատիան, բանակը, ոստիկանությունը, դատարանները, սոցիալական աջակցության համակարգը և այլն: Այն, ըստ էության, կարելի է նույնացնել հասարակության «քաղաքական կառուցվածքի» հետ: Հետևաբար՝ ժամանակակից պետության ծագումը բխեցվում է 15-16-րդ դարերի Եվրոպայից, երբ ձևավորվեցին կենտրոնացված կառավարման համակարգերը, որոնք աստիճանաբար իրենց ենթարկեցին մյուս բոլոր՝ կրոնական և աշխարհիկ ինստիտուտներն ու կառույցները: Իսկ Վեստֆալյան հաշտության պայմանագրում 1648 թ.-ին առաջին անգամ ձևակերպվեց պետական ինքնիշխանության հասկացությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է տարբերակել պետության հինգ հիմնական հատկանիշներ

- Պետությունն *ինքնիշխան* է: Պետությունն ունի բացարձակ ու անսահմանափակ իշխանություն, քանի որ այն վեր է մյուս բոլոր հասարակական կառույցներից: Թոմաս Հոբսն արտահայտել է այս գաղափարը պետությունը ներկայացնելով որպես «լնիաթան», այսինքն՝ որպես մի հսկայական ծովահերձ:
- Պետական ինստիտուտները *«հանրային»* են՝ ի տարբերություն քաղաքացիական հասարակության «մասնավոր» ինստիտուտների: Հանրային մարմինները պատասխանատու են կոլեկտիվ որոշումների ընդունման և կենսագործման համար, մինչդեռ մասնավոր

կառույցները (ընտանիք, մասնավոր ձեռնարկություններ, արհեստակցական միություններ և այլն) ծառայում են մասնավոր շահերի բավարարմանը:

- Պետությունը **լեզդիսմացման** գործիք է: Պետության որոշումները (ի դեպ՝ ոչ միշտ) ընդունվում են հասարակության անդամների կողմից որպես պարտադիր, քանի որ համարվում է, որ դրանք բխում են հասարակության շահերից և համապատասխանում են համընդհանուր բարիքին: Ենթադրվում է, որ պետությունը մշտապես արտահայտում է հասարակության շահերը:
- Պետությունը **տիրապետության** գործիք է: Պետական իշխանությունը և պետական հեղինակությունն ուղեկցվում են հարկադրանքով: Պետությունը պետք է ապահովի օրենքների իրականացման բոլոր հնարավորությունները և պատժի օրինախախտներին: Հետևաբար՝ պետությունն ունի «օրինական բռնություն գործադրելու» մենաշնորհ (Մ. Վեբեր), որը նրա ինքնիշխանության գործնական դրսևորումն է:
- Պետությունը **տարածքային** միավորում է: Պետության իրավասությունն ունի աշխարհագրական սահմաններ և ներառում է իր սահմաններում բնակվող բոլոր մարդկանց՝ թե՛ տվյալ պետության քաղաքացիներին, թե՛ տվյալ պետության տարածքում գտնվող օտարերկրացիներին: Այդ իսկ պատճառով միջազգային ասպարեզում պետությունը դիտվում է որպես ինքնիշխան:

Պետությունը գոյություն ունի ոչ միայն քաղաքացիական հասարակությունից առանձին, այլև այն ներքուստ միասեռ չէ: Պետական ապարատը ներառում է գործադիր իշխանությունը կամ կառավարությունը, օրենսդիր իշխանությունը կամ խորհրդարանը, դատական իշխանությունը, բյուրոկրատական ապարատը, զինված ուժերը, ոստիկանությունը, տեղական և տարածաշրջանային ինստիտուտները և այլն: Ամենակարևոր տարբերությունը, ի դեպ, դրվում է «պետության» և «կառավարության» միջև. երկու հասկացություններ, որոնք հաճախ շփոթում են կամ նույնացնում:

Պետության և կառավարության միջև գոյություն ունեն հետևյալ սկզբունքային տարբերությունները՝

- Պետությունը ավելի **լայն** հասկացություն է, քան կառավարությունը: Պետությունը մեկ հսկայական կազմակերպություն է, որը ներառում է հանրային ոլորտի բոլոր ինստիտուտները և հասարակության բոլոր անդամներին (որպես իր քաղաքացիներ): Իսկ կառավարությունը պետության մասն է:

- Պետությունը պատմականորեն ձևավորված, նույնիսկ *մշտական* կատեգորիա է, իսկ կառավարությունները *ժամանակավոր* են, դրանք միշտ փոփոխվում և վերակառուցվում են:
- Կառավարությունը *միջոց* է, որով պետությունն իրականացնում է իր իշխանությունը: Մշակելով և կյանքի կոչելով պետական քաղաքականությունը՝ կառավարությունը հանդիսանում է պետության «ուղեղը», որն ապահովում է նրա գոյությունը:
- Պետությունը տեսականորեն արտահայտում է հասարակության մշտական շահերը՝ այն, ինչ անվանում են համընդհանուր բարիք կամ ընդհանուր կամք: Ի տարբերություն պետության՝ կառավարությունն արտահայտում է տվյալ պահին իշխանություն ունեցող կուսակցությունների նախասիրությունները:

Պետության ծագման տեսություններ: Մասնագիտական գրականության մեջ պետության ծագման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ: Այդ տեսություններից առավել կարևորներն են՝

- բնական տեսությունը,
- աստվածաբանական տեսությունը,
- պայմանագրային կամ հասարակական դաշինքի տեսությունը,
- բռնության տեսությունը,
- մարքսիստական տեսությունը:

Պետության ծագման **բնական տեսությունն** առաջացել է Հին Հունաստանում: Այսպես, Արիստոտելը կարծում էր, որ մարդիկ իրենց բնությամբ կատարելության ձգտող սոցիալական էակներ են: Ահա թե ինչու նրանք մշտապես համագործակցում են միմյանց հետ և անխուսափելիորեն ձևավորում են հասարակություն, իսկ հետո՝ նաև պետություն: Պետությունը ոչ միայն արտահայտում է մարդկանց համակեցության բնական ձգտումը, այլև նրանց համար հանդիսանում է բարոյական կատարելության հասնելու միջոց: Պետությունը կազմված է մարդկանցից, սակայն այն անհամեմատ ուժեղ է ցանկացած անհատից կամ խմբից: Հետևաբար՝ անհատի նկատմամբ պետության ուժը, իշխանությունը և գերակայությունը պետք է համարվեն նրա կարևորագույն հատկանիշները: Ի դեպ՝ հետաքրքիր է, որ պետության ծագման բնական տեսության որոշ տարրեր հետագայում փոխառվեցին ֆաշիզմի կողմնակիցների (մասնավորապես՝ Մուսոլինիի) կողմից, ովքեր շեշտը դրեցին իշխանության ինստիտուտի հզորության և ուժի սկզբունքների վրա:

Միջնադարում լայն տարածում ստացավ պետության ծագման **աստվածաբանական տեսությունը**, որի հեղինակները պետությունը համարում էին Աստծո արարչագործության արդյունք և նրա գերագույն կամքի դրսե-

վորում: Պետական իշխանության այսպիսի ըմբռնումը սահմանում էր, որ Աստված է ընտրում թագավորին՝ տալով նրան բացարձակ իշխանություն իր ենթակաների նկատմամբ: Ենթակաները պետք է անվերապահորեն ենթարկվեն երկրային տիրակալին նույնիսկ այն դեպքում, եթե նա բռնակալ է: Այս գաղափարը, միանալով եկեղեցու շահերին, մեկնաբանվում է «երկու սրերի» տեսությամբ, որի համաձայն՝ և՛ պետական, և՛ եկեղեցական իշխանությունները տրված են Աստծո կողմից, որոնցից առաջինն իրականացնում է իր աշխարհիկ, իսկ երկրորդը՝ հոգևոր իրավասությունը:

Պետության ծագման սեփական մեկնաբանությունը տվել է *պայմանագրային տեսությունը*, որը, հակադրվելով աստվածաբանական տեսությանը, հիմնվում է ժողովրդական իշխանության գաղափարի վրա, այսինքն՝ ժողովուրդը ճանաչվում է որպես պետական ինքնիշխանության հիմնական աղբյուր:

Հասարակական դաշինքի տեսությունը, ծագելով 17-18-րդ դարերում, առավել ընդհանուր ձևով պնդում էր այն գաղափարը, որ իշխողները և իշխվողները միմյանց նկատմամբ ունեն որոշակի պարտավորություններ, որոնք ծագել են այն ժամանակ, երբ ինքնիշխան ժողովուրդը համաձայնել է ստեղծել պետություն և իշխողներին է փոխանցել որոշ լիազորություններ: Այդպիսով՝ ճանաչվել է, որ մարդիկ կարող են տապալել կառավարությունը և պետությունը, եթե դրանք չեն ծառայում հասարակության նպատակներին:

Այսպես, Թ. Հոբսը պնդում էր, որ պետական իշխանությունը տրվում է ղեկավարներին, որպեսզի նրանք պահպանեն հասարակական կարգը և կանխեն «բոլորի պատերազմը բոլորի դեմ»: Միապետը պետության էության, նրա ինքնիշխանության մարմնավորումն է: Ահա թե ինչու քառսից և քաղաքացիների փոխադարձ մրցակցության կործանարար հետևանքներից խուսափելու համար, իշխանությունները պետք է մեծ առավելություն ունենան ժողովրդի նկատմամբ: Ի հակադրություն այս գաղափարներին՝ Ժ.-Մ. Ռուսոն և նրա համախոհները պետության մեջ վճռորոշ առավելությունը տալիս էին բնակչությանը՝ համարելով, որ հասարակական դաշինքը ենթադրում է իրավունք ու ժողովրդի անմիջական իշխանության անհրաժեշտություն, որը չի խախտում և չի սահմանափակում ընդհանուր հավաքական կամքը: Միննույն ժամանակ Ջ. Լոկը և նրա հետևորդները պնդում էին, որ պետությունը հասարակական դաշինքի շրջանակներում պետք է գտնվի ժողովրդի լիարժեք վերահսկողության ներքո և պետք է գործի հոգուս քաղաքացիների իրավունքների և ազատությունների:

Պետության ծագման աղբյուրների հիմնավորման գործում իրենց ներդրումն ունեն *բռնության տեսության* ներկայացուցիչները: Դեռևս հին

ժամանակներում առաջ են քաշվել բռնությամբ և ուժի միջոցով պետության ստեղծման գաղափարներ: Ուժեղները նվաճել և բռնության են ենթարկել թույլերին՝ ստեղծելով պետություն: Այդպիսով, հազարամյակների ընթացքում պետության նկատմամբ ձևավորվել է բացասական վերաբերմունք, և այն համարվել է սոցիալական չարիք: Նման մոտեցումները բնորոշ են եղել վաղ քրիստոնյաներին, ովքեր հակադրվում էին Հռոմեական կայսրությանը: Դրանք բնորոշ են եղել նաև աստվածաբաններին, ովքեր ձգտում էին աշխարհիկ իշխանությունը ենթարկել եկեղեցուն, ինչպես նաև՝ հեղափոխական խմբերին, որոնք պայքարում էին բռնապետության տարբեր ձևերի դեմ: Այս գաղափարներն իրենց վառ դրսևորումները գտան Շտիրների, Պրուդոնի տեսություններում, ովքեր պետությունը համարում էին սոցիալական չարի մարմնավորում և ձգտում էին ազատագրել մարդուն արտաքին հարկադրանքի և իշխանության բոլոր ձևերից:

Ի տարբերություն այս մեկնաբանության՝ 19-րդ դարում Հեգելը և Նիցշեն իրենց տեսություններում մշակեցին այլ մոտեցում, ըստ որի՝ ուժային ծագում ունեցող պետությունը հասարակության համար խիստ դրական երևույթ է: Նրանց կարծիքով՝ պետությունը, գործառնության ժամանակ ցույց տալով իր ծագման ուժը, կազմակերպում է ուժեղների իշխանությունը թույլերի նկատմամբ՝ հանդես գալով որպես հասարակության ամենահզոր կազմակերպություն, որն աջակցում է պաշտպանության կարիք ունեցող մարդկանց: Այդ պատճառով պետությունը ճանաչվում է որպես անհատների իրավունքներից և առօրեական բարոյականությունից վեր կանգնած ինստիտուտ:

Պետության ծագման սեփական մեկնաբանությունը տվել է ***մարքսիստական տեսությունը***, որտեղ նշվում են տվյալ գործընթացի նախապայմանները (նախ և առաջ՝ աշխատանքի հասարակական բաժանումը, մասնավոր սեփականության և դասերի առաջացումը) և պետության ստեղծման անմիջական պատճառը (դասային փոխհարաբերությունների անհաշտությունը, որի հետևանքով տիրապետող դասը ստեղծում է պետություն որպես իր մրցակիցներին հարկադրելու գործիք):

Պետության ուսումնասիրության տեսություններ: Պետության հասկացության ուսումնասիրությունից հետո հարկ է անդրադառնալ պետական իշխանության և նրա կողմից արտահայտվող շահերի հիմնախնդիրներին, որոնց վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ: Այդ տեսություններից յուրաքանչյուրն առաջարկում է պետության զարգացման և հասարակության վրա վերջինիս ազդեցության մասին սեփական պատկերացումները: Պետական իշխանության հարցը միշտ եղել է քաղաքագիտության կենտրոնական հիմնախնդիրներից մեկը, որի շուրջ բանա-

վիճում են տարբեր գաղափարախոսական և տեսական ավանդույթների ներկայացուցիչները: Այս հիմնախնդրի կարևոր հարցերն են՝ ա) արդյո՞ք պետությունը հասարակությունից անկախ է, թե այն իր էությանը բխում է հասարակությունից, բ) արդյո՞ք պետությունը ծառայում է համընդհանուր բարիքին, թե արտոնյալ խմբերի շահերին, գ) արդյո՞ք պետությունն իրականացնում է դրական, կառուցողական գործառույթներ, թե բացասական և քայքայիչ: Այս տեսանկյունից առանձնացնում են պետության հետևյալ չորս տեսությունները՝

- պյութալիստական պետություն,
- կապիտալիստական պետություն,
- լնիաթան պետություն,
- նահապետական պետություն:

Պետության պյութալիստական տեսությունն ակնհայտորեն բխում է ազատական ավանդույթից: Այս պարագայում պետությունն ընկալվում է որպես հասարակության մեջ գործող «միջնորդ դատավոր»: Ի դեպ՝ պետության այսպիսի ընկալումը մշտապես գերակայել է անգլո-ամերիկյան քաղաքագիտության մեջ, ինչով էլ բացատրվում է վերջինիս հակվածությունն ավելի շատ ուշադրություն դարձնել ոչ թե պետության և նրա ինստիտուտների, այլ «կառավարման» վրա: Այս ավանդույթին իրապես բնորոշ է պետությունը դիտել որպես վերացականություն, իսկ նրա հետևյալ ինստիտուտները՝ դատարան, բյուրոկրատական ապարատ և բանակ, որպես անկախ, ինքնաբավ կառույցներ, որոնք որևէ կերպ կապված չեն «պետական մեքենայի» հետ: Այս պարագայում հնարավոր է նաև մեկ այլ մոտեցում, ըստ որի՝ պետությունը սկզբունքորեն չեզոք է, ինչպես կատարելապես անաչառ դատավորը:

Այս տեսության աղբյուրները բխում են 17-րդ դարի մեծ մտածողներ Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի **հասարակական դաշինքի** տեսությունից: Այս մտածողներին ամենից շատ հետաքրքրում էր **քաղաքական պարտավորությունների** հիմքերի մասին հարցը, այսինքն՝ ինչու մարդը պետք է հնազանդվի և հարգի պետությանը: Նրանց գլխավոր գաղափարն այն է, որ պետությունն առաջացել է մարդկանց միջև կամավոր համաձայնության կամ հասարակական դաշինքի հիման վրա, երբ մարդիկ գիտակցել են, որ միայն բարձրագույն իշխանությունը կարող է իրենց ապահովել ճակատագրի փոփոխությունից, անկարգությունից և **բնական վիճակի** դաժանությունից: Մի խոսքով՝ պետությունից դուրս մարդիկ շահագործում և ստրկացնում են միմյանց, իսկ պետության առաջացման հետ հաստատվում են կարգուկանոնը, քաղաքակիրթ հարաբերությունները և ազատությունը: Լոկը գտնում է, որ այնտեղ, որտեղ չկա օրենք, չկա նաև ազատություն:

Այսպիսով՝ ազատական տեսությունը սահմանում է պետությունը որպես չեզոք դատավոր, որը վեր է կանգնած հասարակության մեջ մրցակցող մարդկանցից և խմբերից: Պետությունը, լինելով «միջնորդ դատավոր», ունակ է պաշտպանելու յուրաքանչյուր մարդուն համաքաղաքացիների ոտնձգություններից: Պետության չեզոքության սկզբունքը նշանակում է, որ այն գործում է ի շահ բոլոր քաղաքացիների՝ պաշտպանելով համընդհանուր բարիքը և ողջ հասարակության շահերը:

Այս գաղափարների հիման վրա 20-րդ դարում իր զարգացումը ստացավ պետության պյուրալիստական տեսությունը: Որպես հասարակության հայեցակարգ՝ պյուրալիզմը հիմնված է այն գաղափարի վրա, որ ազատական-ժողովրդավարական պետություններում իշխանությունը բաշխված է հավասարաչափ: Իսկ որպես պետության հայեցակարգ՝ պյուրալիզմը հիմնված է այն գաղափարի վրա, որ պետությունը չեզոք է, քանի որ միևնույն ժամանակ նրա վրա ներազդում են տարբեր շահերի խմբեր և բոլոր հասարակական դասերը: Այդ իսկ պատճառով պետությանը հաջողվում է պահպանել այս կամ այն մասնավոր շահերի միջև հավասարակշռությունը, քանի որ հասարակության շահերից բացի պետությունը չունի այլ շահեր:

Մարքսիզմն առաջարկում է **կապիտալիստական պետության** միանգամայն այլ ընկալում, որը պյուրալիզմի տեսաբանների առաջարկած՝ «պետությունը որպես չեզոք դատավոր» գաղափարի հետ չունի ոչ մի ընդհանրություն: Մարքսիզմի համաձայն՝ պետությունը չի կարող ընկալվել հասարակության տնտեսական կառուցվածքից դուրս: Այն առաջանում է դասակարգային համակարգից և արտացոլում է վերջինիս: Պետությունն ուղղակիորեն կախված է հասարակության մեջ տնտեսական տիրապետություն ունեցող դասից, որը կապիտալիզմի պայմաններում *բուրժուազիան* է:

Մարքսի գլխավոր գաղափարն այն է, որ պետությունը ծնվում է կապիտալիստական հասարակությունից և հանդիսանում է նրա արտացոլանքը: Պետությունը գործում է որպես տիրապետող դասի ձեռքում ճնշման գործիք կամ (ոչ ակնհայտորեն) որպես դասային հակամարտությունը մեղմելու մեխանիզմ: Սակայն պետության նկատմամբ Մարքսի վերաբերմունքը բացառապես բացասական չէր: Նա նշում էր, որ կապիտալիզմից կոմունիզմի անցման շրջանում պետությունն իբրև «պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա» կարող է օգտագործվել որպես բացարձակ կառուցողական ուժ. այդ դեպքում կապիտալիստական համակարգի տապալմանը կհաջորդեն բուրժուական պետության տապալումը և նոր պրոլետարական պետության ստեղծումը:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ **«լեհաթան» պետության** կերպարը հիմնավորվել է «նոր ազերի» տեսաբանների կողմից: Ընդհանրապես այս հայացքները բխում են դասական ազատականությունից, որը պաշտպանում է անհատապաշտության (ինդիվիդուալիզմ) արմատական ձևը: «Նոր ազերին» կամ նրանց նոր ազատական թեմին հատուկ է հասարակության տնտեսական և սոցիալական ոլորտներին պետության միջամտության խիստ քննադատությունը, որը բխում է պետության մասին ավելի վաղ պատկերացումից: Այդ պատկերացման համաձայն՝ պետությունը մակարոյժ է հասարակության մեջ, որը սպառնում է ինչպես անհատի ազատությանը, այնպես էլ պետության տնտեսական անվտանգությանը: Այս դեպքում պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես «միջնորդ դատավոր», ինչպես պնդում են պյուրալիզմի տեսաբանները, այլ անմիջականորեն միջամտում է ամեն ինչին: Պետությունը հետապնդում է սեփական շահերը, որոնք ամեննին չեն համապատասխանում հասարակության շահերին: Պետության շահերից բխում է սեփական դերի աստիճանական ավելացումը հասարակության մեջ:

Նահապետական պետության ժամանակակից գաղափարը սկիզբ է առել ֆեմինիստական տեսությունից: Սակայն դա չի նշանակում, որ ֆեմինիստներն ունեն պետության իրենց սեփական տեսությունը:

Ընդհանրապես, ֆեմինիզմի կողմնակիցները հատուկ չեն կարևորում պետությունը՝ նախընտրելով դրա փոխարեն մտածել հասարակության մեջ արական սեռի տիրապետության խորը արմատների մասին, որոնք բխում են ընտանեկան և տնտեսական հարաբերություններից:

Ազատական ֆեմինիզմի ներկայացուցիչները, ովքեր հնարավոր են համարում հասնել սեռերի միջև հավասարության հասարակական հարաբերությունների աստիճանական վերակառուցման ճանապարհին, ըստ էության, հակված են պետության պյուրալիստական ընկալմանը: Նրանք ենթադրում են, որ այն ժամանակ, երբ կանանց մերժում են իրավական և քաղաքական հավասարության հարցում, հատկապես՝ քվեարկության իրավունքի դեպքում, պետությունը նախապատվություն է տալիս տղամարդուն: Սակայն այն սկզբունքը, որ պետությունն ինքնին դեռևս չեզոք է, թույլ է տալիս հուսալ, որ վաղ, թե ուշ հնարավոր կլինի ուղղել այդ իրավիճակը: Հետևաբար՝ ազատական ֆեմինիստները համոզված են, որ բոլոր սոցիալական խմբերը (այդ թվում՝ կանայք), հավասար հնարավորություն ունեն հասնելու պետական իշխանության:

Այսպիսով՝ պետությունն ընկալվում է դրական լույսի ներքո: Ենթադրվում է, որ հասարակության գործերին պետության միջամտությունը հնարավորություն է ընձեռում ինչ-որ կերպ լուծել գենդերային անհավա-

սարքության խնդիրը և ամրապնդել կանանց դիրքերը հասարակության մեջ:

Գոյություն ունի պետության մեկ այլ՝ շատ ավելի քննադատական և նույնիսկ բացասական ընկալում: Արմատական ֆեմինիզմը պնդում է, որ պետական իշխանությունը, ըստ էության, արտացոլում է շատ ավելի խորը ճնշման հարաբերություններ՝ նահապետական հարաբերությունները:

Այս դեպքում կարելի է խոսել պետական իշխանության վերաբերյալ մարքսիստական և արմատական ֆեմինիստական հայացքների համընկման մասին: Նկատենք, որ երկու տեսություններն էլ չեն ընդունում այն գաղափարը, որ պետությունն անկախ գործող և սեփական շահերը հետապնդող կառույց է:

Մեկ այլ ֆեմինիստական տեսություն՝ ինստրումենտալիզմը, պետությունը ներկայացնում է որպես «գործիք», որի միջոցով տղամարդը հետապնդում է իր սեփական շահերը և ամրապնդում է նահապետականությունը: Ֆեմինիստական դիրքորոշման համաձայն՝ այս տրամաբանության հիմքն այն է, որ նահապետականությունը պահպանվում է հասարակության մեջ «հանրային» և «մասնավոր» ոլորտների բաժանման շնորհիվ: Կանանց ենթակայությունը բխում է այն բանից, որ նրանց միշտ սահմանափակել են «մասնավոր» ընտանեկան և կենցաղային պարտականություններով՝ դարձնելով նրանց տնային տնտեսուհի և մայր: Նրանց թույլ չեն տվել մուտք գործել «հանրային» ոլորտ, որտեղ, ըստ էության, իրականացվում են քաղաքականությունը և տնտեսությունը:

Պետությունների տիպաբանությունը: Գոյություն ունեն պետության դասակարգման բազմաթիվ ձևեր: Սակայն, եթե այդ դասակարգման հիմքում դրվում են պետության գործառույթները, ապա հնարավոր է դառնում առանձնացնել պետության հետևյալ տիպերը՝ ա) ռազմական-ոստիկանական պետություն, բ) սոցիալական պետություն, գ) իրավական պետություն:

Ռազմական-ոստիկանական պետությունը տարածված է եղել մինչև 20-րդ դարի առաջին կեսը: Այն առաջնային էր համարում օրինականության և կարգուկանոնի պահպանումը, երկրի պաշտպանության ապահովումը և հանկարծառահաս ներքին խնդիրների արագ կարգավորումը: Պետությունը չունեւր ո՛չ ցանկություն, ո՛չ էլ անհրաժեշտ ռեսուրսներ բնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու համար: Պետության փոխարեն այդ խնդրով զբաղվում էին մյուս սոցիալական համակարգերը՝ ընտանիքը, եկեղեցին, համայնքները, բարեգործական կազմակերպությունները: 20-րդ դարի երկրորդ կեսին այդ գործառույթները ստանձնեց պետությունը: Հիմնականում պետությունն էր ապահովում կրթությունը, առողջապահությունը և նպաստները: Այսպիսով՝ մի շարք պետություններ ռազմական-

նստիկանական կատեգորիայից անցում կատարեցին դեպի սոցիալական կատեգորիա:

Մովորաբար, **սոցիալական պետությունը** սահմանվում է որպես ինչ-որ բանի ձգտող պետություն: Այդ ձգտումներն են՝

- ապահովել բարեկեցության որոշակի չափանիշներ իր քաղաքացիների համար,
- բավարարել նրանց նյութական և հոգևոր պահանջները,
- նվազեցնել սոցիալական անհավասարությունը,
- ապահովել յուրաքանչյուրին աշխատանքով կամ այլ եկամտի աղբյուրով,
- պահպանել խաղաղություն և ներդաշնակություն հասարակության մեջ,
- ապահովել մարդկանց համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը և զարգացումը:

Այս գործառույթները կարող են իրականանալ զարգացած արտադրության և ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում: Սոցիալական պետության շրջանակներում տեղի է ունենում ազգային եկամտի վերաբաշխում հոգուտ հասարակության ավելի անապահով շերտերի, իրականացվում է զբաղվածության քաղաքականություն, աշխատանքի պաշտպանություն, բոլորին հասանելի առողջապահության և կրթության համակարգերի զարգացում:

Քաղաքագիտության մեջ տարբերակում են *սոցիալական պետության* երեք հիմնական ձևեր՝ *ազատական, պահպանողական, սոցիալ-ժողովրդավարական*:

Ազատական պետության պայմաններում սոցիալական աջակցություն ստանալու հիմքերը սահմանափակ են, կանոնները խիստ են, իսկ օգնության չափը մեծ չէ: Սոցիալական աջակցության շահառուները փոքրաթիվ գործազուրկ քաղաքացիներն են: Այսպիսի պետության ավանդական օրինակ է ԱՄՆ-ը:

Պահպանողական պետության պայմաններում սոցիալական օգնության ծավալն ուղղակիորեն կախված է աշխատանքի տեսակից, աշխատավարձի և եկամուտների չափից: Պետության համար առավել կարևոր աշխատանքների տրվում են լրացուցիչ արտոնություններ՝ հաճախ առողջապահական և կենսաթոշակային ապահովում: Այդպիսի պետության դասական օրինակ է Գերմանիան: Պահպանողական սոցիալական պետություններն առավելապես տարածված են Եվրոպայում:

Սոցիալ-ժողովրդավարական պետության հիմքում դրված է քաղաքացիների սոցիալական ապահովման հավասարության սկզբունքը: Այդպիսի

պետության քաղաքականության բաղկացուցիչ մասը քաղաքացիների լիարժեք զբաղվածությունն է: Մոցիալական պաշտպանվածության այդպիսի համակարգը շատ թանկարժեք է, ուստի անհրաժեշտ է լինում կա՛մ բարձր մակարդակի վրա պահել հարկերը (ինչպես Շվեդիայում), կա՛մ ստեղծել այսպես կոչված, երկմակարդակ համակարգ, որի դեպքում նվազագույն նպաստներն ապահովում է պետությունը, իսկ դրանից բացի նպաստներ են տրամադրվում այլ աղբյուրներից: Օրինակ՝ կենսաթոշակները վճարվում են տարբեր ընկերությունների կողմից:

Իրավական պետության կարևորագույն հատկանիշը պետության գործունեության սահմանափակումն է իրավական նորմերով, որոնք ապահովում և պաշտպանում են անձի ազատությունը և ենթարկում են իշխանական կառույցներն ինքնիշխան ժողովրդի կամքին: Այս դեպքում իրավունքը հանդես է գալիս որպես պետական իշխանության կազմակերպման հիմնական միջոց: Իրավական համակարգի միջոցով պետությունն իրականացնում է իր լիազորությունները, լուծում առկա խնդիրները և առաջադրանքները: Իրավական պետության նպատակները հիմնականում սահմանափակվում են համապետական շահերի ոլորտով. յուրաքանչյուր քաղաքացու շահը համարվում է պետության անձնական գործը:

Իրավական պետության հիմնական հատկանիշներն են՝

- իրավունքի և օրենքի գերակայությունը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում,
- մարդու իրավունքների և ազատությունների առավելագույն երաշխիքները,
- օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը,
- քաղաքացու և պետության փոխադարձ պատասխանատվությունը,
- անհատի իրավական և դատական պաշտպանությունը:

Հասարակության մեջ պետության հաջող գործառնության համար անհրաժեշտ է՝

- իշխանությունների տարանջատում և հավասարակշռություն,
- քաղաքական բազմակարծություն,
- իշխանության և կառավարման արդյունավետ վերահսկողություն,
- լայն տեղական ինքնակառավարում,
- քաղաքացիական հասարակության զարգացում,
- քաղաքական մշակույթի բարձր մակարդակ և քաղաքացիական ակտիվություն:

Պետության գործառնությունները: Դրանք ներկայացնում են հասարակական արտադրության ոլորտներում պետության գործունեության կարևորագույն, առանցքային ուղղությունները (տնտեսական, կազմակերպչա-

կան, հոգևոր, սոցիալական): Այդ գործառույթները լինում են *ներքին* և *արտաքին*:

Պետության կարևորագույն *ներքին* գործառույթներից են՝

- իրավակարգի և օրինականության ապահովումը,
- ազգային անվտանգության ապահովումը,
- տնտեսության և տնտեսական գործունեության կարգավորումը,
- արտադրական հարաբերությունների կազմակերպումը և կարգավորումը,
- մշակութային հարաբերությունների կազմակերպումը և կարգավորումը,
- սոցիալական հարաբերությունների կարգավորումը և բնակչության կենսագործունեության և վերարտադրության համար նորմալ պայմանների ստեղծումը,

Ավանդաբար պետության *արտաքին* գործառույթների շարքում առանձնացնում են՝

- այլ երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների և համագործակցության զարգացումը,
- մասնակցությունը և անդամակցությունը միջազգային կազմակերպություններին և կառույցներին,
- պետական շահերի պաշտպանությունը միջազգային ասպարեզում,
- պետությունների և ժողովուրդների միջև ինտեգրացիոն գործընթացների խթանումը,
- խաղաղ կենսապայմանների ապահովումը, պետության պաշտպանության կազմակերպումը և այլ պետությունների նկատմամբ ռազմական, քաղաքական և տնտեսական շահերի տարածումը:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պետություն
- Ինքնիշխանություն
- Կապիտալիստական պետություն
- «Լեիաթան» պետություն
- Նահապետական պետություն
- Ռազմական-նոստիկական պետություն
- Սոցիալական պետություն
- Իրավական պետություն

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպե՞ս եք պատկերացնում կյանքը «նախնական բնական վիճակում»:
2. Արդյո՞ք կարելի է խոսել պետության չեզոքության մասին մրցակցող խմբերի շահերի տեսանկյունից:
3. Ինչպիսի՞ն պետք է լինեն պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունները:
4. Պետության ծագման ո՞ր տեսությունն է առավել հիմնավորված:
5. Որո՞նք են իրավական պետության առավելությունները:
6. Ի՞նչ հատկանիշներով է օժտված սոցիալական պետությունը:
7. Արդյո՞ք համաձայն եք կապիտալիստական պետության մարքայան մեկնաբանության հետ:
8. Ձեր կարծիքով՝ այսօր կա՞ն «լիբաթան» պետության օրինակներ:
9. Պետության գործառույթներն ինչպե՞ս են ազդում հասարակական հարաբերությունների կարգավորման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ**, Պրակ Ա, խմբ. Կ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
2. **Քաղաքագիտություն:** Ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
3. **Демидов А., Федосеев А.** Основы политологии. Учеб. Пособие. М., 1995, 270 с.
4. **Платон.** Государство, М., 2005, 576 с.
5. **Смирнова А., Тишукова В.** Основы политологии. Учебно-методическое пособие для высших учебных заведений. Новгород, НовГУ им. Ярослава Мудрого, 2002, 166 с.
6. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии.: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
7. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
8. **Фукуяма Ф.** Сильное государство. Управление и мировой порядок в XXI веке, М., 2006, 220 с.

ՊԵՄԱ 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ

Պետության կառավարման ձևերի վերլուծությունը թույլ է տալիս պատասխանել հետևյալ հարցերին՝ ա) ո՞վ և ինչպե՞ս է կառավարում, բ) ինչպե՞ս է իրականացվում պետական իշխանությունը հասարակության մեջ, գ) ինչպիսի՞ կառուցվածք ունեն հանրային իշխանության ինստիտուտները և ինչպե՞ս են դրանք գործում: Հետազոտողները նշում են, որ ժամանակակից հասարակություններում կառավարման ձևերն ազդում են իշխանությունների գործառույթների տարանջատման գործընթացի վրա, ինչն ընկալվում է որպես պետական իշխանության տարանջատում միմյանցից անկախ գործող ճյուղերի միջև՝ *օրենսդիր, գործադիր և դատակա՛ն*: Իշխանության գործառույթների տարանջատման սկզբունքն առաջին հերթին կոչված է հանրությանը պետության բացարձակ և լիակատար իշխանությունից պաշտպանելուն: Վերջինիս նպատակն իշխանության ճյուղերի փոխզուգումն ու սահմանափակումն է:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են պետության կառավարման հետևյալ ձևերը՝

- **միապետական**, որի ենթատեսակներն են՝ ա) *բացարձակ միապետություն*, բ) *դուալիստական (սահմանափակ) միապետություն*, գ) *սահմանադրական միապետություն*,
- **հանրապետական**, որի ենթատեսակներն են՝ ա) *նախագահական հանրապետություն*, բ) *խորհրդարանական հանրապետություն*, գ) *խառը ձևեր*:

Միապետություն կամ միապետական կառավարման ձևեր: Միապետությունը կառավարման այն ձև է, որի դեպքում պետական իշխանությունը պատկանում է մեկ անձի՝ միապետին: Միապետության դեպքում քաղաքական իշխանությունը փոխանցվում է ժառանգական իրավահաջորդության սկզբունքով:

Միապետը նշանակում է բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք էլ, իրենց հերթին, նշանակում են ավելի ցածր պաշտոնատար անձանց: Սովորաբար, միապետը միանձնյա է որոշում պետական իշխանության կազմակերպման և իրականացման հետ կապված հարցերը:

Միապետը հանդես է գալիս որպես պետության գլուխ, ղեկավար, ժողովրդի ներկայացուցիչ, ով միավորում և համախմբում է իր հպատակներին: Նա անձնավորում է պետությունը: Միապետն իրականացնում է միանձնյա իշխանություն: Իհարկե, դա չի նշանակում, որ նա բացարձակապես միանձնյա է վարում պետության բոլոր գործերը: Այնուամենայնիվ,

միապետն օժտված է բարձրագույն իշխանությամբ և սուվերենությամբ (ինքնիշխանություն), որը թույլ է տալիս նրան լիազորությունների և կառավարման ոլորտների բաշխման ժամանակ հսկողության տակ պահել իր ուշադրությանն արժանացած ցանկացած հարց:

Ներկայումս միապետական կառավարման ձևեր գոյություն ունեն աշխարհի ավելի քան երեսուն երկրներում: Օրինակ՝ Եվրոպայում կան 11 միապետություններ՝ Բելգիա, Մեծ Բրիտանիա, Դանիա, Իռլանդիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոնակո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեդիա:

Պատմականորեն միապետության առաջին ձևը **բացարձակ միապետությունն** է: Կառավարման այս ձևը բնութագրվում է միապետի լիակատար իշխանությամբ և ներկայացուցչական մարմինների բացակայությամբ: Ներկայումս բացարձակ միապետություններ են Սաուդյան Արաբիան, Քաթարը, Օմանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը և Բրունեյը:

Դուալիստական (սահմանափակ) միապետությունը համարվում է կառավարման անցումային ձև, որը բնորոշ է այն ժամանակաշրջանին, երբ տնտեսապես և քաղաքականապես թույլ բուրժուազիան ստիպված է կիսել իշխանությունը ֆեոդալների հետ: Դուալիստական միապետությունը հիմնականում բնորոշ է հետամնաց երկրներին, որտեղ պահպանվել են ֆեոդալիզմի հետևանքները: Ժամանակի ընթացքում այն անխուսափելիորեն վերաճում է կառավարման զուտ բուրժուական ձևի կամ սահմանադրական միապետության, երբեմն՝ նաև հանրապետության: Ներկայումս դուալիստական միապետություններ են համարվում Հորդանանը, Քուվեյթը, Մարոկկոն:

Դուալիստական միապետությունը հիմնված է հետզհետե թուլացող ֆեոդալիզմի և զարգացող բուրժուազիայի միջև քաղաքական համաձայնության և փոխզիջման վրա, երբ վերջիններս կիսում են պետական իշխանությունը: Գործադիր իշխանության ոլորտում միապետը դե յուրե և դե ֆակտո անկախ է խորհրդարանից, սակայն ստիպված է հաշվի առնել վերջինիս գործունեությունը: Միապետը նշանակում է կառավարությունը, որը պատասխանատու է նրա առաջ: Իսկ խորհրդարանը՝ որպես վերահսկողական գործառույթներով օժտված ներկայացուցչական մարմին, կարող է քննադատել և դատապարտել կառավարության գործունեությունը: Խորհրդարանը հանդես է գալիս որպես օրենսդիր մարմին, որի հետ միապետը ստիպված է հաշվի նստել:

Ժամանակակից միապետությունների մեծամասնությունը **սահմանադրական (խորհրդարանական)** են: Պետական իշխանության առանցքային

ոլորտներում միապետի իշխանությունն ունի սահմանափակ բնույթ: Սահմանադրական միապետություններում միապետը խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցական խմբակցությունների առաջարկությամբ իրավունք ունի նշանակել կառավարության ղեկավարին և նախարարներին: Կառավարությունը համարվում է միապետի կառավարություն, սակայն այն ձևավորվում է խորհրդարանի կողմից և պատասխանատու է միայն խորհրդարանին: Խորհրդարանի կողմից կառավարությանը անվստահություն հայտնելու դեպքում վերջինս պետք է հրաժարական տա կամ լուծարի խորհրդարանը և նշանակի արտահերթ ընտրություններ: Միապետի կողմից առաջարկված բոլոր պետական ակտերն իրավաբանական ուժ են ստանում միայն համապատասխան նախարարի թույլատվության դեպքում: Ջարգացած երկրներում միապետները որևէ էական դեր չունեն պետական կառավարման գործում: Բսկ որոշ երկրներում նրանք զուտ խորհրդանշական գործիչներ են, որոնք օժտված են միայն արարողակարգային լիազորություններով (օրինակ՝ Ճապոնիայի կայսրը):

Հանրապետություն կամ հանրապետական կառավարման ձևեր: Պետության կառավարման հանրապետական ձևը ևս ունի հին պատմություն: Հանրապետությունը, իշխանության տարբեր մարմինների և դրանց միջև փոխհարաբերությունների բազմազանության հետ մեկտեղ, նախ և առաջ բնութագրվում է բարձրագույն իշխանական մարմինների ընտրովիությամբ, որոնք ունեն ներկայացուցչական բնույթ: Հանրապետական կառավարման **հիմնական հատկանիշներն** են՝

- հանրապետական կառավարման ձևը բխում է քաղաքացիների հավասարության, նրանց միջև համերաշխության, կայունության և փոխհամաձայնության անհրաժեշտության սկզբունքներից, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր քաղաքացու հավակնել ցանկացած պաշտոնի (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),
- հանրապետական կառավարումը կոլեկտիվ կառավարում է,
- պետական իշխանության բարձրագույն մարմիններն ունեն բարդ կառուցվածք, հատուկ լիազորություններ և օրենքով պատասխանատվություն են կրում դրանք պատշաճ կերպով չկատարելու կամ չարաշահելու դեպքում,
- հանրապետական կառավարման դեպքում բարձրագույն իշխանության մարմինների որոշումներն ընդունվում են երկարատև քննարկումներից և փորձագիտական գործընթացներից հետո քվեարկության միջոցով,

- կառավարման այս ձևը հիմնված է իշխանության տարանջատման սկզբունքի վրա,
- հանրապետական կառավարման ձևը, ի տարբերություն միապետականի, որպես կանոն, հիմնվում է հասարակության կառավարման ռացիոնալ-իրավական ընկալման վրա:

Ժամանակակից պետական պրակտիկայում տարբերում են հանրապետության երկու հիմնական ձև՝ *նախագահական* և *խորհրդարանական*:

Նախագահական հանրապետությունը կառավարման այնպիսի ձև է, որի դեպքում նախագահի ձեռքում են կենտրոնանում պետության գլխի և կառավարության ղեկավարի (իշխանության գործադիր ճյուղի) լիազորությունները: Պետական կառավարումը խստորեն հիմնվում է իշխանության տարանջատման սկզբունքի վրա: Իշխանության բարձրագույն մարմինները ոչ միայն կառուցվածքորեն բաժանված են, այլև ունեն գզալի ինքնուրույնություն: Նախագահը, որպես կանոն, ընտրվում է խորհրդարանից առանձին (համաժողովրդական ընտրությամբ) և ինքնուրույն ձևավորում է կառավարությունը (երբեմն խորհրդարանի համաձայնությամբ), որը պատասխանատու չէ խորհրդարանի առջև: Կառավարությունը հաշվետու է միայն նախագահին:

Նախագահը չունի խորհրդարանը լուծարելու իրավունք, սակայն խորհրդարանը կարող է նախաձեռնել նախագահին իշխանությունից հեռացնելու գործընթաց: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ նախագահը չարաշահում է իր իշխանությունը, կատարում է հանցանք կամ դիտավորյալ կոպտորեն խախտում է Սահմանադրությունը:

Նախագահական հանրապետության այս ձևը գործում է ԱՄՆ-ում, Արգենտինայում, Բրազիլիայում, Մեքսիկայում և մի շարք այլ երկրներում: Հարկ է նշել, որ այն երկրներում, որտեղ ընտրագանգվածը, օրենսդիր իշխանությունը կամ սահմանադրական սահմանափակումներն ավելի թույլ են, քան Միացյալ Նահանգներում, կառավարման նախագահական ձևը հանգեցնում է «սուպերնախագահական» մոդելի, որն իրականացնում է ավտորիտար իշխանություն, ինչպես օրինակ՝ երրորդ աշխարհի շատ երկրներում:

Նախագահական հանրապետությունը բավականաչափ ճկուն կառավարման ձև է, ինչի պատճառով էլ ստացել է լայն տարածում: Նախագահական կառավարումն ավելի արդյունավետ է դառնում մեծ տարածք և բազմազգ բնակչություն ունեցող պետություններում հատկապես՝ բարեփոխումների ժամանակ:

Խորհրդարանական հանրապետությունը տարբերվում է նախագահականից խորհրդարանի գերակայության սկզբունքով, երբ կառավարու-

թյունը խորհրդարանի առջև ունի քաղաքական պատասխանատվություն իր գործունեության համար: Խորհրդարանական հանրապետության առանձնահատկությունը վարչապետի առկայությունն է, ով ընտրվում կամ նշանակվում է խորհրդարանի կողմից: Նախագահի մասնակցությունը կառավարության ձևավորման գործին կրում է ձևական բնույթ: Գործնականում նախագահը գրեթե ոչ մի ազդեցություն չունի պետական իշխանության իրականացման գործում: Նախագահի ցանկացած գործողություն և նրանից բխող նորմատիվ ակտ կարող է իրականացվել կամ ձեռք բերել իրավաբանական ուժ միայն կառավարության կամ խորհրդարանի համաձայնությամբ, որոնք էլ պատասխանատու են դրանց համար: Ներկայումս խորհրդարանական հանրապետություններ են՝ Իտալիան, Գերմանիան, Ավստրիան, Շվեյցարիան, Ֆինլանդիան, Իռլանդիան, Իսլանդիան, Հնդկաստանը, Բարայելը, Լիբանանը և այլն:

Խորհրդարանական հանրապետության տիպային օրինակ է Իտալիան: Այնտեղ հանրապետության նախագահն ընտրվում է խորհրդարանի երկու պալատների համատեղ նիստում մարզերի պատվիրակների մասնակցությամբ: Նախագահը՝ որպես երկրի ղեկավար և ազգի ներկայացուցիչ, օժտված է սահմանադրական բավականին լայն լիազորություններով: Օրենսդիր իշխանության ոլորտում նախագահն իրավունք ունի գումարելու խորհրդարանի արտակարգ նստաշրջան, լուծարելու խորհրդարանը կամ նրա պալատներից մեկը: Սահմանադրությունն օժտում է նախագահին վետոյի իրավունքով: Նախագահը, ցանկության դեպքում, կարող է մինչև օրենքի հրապարակումը (ստորագրումը) պահանջել նոր քննարկում: Ըստ Իտալիայի Սահմանադրության՝ նախագահն իրավունք ունի մասնակցելու կառավարության ձևավորմանը: Նախարարների խորհրդի նախագահը ու նախարարները նշանակվում են նախագահի կողմից և մինչև պաշտոնը ստանձնելը երդվում են նրա առջև: Մույն ընթացակարգը չի կարող մեկնաբանվել բառացիորեն, քանի որ վարչապետի թեկնածույան հետ կապված նախագահի ցանկացած որոշում սահմանվում է խորհրդարանի կուսակցական կազմի կողմից: Իտալիայի կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից:

Կառավարման խառը ձևեր: Որպես կանոն, բազմաթիվ երկրներում երբեմն գոյություն ունեն կառավարման այնպիսի ձևեր, որոնք ղժվար է ներառել հայտնի գիտական դասակարգումներից որևէ մեկի շարքում: Խոսքը կառավարման խառը ձևերի մասին է, որոնք համատեղում են կառավարման տարբեր, երբեմն հակասական տարրեր:

Այսպիսով՝ գոյություն ունեն կառավարման ձևեր, որոնք միավորում են ինչպես խորհրդարանական, այնպես էլ նախագահական հանրապետու-

թյան տարրեր: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ կառավարման խառը ձև է գործում Ֆրանսիայի 5-րդ Հանրապետությունում: 1958 թ. ընդունված Ֆրանսիայի Սահմանադրությունը, պահպանելով պառլամենտարիզմի որոշ հատկանիշներ, ըստ էության, սահմանել է անձնական իշխանության վարչակարգ: Պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում կենտրոնական գործիչը նախագահն է, ով օժտված է հսկայական լիազորություններով և ընտրվում է արտախորհրդարանական ճանապարհով: Սկզբում նախագահն ընտրվում էր 81.512 ընտրիչներից բաղկացած ընտրական կոլեգիայի կողմից, որտեղ խորհրդարանի քվեն 1%-ից պակաս էր: Իսկ 1962 թ. նշանակվեցին նախագահի ուղիղ ընտրություններ:

Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության Սահմանադրությամբ սահմանափակված է խորհրդարանի պատասխանատվությունը: Կառավարությունը ձևավորվում է նախագահի կողմից և պատասխանատու է միայն նրա առջև: Կառավարության փաստացի ղեկավարումն իրականացնում է նախագահը, այլ ոչ թե վարչապետը: Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության Նախագահն օժտված է ոչ միայն խորհրդարանական հանրապետության ղեկավարին բնորոշ լիազորություններով, այլև նախագահական հանրապետության ղեկավարի իրավունքներով: Ավելին՝ ունենալով խորհրդարանը լուծարելու իրավունք՝ նա օժտված է ավելի լայն իրավասություններով, քան նախագահական հանրապետության ղեկավարը: Այսպիսով՝ հետագոտողները Ֆրանսիան իր յուրահատուկ կառավարման համակարգով բնորոշում են որպես ***կիսանախագահական հանրապետություն***:

Որոշ երկրներում գոյություն ունեն կառավարման այնպիսի ձևեր, որոնք համատեղում են միապետության և հանրապետության տարրերը: Այսպիսի պետության տիպային օրինակ է Մալազիան:

1957 թ. ընդունված սահմանադրության համաձայն՝ Մալազիան իրենից ներկայացնում է սահմանադրական միապետության հազվագյուտ տեսակ՝ ***ընտրովի միապետություն***: Մալազիայի Դաշնության ղեկավարը միապետն է, որը ստանում է իր իշխանությունը ոչ թե ժառանգական իրավահաջորդության կարգով, այլ ընտրվում է հինգ տարի ժամկետով Կառավարիչների խորհրդի կողմից, որը բաղկացած է դաշնության անդամ ինը միապետությունների ղեկավարներից:

Մալազիայի ղեկավար կարող է ընտրվել միապետություններից մեկի ղեկավարը, ով հասել է չափահասության տարիքի և ում օգտին Կառավարիչների խորհուրդը կտա իր ձայների մեծամասնությունը: Պետության ղեկավարն օժտված է սահմանադրական միապետի լիազորություններով,

սակայն պետության ներսում գոյություն ունեն նաև հանրապետական տարրեր, որոնք, հիարկե, չունեն էական նշանակություն:

1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը ևս ընդունեց կառավարման խառը կիսանախագահական ձևը: Սակայն 2005 թ. Սահմանադրության փոփոխությունների արդյունքում պետական կառավարման կարգում մասամբ ընդլայնվեցին խորհրդարանի լիազորությունները: Իսկ 2015 թ. կրկին տեղի ունեցան սահմանադրական բարեփոխումներ, որոնց արդյունքում ՀՀ-ն դարձավ խորհրդարանական հանրապետություն:

Պետության կառուցվածքի ձևերը: Մասնագիտական գրականության մեջ պետական կառուցվածքի ձևը, ընդհանուր առմամբ, ներառում է պետության ազգային-տարածքային կազմակերպումը, ինչպես նաև իշխանության կենտրոնական և տեղական մարմինների միջև փոխհարաբերությունները: Պետության կառուցվածքը բովանդակում է հետևյալ հարցերը՝ ինչպե՞ս է կազմակերպված տվյալ պետության տարածքը, ի՞նչ մասերից է այն բաղկացած և ինչպիսի՞ն է դրանց իրավական կարգավիճակը: Պետություններն իրենց կառուցվածքով կարող են տարբերվել միմյանցից՝ պայմանավորված մի շարք գործոններով: Ցանկացած պետություն ունի որոշակի տարածք, որտեղ բնակվում են տվյալ պետության քաղաքացիները կամ հպատակները (եթե դա միապետություն է): Տնտեսական կյանքի կազմակերպման, քաղաքացիների պաշտպանության, հարկերի գանձման և այլ գործառնությունների կազմակերպման համար պետությունն իրականացնում է լայնածավալ գործունեություն, որը հաճախ կարող է բարդանալ մեծաթիվ բնակչության և մեծ տարածքի պատճառով:

Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում պետության տարածքը բաժանել մարզերի, շրջանների, գավառների և այլ վարչատարածքային միավորումների և ստեղծել տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք կենտրոնական իշխանության հետ կկիսեն կառավարման լիազորությունները:

Բացի այդ, շատ պետություններ ունեն բազմազգ բնակչություն, և յուրաքանչյուր ազգ, որպես կանոն, ունի իր ազգային ավանդույթները, մշակութային, լեզվական կամ այլ առանձնահատկություններ, ինչպես նաև պետականության սեփական պատմական փորձ: Այդ իսկ պատճառով, պետության կառուցվածքի որոշման գործում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ գործոնը:

Սովորաբար տարբերում են պետության կառուցվածքի հետևյալ ձևերը՝

- *ունիտար (միատարր) պետություն,*
- *ֆեդերատիվ (դաշնային) պետություն,*

- կոնֆեդերատիվ (համադաշնային) պետություն,
- պետությունների համագործակցություն:

Ունիտար (միատարր) պետությանը բնորոշ է միասնական պետական համակարգը, որը գործում է նրա ողջ տարածքում: Բարձրագույն պետական մարմինների լիազորությունները ևս տարածվում են երկրի ամբողջ տարածքում: Պետական ապարատի գործունեությունը կրում է կենտրոնացված բնույթ, և իրականացվում է ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն տեղական իշխանության մարմինների նկատմամբ: Բոլոր վարչատարածքային միավորներն ունեն հավասար կարգավիճակ կենտրոնական իշխանության առջև և չունեն որևէ քաղաքական ինքնուրույնություն: Պետության ողջ տարածքում գործում է՝ *ա) միասնական քաղաքացիություն, բ) միասնական իրավական համակարգ, գ) միասնական դատական համակարգ, զ) միասնական հարկային համակարգ և այլն:*

Կախված այն բանից, թե ինչպիսի վերահսկողություն է իրականացնում կենտրոնական իշխանությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ ունիտար պետությունները լինում են *կենտրոնացված և ապակենտրոնացված:* Կենտրոնացված ունիտար պետություններում ազգային փոքրամասնությունները չունեն ինքնավարություն, կան միայն վարչատարածքային միավորներ՝ մարզ, շրջան, համայնք և այլն: Այդպիսի պետություններ են՝ Հայաստանի Հանրապետությունը, Շվեդիան, Դանիան: Իսկ ապակենտրոնացված ունիտար պետություններում ազգային փոքրամասնություններն ունեն ինքնուրույնություն: Այդպիսի պետություններ են՝ Ֆրանսիան, Իսպանիան:

Ի տարբերություն ունիտար պետության՝ **ֆեդերատիվ (դաշնային) պետությունն** ունի բարդ կառուցվածք և բազմաթիվ առանձնահատկություններ: Չնայած այն բանին, որ աշխարհում մեծաթիվ են ունիտար պետությունները, դաշնությունները ևս ունեն բավականին լայն տարածում՝ ինչպես ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Վենեսուելայում, Մեքսիկայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Ավստրալիայում, Պակիստանում, Հնդկաստանում և այլն:

Դաշնությունը բարդ (միութենական) պետություն է՝ բաղկացած որոշակի իրավական և քաղաքական ինքնուրույնություն ունեցող պետական կառույցներից: Դաշնային պետության կառուցվածքային տարրերը (նահանգներ, մարզեր, կանտոններ, շրջաններ) նրա սուբյեկտներն են և ունեն իրենց սեփական վարչատարածքային բաժանումը:

Պետության կառուցվածքի դաշնային ձևն օժտված է հետևյալ հատկանիշներով:

Ի տարբերություն ունիտար պետության՝ դաշնային պետության տարածքը չի հանդիսանում քաղաքական և վարչական առումով մեկ ամբողջություն: Այն բաղկացած է դաշնության սուբյեկտների տարածքներից: Որոշ դաշնություններում պետական միավորումների հետ մեկտեղ գոյություն ունեն տարածքներ, որոնք չեն համարվում դաշնության սուբյեկտ: ԱՄՆ-ում Կոլումբիայի դաշնային շրջանը համարվում է անկախ միավոր, որտեղ գտնվում է մայրաքաղաք Վաշինգթոնը: 1869 թ. Սահմանադրության համաձայն՝ Բրազիլիան բաղկացած է երկու նահանգներից, դաշնային շրջաններից և երկու հատուկ տարածքներից: Հնդկաստանում 26 նահանգների հետ մեկտեղ գոյություն ունեն նաև կենտրոնական իշխանությանը ենթակա այլ տարածքներ:

Դաշնության մեջ ընդգրկված պետական միավորումները չեն համարվում պետություններ բառի բուն իմաստով, քանի որ դրանք չունեն ինքնիշխանություն, որը նշանակում է անկախություն ներքին և արտաքին քաղաքական հարաբերություններում: Դաշնության սուբյեկտներն առանձին իրավունք չունեն մասնակցելու միջազգային հարաբերություններին:

Դաշնային Սահմանադրության խախտման դեպքում կենտրոնական իշխանությունն իրավունք ունի կիրառել հարկադրական միջոցներ դաշնության սուբյեկտների նկատմամբ: Կենտրոնական իշխանության այդ իրավունքը կարող է ամրագրվել Սահմանադրությամբ (Հնդկաստան, Արգենտինա, Վենեսուելա): Սակայն այն դեպքերում, երբ այդ դրույթը նախատեսված չէ սահմանադրությամբ, կենտրոնական իշխանությունը միշտ հնարավորություն ունի ուժով հնազանդեցնելու դաշնության սուբյեկտին:

Դաշնության սուբյեկտներն իրավունք չունեն միակողմանիորեն դուրս գալու միությունից, ինչը չի բացառվում իրականում, իսկ այդ երևույթը կոչվում է անջատում: Անջատման օրինակներ են՝ քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում, Մալիի դաշնությունից Սենեգալի անջատումը, Սինգապուրի անջատումը Մալազիայի դաշնությունից, Բանգլադեշի անջատումը Պակիստանից և այլն:

Դաշնության սուբյեկտները, որպես կանոն, օժտված են սահմանադիր իշխանությամբ: Դաշնության սուբյեկտներին սահմանադիր իշխանությամբ օժտելը, սովորաբար, ամրագրվում է դաշնության սահմանադրությամբ: Սակայն, շատ դաշնություններ սահմանում են ենթակայության սկզբունքներ, որոնց համաձայն՝ դաշնության սուբյեկտների սահմանադրությունները պետք է լիովին համապատասխանեն դաշնության սահմանադրությանը:

Դաշնության սուբյեկտներն ունեն օրենսդրական ակտերի ընդունման իրավասություն: Իսկ այդ օրենքները պետք է համապատասխանեն դաշ-

նության օրենսդրությանը: Դաշնության օրենսդրությունն առաջնային և համընդհանուր է նրա բոլոր սուբյեկտների համար, առանց բացառության:

Դաշնության սուբյեկտները կարող են ունենալ իրենց սեփական իրավական և դատական համակարգը: Որպես կանոն՝ դաշնային դատական համակարգը կազմված է միասնական սկզբունքով (անկախ դաշնության սուբյեկտների թվից):

Դաշնության ձևական հատկանիշներից է երկակի քաղաքացիությունը: Յուրաքանչյուր քաղաքացի համարվում է դաշնության և համապատասխան պետական միավորման քաղաքացի: Երկքաղաքացիության համակարգն ամրագրվում է դաշնային պետությունների մեծամասնության կողմից:

Երկար ժամանակ դաշնային պետության պարտադիր առանձնահատկություններից էր համարվում դաշնային խորհրդարանի երկպալատ կառուցվածքը: Դաշնային պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, որպես կանոն, կազմված է երկու պալատներից՝ առաջինը ներկայացնում է երկրի ընդհանուր բնակչությունը, իսկ երկրորդը՝ դաշնության սուբյեկտներին:

Այդ ընդհանուր կանոնից բացառությունները հայտնվեցին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ձևավորված նորանկախ պետություններում (օրինակ՝ Պակիստանը մինչև 1963 թ.): Ներկայումս բոլոր դաշնային պետություններում գործում է երկպալատ խորհրդարան:

Սահմանադրական ամրագրման տեսանկյունից դաշնությունները բաժանվում են երկու տեսակի՝ *ազգային-պետական (հանրապետություններ)* և *վարչատարածքային (միավորումներ)*:

Կենտրոնի և դաշնության սուբյեկտների միջև ձևավորված ուժերի իրական հավասարակշռության տեսանկյունից քաղաքագետներն առանձնացնում են դաշնության հետևյալ տեսակները՝

Կեղծ-դաշնություն, երբ այն գործնականում գոյություն ունի բացառապես օրենքների մակարդակով, որոնք իրական քաղաքական կյանքում չեն գործում: Այս դեպքում պահպանվում է կենտրոնի լիակատար գերիշխանությունը դաշնության սուբյեկտների նկատմամբ:

Դասական դաշնություն, երբ քաղաքական իշխանությունը բաժանվում է կենտրոնական և մարզային կառավարությունների միջև, որոնցից յուրաքանչյուրն իր գործունեության շրջանակներում ունի հարաբերական ինքնավարության:

Արտահերթ դաշնություն, որը ձևավորում է սոցիալական և տնտեսական ցնցումների (պատերազմ, տնտեսական ճգնաժամ և այլն) ժամանակ: Այս

դեպքում դաշնության սուբյեկտները որոշակի ժամանակով իրենց իրավասությունների մի մասը կամովին զիջում են կենտրոնական իշխանությանը:

Երկդեմ դաշնություն, որի դեպքում դաշնության անդամներն ունեն անհավասար իրավական և սահմանադրական կարգավիճակ: Հետևաբար նրանց իրավունքներն ու հնարավորությունները մեծապես տարբերվում են միմյանցից:

Ազգային-մշակութային դաշնություն, որի դեպքում պետության հիմնական գործառույթներից մեկը բնակչության որոշակի խմբերին՝ կրոնական, էթնիկական փոքրամասնություններին, ինքնավարության տրամադրումն է, հատկապես այն դեպքում, երբ դրանք ունեն վառ ընդգծված ենթամշակութային առանձնահատկություններ:

Դաշնության տվյալ գործառույթի վերլուծության համար նպատակահարմար է օգտագործել Չարլզ Թարլթոնի առաջարկած դաշնության *համատիպ* և *տարատիպ* տեսակները:

Համատիպ դաշնությունները կազմված են սոցիալական և մշակութային նմանություն ունեցող տարածքային միավորներից: Իսկ *տարատիպ դաշնություններում* սուբյեկտների սոցիալական և մշակութային հատկանիշները խիստ տարբերվում են միմյանցից:

Համատիպ դաշնությունների շարքին կարելի է դասել՝ Ավստրալիան, Ավստրիան, Գերմանիան, ԱՄՆ-ը, իսկ տարատիպ դաշնությունների շարքին՝ Ռուսաստանը, Կանադան, Շվեյցարիան և Բելգիան: Պետք է նշել, որ հենց տարատիպ դաշնություններում են առավել հաճախ ծագում անջատողական տրամադրություններ: Պատահական չէ, որ տարատիպ դաշնությունների շարքին են դասվել նաև Խորհրդային Միությունը, Հարավսլավիան և Չեխոսլովակիան:

Սոցիոլոգիական դաշնությունը: Հաճախ դաշնության հայեցակարգը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ ինքնավարություն է տրամադրվում մասնավոր կամ հասարակական կազմակերպություններին, որոնք ներկայացնում են հասարակության որոշակի հատուկ խմբերին: Օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում և Նիդեռլանդներում վաղուց կենտրոնական կառավարությունները ճանաչել և ֆինանսական օգնություն են տրամադրում կրթության, առողջապահության և լրատվության ոլորտներում գործող տարբեր միություններին, որոնք ստեղծվել են հիմնական կրոնական և գաղափարախոսական ենթահանրությունների կողմից՝ կաթոլիկներ, բողոքականներ, սոցիալիստներ, ազատականներ: Այսպիսի դաշնությունը երբեմն անվանում են սոցիոլոգիական:

Կոնֆեդերատիվ (համադաշնային) միություններն իրենցից ներկայացնում են անկախ, ինքնիշխան պետությունների կամավոր միություն, որոնք

ունեն անկախ պետությանը հատուկ բոլոր տարրերը (գինանշան, օրհներգ, մայրաքաղաք, արժույթ, սահմանադրություն, միասնական քաղաքացիություն, միասնական իրավական համակարգ, միասնական դատական համակարգ և այլն): Համադաշնության անդամ յուրաքանչյուր պետություն անկախ պետություն է, սակայն նրանց միջև ձևավորվել են որոշ ընդհանրություններ՝ միասնական արժույթ, միասնական քաղաքացիություն, ընդհանուր մաքսային համակարգ, ընդհանուր տնտեսական տարածք: Համադաշնության արդի, դինամիկ զարգացող օրինակ կարող է լինել Եվրոպական Տնտեսական Համագործակցությունը (Եվրամիությունը): ԵՏՀ-ի անդամ Արևմտյան Եվրոպայի ինքնիշխան պետություններն այսօր առաջ են ընթանում քաղաքական, տնտեսական, հոգևոր և գիտական ինտեգրման ճանապարհով, ինչն ապահովում է բոլոր մասնակից երկրների համար արդյունավետ տնտեսական աճ:

Պետությունների համագործակցությունն ավելի հազվադեպ և նույնիսկ պետությունների ամորֆ (անձև) կազմակերպչական միավորում է, որը բնութագրվում է ընդհանուր հատկանիշներով և միատարրության որոշակի աստիճանով (օրինակ՝ ԱՊՀ): Այն ոչ թե պետություն է, այլ անկախ պետությունների միավորման մի տեսակ, որի հիմքում կարող է լինել որևէ միջպետական պայմանագիր, կանոնադրություն, հռչակագիր և այլն: Համագործակցության շրջանակներում կարող են ստեղծվել վերազգային կազմակերպություններ, որոնք կոչված են ոչ թե կառավարելու, այլ համակարգելու անդամ պետությունների որոշ գործողություններ: Դրամական միջոցները կարող են միավորվել կամավոր և այն չափերով, որքանով դրանք անհրաժեշտ և բավարար կհամարվեն համագործակցության սուբյեկտների կողմից:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Միապետություն
- Բացարձակ միապետություն
- Դուալիստական միապետություն
- Սահմանադրական միապետություն
- Ընտրովի միապետություն
- Հանրապետություն
- Նախագահական հանրապետություն
- Խորհրդարանական հանրապետություն
- Հանրապետության խառը ձև
- Ունիտար պետություն

- Դաշնություն
- Համադաշնություն
- Պետությունների համագործակցություն

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Պետության կառավարման ինչպիսի՞ ձևեր գոյություն ունեն:
2. Քանի՞ ճյուղերի է բաժանվում պետական իշխանությունը ժամանակակից աշխարհում:
3. Որո՞նք են բացարձակ միապետության բնորոշ գծերը:
4. Որո՞նք են դուալիստական միապետության բնորոշ գծերը:
5. Ո՞ր պետություններն են համարվում սահմանադրական միապետություններ:
6. Որո՞նք են նախագահական հանրապետության առանձնահատկությունները:
7. Ի՞նչ հատկանիշներով է տարբերվում նախագահական հանրապետությունը խորհրդարանական հանրապետությունից:
8. Արդի շրջանում ո՞ր պետություններն ունեն պետական ունիտար կառուցվածք:
9. Որո՞նք են դաշնային պետության տարատեսակները: Նշե՛ք դրանց առանձնահատկությունները:
10. Որո՞նք են համադաշնության և պետությունների համագործակցության միջև տարբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքագիտություն:** Ուս. ձեռնարկ ԲՈւՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
2. **Ачкасова В., Гуторова В.** Политология. Учебник для ВУЗов. 2006, 692 с.
3. **Пугачев В., Соловьев А.** Введение в политологию. Учебное пособие. 2000, АСПЕКТ ПРЕСС, Москва, 2000, 389с.
4. **Смирнова А., Тишукова В.** Основы политологии. Учебно-методическое пособие для высших учебных заведений. Новгород, НовГУ им. Ярослава Мудрого, 2002, 166 с.
5. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
6. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водлазова, В.Ю. Вельского. М., 2005, 544

ԹԵՄԱ 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնագույն ժամանակներից ի վեր քաղաքական մտածողներին մտահոգել է այն հարցը, թե ինչպես է տարբերվում կառավարման մի ձևը մյուսից: Դեռևս մթա. 4-րդ դարում Արիստոտելն առաջին անգամ փորձել է բնութագրել քաղաքական համակարգերը՝ օգտագործելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «ժողովրդավարությունը», «օլիգարխիան» և «բռնապետությունը», որոնք լայնորեն օգտագործվում են նաև այսօր: 18-րդ դարի սկզբին սկսեցին պետությունը բաժանել միապետության և հանրապետության, ինքնիշխան և սահմանադրական վարչակարգերի: Իսկ 20-րդ դարում ի հայտ եկան նոր և ավելի յուրահատուկ դասակարգումներ: Այսպես՝ «սառը պատերազմի» տարիներին աշխարհի քաղաքական քարտեզը բաժանվեց «երեք աշխարհների». համաշխարհային քաղաքականության մեջ գերակշռող դարձավ ժողովրդավարության և տոտալիտարիզմի միջև առձակատումը: Այսօր այս դասակարգումը ևս թվում է հնացած այնպիսի իրադարձությունների համեմատ, ինչպիսիք են՝ կոմունիզմի փլուզումը, Արևելյան Ասիայի առաջընթացը և քաղաքական իսլամի առաջացումը: Այսօր դեռևս պարզ չէ, թե ինչ են նշանակում այդ փոփոխությունները: Ումանց կարծիքով դրանք բնորոշվում են որպես արևմտյան ազատական ժողովրդավարության հաղթանակ, իսկ մյուսների կարծիքով՝ ժամանակակից աշխարհի հետագա քաղաքական մասնատում:

Դասակարգման ավանդական համակարգեր: Մինչ պետական կառավարման համակարգերի դասակարգման հարցին անդրադառնալը՝ տեսնենք, թե ինչը պետք է դասակարգել և ինչու: Այսպիսով՝ առաջին հարցը՝ ի՞նչ է «կառավարությունը» և ինչպե՞ս է այն տարբերվում «քաղաքական համակարգերից» կամ «վարչակարգերից»: «Կառավարություն» եզրույթը վերաբերում է ինստիտուտներին և գործընթացներին, որոնց շրջանակներում, որպես կանոն, ընդունվում են համընդհանուր և համապարտադիր որոշումներ: Քաղաքական համակարգը կամ վարչակարգը՝ հանդես է գալիս որպես ավելի լայն հասկացություն, որը ներառում է ոչ միայն իշխանության մեխանիզմները և պետական ինստիտուտները, այլև այն կառույցները և գործընթացները, որոնց միջոցով պետությունը փոխգործակցում է հասարակության հետ:

* Քաղաքագիտական որոշ տեսությունների համաձայն՝ «վարչակարգ» եզրույթն ունի նաև ավելի նեղ ընկալում: Այն արտացոլում է քաղաքական համակարգի պատմականորեն ոչ շարունակական այս կամ այն փիճակը:

Քաղաքական համակարգը հանդես է գալիս որպես հասարակական համակարգի ենթահամակարգ: Այն հանդիսանում է «համակարգ», քանի որ նրա բաղկացուցիչ մասերը գտնվում են ներքին փոխազդեցության մեջ: Իսկ «քաղաքական» է, քանի որ այդ փոխազդեցությունը տեղի է ունենում հասարակության մեջ իշխանության, հարստության և ռեսուրսների բաշխման համար (որոշ իմաստով՝ տնտեսական կյանքի կազմակերպումը բնութագրում է քաղաքական համակարգն այնպիսի որոշակիությամբ, ինչպես այդ համակարգում գործող պետական իշխանության մեխանիզմները): Այսպիսով՝ վարչակարգը կառավարման այնպիսի համակարգ է, որը պահպանվում է կառավարության փոփոխության ժամանակ: Կառավարությունները կարող են փոփոխվել ընտրությունների, պետական հեղաշրջումների և այլնի արդյունքում: Իսկ վարչակարգերը փոփոխվում են կամ արտաքին ռազմական միջամտության, կամ ներքին հեղափոխության հետևանքով:

Քաղաքական համակարգը հարաբերությունների համակարգ է, որով պետությունը արձագանքում է հասարակության այս կամ այն գործողություններին:

Ինչու է անհրաժեշտ դասակարգել քաղաքական համակարգերը:

Քաղաքական համակարգերի դասակարգումը կարևոր է երկու պատճառներով: Առաջին պատճառն այն է, որ քաղաքական համակարգն էպես պարզեցնում է քաղաքականության և պետական կառավարման ընկալումը: Ինչպես այլ հասարակական գիտություններում՝ քաղաքագիտությունում ևս ճանաչողությունը հիմնականում տեղի է ունենում համեմատության միջոցով: Համադրելով երևույթները՝ մենք կարող ենք նկատել նրանց միջև նմանությունները և տարբերությունները, ավելի հստակ տեսնել հետազոտության առարկան, տարբերել էականը ոչ էականից և այլն: Զուգահեռաբար, քաղաքագետը կարող է ձևակերպել սեփական վարկածներ, հայեցակարգեր, տեսություններ և նույնիսկ որոշ չափով ստուգել դրանք փաստացի նյութի հիման վրա: Մի խոսքով՝ ինչպես ասել է Ալեքսիս դը Ռոքվիլը. «Առանց երևույթների համադրության՝ բանականությունը չգիտի, թե դեպի ուր է գնում»: Ինչ վերաբերում է կառավարման համակարգերի դասակարգմանը, ապա այն պարզապես համեմատությունն ավելի մեթոդական և հետևողական դարձնելու միջոց է:

Երկրորդ պատճառն այն է, որ դասակարգումը պարզեցնում է ոչ միայն վերլուծությունը, այլև երևույթներին տրվող գնահատականը: Ի վերջո, Արիստոտելի ժամանակներից ի վեր քաղաքական մտածողները փորձել են ոչ միայն հասկանալ իշխանության էությունը, այլև կատարելագործել այն: Փիլիսոփայության մեջ նկարագրական տարրերը միշտ զուգակցվել են

նորմատիվ տարրերի հետ, այսինքն՝ «*հ'նչ կա*» հարցին զուգահեռ բարձրացվել է նաև «*հ'նչ պետք է լինի*» հարցը: Պատմության ընթացքում կատարյալ կառավարման համակարգի մշակման բազմաթիվ փորձեր են արվել: Օրինակ՝ Պլատոնի «Պետություն» աշխատությունը, Թոմաս Մորի «Ուտոպիա» աշխատությունը և այլն: Ամեն դեպքում, համեմատելով քաղաքական երևույթները միմյանց հետ՝ մենք հնարավորություն ենք ստանում նրանց տալու որոշակի որակական բնորոշում և գնահատական: Միայն համեմատական մոտեցման շրջանակներում է հնարավոր, օրինակ, դատողություններ անել այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են «Արդյո՞ք ողջունելի և խրախուսելի է նախկին սոցիալիստական երկրների անցումն ազատական ժողովրդավարության», «Արդյո՞ք պետք է Հնդկաստանը հրաժարվի դաշնային համակարգից հոգուտ միատարր համակարգի կամ շրջանների անկախության» և «Արդյո՞ք պետք է Մեծ Բրիտանիան ընդունի «գրված» Սահմանադրություն»:

Դասակարգման բոլոր համակարգերը, սակայն, ունեն իրենց թերությունները: 1) Ինչպես մյուս վերլուծական մեթոդները՝ նրանք ևս կրում են պարզեցման վտանգը: Վարչակարգերի դասակարգումը մեկ խորագրի ներքո ներառում է վերջինիս համապատասխան հատկանիշները, սակայն հնարավոր է, որ փակագծերից դուրս մնան նրանց միջև առկա էական որոշ տարբերություններ: Մեծ է վտանգը չնկատել նաև այն, որ միևնույն երևույթը տարբեր պայմաններում կարող է ունենալ տարբեր իմաստներ: Օրինակ՝ «պետության» ընկալումը ճապոնիայում և ողջ Արևելյան Ասիայում իր տեսակով և բնույթով կարող է էապես տարբերվել «պետության» արևմտյան ընկալումից: Հետևաբար՝ համեմատական վերլուծություն անցկացնելու ժամանակ պետք է մշտապես հաշվի առնել *էթնոցենտրիզմի* (ethnocentrism) վտանգը: 2) Դասակարգումները կարող են աղավաղվել արժեքային ներգործության տարբերություններով:

Կար մի ժամանակ, երբ քաղաքագետները կոմունիստական և ֆաշիստական վարչակարգերը միավորում էին միևնույն «սոտալիտար» խորագրի ներքո: Արդյունքում՝ ստեղծվել էր մի պատկեր, որի համաձայն՝ «սառը պատերազմի» տարիներին արևմտյան ազատական ժողովրդավարությունը, ըստ էության, պայքարում էր նույն թշնամու դեմ, ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: 3) Մեր դասակարգման բոլոր համակարգերին բնորոշ է ևս մեկ թերություն՝ նրանք պետությունը դիտում են *որպես անկյունաքար*, իսկ երկրները որպես ամբողջական և ինքնաբավ համակարգեր:

Դասական տիպաբանություններ: Պատմականորեն կառավարման համակարգերի դասակարգման առավել հեղինակավոր համակարգը մթա. 4-րդ դարում Արիստոտելի մշակած համակարգն է, որի համար որպես նյութ են հանդիսացել այդ ժամանակ գոյություն ունեցող հունական 158 պոլիսները (քաղաք-պետություններ): Արիստոտելից հետո այդ համակարգը մոտ 2500 տարի գերակայել է քաղաքական փիլիսոփայության մեջ: Արիստոտելը գտնում էր, որ կառավարությունները տարբերվում են միմյանցից երկու չափանիշներով՝ «ո՞վ է կառավարում» և «ու՞մ շահերին համապատասխան»: Իշխանությունը կարող է գտնվել մեկ անձի, խմբի կամ բազմաթիվ քաղաքացիների ձեռքում: Յուրաքանչյուր դեպքում այն կարող է ծառայել իշխողների նեղ խմբի՝ երբեմն նույնիսկ բացահայտ եսասիրական շահերին կամ ամբողջ համայնքի շահերին: Այսպիսով՝ Արիստոտելը տարբերում է կառավարման վեց ձև:

Գծապատկեր 1.

Ո՞վ է օգտվում կառավարման բարիքներից	Ո՞վ է կառավարում			
		մեկ հոգի	փոքրամասնությունը	մեծամասնությունը
	իշխողները	բռնապետություն	օլիգարխիա	ժողովրդավարություն
	բոլորը	միապետություն	արիստոկրատիա	պոլիտիա

Արիստոտելը ձգտում էր ըստ արժանվույն գնահատել կառավարման յուրաքանչյուր ձև և առանձնացնել դրանցից լավագույնը: Նա վատագույն կառավարման համակարգերի շարքին էր դասում *բռնապետությունը*, *օլիգարխիան* և *ժողովրդավարությունը*: Նրա կարծիքով՝ այս դեպքերում մեկ անձը, մարդկանց մի խումբը կամ զանգվածները իշխում են սեփական շահերին համապատասխան, հետևաբար՝ ի վնաս մյուսներին: Նրա համար կառավարման առավել առաջադեմ ձևերն էին *միապետությունը*, *արիստոկրատիան* (*ազնվապետություն*) և *պոլիտիան*: Այս համակարգերում, համապատասխանաբար, մեկ անձը, մարդկանց մի խումբը կամ հասարակության լայն զանգվածները կառավարում են բոլորի շահերին համապատասխան: Արիստոտելի համար կառավարման ամենավատ ձևը, իհարկե, *բռնապետությունն* էր, քանի որ այն հասցնում է մարդկանց ստրուկի կարգավիճակի: Բացի այդ, միապետության և արիստոկրատիայի դեպքում Արիստոտելը նշում է՝ արդյո՞ք իշխողներն իրենց մեջ կարող են գտնել

բարի կամք համընդհանուր բարիքը սեփական շահից գերադասելու համար: Այնուամենայնիվ, ըստ Արիստոտելի՝ կառավարման առավել կատարյալ և կայուն ձևը *պոլիտիան* է, որը ենթադրում է շատերի իշխանություն հանուն բոլորի շահերի: Սակայն Արիստոտելը նաև քննադատում է ժողովրդի կառավարումն այն իմաստով (այս փաստարկը պահպանվում է մինչև 20-րդ դարը), որ եթե զանգվածների համակի նախանձը հարուստ հայրենակիցների նկատմամբ, ապա նրանք հեշտությամբ կարող են ենթարկվել դեմագոգների* ազդեցությանը: Փիլիսոփան, հետևաբար, նախապատվություն էր տալիս կառավարման «խառը» ձևին, որը կմիավորեր ժողովրդավարության և արիստոկրատիայի տարրերը, իսկ իշխանությունն այս դեպքում պետք է լիներ ոչ թե հարուստների կամ աղքատների, այլ «միջին խավի» ձեռքում: Հետագայում Արիստոտելի մշակած համակարգը զարգացրին այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Թոմաս Հոբսը և Ժան Բոդենը: Նրանք մշակեցին ինքնիշխանության սկզբունքը, որը, նրանց կարծիքով, ցանկացած պետության կայունության հիմքն է: Այս մտածողներն ինքնիշխանությունը մեկնաբանում էին որպես «բարձրագույն և անփոփոխ իշխանություն», ինչը միակն է, որ կարող է երաշխավորել կանոնակարգված կառավարում: Բոդենն իր՝ «Համընդհանուր բարիքի վեց սկզբունքներ» (1576) գրքում մանրամասն ուսումնասիրում է այն հարցը, թե ով է պետական իշխանության «կրողը» ինչպես հնագույն, այնպես էլ նոր ժամանակներում: Ի վերջո նա գալիս է այն եզրակացության, որ կառավարման առավել նախընտրելի ձև պետք է ճանաչվի *արսոյյուտիզմը*, քանի որ այստեղ իշխանության կրողը կառավարիչն է, ով իրավունք ունի թելադրելու օրենք, սակայն նա չի պարտավորվում մարդկային որևէ օրենքով: Ըստ Բոդենի՝ երբ իշխանությունը մեկ անձի ձեռքում է, պետությունը ստանում է միասնական և անբաժանելի ինքնիշխանության բոլոր առավելությունները: Սակայն միապետի կամքը սահմանափակվում է աստվածային օրենքով կամ մարդկանց բնական իրավունքով: Հոբսն իր հերթին մեկնաբանում էր ինքնիշխանությունը որպես հարկադրական իշխանության բացառիկ իրավունք: Նրա «Լեհիաթան» գրքում (1651) իշխողը բնութագրվում է որպես անսահմանափակ իշխանության կրող:

18-րդ դարի վերջին ժամանակակից սահմանադրական համակարգերի զարգացումը ավելի հստակ ցույց տվեց, որ դեռևս Արիստոտելից սերող քաղաքական համակարգերի դասական տիպաբանությունը հնանում է: 1775-1783 թթ. անկախության պատերազմից հետո ԱՄՆ-ում ձևավորված

* *Պենագոզ* - քաղաքական գործիչ, որը խոստումների միջոցով փորձում է իր կողմը գրավել զանգվածներին, որպեսզի հրահրի ամբոխի ոգևորությունը:

սահմանադրական հանրապետության համակարգը, 1789 թ. Ֆրանսիական հեղափոխության Յակոբինյան փուլը, Մեծ Բրիտանիայում ձևավորվող խորհրդարանական ժողովրդավարության յուրահատուկ ձևն աստիճանաբար իրենց հետ բերում էին նոր երևույթներ, որոնք պարզապես չէին կարող կանխատեսել ավելի վաղ ժամանակաշրջանի մտածողները: Դասական մոտեցումներն էլ ավելի արագ սկսեցին զիջել իրենց տեղը սահմանադրական և ինստիտուցիոնալ իշխանության նկատմամբ աճող հետաքրքրության պատճառով: Այս գործընթացի հիմքը դարձավ Մոնտեսքյոյի ուսմունքը. ավելի մեծ ուշադրություն սկսեցին դարձնել իշխանության ճյուղերի միջև փոխհարաբերություններին: Այսպիսով՝ ի վերջո հաստատվեց նոր տիպաբանություն, որը տարբերում էր քաղաքական համակարգի հետևյալ ձևերը՝ *միապետություն* և *հանրապետություն*, *խորհրդարանական* և *նախագահական*, *միատարր* և *դաշնային համակարգեր*:

20-րդ դարում պատմության ընթացքը կրկին փոխեց քաղաքական տիպաբանությունների չափանիշները: Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում ձևավորվեցին ավտորիտարիզմի նոր ձևեր՝ ստալինյան Ռուսաստանում, ֆաշիստական Իտալիայում և նացիստական Գերմանիայում: Աշխարհը բաժանվեց երկու՝ ժողովրդավարական և ամբողջատիրական համակարգերի միջև: Չնայած այն բանին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմը պարտվեց, ժողովրդավարության և ամբողջատիրության միջև հակադրությունն այնքան վառ էր, որ այն շատ քաղաքագետների համար դարձավ առաջիկա երկու տասնամյակների հետազոտության նյութ: Ավելի ուշ քաղաքագետները սկսեցին փնտրել դասակարգման նոր համակարգեր, որոնք պետք է լինեին առավել օբյեկտիվ և արժեքային տեսանկյունից չեզոք: Այսպիսով՝ ժամանակի ընթացքում ճանաչում ձեռք բերեց, այսպես կոչված, «երեք աշխարհների» հայեցակարգը, ըստ որի՝ քաղաքական աշխարհը կարելի է բաժանել երեք մասերի՝

- կապիտալիստական «առաջին աշխարհ»,
- կոմունիստական «երկրորդ աշխարհ»,
- զարգացող «երրորդ աշխարհ»:

Այս դասակարգումն ունի իր տնտեսական, գաղափարական, քաղաքական և ռազմական-ռազմավարական չափումները: Արևմտյան արդյունաբերական վարչակարգերն իրենց տնտեսական ներուժով հռչակվեցին «առաջին աշխարհի» երկրներ:

Կոմունիստական վարչակարգերը հռչակվեցին «երկրորդ աշխարհի» երկրները, քանի որ դրանք, ընդհանուր առմամբ, հաղթահարել էին արդյունաբերականացման գործընթացը և կարողանում էին բավարարել իրենց

բնակչության հիմնական նյութական կարիքների նվազագույն չափը: Ավելի քիչ զարգացած ասիական, աֆրիկյան և Լատինական Ամերիկայի երկրները հռչակվեցին «երրորդ աշխարհի» երկրներ այն պատճառով, որ դրանք գտնվում էին տնտեսական կախվածության մեջ և ունեին աղքատության բարձր մակարդակ:

Սակայն 1970-ական թթ. վերջին դասակարգման այս համակարգը հետզհետե կորցնում է իր համարժեքությունը: Օգտագործելով տնտեսական զարգացման նոր ռազմավարություններ՝ «երրորդ աշխարհի» շատ երկրներ Մերձավոր Արևելքի նավթային պետությունները, ասիական նոր արդյունաբերական երկրները և Լատինական Ամերիկայի որոշ երկրներ, թևակոխեցին բարգավաճման փուլ: Այդ երկրներից մյուսները, ընդհակառակը, դարձան ավելի աղքատ՝ կոչվելով «չորրորդ աշխարհ»:

1980-1990 թթ. ժողովրդավարացման գործընթացը Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ցույց տվեց, որ «երրորդ աշխարհի» վարչակարգերն այլևս հնարավոր չէ ամբողջությամբ համախմբել «ավտորիտար» վարչակարգի ներքո: Վերջապես, բազմաթիվ դժգոհությունները պատճառ դարձան, որպեսզի «երրորդ աշխարհ» նսեմացնող արտահայտությունը փոխարինվի «զարգացող աշխարհ» արտահայտությամբ:

Սակայն «երեք աշխարհների» հայեցակարգին առավել կործանարար հարվածը հասցրեցին, իհարկե, 1989-1991 թթ. Արևելյան Եվրոպայի հեղափոխությունները: Դրանց արդյունքում ԽՍՀՄ-ում փլուզվեց կոմունիզմը, և նախկին սոցիալիստական երկրներում սկիզբ դրվեց քաղաքական ազատականացմանը և շուկայական բարեփոխումներին: Այս ամենը Ֆրենսիս Ֆուկույաման բնորոշեց որպես «պատմության վերջ» (Ֆուկույամա, 1989), քանի որ բոլոր գաղափարական պայքարներն ավարտվեցին արևմտյան ազատական ժողովրդավարության հաղթանակով: Իսկ ինչ վերաբերում է «երկրորդ» և «երրորդ աշխարհի» վարչակարգերին, ապա նրանք պետք է գիտակցեն, որ առաջիկայում միայն կապիտալիստական «առաջին աշխարհն» է իրապես ճիշտ տնտեսական բարգավաճման և քաղաքական կայունության հեռանկարը:

Քաղաքական համակարգի հիմնական հայեցակարգերը: Քաղաքական համակարգի ժամանակակից տեսությունների հիմքում ընկած է քաղաքականության՝ որպես ինքնուրույն ամբողջականության ընկալումը: Քաղաքականության այսպիսի սահմանումը բնորոշ է եղել անցյալի հայտնի մտածողներ Արիստոտելին, Հոբսին և այլոց: Առաջին մտածողը, ով զարգացրել է այս մոտեցումը, քաղաքագետների պնդմամբ, Նիկոլո Մաքիավելին է (1469-1527), ով ռացիոնալ հիմքերից ցույց է տվել, որ քաղաքականությունն ունի իր քաղաքական նպատակները՝ պետության

միասնությունը և ամբողջականությունը, որոնք չեն կապվում ո՛չ կրոնի, ո՛չ բարոյականության, ո՛չ էլ տնտեսության հետ: Քաղաքականության՝ որպես մարդկային գործունեության հատուկ ձևի վերլուծության համար Մաքիավելին համարվում է քաղաքական գիտության հիմնադիրը:


«Քաղաքական համակարգ» հասկացությունը տարածում է գտել և հիմնավորվել է միայն 20-րդ դարի կեսին:

Համակարգերի տեսությունը ծագել է կենսաբանության մեջ 20-րդ դարի 20-ական թթ., սակայն հասարակական գիտություններում այն սկսել է օգտագործվել տասնյակ տարիներ անց: Մոցիլոզիայում համակարգային մոտեցման գործածությունը կապված է Թալկոտ Պարսոնսի (1902-1979) անվան հետ: Քաղաքական համակարգի նշանակությունը Պարսոնսը տեսնում էր հասարակության ինտեգրման, ընդհանուր գործունեության արդյունավետության ապահովման և ընդհանուր նպատակների իրականացման մեջ: Սակայն Պարսոնսը մանրամասն և համակողմանիորեն չի մշակել այս հայեցակարգը:

Առաջին քաղաքագետը, ով նկարագրել է քաղաքական կյանքը համակարգային մոտեցման տեսանկյունից Դեյվիդ Իսթոնն է: Քաղաքական վերլուծության լավագույն մոդելներից մեկն Իսթոնի մշակած (1979, 1981) քաղաքական համակարգի մոդելն է:

Գծապատկեր 2.

Քաղաքական համակարգ



Այս մոդելը համակարգային վերլուծության հիման վրա պետք է լուծեր հավակնոտ մի խնդիր, այն է վերլուծել ամբողջ քաղաքական գործընթացը ներառելով նաև առաջատար քաղաքական ակտորների գործունեությունը: Համակարգը կազմակերպված և բարդ կառուցվածքային ամբողջություն է, փոխկապակցված և փոխկախված մասերի ընդհանրություն: Իսթոնի բնորոշմամբ՝ քաղաքական համակարգում գոյություն ունի կապ «մուտքի»

և «Ելքի» միջև: «Մուտքը» դեպի քաղաքական համակարգ իրենից ներկայացնում է հասարակության պահանջները և դրսևորումները: Այդ պահանջները տատանվում են բնակչության կենսամակարդակի բարձրացումից, աշխատանքային պայմանների բարելավումից, սոցիալական նպաստների բարձրացումից մինչև փոքրամասնությունների շահերի և մարդու իրավունքների պաշտպանություն: Իսկ աջակցության ձևերն այն միջոցներն են, որոնցով հասարակությունը նպաստում է քաղաքական համակարգի գործառնությանը՝ հարկերի վճարում, քաղաքական որոշումների հետ համաձայնում, քաղաքական մասնակցություն: Իսթոնի պնդմամբ՝ պահանջները թուլացնում են քաղաքական համակարգը, իսկ աջակցությունը, ընդհակառակը, ուժեղացնում է այն: «Ելքի» գործառույթն իրենից ներկայացնում է կառավարության որոշումները և գործողությունները, որոնք ներառում են տարբեր ծրագրեր, օրենքների ընդունում և կիրառում, հարկման և հասարակական միջոցների բաշխման մասին որոշումներ: Հետևաբար՝ քաղաքական համակարգի կայունությունը կախված է այն բանից, թե որքանով է «ելքը» հավասարակշռված «մուտքի» նկատմամբ: Իսթոնի քաղաքական համակարգի մոդելում, օրինակ՝ քաղաքական կուսակցությունները և շահերի խմբերը ներկայացված են որպես «դռնապաններ», որոնց գլխավոր խնդիրը դեպի քաղաքական համակարգ «մուտքի» հոսքը կարգավորելն է: Միայն պետք է հիշել, որ կուսակցություններն ու քաղաքական խմբերը կառավարում են հասարակական տրամադրությունները և դրանով իսկ նպաստում հասարակական պահանջների ավելի հստակ ձևավորմանը:

Մի խոսքով, դրանք, ըստ էության, շատ ավելի հետաքրքիր և բարդ ինստիտուտներ են, քան ներկայացված է մոդելում:

Նույն կերպ, Իսթոնի մոդելն ավելի լավ է բացատրում, թե ինչպես և ինչու է քաղաքական համակարգը արձագանքում հասարակության ճնշմանը, քան թե ինչու է այն դիմում ճնշումների և հարկադրանքի, ինչն այս կամ այն չափով տեղի է ունենում բոլոր քաղաքական համակարգերում:

Քաղաքական համակարգի ուսումնասիրությունը նրա գործառույթների տեսանկյունից հիմք է դարձել ֆունկցիոնալիզմի՝ որպես վերլուծության մեթոդի ձևավորման համար: Այս գործում մեծ ներդրում ունի ամերիկացի քաղաքագետ Գաբրիել Ալվինդը (1911-2002): Իր՝ «Համեմատական քաղաքական համակարգեր» աշխատանքում նա ուսումնասիրել է 1950-60 թթ. զարգացող երկրներում արևմտյան համակարգերի փոխանցման և կիրառման բացասական ազդեցությունը: Հայտնվելով այլ ոչ արևմտյան սոցիալ-տնտեսական, մշակութային և կրոնական միջավայրում՝ քաղա-

քական ինստիտուտները չեն կարողացել իրականացնել բազմաթիվ գործառույթներ և, ինչն ամենակարևորն է, հասնել հասարակության կայուն զարգացմանը: Ալմոնդը գլխավորեց համեմատական ուսումնասիրությունները, որոնք, գնահատելով տարբեր քաղաքական համակարգեր, փորձում էին սահմանել արդյունավետ սոցիալական զարգացմանը նպաստող գործառույթներ: Քաղաքական համակարգերի համեմատական վերլուծությունը ենթադրում էր անցում ֆորմալ ինստիտուտների հետազոտությունից դեպի քաղաքական վարքագծի կոնկրետ դրսևորումների հետազոտության: «Ինստիտուտ», «կազմակերպություն», «խումբ» հասկացությունների փոխարեն Ալմոնդը նախընտրեց «դերի» հասկացությունը, որի ներքո հասկացվում էր ֆորմալ և ոչ ֆորմալ փոխազդեցություն: Ելնելով դրանից՝ Ալմոնդը սահմանեց քաղաքական համակարգը որպես դերերի և դրանց փոխազդեցությունների ամբողջություն, որոնք իրականացվում են ոչ միայն պետական ինստիտուտների, այլև բոլոր քաղաքական կառույցների կողմից: Կառույց ասելիս նա նկատի ուներ փոխկապակցված դերերի ամբողջությունը: Ըստ Ալմոնդի՝ քաղաքական համակարգը պետք է արդյունավետ կերպով իրականացնի երեք խումբ գործառույթներ՝ ա) արտաքին միջավայրի հետ փոխազդեցության գործառույթներ, բ) քաղաքական համակարգի ներսում փոխկապակցվածության գործառույթներ, գ) համակարգի պահպանման և հարմարեցման գործառույթներ:

Գերմանացի քաղաքագետ Կարլ Դոյչը (1912-1992) ուսումնասիրում է քաղաքական համակարգը «հաղորդակցական մոտեցման» համատեքստում: Իր «Ազգայնականություն և սոցիալական կապ» և «Կառավարման նյարդեր» աշխատանքներում Դոյչը, որոշ հեղինակների կարծիքով, կապել է քաղաքական համակարգի էությունը կիբեռնետիկական մեքենայի հետ: Քաղաքականությունը Դոյչը հասկանում է որպես իրենց նպատակներին հասնելու համար մարդկանց ջանքերի կառավարման և համակարգման գործընթաց: Նպատակների ձևակերպումը, դրանց ճշգրտումը կատարվում են քաղաքական համակարգի կողմից այդ նպատակների նկատմամբ հասարակության դիրքորոշման մասին տեղեկատվության հիման վրա: Հետևաբար՝ քաղաքական համակարգի գործառույթությունը կախված է նախ տեղեկատվության որակից և ծավալից, որը գալիս է արտաքին միջավայրից, ինչպես նաև ինքնին համակարգի շարժման մասին տեղեկատվությունից: Տեղեկատվության այդ երկու հոսքերի հիման վրա կայացվում են քաղաքական որոշումները: Այսպիսով՝ Դոյչի տեսությունը հիմնված է հասարակական համակարգում տեղեկատվության վճռորոշ դերի և դրա ազդեցության վրա: Տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների զանգվածային ներդրումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տե-

ղեկավարությունը վերածում են «կառավարման նյարդերի», որը մեծապես կանխորոշում է իշխանության արդյունավետությունը: Սակայն դա անտեսում է այլ փոփոխականների նշանակությունը՝ այդ թվում նրանց, որոնք ազդում են տեղեկատվության փոխանցման գործընթացի վրա «վերնից ներքև», և հակառակը՝ այնպիսիք, ինչպիսիք են քաղաքական կամքը, գաղափարական նախասիրությունները և այլն, որոնք կարող են ազդել տեղեկատվության ընտրության և այն որոշումների կայացման կենտրոններ հասցնելու մեթոդների վրա:

Վերը նշված տեսություններից բացի՝ քաղաքագիտության մեջ առանձնացնում են քաղաքական համակարգի այլ տեսություններ ևս, օրինակ՝ Դեյվիդ Թրումենի (1913-2003) քաղաքական համակարգի տեսությունը, որը ներկայացված է նրա «Ամերիկյան քաղաքական համակարգի ճգնաժամը» և «Կառավարման գործընթաց» աշխատանքներում: Այս տեսությունը հիմնված է սոցիալական բազմակարծության և «ճնշման խմբերի» տեսական դրույթների համատեքստում քաղաքական համակարգի և նրա կառուցվածքի վերլուծության վրա: Քաղաքագետները դիտարկում են նաև Պաուելի և Կապլանի քաղաքական համակարգի տեսությունը, որը էքստրապոլյացիայի փաստացի փորձ է փոխանցելու Իսթոնի հիմնական դրույթներն այս կամ այն երկրի ներքին քաղաքական կյանքից դեպի արտաքին կապերի ոլորտ:

Քաղաքական համակարգի կառուցվածքը և գործառույթները: Քաղաքական համակարգի էության մասին տեսական գաղափարները սահմանում են վերջինիս կառուցվածքը: Քաղաքական համակարգի կառուցվածքում դերային պատկերացումները (Գ. Ալմոնդ, Մ. Վայնշտեյն և այլք) առանձնացնում են այնպիսի առաջնային տարրեր, ինչպիսիք են՝ դերերը, փոխազդեցությունները, քաղաքական վարքագծի ձևերը և մոդելները: Ինստիտուցիոնալ մոտեցումը (Դ. Իսթոն, Ռ. Խան և այլք) թույլ է տալիս վերլուծել քաղաքական համակարգերն այնպիսի տարրական միավորների տեսանկյունից, ինչպիսիք են՝ անհատները, խմբերը, կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները, ճնշման խմբերը, քաղաքական կուսակցությունները և այլն: Քաղաքական համակարգի կիրճնետիկական մեկնաբանությունը նրա կառուցվածքում առանձնացնում է մուտքեր և ելքեր, ուղիղ և հետադարձ կապեր, որոշումների ընդունման գործընթացներ և այլն:

Առավել տարածված է քաղաքական համակարգի կառուցվածքի համակարգային մոտեցումը, ըստ որի՝ քաղաքական համակարգը բաղկացած է ենթահամակարգերից, որոնց փոխազդեցությունը ձևավորում է քաղաքական ամբողջականություն:

Քաղաքական համակարգի հիմնական բաղադրիչն *ինստիտուցիոնալ ենթահամակարգն* է, այսինքն՝ պետական, կուսակցական, հասարակական և քաղաքական ինստիտուտների ամբողջությունը, որոնք արտահայտում և ներկայացնում են տարբեր նշանակության շահեր՝ համընդհանուրից մինչև խմբային և մասնավոր: Հասարակական շահերի իրականացման ամենակարևոր գործիքը պետությունն է: Առավելագույնս իր ձեռքում կենտրոնացնելով իշխանությունը և ռեսուրսները՝ պետությունը բաշխում է արժեքները և ստիպում բնակչությանը հետևել իր պարտադիր որոշումներին: Բացի պետությունից ինստիտուցիոնալ ենթահամակարգը ներառում է ինչպես քաղաքական կազմակերպությունները, կուսակցությունները, ճնշման խմբերը, այնպես էլ ոչ քաղաքական կառույցները, որոնք, սակայն, հնարավորություն ունեն ազդելու իշխանության և հասարակության վրա: Այդ կազմակերպություններն են՝ ՁԼՄ-ները, եկեղեցին և այլն: Բնստիտուցիոնալ ենթահամակարգի կայունությունը որոշվում է նրա կառուցվածքային դերերի և գործառույթների տարբերակման և մասնագիտացման աստիճանով:

ՁԼՄ-ները և եկեղեցին հատուկ տեղ են գրավում քաղաքական համակարգում: ՁԼՄ-ները երբեմն անվանում են նաև «չորրորդ իշխանություն»: ՁԼՄ-ների քաղաքական դերը հիմնականում պայմանավորված է այն բանով, որ նրանք քաղաքական տեղեկատվության մշակման բավականաչափ անկախ կենտրոններ են: Քանի որ ժողովրդավարական համակարգերում ՁԼՄ-ները գործում են բավականաչափ ինքնուրույն, ապա նրանց կողմից արտադրված տեղեկատվությունը հաճախ կարող է պարունակել ընդդիմադիր տարրեր: Երբեմն մամուլի հրապարակումները կարող են նույնիսկ հանգեցնել քաղաքական վեճերի և պաշտոնատար անձանց հրաժարականի:

Եկեղեցու քաղաքական դերը պայմանավորված է նրա զանգվածային ազդեցության բնույթով: Պատմության ընթացքում՝ հատկապես միջնադարում, եկեղեցին պայքարել է քաղաքական տիրապետության և հասարակության մեջ գերակա դիրք գրավելու համար: Այդ պայքարն ավարտվել է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատման արդյունքում: Այս բաժանումն առավել ընդգծված է զարգացած ժողովրդավարական հասարակություններում, որտեղ եկեղեցին պետության նկատմամբ գրավում է լոյալ դիրք: Լատինական Ամերիկայի որոշ երկրներում եկեղեցին իրենից ներկայացնում է լուրջ քաղաքական ուժ, որը գործում է որպես բռնապետության դեմ ուղղված ընդդիմություն:

Իշխանության և ազդեցության ինստիտուտները կատարում են իրենց դերերը՝ հիմնվելով տարբեր նորմերի վրա (քաղաքական, իրավական, բա-

րոյական և այլն): Քաղաքական հարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջությունը ձևավորում է *նորմատիվ ենթահամակարգը*: Նորմերը նույն կանոններն են, որոնց հիման վրա տեղի է ունենում քաղաքական համագործակցությունը: Նորմերը կարող են սահմանվել օրենքների ձևով, կարող են փոխանցվել սերնդից սերունդ ավանդույթների, սովորույթների և խորհրդանիշերի ձևով:

Փոխգործակցության բոլոր հնարավոր ձևերն ինչպես միևնույն քաղաքական համակարգի ներսում (օրինակ՝ կուսակցությունների և պետության, քաղաքական և տնտեսական ենթահամակարգերի միջև), այնպես էլ տարբեր երկրների քաղաքական համակարգերի միջև ներկայացնում է *հաղորդակցական ենթահամակարգը*: Այն բնութագրում է իշխանության հրապարակայնությունը, նրա՝ երկխոսություն ծավալելու, համաձայնության ձգտելու, տարբեր խմբերի ընթացիկ պահանջներին արձագանքելու, ինչպես նաև հասարակության մեջ տեղեկատվության փոխանակման ունակությունը:

Իշխանության իրականացման միջոցների և մեթոդների, քաղաքական տեխնոլոգիաների ամբողջությունը կազմում է *գործառնության ենթահամակարգը*: Իշխանական հարաբերությունների իրականացման գործում հարկադրական կամ համաձայնողական մեթոդների գերակայությունը որոշում է իշխանության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունների և վերջինիս ինտեգրման միջոցների բնույթը: Քաղաքական համակարգի գործառնության ենթահամակարգը դրսևորվում է քաղաքական գործունեության ձևերում և ուղղություններում, տարբեր քաղաքական գործընթացներում, իշխանության իրականացման միջոցներում և մեթոդներում: Այս ամենն իր ընդհանրացված արտահայտությունն է գտնվում «քաղաքական վարչակարգ» հասկացության մեջ:

Ենթամշակույթների ամբողջությունը, դավանաբանական համակարգը, առաջնային արժեքները, համոզմունքները, քաղաքական վարքագծի մոդելները, քաղաքական մտածելակերպը կազմում են *մշակութային ենթահամակարգը*: Այս դեպքում քաղաքական փոխգործակցությունը պայմանավորվում է մշակութային և կրոնական միջավայրի միատարրության բնույթով: Որքան բարձր է մշակութային միատարրության աստիճանը, այնքան բարձր է քաղաքական ինստիտուտների արդյունավետությունը:

Քաղաքական համակարգի բոլոր ենթահամակարգերը փոխկապակցված են: Փոխգործակցելով միմյանց հետ՝ դրանք ապահովում են քաղաքական համակարգի կենսունակությունը, նպաստում են հասարակության մեջ վերջինիս գործառնությունների արդյունավետ իրականացմանը:

Քաղաքական կյանքի բարդ և բազմաշերտ կառուցվածքը պայմանավորում է *քաղաքական համակարգի գործառույթները*: Քաղաքական համակարգի գործառույթներն առաջին անգամ դասակարգել է Գաբրիել Ալմոնդը: «Զարգացող շրջանների քաղաքականություն» աշխատանքում նա առանձնացնում է քաղաքական համակարգի մուտքի և ելքի գործառույթները: Վերլուծելով քաղաքական համակարգի «մուտքի» և «ելքի» գործառույթները՝ Ալմոնդն ընդգծում է դրա բազմագործառնական բնույթը: «Մուտքի» գործառույթը նա ներկայացնում է որպես քաղաքական սոցիալականացում, զանգվածների հավաքագրում, համախմբում, նրանց շահերի արտաբերում և ընդհանրացում, իսկ «ելքի» գործառույթը որպես կանոնների հաստատում (օրենսդրական գործունեություն), կանոնների կիրառում (կառավարչական գործունեություն) և վերահսկողական գործունեություն (դատական գործունեություն):

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են նաև քաղաքական համակարգի այլ գործառույթներ՝

- հասարակության նպատակների և խնդիրների սահմանումը,
- հասարակության մեջ իշխող շերտերի շահերին համապատասխան քաղաքական համակարգի կենսունակության համար անհրաժեշտ ծրագրերի մշակումը,
- այդ ծրագրերի իրականացման համար հասարակության հավաքագրումը,
- հոգևոր և նյութական արժեքների բաշխումը,
- պետական և հասարակական շահերի համաձայնեցումը,
- հասարակության ինտեգրումն ընդհանուր սոցիալ-քաղաքական նպատակների և արժեքների շուրջ:

Ընդհանուր առմամբ, քաղաքական համակարգն արդյունավետ է գործում այն դեպքում, երբ իրականացնում է իր գործառույթները: Քանի որ դրանք շատ բազմազան են, սպա դրանց արդյունավետության խնդիրը ևս միանշանակ չէ: Քաղաքական համակարգն արդյունավետ է, եթե չի մասնատում և չի բաժանում հասարակությունը, այլ նպաստում է նրա միավորմանը:

Քաղաքական համակարգի արդյունավետությունը պայմանավորվում է նաև հասարակության հետ հարաբերություններում որոշակի ինքնուրույնության պահպանմամբ և միջավայրի հետ ներդաշնակ հարաբերությունների ձևավորմամբ: Մասնագիտական գրականության մեջ լայն տարածում ունի քաղաքական համակարգերի հետևյալ դասակարգումը՝ *ամբողջատիրական*, *ավտորիտար* և *ժողովրդավարական* քաղաքական համակարգեր: Այս դասակարգման չափանիշը քաղաքական վարչակարգն է՝ որպես

քաղաքական իշխանության միջոցների և մեթոդների ամբողջություն, որը հիմնված է իշխանության, հասարակության և անհատի միջև փոխհարաբերությունների բնույթի վրա: *Ամբողջատիրական* քաղաքական համակարգին բնորոշ է հասարակության և անհատների լիակատար հնազանդությունը իշխանությանը, որը համապարփակ վերահսկողություն է իրականացնում քաղաքացիների նկատմամբ:

Ավտորիտարիզմն առանձնանում է քաղաքացիների նկատմամբ մեկ անձի կամ անձանց խմբի անսահմանափակ իշխանությամբ, երբ անհատները և հասարակությունը միաժամանակ կարող են պահպանել իրենց ինքնավարությունը հասարակական կյանքի ոչ քաղաքական ոլորտներում: *Ժողովրդավարությունը* բնութագրվում է որպես հասարակության (մեծամասնության) վերահսկողություն անձի նկատմամբ:

Ֆրանսիացի քաղաքագետ Ժան Բլոնդելը (1929) տարբերում է քաղաքական համակարգերի հինգ տիպեր: *Ազատական ժողովրդավարությունը* քաղաքական որոշումների կայացման ժամանակ հիմնվում է ազատական սկզբունքների վրա: *Կոմունիստական* համակարգերում նախընտրելի է հասարակական բարիքների բաշխման հավասարության սկզբունքը: *Ավանդական* համակարգը տարբերվում է օլիգարխիայի տիրապետությամբ և սոցիալական անհավասարության պաշտպանությանն ուղղված պահպանողականությամբ: Հետպատերազմյան տարիներին զարգացող երկրներում ձևավորված *պոպուլիստական* համակարգերը ձգտում են բարիքների բաշխման հավասարության ավտորիտար միջոցներով: *Ավտորիտար-պահպանողական* համակարգերում իրականացվում է ձևավորված անհավասարության պահպանմանն ուղղված քաղաքականություն, որը խոչընդոտում է հավասարության և քաղաքական մասնակցության ձևավորմանը:

Ոչ պակաս տարածված է նաև քաղաքական համակարգերի դասակարգումը ըստ *ավանդական* և *արդիականացված* տիպերի: *Ավանդական* համակարգերի հիմքում ընկած են թերզարգացած քաղաքացիական հասարակությունը, քաղաքական դերերի թույլ տարբերակումը, իշխանության հիմնավորման խարիզմատիկ մոտեցումը: *Արդիականացված* համակարգերում գոյություն ունի զարգացած քաղաքացիական հասարակություն, և գործում է իշխանության հիմնավորման ռացիոնալ ձևը:

Մարքսիստական մոտեցման հիման վրա ևս մշակված է քաղաքական համակարգերի տիպաբանություն, որը հիմնված է այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են՝ հասարակարգի ձևը և սոցիալ-տնտեսական կառուցվածքի բնույթը: Ըստ այդմ՝ տարբերում են *ստրկատիրական*, *ճորտատիրական*, *բուրժուական* և *սոցիալիստական* քաղաքական համակարգեր: Այս

տիպաբանության տարբերակիչ առանձնահատկությունը նրա տեսակներից յուրաքանչյուրի բավականին կոշտ հակազդեցություն է մյուսների նկատմամբ:

Գոյություն ունեն քաղաքական համակարգի դասակարգման այլ ձևեր ևս, ինչը վկայում է քաղաքական աշխարհի բազմաչափության մասին, որի դեպքում այս մոտեցումներից ոչ մեկն առանձին վերցված բավարար չէ: Ավելի լիարժեք պատկերացում ստանալու համար պահանջում է բազմաչափ մոտեցում:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական համակարգ
- Ամբողջատիրական քաղաքական համակարգ
- Ավտորիտար (հեղինակագոր) քաղաքական համակարգ
- Ժողովրդավարական քաղաքական համակարգ
- Կոմունիստական քաղաքական համակարգ
- Ավանդական քաղաքական համակարգ
- Պոպուլիստական քաղաքական համակարգ

ՀԱՐՑԵՐ ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք պետությունների դասակարգման արիստոտելյան մոտեցումը պահպանել է իր նշանակությունը արդի աշխարհում:
2. Արդյո՞ք այսօր աշխարհում կա երկիր, որը կարելի է բնորոշել որպես «երրորդ աշխարհի» երկիր:
3. Արդյո՞ք հետկոմունիստական պետություններն ամբողջությամբ հաղթահարել են կոմունիստական անցյալը:
4. Ինչո՞ւ ազատական-ժողովրդավարական կառույցները պատմականորեն եղան ավելի արդյունավետ և հաջողված:
5. Ինչպիսի՞ երկու փոխկապակցված նշանակություն ունի քաղաքական համակարգի հասկացությունը ժամանակակից գիտության մեջ:
6. Ինչպիսի՞ն է քաղաքական համակարգի տեսության մեթոդաբանական և կիրառական նշանակությունն արդի պայմաններում:
7. Հաշվի առնելով տարբեր չափանիշներ՝ տվե՛ք ժամանակակից քաղաքական համակարգերի դասակարգումը:
8. Ինչո՞վ են պայմանավորված քաղաքական համակարգերի տարբերությունները:

9. Որո՞նք են քաղաքական համակարգի առավել կարևոր գործառույթներն ըստ Ալմոնդի:
10. Ինչո՞վ են չափվում Ալմոնդի դասակարգմամբ քաղաքական համակարգի տիպերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ* Պրակ Բ, Եր., 2005, 51 էջ:
2. *Քաղաքագիտություն*: Հանրագիտական բառարան: Եր., 2004, 487 էջ:
3. *Քաղաքագիտություն*: Ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
4. *Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.* Сравнительная политология сегодня: Мировой обзор: Учебное пособие/Сокр. пер. с англ. А С. Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А Ю. Мельвиля. М., 200, 537 с.
5. *Анохин М.* Политические системы: адаптация, динамика, устойчивость. (Теоретико-прикладной анализ). М., 1996.
6. *Бжезинский З.* Великая шахматная доска. М., 1998, 256 с.
7. *Соловьев А.* Политология. Политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
8. *Хейвуд Э.* Политология Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
9. *Easton D.* The Political System: An Inquiry into the State of Political Science. New York: Alfred A. Knopf. 1953, 320 p.

ԹԵՄԱ 5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Պետության էությունը որոշվում է մի շարք առանձնահատկություններով, որոնցից մեկը **քաղաքական վարչակարգն** է (քաղաքական ռեժիմ): «Քաղաքական վարչակարգ» հասկացությունը ներմուծվել է քաղաքագիտություն այն պատճառով, որ պետության կառուցվածքի, գործառույթների և կառավարման ձևերի վերլուծությունը դեռ բավարար չէ պետության քաղաքական կյանքի մասին ճշգրիտ և լիարժեք պատկերացում կազմելու համար: Օրինակ՝ Պարավայր և ԱՄՆ-ն ունեն միևնույն հանրապետական կառավարման ձևը, սակայն նրանք տարբերվում են իրական քաղաքական կյանքով: Այդ տարբերությունները հնարավոր չէ բացատրել առանց քաղաքական վարչակարգերի վերլուծության: Կամ ենթադրվում է, որ հանրապետական կառավարման ձևը պետք է լինի ավելի ժողովրդավարական, քան միապետականը: Օրինակ՝ Ճապոնիան սահմանադրական միապետություն է, իսկ Իրաքը հանրապետություն: Մակայն ժողովրդավարության մակարդակը Ճապոնիայում մի քանի անգամ ավելի բարձր է, քան հանրապետական կառավարման ձև ունեցող Իրաքում: Այս հանգամանքը ևս պայմանավորված է այդ երկրների քաղաքական վարչակարգերի միջև գոյություն ունեցող արմատական տարբերություններով:

Այս ամենից պարզ է դառնում, թե ինչու է **«քաղաքական վարչակարգ»** հասկացությունը ներմուծվել քաղաքագիտության հասկացական ապարատ, որտեղ զբաղեցնում է բավականին կարևոր տեղ: Ի՞նչ են հասկանում հետազոտողները քաղաքական վարչակարգ ասելիս, և որո՞նք են դրա հիմնական հատկանիշները:

Առաջիններից մեկը, ով գիտական շրջանառության մեջ է դրել քաղաքական վարչակարգի հասկացությունը, ֆրանսիացի քաղաքագետ **Մորիս Դյուվերժեն** է: Նա սահմանում է քաղաքական վարչակարգը որպես պետական կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման գործընթաց, որին մասնակցում են քաղաքական կուսակցությունները և ճնշման խմբերը: Հետագայում այս հասկացությունը բազմիցս փոփոխվել և ճշգրտվել է, սակայն այն դեռ շարունակում է մնալ քաղաքագետների միջև երկարատև քննարկումների և բանավեճերի առարկա:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են քաղաքական վարչակարգի սահմանման մի քանի մոտեցումներ՝

- քաղաքական վարչակարգը նույնացվում է քաղաքական համակարգի հետ,

- քաղաքական վարչակարգն ընկալվում է որպես հասարակության կառավարման համակարգ (ձև),
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես գաղափարախոսական, ինստիտուցիոնալ և սոցիոլոգիական տարրերի ամբողջություն, որոնք նպաստում են երկրի քաղաքական իշխանության ձևավորմանը որոշակի ժամկետով,
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես քաղաքական համակարգի գործառնության ղեկավարիչ. այս մոտեցման դեպքում քաղաքական վարչակարգը ներառում է քաղաքական հարաբերությունների զարգացման մեթոդները, միջոցները և մեխանիզմները,
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես հասարակության քաղաքական համակարգի գործառնության և դրա հիմնական տարրերի փոխկապակցվածության ձև,
- քաղաքական վարչակարգը հասկացվում է որպես տվյալ հասարակության պետական իշխանության կառուցվածքի, դրա մեթոդների և միջոցների համակարգ, որը պայմանավորված է տվյալ հասարակության զարգացվածության աստիճանով,
- քաղաքական վարչակարգը սահմանվում է որպես հանրային իշխանության ինստիտուտների և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունների ձև:

Վերը նշված մոտեցումների համադրման և վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել քաղաքական վարչակարգի հետևյալ սահմանումը ***քաղաքական վարչակարգը հասարակության մեջ քաղաքական իշխանության իրականացման մեթոդների և միջոցների ամբողջությունն է: Քաղաքական վարչակարգը բնորոշում է հասարակության քաղաքական համակարգի գործառնության ձևը, պետության և քաղաքացիական հասարակության միջև կապի իրականացման մեթոդները և ձևերը, որոնց օգնությամբ պետությունն իրականացնում է իր սոցիալական դերը:***

Այսպիսով՝ քաղաքական վարչակարգը թույլ է տալիս վեր հանել քաղաքական իշխանության ամբողջական և իրական պատկերը, բնութագրել հասարակության քաղաքական կյանքը և դրա պայմանները, քաղաքական համակարգի զարգացվածության աստիճանը: Քաղաքական վարչակարգի բնութագիրը ներառում է հետևյալ տարրերը

- տվյալ քաղաքական վարչակարգի առաջացման պայմանները (քաղաքական իշխանության առաջացման ձևը),
- պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների բնույթը,

- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման աստիճանը,
- պետական իշխանության իրականացման բնույթն ու չափը,
- քաղաքական վարչակարգի լեգիտիմությունը,
- քաղաքական կյանքում բանակի, ռատիկանության, հատուկ ծառայությունների տեղն ու դերը,
- իշխանական մարմինների աշխատանքի հրապարակայնության, թափանցիկության աստիճանը և հասարակության կողմից դրանց վերահսկողության չափը,
- տեղական ինքնակառավարման մարմինների դերը քաղաքական գործընթացում,
- քաղաքական կուսակցությունների առկայությունը, դրանց ներքին կառուցվածքը և կուսակցական համակարգի մոդելը,
- գաղափարախոսության դերը հասարակության մեջ,
- քաղաքական առաջնորդության բնույթը,
- քաղաքականության և հասարակական գործընթացների կառավարման գործում քաղաքացիների ներգրավվածության աստիճանը և բնույթը (քաղաքացիների քաղաքական վարքագծի ձևը),
- հասարակության մեջ անձի կարգավիճակը, նրա իրավունքները և ազատությունները,
- քաղաքական որոշումների ընդունման կարգը,
- ընդդիմության հետ հարաբերությունների բնույթը, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման մեթոդները:

Վերը նշված տարրերի շարքում առկա է համակարգաստեղծ տարր, որը սահմանում է այս կամ այն քաղաքական վարչակարգի էությունը: Ըստ որոշ հետազոտողների՝ այդ տարրը պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունների բնույթն է: Ըստ այդմ՝ տարբերում են պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունների երեք տեսակ

Առաջին՝ պետությունն իրականացնում է քաղաքացիական հասարակության կամքը: Փոխաբերական իմաստով՝ այն կատարում է գիշերային պահակի դեր: Եթե պետությունը խախտում է քաղաքացիական հասարակության անդամների իրավունքները, ապա վերջիններս իրավունք ունեն չեղյալ հայտարարել պետության որոշումը:

Երկրորդ՝ պետության և քաղաքացիական հասարակության միջև այնպիսի հարաբերություններ են, որոնց դեպքում պետությունն ամբողջությամբ ճնշում և հպատակեցնում է քաղաքացիական հասարակությանը՝ քաղաքացիներին դարձնելով իր որոշումների հնազանդ կատարողներ:

Երրորդ՝ պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունները բնութագրվում են որոշակի հավասարակշռությամբ և հարաբերական հավասարությամբ:

Քաղաքական վարչակարգերի տիպաբանությունը: Քաղաքագիտության մեջ տարբերում են քաղաքական վարչակարգերի բազմաթիվ տիպեր: Ֆրանսիացի քաղաքագետ Մորիս Դյուվերժեն ըստ պետության ձևի տարբերում է *անզլիական*, *ամերիկյան* և *ռուսական*, իսկ ըստ կուսակցական համակարգի՝ *միակուսակցական* և *բազմակուսակցական* քաղաքական վարչակարգեր: Միակուսակցական քաղաքական վարչակարգը նա նույնացնում է բռնապետության հետ, իսկ բազմակուսակցական վարչակարգն անվանում է ազատական: Բռնապետությունը կարող է լինել *հեղափոխական* և *պահպանողական*:

Մեկ այլ ֆրանսիացի հետազոտող Ա. Օրիոն առանձնացնում է *նախագահական* (ԱՄՆ) և *խորհրդարանական* (Բուլալիա) վարչակարգեր, ինչպես նաև *դասական* (արևմտյան) *ժողովրդավարություն* և *ավտորիտար* վարչակարգ: Զարգացող երկրները նա բաժանում է խորհրդարանական (բազմակուսակցական համակարգ, օրինական ընդդիմության առկայություն) և նախագահական (ուժեղ գործադիր իշխանություն) վարչակարգերի միջև:

Ամերիկացի քաղաքագետ Ռ. Գեստիլը բաժանում է քաղաքական վարչակարգերը *ազատ*, *մասամբ ազատ* և *ոչ ազատ* տեսակների:

Մեկ այլ ամերիկացի քաղաքագետ Մ. Յանովեցը տարբերում է քաղաքական վարչակարգի հինգ տեսակ՝ 1) *անձնական-ավտորիտար*, 2) *զանգվածային-ավտորիտար*, 3) *մրցակցային-ժողովրդավարական*, 4) *քաղաքացիական-ռազմական կռալիցիա*, 5) *ռազմական օլիգարխիա*:

Բրիտանացի հետազոտող Կ. Կլեպիեմը տարբերում է քաղաքական վարչակարգի երեք տեսակ՝ 1) *ազատական-ժողովրդավարական*, 2) *ավանդապաշտական*, 3) *արմատական-ավանդապաշտական*:

Մեկ այլ բրիտանացի հետազոտող Ս. Բոյնհեմն իր հերթին առանձնացնում է հետևյալ քաղաքական վարչակարգերը՝ 1) *բազմակուսակցական խորհրդարանական ժողովրդավարություն*, 2) *ավանդական միապետություն*, 3) *միակուսակցական հավաքագրող*, 4) *խառը*, 5) *ռազմական*, 6) *ռազմական բռնապետություն*, 7) *արմատական գաղափարախոսական*:

Ուշագրավ է նաև բրիտանացի քաղաքագետ Է. Հելվուդի քաղաքական վարչակարգերի տիպաբանությունը: Նա առանձնացնում է հետևյալ քաղաքական վարչակարգերը՝ 1) *արևմտյան պոլիարխիաներ*, 2) *նոր ժողովրդավարություններ*, 3) *արևելյան-ասիական վարչակարգեր*, 4) *խալամական վարչակարգեր*, 5) *ռազմական վարչակարգեր*:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են նաև քաղաքական վարչակարգի բազմաթիվ այլ դասակարգումներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է գործածվել դրանց վերլուծության ժամանակ: Դժվար է ասել, թե վերը նշված քաղաքական վարչակարգի տեսակներից որն է առավել ճշմարիտ, քանի որ յուրաքանչյուր դասակարգման հիմքում ընկած է մեկ համակարգաստեղծ տարր: Այս տեսանկյունից առավել կարևոր է պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունների համակարգաստեղծ նշանակությունը, որի համաձայն՝ ընդունված է տարբերել քաղաքական վարչակարգերի հետևյալ հիմնական տեսակները՝

- **ամբողջատիրական (տոտալիտար),**
- **հեղինակազոր (ավտորիտար),**
- **ժողովրդավարական (դեմոկրատական):**

Քաղաքական վարչակարգի այս տիպերն ունեն նաև իրենց ենթատեսակները, որոնք նշված են ստորև բերված աղյուսակում՝

Գծապատկեր 3.

Քաղաքական վարչակարգի հիմնական տեսակները

<p><i>Ամբողջատիրական քաղաքական վարչակարգերը բաժանվում են՝</i></p> <p>ա) ֆաշիստական վարչակարգ, բ) ազգային-սոցիալիստական վարչակարգ, գ) ռազմական-բյուրոկրատական կոմունիստական վարչակարգ:</p>
<p><i>Ավտորիտար քաղաքական վարչակարգերը բաժանվում են՝</i></p> <p>ա) քաղաքացիական բռնապետություններ, բ) ռազմական բռնապետություններ, գ) աստվածապետական վարչակարգեր, դ) ռասիստական վարչակարգեր:</p>
<p><i>Ժողովրդավարական քաղաքական վարչակարգերը բաժանվում են՝</i></p> <p>ա) ազատական-ժողովրդավարական վարչակարգեր, բ) պահպանողական վարչակարգեր, գ) ամբխավարական (օլիգոկրատական) վարչակարգեր:</p>

Ամբողջատիրական քաղաքական վարչակարգ (ամբողջատիրություն): Ինչպես նշվում է գրականության մեջ՝ «ամբողջատիրություն» եզրույթն առաջին անգամ գործածվել է 20-րդ դարի սկզբում ազատականներ Դ. Ամենդոլայի և Պ. Գաբետայի կողմից Բենիտո Մուսոլինիի ֆաշիստական վարչակարգը դատապարտելու համար: Այս եզրույթը ծագում է լատիներեն «*totalis*» բառից, ինչը նշանակում է «ամբողջ, ընդհանուր»:

Ամբողջատիրությունը քաղաքական վարչակարգ է, որը ձգտում է պետական բացարձակ (ընդհանուր) վերահսկողություն հաստատել հասարակական և անհատական կյանքի բոլոր ոլորտներում և խստորեն կարգավորել դրանք:

Ամբողջատիրության էությունն առավել հստակ և հակիրճ սահմանել է իտալական ֆաշիզմի հեղինակ և առաջին ամբողջատիրական վարչակարգի առաջնորդ Մուսոլինին (1883-1945), որի բանաձևը հետևյալն էր՝ «Ամեն ինչ պետության համար, ոչինչ բացի պետությունից, ոչինչ ընդդեմ պետության»: Ամբողջատիրական քաղաքական վարչակարգը հակասում է քաղաքացիական հասարակության սկզբունքներին: Գործնականում այն տարածված է եղել 20-րդ դարի առաջին կեսին Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, ԽՍՀՄ-ում և այլն: Արդի շրջանում ամբողջատիրական վարչակարգի վառ օրինակ է Հյուսիսային Կորեան:

Մասնագիտական գրականության մեջ սովորաբար տարբերում են ամբողջատիրության հետևյալ հատկանիշները՝

- ազատ անհատի և քաղաքացիական հասարակության բացակայություն,
- գերկենտրոնացված իշխանություն, որն ունի բրգաձև կառուցվածք, որի գլխում կանգնած է առաջնորդը կամ խումբը, կառավարիչները որևէ պատասխանատվություն չեն կրում ընտրովի մարմինների առջև, նրանք իրենց ձեռքում են կենտրոնացնում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները,
- միասնական զանգվածային կուսակցության մենաշնորհը քաղաքական իշխանության նկատմամբ, որը ձևավորում է քաղաքական նպատակները, իրականացնում կադրերի ընտրությունը և բաշխումը,
- մենաշնորհային գաղափարախոսության առկայություն, որն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներն առանց բացառության,
- ներքին քաղաքականության մեջ մշտական և պարբերական ճնշամիջոցների առկայություն,
- ճյուղավորված պատժիչ համակարգի առկայություն,
- տնտեսության նկատմամբ խիստ պետական վերահսկողություն, ոչ պետական սեփականության բոլոր ձևերի վերացում,
- պետական մենաշնորհ ՋԼՄ-ների նկատմամբ, բազմակարծության լիակատար բացակայություն,
- ռազմական ճանապարհով քաղաքական ընդդիմության ճնշում,

- հասարակական կյանքի բոլոր բնագավառների ռազմականացման բարձր աստիճան:

Տարբերում են ամբողջատիրական վարչակարգի երեք ձև՝ *Ֆաշիզմ, ազգային սոցիալիզմ, ռազմական-բյուրոկրատական կոմունիզմ*:

Ֆաշիստական քաղաքական վարչակարգը ձևավորվել է 1922 թ. Իտալիայում (ղեկավար՝ Բենիտո Մուսոլինի): Այս վարչակարգը ձգտում էր վերականգնել հռոմեական կայսրության փառքը կոշտ պետական իշխանության սահմանման միջոցով, որը պետք է կազմակերպեր ողջ հասարակությունը հանուն ազգային վերածննդի մեծ պատմական նպատակների: Ֆաշիստական գաղափարախոսությունը հավակնում էր վերականգնել ազգային ոգին, ապահովել ազգի հավաքական ինքնությունը մշակութային կամ էթնիկ հիմքով: Ֆաշիզմի նպատակն էր պահպանել հասարակության ավանդական կառույցները՝ այդպիսով տալով կառավարությանը անսահմանափակ իշխանություն: Դրա հիմքը պետական կուսակցությունն էր:

Ազգային սոցիալիստական վարչակարգը ծագել է 1933 թ. Գերմանիայում: Նրան հատուկ են ամբողջատիրության բոլոր հատկանիշները՝ մեկ իշխող կուսակցության առկայությունը, մեկ գաղափարախոսությունը, մեկ խարիզմատիկ առաջնորդը, պետական և կուսակցական ապարատի միաձուլումը, պետական միջատությունը քաղաքացիների բոլոր գործերին, գերռազմականացումը, ճնշիչ-պատժիչ մարմինների առկայությունը: Ազգային սոցիալիզմի գաղափարախոսության մեջ առաջատար տեղ են գրավում ռասայական գերազանցության, ռասայական և ազգային ատելության գաղափարները: Հիմնական պայքարն ուղղված էր ուրիշի տարածքների գավթմանը և նվաճված ժողովուրդների ստրկացմանը:

Ռազմա-բյուրոկրատական կոմունիստական վարչակարգն առաջացել է ԽՍՀՄ-ում: Այս վարչակարգը ևս լավագույնս արտացոլում է ամբողջատիրության հիմնական հատկանիշները: Այս վարչակարգում ամեն ինչ, այդ թվում՝ տնտեսական կյանքը, գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ: Ի տարբերություն ֆաշիզմի և ազգային սոցիալիզմի՝ կոմունիստական վարչակարգում մասնավոր սեփականությունը լուծարվում է, հետևաբար՝ ոչնչանում է հասարակության անդամների անհատականության և ինքնավարության ցանկացած հիմք:

Ավտորիտար քաղաքական վարչակարգ (ավտորիտարիզմ): Հետագոտողները նշում են, որ ավտորիտարիզմն անցումային վարչակարգ է ամբողջատիրության և ժողովրդավարության միջև, այդ իսկ պատճառով այն ունի երկակի էություն: Մի կողմից այն կրում է ամբողջատիրության որոշ առանձնահատկություններ, իսկ մյուս կողմից նրա ներսում ձևավորվում են ժողովրդավարության որոշ տարրեր:

Ավտորիտարիզմը (լատիներեն «*autoritas*», որը նշանակում է «իշխանություն», «ազդեցություն») **քաղաքական վարչակարգ է, որը բնութագրվում է մեկ անձի (մի խումբ անձանց) կամ իշխանական մեկ մարմնի (հաճախ գործադիր) ձեռքում քաղաքական իշխանության կենտրոնացմամբ, որը կառավարում է բննապետական և կամայական մեթոդներով:**

Այս վարչակարգը շատ հաճախ հիմնվում է բանակի վրա: Այն միջամտում է հասարակության քաղաքական կյանքին, որպեսզի վերջ դնի երկարատև տնտեսական և քաղաքական ճգնաժամին, ինչն անհնար է հաղթահարել ժողովրդավարական և իրավական միջոցներով: Այսպիսի միջամտության արդյունքում ամբողջ իշխանությունը կենտրոնանում է քաղաքական առաջնորդի կամ իշխանական փոքր խմբի ձեռքում: Մասնագիտական գրականության մեջ տարբերում են ավտորիտարիզմի հետևյալ էական հատկանիշները՝

- պետության և քաղաքացիական հասարակության տարանջատում (քաղաքացիական հասարակությունը որոշ չափով ինքնուրույն է),
- իշխանության կենտրոնացումը մեկ անձի (մի խումբ անձանց) կամ մեկ պետական մարմնի (սովորաբար՝ գործադիր իշխանության) ձեռքում,
- ներկայացուցչական իշխանության և նրա ինստիտուտների գործունեության էական սահմանափակում,
- քաղաքական ընդդիմության և ինքնավարության տարբեր տարրերի նվազեցում, ժողովրդավարական քաղաքական գործընթացների կտրուկ կրճատում,
- քաղաքացիների օտարումը քաղաքականությունից,
- քաղաքացիներին թույլ է տրվում այն ամենը, ինչը չի արգելվում պետության կողմից,
- տոտալ ճնշիչ ապարատի բացակայություն,
- ժողովրդավարության մի շարք տարրերի ձևական առկայություն (ընտրություններ, խորհրդարանական պայքար, բազմակուսակցական համակարգ):

Տարբերում են ավտորիտարիզմի հետևյալ տեսակները՝ *քաղաքացիական բննապետություն, ռազմական բննապետություն, աստվածապետական վարչակարգ, ռասիստական վարչակարգ:*

Քաղաքացիական բննապետությունը բնութագրվում է քաղաքացիական անձի միանձնյա իշխանությամբ (օրինակ՝ Արաբական Արևելքի վարչակարգերը):

Ռազմական բննապետությունն առաջանում է ռազմական հեղաշրջման արդյունքում (օրինակ՝ Պիտցետի բննապետությունը Չիլիում): Ռազմական

բոնապետություններն առավել տարածված են Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում: Դրանք առանձնանում են իշխանության ծայրահեղ անկայունությամբ: Երբեմն իշխանության համար պայքարը վերածվում է քաղաքացիական պատերազմի: Մակայն կան դեպքեր, երբ հեղաշրջումն իրականացվում է մեկ գորամիավորման կողմից, ինչպես աֆրիկյան մի շարք երկրներում: Լատինական Ամերիկային հատուկ են սեփական զինված ուժերի միջոցով իշխանության եկած փոքր խմբերը՝ **ռազմական խունտան** (իսպանական «junta» բառից, որը նշանակում է «ժողով», «միություն»), երբ ժամանակավոր կառավարությունը ձևավորվում է գորահրամանատարների կողմից, ովքեր հենվում են կառավարման ճնշիչ մեթոդների և զանգվածային քաղաքական ահաբեկչության վրա:

Աստվածապետական վարչակարգը բնութագրվում է կրոնական որևէ խմբի ձեռքում քաղաքական իշխանության կենտրոնացմամբ: Օրինակ՝ այդպիսի վարչակարգ է սահմանվել Իրանում 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո: **Ռասիստական վարչակարգի** տիպային օրինակ էր Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը: Այս վարչակարգը հիմնվում էր սևամորթ մեծամասնության նկատմամբ սպիտակամորթ փոքրամասնության գերազանցության ազգային և ռասայական գաղափարախոսության վրա:

Ժողովրդավարական քաղաքական վարչակարգ (ժողովրդավարություն): Քաղաքական վարչակարգերի երրորդ դասական տեսակը ժողովրդավարությունն է: Այս եզրույթը բխում է հունարեն «*demos*»՝ «ժողովուրդ» և «*kratos*»՝ «իշխանություն» բառերից և, փաստորեն, նշանակում է ժողովրդի իշխանություն, ժողովրդավարություն: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ բոլոր մարդկանց կողմից քաղաքական իշխանության իրականացումը (այսպես կոչված՝ «անմիջական ժողովրդավարությունը») միայն կատարելատիպ է: Իսկ իրական ժողովրդավարությունը ժողովրդի կողմից ընտրված մարդկանց իշխանությունն է, որը կոչվում է ներկայացուցչական ժողովրդավարություն:

Ժողովրդավարական քաղաքական վարչակարգը քաղաքացիական հասարակության և պետության համագործակցության միջոց է, որի դեպքում ժողովուրդը ճանաչվում է որպես քաղաքական իշխանության ձևավորման աղբյուր: Նա իրավունք ունի մասնակցելու պետական և հասարակական հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը, իսկ քաղաքացիներն օժտված են բավականին լայն իրավունքներով և ազատություններով:

Ժամանակակից ժողովրդավարությունների փորձը թույլ է տալիս առանձնացնել այս քաղաքական վարչակարգին հատուկ հետևյալ ընդհանուր հատկանիշները՝

- պետական իշխանության և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ձևավորումը հավասար, ուղղակի, համընդհանուր և գաղտնի ընտրությունների միջոցով,
- քաղաքական իշխանության լեգիտիմությունը,
- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը և դրանց միջև հավասարակշռության և փոխզույգման մեխանիզմների առկայությունը,
- խորհրդարանի կողմից համապետական օրենքների ընդունման մենաշնորհը,
- քաղաքացիական հասարակության կողմից պետական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողական համակարգի առկայությունը,
- բազմակուսակցական համակարգը,
- մեծամասնության կողմից քաղաքական որոշումների ընդունումը փոքրամասնության շահերի և իրավունքների հարգանքի սկզբունքով,
- անձի քաղաքացիական, քաղաքական և սոցիալական իրավունքների երաշխիքները,
- քաղաքացիների իրավահավասարության երաշխիքը և յուրաքանչյուր մարդու իրավունքների ճանաչումը:

Ժողովրդավարական վարչակարգերը լինում են երեք տեսակի՝ *ազատական-ժողովրդավարական, պահպանողական, ամբոխավարական (օխլոկրատական)*:

Ազատական-ժողովրդավարական վարչակարգերի կենտրոնում գտնվում է անհատը իր իրավունքներով և ազատություններով, իսկ պետությունը պարտավոր է պաշտպանել քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու սեփականությունը: Է. Հելվոլդն ազատական ժողովրդավարությունները նույնացնում է **արևմտյան պոլիարխիաների** հետ, որտեղ առավել կարևոր են քաղաքական մրցակցությունը և քաղաքացիական մասնակցությունը: Այսպիսի վարչակարգերը բնորոշ են ԱՄՆ-ին և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներին: Պոլիարխիաներն առանձնանում են ընդդիմության նկատմամբ բարձր հանդուրժողականությամբ, քաղաքացիական ազատություններով, ակտիվ քաղաքական մասնակցությամբ և առողջ քաղաքացիական հասարակության առկայությամբ: Նրանց հատուկ են քաղաքական ուժերի մրցակցությունը և բազմակարծությունը:

Այս վարչակարգերը որոշ դեպքերում գտնվում են անընդհատ փոփոխության և զարգացման գործընթացում: Դա կարող է հանգեցնել գործադիր իշխանության անկայուն գործունեությանը և հաճախակի խորհրդարանական ընտրությունների կազմակերպմանը: Օրինակ՝ նմանատիպ քաղաքական վարչակարգ է հաստատվել Իտալիայում, որտեղ 1946 թ.-ից կառավարությունը, որպես կանոն, գործում է ոչ ավելի, քան վեց ամիս:

Պահպանողական ժողովրդավարական վարչակարգերի շարքին են դասվում այն վարչակարգերը, որոնք հենվում են ոչ այնքան սահմանադրության, որքան քաղաքական ավանդույթների վրա: Այդ վարչակարգերը համարվում են առավել կայուն: Նրանց բնորոշ է իշխանական կառույցների կայուն գործունեությունը, ինչը ձեռք է բերվում ժողովրդավարական ավանդույթների և մեծամասնական ընտրական համակարգի շնորհիվ, որը թույլ է տալիս ձևավորել կայուն խորհրդարանական մեծամասնություն՝ այդպիսով ապահովելով կառավարության գործունեության արդյունավետությունը: Պահպանողական վարչակարգերի հիմքում ընկած են անհատի խնամքի, նրա իրավունքների և ազատությունների պաշտպանության, ժողովրդավարական ավանդույթներին հետևելու սկզբունքները: Այսպիսի քաղաքական վարչակարգի օրինակ է Մեծ Բրիտանիան:

Ամբոխավարական վարչակարգերն ապավինում են ամբոխի, ուղղակի ժողովրդավարության իշխանությանը, որտեղ կարևոր քաղաքական որոշումները կայացվում են ամբոխի ճնշման ներքո: Նմանատիպ քաղաքական վարչակարգերն անցողիկ են և անկայուն: Այսպիսի վարչակարգի օրինակ է եղել Գերմանիայում Վեյմարյան Հանրապետությունը, որտեղ քաղաքական անկայունությունը հանգեցրեց նացիստական իշխանության ձևավորմանը:

Քաղաքագիտության մեջ մեծ ուշադրություն է հատկացվում ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերից ժողովրդավարության անցնելու հարցին: Ինչպես նշում են հետազոտողները՝ անցումը լիարժեք ժողովրդավարության հնարավոր է միայն խաղաղ պայմաններում, ինչը տեղի է ունենում երեք ձևով:

Փոխակերպման առաջին ձևն իշխող խմբի կողմից բարեփոխումների իրականացումն է («բարեփոխում վերևից»): Դա տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ իշխող վերնախավը որոշում է ինքնուրույն իրականացնել ժողովրդավարական բարեփոխումների ծրագիր:

Փոխակերպման երկրորդ ձևը կապված է ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի փլուզման և ժողովրդավարական վարչակարգի հաստատման հետ: Փոխակերպման երրորդ ձևը պայմանավորված է աս-

տիճանական բարեփոխումներով, ինչը հիմնված է իշխող և ընդդիմադիր ուժերի գործողությունների համաձայնեցման վրա:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական վարչակարգ
- Ամբողջատիրություն
- Ավտորիտարիզմ (հեղինակագործություն)
- Ժողովրդավարություն
- Անձնական ավտորիտար վարչակարգ
- Չանգվածային ավտորիտար վարչակարգ
- Մրցակցային ժողովրդավարություն
- Ռազմական խունտա

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Քաղաքական վարչակարգի սահմանման ինչպիսի՞ մոտեցումներ գոյություն ունեն քաղաքագիտության մեջ:
2. Ինչո՞վ է տարբերվում քաղաքական համակարգը քաղաքական վարչակարգից:
3. Ինչպե՞ս են հարաբերակցվում քաղաքական վարչակարգը և կառավարման ձևը:
4. Ի՞նչ առավելություններ ունի ավտորիտարիզմը:
5. Ի՞նչ է առաջարկում ժողովրդավարական քաղաքական վարչակարգը:
6. Ինչպե՞ս է կապվում քաղաքացիական հասարակությունը քաղաքական վարչակարգերի հետ:
7. Որո՞նք են պետության և քաղաքացիական հասարակության փոխգործառնության սկզբունքները:
8. Որո՞նք են ամբողջատիրական քաղաքական վարչակարգի տեսակները:
9. Ինչպիսի՞ հատկանիշներ ունի ժողովրդավարությունը:
10. Ինչպիսի՞ քաղաքական վարչակարգ է գործում այսօր Հայաստանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աղերանյան Ա.* Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր. տեսություն և արդիականություն, Եր., «Վան Արյան», 2009, 300 էջ:
2. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ*, Պրակ Ա, խմբ. Վ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
3. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ*, Պրակ Դ, խմբ. Վ. Միրումյան, Վ. Պողոսյան և այլք: Եր., 2006, 59 էջ:
4. *Арендт Х.* Истоки тоталитаризма. М., 1996, 672 с.
5. *Арон Р.* Демократия и тоталитаризм. М., 1993, 303 с.
6. *Бегунов Ю., Лукашев А., Понидленко А.* 13 теорий демократии. Санкт-Петербург, 2002, 242 с.
7. *Даль Р.* Полиархия. участие и оппозиция. М., 2010, 288 с.
8. *Политическая энциклопедия. Рук. проекта Г.Ю. Семигин. Т. 1, 750 с.*
9. *Путачев В.* Политология. Справочник студента. М., 1999, 574 с.
10. *Рагозин Н.* Очерки современной демократии. Донецк, 2003, 248 с.
11. *Соловьев А.* Политология. Политическая теория и политические технологии, 2-ое изд., перераб. и доп. М., 2008, 575 с.
12. *Токвиль А.* Старый порядок и революция. СПб, 2008, 248 с.
13. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водлазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
14. *Held D.* Models of Democracy, Cambridge, 2006, 349 p.
15. *Lijphart A.* Patterns of Democracy, Yale University Press, 1999, 351 p.

ԹԵՄԱ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

«Քաղաքական գործընթաց» հասկացությունը վերաբերում է այն մեխանիզմներին, որոնց միջոցով «իրականացվում» է հանրային (պետական, կառավարական) քաղաքականությունը: Քաղաքականության որպես գործընթացի մշակման մասին մենք խոսում ենք երկու իմաստով: Առաջին հերթին՝ այս գործընթացում կարևորվում է գործողությունների կամ իրադարձությունների կապակցված հաջորդականությունը: Այս շղթան սկսվում է գաղափարի առաջացումից և դրա ձևակերպումից, շարունակվում է վերջինիս քննարկմամբ, վերլուծությամբ և գնահատմամբ, ավարտվում է ֆորմալ որոշումների ընդունմամբ: Երկրորդ՝ քաղաքականության որպես գործընթացի մշակման մասին մենք խոսում ենք այն պատճառով, որ կենտրոնանանք հենց որոշումների ընդունման մեխանիզմների վրա ելնելով դրանց բովանդակությունից:

Որոշումների ընդունման տեսություններ: Քաղաքական որոշումների կամ ամբողջական քաղաքական ծրագրերի ընդունումը, անկասկած, քաղաքական գործընթացների հիմնական բաղադրիչներից է: Այնուամենայնիվ, ինչքան էլ որ տարօրինակ թվա՝ որոշել, թե երբ և ինչու է ընդունվել այս կամ այն որոշումը, միշտ չէ, որ հեշտ է, քանի որ մարդիկ և խմբերը, փոքր և խոշոր կազմակերպությունները, ժողովրդավարական և ավտորիտար պետությունները որոշումները ընդունում են տարբեր կերպ: Քաղաքական որոշումների ընդունման վերաբերյալ գոյություն ունեն մի քանի տեսություններ, որոնք այս գործընթացում շեշտադրում են համապատասխանաբար՝

- ռացիոնալ սկիզբը,
- էմպիրիկ սկիզբը,
- բյուրոկրատական մեխանիզմների դերը,
- գաղափարական գործոնների կարևորությունը:

Ռացիոնալ ընտրության մոդել: Որոշումների ընդունման այս հայեցակարգը, որտեղ շեշտադրվում է քաղաքական գործընթացի ռացիոնալ սկիզբը, սերտորեն կապված է տնտեսագիտական տեսությունների հետ, հատկապես՝ այն տեսությունների, որոնք հանգում են օգտապաշտության (ուտիլիտարիզմ) փիլիսոփայությանը: Այս մոտեցման հիմքում ընկած է «տնտեսական մարդու» գաղափարը, այսինքն՝ այն անձը, ով միշտ և ամենուր հետապնդում է սեփական շահերը: Ինչ վերաբերում է որոշումների ընդունմանը, ապա այս մոդելում որոշումներն ընդունվում են հետևյալ բանաձևով՝

- խնդրի էության հստակեցումը,

- թիրախի կամ նպատակի ընտրությունը՝ հիմնված գոյություն ունեցող նախընտրությունների վրա,
- նպատակներին հասնելու միջոցների և մեթոդների գնահատումը՝ դրանց արդյունավետության, հուսալիության, հնարավոր ծախսերի և այլնի տեսանկյունից,
- որոշման ընդունումը այնպիսի սցենարով, որը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի ցանկալի նպատակին:

Այս մոտեցման մեջ հեշտությամբ կարելի է նկատել մեկ հիմնական առանձնահատկություն. ենթադրվում է, որ յուրաքանչյուր գործում միշտ էլ կան ակնհայտ պարզ նպատակներ, և որ մարդիկ ձգտում են այդ նպատակներին գիտակցված և հետևողական ձևով: Գործնականում, սակայն, դա միշտ չէ, որ այդպես է: Բացի այդ, մենք երբևէ չունենք հնարավորություն համեմատելու որևէ անավարտ գործողության ենթադրյալ արդյունքները այլ հնարավոր գործողությունների ենթադրյալ արդյունքների հետ: Ռացիոնալ ընտրության մոդելում կա մեկ հստակ որոշակիություն. այս մոդելը ցույց է տալիս, թե ինչպես է մարդկանց մեծամասնությունը հասկանում որոշումների ընդունման գործընթացը: Ակնհայտ է, որ քաղաքական գործիչը միշտ կասի, որ ինքն իր որոշումների մեջ առաջնորդվել է հստակ սահմանված նպատակներով և, որ նա ամեն ինչ կշռադատել և հաշվարկել է ամենահիմնավոր ձևով: Սակայն, եթե փորձենք խնդիրն ավելի ուշադիր դիտարկել, ապա կտեսնենք, որ որոշումների ընդունման այս մոդելում, այնուամենայնիվ, որոշակի խնդիրներ կան: Նախ սկսենք այն բանից, որ այս մոդելը, հնարավոր է, լավ է աշխատում առանձին անհատի մակարդակով, սակայն շատ ավելի վատ է աշխատում խմբային մակարդակով, որի շրջանակներում կարող են լինել բազմաթիվ հակասական շահեր ու ձգտումներ: Այս մոտեցման հետ կապված երկրորդ խնդիրն այն է, որ իրականության մեջ որոշումներն ընդունվում են սխալ կամ թերի տեղեկատվության հիման վրա:

Էմպիրիկ մոդել (նպատակին աստիճանաբար հասնելու մոդել): Նպատակին աստիճանաբար հասնելու մոդելը, թերևս, ռացիոնալ ընտրության մոդելի հիմնական այլընտրանքն է: Այս մոդելը հիմնված է այն գաղափարի վրա, որ գործնականում որոշումները գրեթե միշտ ընդունվում են ոչ համարժեք տեղեկատվության առկայության և խնդրի վերաբերյալ նախնական ցածր պատկերացման պայմաններում, որոնց պատճառով մարդիկ զրրկվում են որևէ ինքնատիպ և համարձակ որոշում ընդունելու հնարավորությունից: Հետևաբար՝ քաղաքականության մշակումը, համաձայն սույն մոտեցման, միշտ իրականացվում է սխալների և փորձարկումների սկզբունքով՝ առանց հստակ սահմանված նպատակի:

Ժամանակին այս մոդելի պաշտպանության օգտին հանդես եկավ Շառլ Լինդբլոմը (1963), ով քաղաքական որոշումների ընդունման այս միջոցը սահմանեց որպես «աննշան քայլերով առաջ շարժվելու գիտություն»: Լինդբլոմը գտնում է, որ այս մոդելը համարժեք կերպով է արտացոլում հարցի էությունը, բացի այդ՝ այս մոդելը կատարելապես համապատասխանում է պլյուրալիստական հասարակությանը, որտեղ քաղաքականությունը հաճախ կառուցվում է բազմաթիվ փոխզիջումների հիման վրա: Սակայն մեկ անգամ չէ, որ այս մոդելը քննադատել են՝ դրանում տեսնելով թաքնված պահպանողականություն և նորարարությունների մերժում: Այն քաղաքական գործիչները, ովքեր հակված են այս մոտեցմանը, ամենայն հավանականությամբ, ավելի շուտ նախընտրում են զբաղվել սովորական, շարքային գործերով, քան ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրներով, և նրանց ամբողջ էներգիան, պատկերավոր ասած, նրանք կծախսեն պետական նավը ընթացքի մեջ պահելու և ոչ թե որևէ նոր ուղղությամբ այն վարելու համար:

Այս մոդելի թերություններից մեկն էլ այն է, որ այն չի բացատրում, թե ինչպես են ընդունվում արմատական բնույթի որոշումները, իսկ չէ՞ որ նման որոշումները հաճախ հեղափոխական նշանակություն են ունենում: Պատմությունը մեզ տալիս է բազմաթիվ օրինակներ, որոնք հիմնավորում են այս գաղափարը: Ստալինի 1928 թ. որոշումը խորհրդային տնտեսության հնգամյա պլանավորման անցնելու մասին, Կաստրոյի որոշումը 1959 թ. Կուբայում իշխանության գրավման անցնելու, նույնիսկ Թեոչերի որոշումը 1980 թ. Մեծ Բրիտանիայում նեոպահպանողական ծրագիր նախաձեռնելու մասին. այս ամենը չի կարող բացատրվել «շարժում դեպի առաջ աննշան քայլերով» եզրույթներով:

Կազմակերպարարության կրատական մոդել: Առաջին երկու մոդելները, կարելի է ասել, վերաբերում են որոշումների ընդունման գործընթացում, այսպես ասած, «սև արկղի» սկզբունքին՝ առանց դիտարկելու, թե ինչ կա «արկղի» ներսում, առանց հաշվի առնելու այն հարցը, թե ինչպես են որոշումների ընդունման արդյունքների վրա ազդում այդ գործընթացի կառուցվածքային, ներքին մեխանիզմները: Ի տարբերություն այդ երկու մոդելների՝ կազմակերպարարության կրատական մոդելը փորձում է հասկանալ, թե ինչ կա «արկղի» ներսում. այսինքն՝ ինչպես է գործընթացն ազդում արդյունքի վրա:

«Կազմակերպական» առումով պարզվեց, որ որոշումների ընդունման գործընթացի վրա հսկայական ազդեցություն ունեն այնպիսի արժեքները, հայացքները և վարքագծի ձևավորված մոդելները, որոնք միշտ առկա են խոշոր կազմակերպություններում: Այլ կերպ ասած՝ այդ որոշումները հա-

ճախ չեն բխում իրավիճակի կշռադատված վերլուծությունից, և որոշվում են ոչ թե սահմանված նպատակներով, այլ կառավարական համապատասխան մարմնի ներքին կուլտուրայով:

Չնայած որոշումների ընդունման գործընթացը հասկանալու այս նկատառումները, անշուշտ, շատ հետաքրքիր են, այնուամենայնիվ՝ պետք է նշել, որ դրանք բնավ էլ անառարկելի չեն: Նախ սկսենք նրանից, որ այս մոդելը շատ քիչ տեղ է հատկացնում քաղաքական առաջնորդության գործոնին, այն դեպքում, երբ ամենակարևոր որոշումները հաճախ պատկանում են հենց առաջնորդներին:

Ի վերջո՝ բացատրել բոլոր որոշումները միայն այն հանգամանքով, թե ինչ է կատարվում «սև արկղի» ներսում, նշանակում է անտեսել արտաքին միջավայրի գործոնները, որոնք կապված են որոշումների ընդունման սնտեսական, քաղաքական և գաղափարական ավելի լայն համատեքստի հետ:

Գաղափարական գործոնների դերը: Սա մի մոտեցում է, որը որոշումների ընդունման գործընթացներում ընդգծում է գաղափարական գործոնների՝ համոզմունքների, հայացքների, քաղաքական խնդիրների ընկալման տարբեր ձևերի դերը: Պետք է միշտ իմանալ, որ մարդիկ տեսնում ու հասկանում են, և դա թույլ է տալիս նրանց հասկանալ իրենց արժեքները և արդեն ձևավորված պատկերացումները: Ամենից հաճախ դա տեղի է ունենում գուտ ենթագիտակցական մակարդակում: Որոշում ընդունողները ազատ են մտածելու, որ իրենք գործում են բացառապես ռացիոնալ կերպով, որ իրենք ամեն ինչ կշռադատված և անաչառ կերպով հաշվարկել են, մինևնոյն է նրանց գիտակցության մեջ կա մի որոշակի գաղափարական գտիչ, և հենց դա է սահմանում, թե ինչ նրանք կարող են մտածել և ինչ չեն կարող մտածել, ինչն է իրենց համար հնարավոր և ինչն անհնար, ցանկալի և անցանկալի: Ամենից հաճախ այս գործընթացն աշխատում է այնպես, որ փաստերի մի մասի վրա բացարձակապես ոչ մի ուշադրություն չի դարձվում, իսկ մյուս մասի վրա կառուցվում են բոլոր ենթադրություններն ու հաշվարկները: Քենեթ Բոուլդինգը (1956) ժամանակին արդարացիորեն նկատել է, որ եթե չլինեք այդ մեխանիզմը, մարդիկ պարզապես անգոր կգտնվեին ինչ-որ բան պարզելու իրենց համար ամեն կողմից իրենց շրջապատող տեղեկատվական հոսքերի մեջ:

Պոլ Սաբատինեն փորձեց միավորել որոշումների ընդունման վերաբերյալ տարբեր մոտեցումներ (1988): Հետազոտողին հիմնականում հետաքրքրում էր մեկ խնդիր. ինչպես են քաղաքականության մեջ տեղի ունենում փոփոխությունները: Այս կապակցությամբ նա ուշադրություն է հրավիրում «քաղաքական ենթահամակարգերի» վրա, օրինակ՝ մարդկանց

խմբերի վրա, ովքեր այսպես, թե այնպես և այս կամ այն չափով իրենց ներդրումն ունեն քաղաքական գործընթացում: Այստեղ խոսքն այն մասին է, որ ցանկացած քաղաքական կառույց ներառում է ոչ միայն քաղաքական գործիչների, պետական ծառայողների և շահերի խմբերի ներկայացուցիչների, այլև այս միջավայրում կան նաև հետազոտողներ, գիտնականներ և լրագրողներ: Սաբատիեն պնդում է, որ նման ենթահամակարգերում գրեթե միշտ ձևավորվում են համապատասխան կոալիցիաներ՝ խմբեր, որոնք միավորում են համանման հայացքներ, արժեքներ և համոզմունքներ ունեցող մարդկանց: Եվ այս ամենը գործում է երեք մակարդակով՝

- խորը մակարդակով (որոշումների ընդունման գործընթացի մասնակիցների առավել հիմնարար բարոյական կամ փիլիսոփայական սկզբունքները),
- միջանկյալ մակարդակով (քաղաքական նախապատվությունները),
- մակերեսային մակարդակով (քննարկվող հարցերի վերաբերյալ հստակ տեսակետները):

Այս ամենի իմաստը, ըստ Սաբատիեի, այն է, որ նման կոալիցիաներում մշակվում է քաղաքականության «սունձող նյութը», ձևավորվում են ընդհանուր արժեքներ և նախասիրություններ ունեցող խմբեր: Այստեղ, սակայն, կարևոր է ահա թե ինչը. եթե առաջին՝ ավելի խորը մակարդակում որոշումներ ընդունողների միջավայրում հիմնարար փոփոխություններ տեղի չեն ունենում, ապա մյուս երկու մակարդակներում մարդիկ ազատ են չհամաձայնելու միմյանց հետ: Հիմք ընդունելով այս ամենը՝ Սաբատիեն պնդում է, որ քաղաքականության մեջ փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ և այնքանով, երբ և որքանով փոխվում է ուժերի հավասարակշռությունը քաղաքական ենթահամակարգում, երբ նախաձեռնությունը և առաջնորդությունը անցնում են մի կոալիցիայից մյուսին: Այստեղ, հետևաբար, մենք տեսնում ենք որոշումների ընդունման ինչպես «ռացիոնալ», այնպես էլ «գաղափարական» մոդելների հատկանիշներ:

Քաղաքական գործընթացի փուլերը: Քաղաքական գործընթացը հասկանալու համար միայն որոշումների ընդունման գործընթացը հասկանալը բավարար չէ: Չէ՞ որ քաղաքականությունը միայն կոնկրետ բնագավառներում որոշումների ընդունումը չէ. այստեղ կարևոր են նաև որոշումների ձևերը և տեսակները: Նախ, օրինակ, սկսենք այն բանից, որ միշտ էլ կա «որոշում ընդունելու անհրաժեշտություն», այսինքն՝ պատկերացումն այն բանի, որ ինչ-որ ոլորտում կան խնդիրներ և պետք է դրանք լուծել. միշտ կա զգացում, որ «ինչ-որ բան պետք է արվի»: Այնուհետև, գործընթացը շարունակվում է. առաջանում են հստակ հարցեր. նախ՝ ի՞նչ պետք է արվի,

ինչպե՞ս պետք է արվի և երբ: Բայց հարցն, իհարկե, այսքանով չի սահմանափակվում: Նույնիսկ այն բանից հետո, երբ, կարծես թե, «ամեն ինչ արված է», և բոլոր որոշումներն արդեն «կյանքի են կոչվել», առաջանում են նոր խնդիրներ, որոնք պահանջում են նոր լուծումներ: Առաջանում են հարցեր. արդյո՞ք ստացված արդյունքները համապատասխանում են նախնական մտադրություններին, ինչպե՞ս է կարելի բարելավել դրանք ապագայում: Այսպիսով՝ քաղաքական գործընթացը կարելի է բաժանել չորս փուլի՝

- քաղաքականության նախաձեռնում,
- քաղաքականության մշակում,
- քաղաքականության իրականացում,
- քաղաքականության գնահատում:

Քաղաքականության նախաձեռնում: Ինչպե՞ս է սկիզբ առնում պետական քաղաքականության այս կամ այն ուղղությունը: Ինչպե՞ս են ձևակերպվում սկզբնական առաջարկները, որոնք կյանքի են կոչում այդ ուղղությունը: Այս հարցերը կարևոր են ոչ միայն այն պատճառով, որ քաղաքական գործընթացը միշտ էլ սկիզբ է առնում ինչ-որ բանից, այլև այն պատճառով, որ այս փուլն է հաճախ որոշում հետագա բոլոր քննարկումները և նույնիսկ վերջնական որոշումները: Քաղաքականության նախաձեռնումը, հետևաբար, կարևոր է առաջին հերթին այն պատճառով, որ այս փուլում են առաջադրվում և սահմանվում խնդիրները, ինչով էլ հենց սկսվում է այդ խնդիրների լուծման ուղիների որոնումը:

Մինևույն ժամանակ շատ դժվար է վերլուծել քաղաքականության նախաձեռնումը, քանի որ նոր քաղաքական միտքը կարող է առաջանալ քաղաքական համակարգի ցանկացած ոլորտում: Այն կարող է «շրջանառության մեջ դրվել վերևից»՝ պետության քաղաքական առաջնորդի կողմից, կառավարության կողմից, կառավարական ցանկացած մարմնի կողմից, սակայն կարող է «շրջանառության մեջ դրվել նաև ներքևից»՝ հասարակության կողմից, ՋԼՄ-ների կողմից, քաղաքական կուսակցությունների, շահերի խմբերի, գիտահետազոտական ինստիտուտների և այլնի կողմից: Եթե քաղաքական գործողությունների նախաձեռնողը առաջնորդն է, ուրեմն խոսքը տվյալ գաղափարի շուրջ հասարակության ամենալայն զանգվածների մոբիլիզացիայի մասին է: Փաստորեն, հենց այս պահից սկսած՝ մենք կարող ենք խոսել քաղաքականության նախաձեռնության մասին:

Ընդ որում՝ օրիգինալ գաղափարների առաջադրումը քաղաքական առաջնորդների մենաշնորհը չէ. ավելին՝ քաղաքական առաջնորդները հազվադեպ են առաջարկում և նախաձեռնում իսկապես նոր գաղափար-

ներ: Բանն այն է, որ քաղաքականության նախաձեռնության գործում ավելի կարևոր դեր ունեն լրագրողները, գիտնականները, փիլիսոփաները. հենց նրանք են առաջադրում նոր գաղափարներ, որոնք այնուհետև վերցնում են քաղաքական գործիչները և կուսակցությունները:

Ինչպես նշեցինք քաղաքականությունը կարող է նախաձեռնվել նաև «ներքևից», ինչը, ըստ էության, տեղի է ունենում բոլոր քաղաքական համակարգերում: Երբ Հարոլդ Մաքմիլանին հարցրեցին, թե ինչն է իր կյանքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցել, նա պատասխանեց՝ «իրադարձությունները, տղա՛ս, իրադարձությունները»: Նման իրադարձությունները կարող են լինել ամենատարբեր տեսակի՝ սկսած գործադուլներից, փողոցային անկարգություններից, բնական աղետներից մինչև բորսայի անկում: Ընդհանուր կանոնը, սակայն, հետևյալն է. որքան ժողովրդավարական և պլուրալիստական է քաղաքական համակարգը, այնքան էլ մեծ է «ներքևի» ճնշումը: Կարելի է նույնիսկ ասել, որ ժողովրդավարության իմաստն էլ, ըստ էության, հենց նրանում է, որ քաղաքականությունը պետք է ձևավորվի հիմնականում «ներքևից», և ոչ թե՛ «վերևից»:

Այս գործընթացում, իհարկե, ամենամեծ դերը պատկանում է հասարակական կարծիքին, որն արտացոլում է հասարակության ամենատարբեր խմբերի շահերն ու ձգտումները: Այդ ձգտումները, սակայն, հաճախ մնում են ամորֆ, սաղմնային վիճակում մինչև համապատասխան խումբն այն հստակ չձևակերպի:

Քաղաքականության մշակում: Երբ քաղաքական օրակարգում հայտնվում է նոր գաղափար կամ գաղափարների ամբողջություն, սկսվում է քաղաքական ծրագրերի մշակման ավելի խորը և հիմնավոր գործընթացը՝ քաղաքականության մշակումը: Քաղաքական գործընթացի կենտրոնական փուլը քաղաքականության մշակումն է:

Հոգվուդը և Գանը (1984), վերլուծելով «քաղաքական ցիկլի» հիմնախնդիրը, առանձնացրել են քաղաքականության մշակման մի շարք փուլեր: Առաջին փուլը, պատկերավոր ասած, «որոշումների ընդունման միջոցներն են», այսինքն՝ այնպիսի մեխանիզմների և ընթացակարգերի ընտրությունը, որոնց հիման վրա կընթանա հետագա գործընթացը: Օրինակ՝ պե տք է արդյոք որոշումներն ընդունվեն կառավարության անդամների կողմից, թե դրանց ընդունումը կարելի է վստահել պետական ծառայողների: Արդյոք այդ որոշումները պետք է ընդունվեն սովորական հերթականությամբ, թե այդ նպատակի համար անհրաժեշտ է ստեղծել ինչ-որ հատուկ հանձնաժողով:

Հասկանալի է, որ սա ամբողջ գործընթացի կարևորագույն փուլն է, որը սահմանում է, թե վերջին հաշվով ինչ ուղղություն կստանա գործընթացը, ում շահերը հաշվի կառնվեն, իսկ ումը՝ ոչ:

Երկրորդ փուլը ենթադրում է խնդրի առավել հստակ սահմանում. այստեղ այն պետք է լինի մանրակրկիտ իմաստավորված, քանի որ նրանք, ովքեր արդեն զբաղվում են խնդրի մշակմամբ, պարտադիր չէ, որ ընկալեն խնդիրն այնպես, ինչպես նրանք, ովքեր նախաձեռնել են այն:

Երրորդ փուլը նպատակների առաջադրման և առաջնահերթությունների ձևակերպման փուլն է: Այստեղ ևս որևէ հիմք չկա ակնկալելու, որ նպատակները կձևակերպվեն այնպես, ինչպես դրանք կպատկերացնեին ծրագրերի նախաձեռնողները:

Պետք չէ կարծել, թե քաղաքականության մշակումը տարբեր քաղաքական համակարգերում և տարբեր պետություններում տեղի է ունենում համանման կերպով: Ժամանակին Ռիչարդսոնը (1984) փորձել է վերլուծել այստեղ գոյություն ունեցող տարբերությունները՝ կարևորելով «Քաղաքական գործընթացի ազգային ոճերը»: Նա, մասնավորապես, առաջարկում է խնդիրը դիտարկել երկու հարթություններում՝ 1. ո՞րն է քաղաքականության մշակման հիմնական մեթոդը՝ խորհրդակցությունները, թե հրահանգները վերևից և 2. արդյո՞ք կառավարությունը իրականացնում է քաղաքականության երկարաժամկետ պլանավորում, թե նրանք պարզապես արձագանքում են իրադարձությունների ընթացքին: Հետազոտողը Շվեդիան և Ճապոնիան դասում է այն պետությունների շարքին, որոնք քաղաքական գործընթացում ապավինում են խորհրդակցություններին և գործում են հեռանկարների հաշվարկով: Երկու դեպքում էլ գոյություն ունի հասարակական խմբերի հետ խորհրդակցությունների մշակված և զարգացած համակարգ, որոնք իրենց առջև դնում են կոնկրետ նպատակներ և առաջնահերթություններ: Իսկ ԱՄՆ քաղաքական համակարգը, նրա կարծիքով, ընդհակառակը, իրենից ներկայացնում է խնդրի վերաբերյալ զուտ «ակնթարթային» արձագանքի օրինակ, չնայած, որ առաջին հայացքից թվում է, որ հենց այս համակարգում, որտեղ խստորեն գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, պահանջվում է լայն հասարակական կոնսենսուս. այսպես, թե այնպես՝ ԱՄՆ պարագայում անհնար է խոսել քաղաքականության երկարաժամկետ պլանավորման մասին:

Մեծ Բրիտանիայի դեպքում իրավիճակն այլ է. այստեղ քաղաքականության ոճը փոխվում է ժամանակին համընթաց: Բրիտանական քաղաքական համակարգում հետազոտողը տեսնում է սահմանադրության նկատմամբ նախատրամադրվածություն, ինչպես նաև հակվածություն արձագանքելու խնդիրներին, այլ ոչ թե կանխատեսելու դրանք: Այնուամենայնիվ,

Մարգարեթ Թետչերի կառավարման ժամանակահատվածում՝ 1980-ական թթ., երկարաժամկետ ռազմավարության սկզբունքը կիրառվել է, որը ստացել է «ազատ տնտեսություն ուժեղ պետության գուգորդամբ» անվանումը: Հետագայում ձգտումը այս նպատակներին գործնականում հանգեցրեց խորհրդակցությունների պրակտիկայի նվազեցմանը և կառավարման ավելի հրամայական ոճին, որը, բնականաբար, ուղեկցվում էր վարչապետի իշխանության ընդլայնմամբ: Ջոն Մեյջորը վերադարձավ կառավարման նախկին, ավելի կռեգիալ ոճին. վերջինիս կառավարման ժամանակահատվածում վերականգնվեց հասարակական խմբերի հետ կառավարության խորհրդակցության պրակտիկան: Սակայն Թոնի Բլերի կառավարման ժամանակահատվածում քաղաքական ղեկավարության գործունեությունը երկրում կրկին դարձավ ավելի կենտրոնացված. այստեղ ավելացավ հատուկ խորհրդականների դերը, իսկ կառավարությունը սկսեց խաղալ պակաս կարևոր դեր:

Քաղաքականության մշակման փուլի բնորոշ առանձնահատկությունը, արդեն անկախ ցանկացած տեսակի ազգային առանձնահատկությունից, այն է, որ այստեղ զգալիորեն նվազում է գործընթացի մասնակիցների թիվը: Այն դեպքում, երբ քաղաքական գործընթացի նախնական փուլում մենք տեսել ենք մեծ թվով շահերի խմբեր և հասարակական միավորումներ, քաղաքականության մշակումը արդեն «ինսայդերների» գործն է, այսինքն՝ նրանց, ովքեր «ներսում» են (պետական ծառայողներ, առաջատար խորհրդականներ, քաղաքական գործիչներ): Հենց սա է գործընթացի այն «աքիլլեյան գարշապարը», որն ամենաշատն է քննադատվում: Միննույն ժամանակ՝ քննադատների մի մասը պնդում է, որ քաղաքականության մեջ շատ կարևոր դեր է խաղում բյուրոկրատիան՝ օգտագործելով ամբողջ գործընթացը սեփական շահերի համար, իսկ մյուսները մատնանշում են այն փաստը, որ քաղաքականության մշակման գործում հաշվի չեն առնվում առավել արմատական այլընտրանքները, քանի որ պետական պաշտոնյաները որևէ արմատականության հակված չեն: Նեոպահպանողականության ուղղության քննադատներին նման սցենարը ձեռնառու չէ, երբ քաղաքականության մշակմանը մասնակցում են մեծ թվով շահերի խմբեր. նրանց կարծիքով՝ դա հանգեցնում է այն բանին, որ այդ գործընթացը որոշվում է զուտ ճյուղային, և ոչ թե հասարակության ռազմավարական շահերից ելնելով:

Քաղաքականության իրականացում: Կար ժամանակ, երբ քաղաքականության իրականացմանը քաղաքագետներն այնքան էլ մեծ ուշադրություն չէին դարձնում. ենթադրվում էր, որ դա տեղի է ունենում գրեթե ինքնաբե-

րաբար, և որ դա ընդհանրապես ոչ թե քաղաքականությանը վերաբերող հարց է, այլ՝ աղմինիստրացիային:

Հուլի ուսումնասիրության (1976) մեջ ցույց են տրված հետևյալ պայմաններն ու սկզբունքները, որոնց պարագայում քաղաքականության իրականացումը տեղի է ունենում համաձայն համապատասխան ծրագրերի.

- համապարփակ և հստակ աշխատող վարչական համակարգ, որը ապահովում է որոշումների կատարման հուսալի վերահսկողություն,
- քաղաքական և վարչական համակարգերում նորմերի և կանոնակարգերի միասնականություն,
- կատարողական բարձր կարգապահություն կամ ամբողջական վերահսկողություն,
- ամբողջական տեղեկատվություն, կատարյալ հաղորդակցություն և աշխատանքների կատարյալ համակարգում,
- վարչական ռեսուրսների մոբիլիզացման համար բավարար ժամանակի առկայություն:

Քանի որ հեշտ չէ ապահովել նման պայմաններ (իսկ դրանք ամբողջությամբ ապահովելը պարզապես անհնար է), ապա որոշման և դրա կատարման միջև միշտ կառաջանա «հսկայական հեռավորություն»: Ամբողջական վերահսկողությունը և կատարման կատարյալ կարգապահությունը պարզապես անիրատեսական են, ավելին՝ երբեմն նույնիսկ անցանկալի: Նրանք, ովքեր կյանքի են կոչում քաղաքական որոշումները (քաղաքացիական ծառայողներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, գիտնականներ, ուսուցիչներ, բժիշկներ, ոստիկանություն և այլն), ունենալով այն փորձը, որը կարող ենք անվանել «բնագո», կարող են շատ ավելի լավ հասկանալ, քան քաղաքական գործիչները, թե որ որոշումները կգործեն, որոնք՝ ոչ: Քաղաքագիտության մեջ նույնիսկ ձևավորվել է խնդիրները «ներքնից վերև» սկզբունքով վերլուծելու ավանդույթ: Այստեղ ենթադրվում է, որ շատ բաներ քաղաքականության մեջ պետք է թողնել կատարողների հայեցողությանը, ովքեր ավելի ճկուն և հստակ կերպով են արձագանքում իրավիճակին:

Սակայն որոշումների իրականացման մեջ ճկունությունը, ինչպես ասում են, «երկսայր» սուր է: Այս թեմայով Պրեսմանը և Վիլդավսկին գրել են մի գիրք, որը կոչվում է՝ «Թե ինչպես են Վաշինգտոնի մեծ ակնկալիքները Օբլենդում փշրանքների վերածվում կամ զարմանալի է, որ դաշնային ծրագրերը նույնիսկ ինչ-որ կերպ աշխատում են» (1973): Խնդիրն այն է, որ ճկունությունը հղի է կատարման ցածր կարգապահությամբ. սա մի իրավիճակ է, որտեղ ենթադրվում է, որ կատարողները կառաջնորդվեն ոչ

թե այնպես, ինչպես «հուշում է սեփական փորձը», այլ իրենց անձնական, կարիերային շահերից ելնելով: Նման իրավիճակներում պետական ծառայողները և հանրային ծառայությունների աշխատակիցները գերադասում են «ամեն բան հասկանալ այնպես, ինչպես իրենք գիտեն»՝ անտեսելով քաղաքական որոշումների այն ասպեկտները, որոնք սպառնում են իրենց բարեկեցությանը:

Քաղաքականության գնահատումը: Քաղաքական գործընթացն ավարտվում է համապատասխան քաղաքական ծրագրի գնահատման փուլով: Այս փուլում ընդունվում են (կամ պետք է ընդունվեն) որոշումներ այն մասին, թե արդյոք ք պետք է շարունակել ծրագիրը, պետք է այն փոխել, թե ընդհանրապես ավարտել: Մա քաղաքական ցիկլի ավարտն է այն իմաստով, որ տեղեկատվությունը, որը ստացվել է գնահատման ընթացակարգի միջոցով, կարող է ծառայել որպես նոր ցիկլի սկիզբ, որտեղ նախաձեռնվում են քաղաքական նոր գաղափարներ և մշակվում են քաղաքական նոր ռազմավարություններ. մինևույն ժամանակ դա կարող է ծառայել արդեն գոյություն ունեցող քաղաքական ծրագրերի բարելավմանը:

Այս բոլոր հարցերում մեկ բան հստակ է. շատ հաճախ քաղաքական գործընթացի արդյունքները հիմնավորապես տարբերվում են այն մարդկանց նախնական մտադրություններից, ովքեր կանգնած են դրանց ակունքներում: Օրինակները բազմաթիվ են: Ժամանակին սոցիալական նպաստների և սոցիալական օժանդակության համակարգերը ուղղված էին հասարակության աղքատ հատվածի կյանքի թեթևացմանը և թույլ էին տալիս բոլոր քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել հասարակության գործերին: Մակայն ամեն ինչ ավարտվեց, ինչպես գրում է Լը Գրանը (1982), միջին դասի պարտությամբ, և, ինչպես ցույց է տալիս Մարեյը, (1984), մեծ քանակությամբ ապադասային մարդկանց առաջացմամբ, որոնք «նստած են նպաստների վրա»: Բատլերը, Ադոնիսը և Տրավերսը (1994) իրենց ուսումնասիրության մեջ Մեծ Բրիտանիայի օրինակով ներկայացնում են տեղական իշխանության մարմինների ծախսերի նկատմամբ վերահսկողության սահմանման պետական քաղաքականության ձախողումների և սխալ հաշվարկների մի ամբողջ ցուցակ: Այս ոլորտում բարի մտադրությունները հանգեցրել են լրջագույն խնդիրների, նույնիսկ քաղաքացիական խռովությունների և անկարգությունների: Միայն Մարգարեթ Թետչերի հեռանալուց հետո նրա իրավահաջորդ Ջոն Մեյջորը վճռականորեն դադարեցրեց այս ուղղությամբ հետագա բոլոր փորձերը: Շատերը կարծում են, որ այս ամենը մեկ անգամ ևս խոսում է հոգուտ ավելի բաց կառավարության և հանրության առաջ վերջինիս հաշվետվողականության օգտին: Որպեսզի «բարի նպատակները» հանգեցնեն լուրջ արդյունքների,

քաղաքական գործընթացը պետք է լինի «թափանցիկ» և բաց հանրության վերահսկողության համար. շատ հաճախ քաղաքական գործընթացի գաղտնիության այն վարագույրը, որը քողարկում կամ ծածկում է վերջինիս, ըստ էության իր հետևում թաքցնում է տարրական ոչ կոմպետենտություն և նույնիսկ կամայականություն:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական գործընթաց
- Քաղաքականության նախաձեռնում
- Քաղաքականության մշակում
- Քաղաքականության իրականացում
- Քաղաքականության գնահատում

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է քաղաքական գործընթացը:
2. Ի՞նչ տեսություններ կան որոշումների ընդունման վերաբերյալ:
3. Ո՞րն է ռացիոնալ ընտրության մոդելը:
4. Ո՞րն է էմպիրիկ մոդելը:
5. Ո՞րն է կազմակերպարարությունների մոդելը:
6. Ո՞րն է գաղափարական գործոնների դերը քաղաքական գործընթացում:
7. Որո՞նք են քաղաքական գործընթացի փուլերը:
8. Ի՞նչ է նշանակում քաղաքականության նախաձեռնում:
9. Ի՞նչ է նշանակում քաղաքականության մշակում:
10. Ի՞նչ է նշանակում քաղաքականության իրականացում:
11. Ի՞նչ է նշանակում քաղաքականության գնահատում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Василенко И.** Политология. 2-е изд., перераб. и доп., Юрайт-Издат., 2009, 398 с.
2. **Гаджиев К.** Политология. Базовый курс. Учебник. 2-е изд., перераб. и доп. М., 2001, 505 с.
3. **Жиро Т.** Политология. Пер. с польск. Харьков 2006, 428 с.
4. **Ирхин Ю., Зотов В., Зотова Л.** Политология. Учебник. М., Юристь, 2002, 511 с.

5. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
6. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544с, (Серия «Зарубежный учебник»).
7. **Шульман Е.** Законотворчество как политический процесс. М., Московская школа гражданского просвещения, 2014, 184 с.
8. **Zittoun P.** The Political Process of Policymaking, Palgrave Macmillan UK, 2014, 186 p.

ԹԵՄԱ 7. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության՝ որպես մտածական գործընթացի մեծ մասը, եթե կարելի է այդպես ասել, տեղի է ունենում մարդկանց գիտակցության մեջ, քանի որ քաղաքականությունը ձևավորվում է հասարակության կազմակերպման վերաբերյալ մեր մտքերում, գաղափարներում և արժեքներում, ինչպես նաև պետության հետ կապված մեր ակնկալիքներում, հույսերում և մտավախություններում: Ի վերջո՝ այս ամենը միասին կարող է նույնիսկ լինել ավելի կարևոր, քան քաղաքական իրողությունները (օրինակ՝ թե ինչպես են հասարակության մեջ բաշխված իշխանությունը, ռեսուրսները և հնարավորությունները): Ընդ որում՝ իրականության մեր ընկալումը ոչ միայն կարող է լինել շատ ավելի կարևոր, քան ինքնին իրականությունը, այլ այդ ընկալումը, ինչ-որ իմաստով, ինքնին իրականությունն է: Այս ամենը վկայում է **քաղաքական մշակույթի** լինելիության մասին: Մարդկանց համոզմունքները և արժեքները ձևավորում են քաղաքականության, կառավարման համակարգի նկատմամբ վերաբերմունք՝ առաջ քաշելով բազմաթիվ հարցեր՝ արդյո՞ք արդար է կառավարման համակարգը, արդյո՞ք այն ունի գոյության իրավունք և այլն:


«Քաղաքական մշակույթ» հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել 18-րդ դարի գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը: Սակայն քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը՝ որպես վերլուծության ինքնուրույն օբյեկտ, սկսվել է 20-րդ դարի 50-ական թթ. ամերիկացի քաղաքագետ Գաբրիել Ալմոնդի կողմից:

Անցյալի մտածողները քաղաքականության մասին իրենց գաղափարներում միշտ էլ ճանաչել և կարևորել են հասարակության մեջ մարդկանց համոզմունքների և արժեքների հսկայական դերը՝ չնայած այն բանին, որ այդ ամենը չեն անվանել քաղաքական մշակույթը: Օրինակ՝ Բյորկը շատ է գրել ավանդույթների և սովորույթների, Մարքսը՝ գաղափարախոսության, իսկ Հերդերը՝ ազգային ոգու մասին: Սակայն քաղաքագետների շրջանում քաղաքական մշակույթի գաղափարի մասին հետաքրքրությունը ձևավորվեց միայն 1950-60-ական թթ., երբ մարդու վարքագծի ուսումնասիրության նոր մեթոդները հետազոտական դաշտից դուրս մղեցին ավանդական և ինստիտուցիոնալ մոտեցումները: Այս առումով քաղաքագիտության մեջ դասական դարձավ Ալմոնդի և Վերբայի «Քաղաքացիական մշակույթ» (1963) աշխատանքը, որտեղ հինգ երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Արևմտյան Գերմանիա, Իտալիա և Մեքսիկա) քաղաքական առանձնահատկությունները վերլուծելու համար օգտագործվեցին հասարակական

կարծիքի հարցումներ: Սույն աշխատանքը, ի թիվս այլ հարցերի, փորձում էր բացատրել, թե ինչու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում ձախողվեցին ժողովրդավարական կառավարություններն Բուալիայում և Գերմանիայում, և ինչու ժողովրդավարությունն այնքան դժվար է իր ճանապարհը հարթում բազմաթիվ զարգացող երկրներում, որոնք անկախացան 1945թ.-ից սկսած: 1970-80-ական թթ. քաղաքական մշակույթի նկատմամբ գիտական հետաքրքրությունը որոշակի անկում ապրեց: Այն վերականգնվեց միայն 1990-ական թթ. սկզբին, երբ Արևելյան Եվրոպայում կոմունիզմի ավերակների վրա սկսվեց ժողովրդավարության կառուցումը, իսկ զարգացած ժողովրդավարություններում, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ում, սկսեցին խոսել «սոցիալական կապիտալի ճգնաժամի» և քաղաքացիական ակտիվության անկման մասին:

Գոյություն ունի մեկ այլ հանգամանք ևս, որը կարևորում է քաղաքական մշակույթի տեսական և քաղաքագիտական առումների ուսումնասիրությունը: Խոսքը ամերիկացի հետազոտող Կ. Ֆենների այն պնդման մասին է, ըստ որի՝ քաղաքական մշակույթի տեսական-արժեքաբանական ուսումնասիրությունը թույլ է տալիս սահմանել գործող համակարգի վերաբերյալ քաղաքացիների հիմնական արժեքները, գիտելիքները, հուզական կապերը և լոյալությունը, որոշել կայունություն երաշխավորող քաղաքացիական մշակույթի արժեքների պակասը, ստեղծել սահմանադրական և հոգեբանական այնպիսի պայմաններ, որոնք քաղաքական սոցիալականացման ընթացքում կհանգեցնեն ամբողջական քաղաքական կամ քաղաքացիական մշակույթի ձևավորմանը: Ուսումնասիրվող խնդրի արժեքաբանական կողմի բացահայտումը կարող է թույլ տալ պարզաբանել քաղաքական գործընթացների վրա քաղաքական մշակույթի ազդեցության էությունը:

Լայն իմաստով քաղաքական մշակույթը ժողովրդի կենսակերպն է: Սոցիոլոգներն ու մարդաբանները տարբերակում են «մշակութայինը» և «բնականը»: Մշակութայինը այն է, ինչը փոխանցվում է սերնդից սերունդ ոչ թե կենսաբանական ժառանգության, այլ սոցիալական մեխանիզմների միջոցով: Քաղաքագետներն օգտագործում են այս եզրույթը նեղ իմաստով: Այս դեպքում կարևորվում են մարդկանց հոգեբանական կողմնորոշումները, որոնք սահմանում են մարդկանց վերաբերմունքն այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են՝ կուսակցությունը, կառավարությունը, սահմանադրությունը և այլն: Պետք չէ քաղաքական մշակույթը շփոթել հասարակական կարծիքի հետ, քանի որ այն ձևավորվում է խոր արմատացած արժեքների հիման վրա, այնինչ հասարակական կարծիքը մարդկանց արձագանքն է կոնկրետ քաղաքական խնդիրներին:



Քաղաքացիական մշակույթ: Բազմաթիվ հեղինակներ քաղաքական մշակույթի մասին խոսելիս հղում են կատարում **քաղաքացիական մշակույթ** հասկացությանը, որը գիտական շրջանառության մեջ է դրվել (1963, 1980) Ալմոնդի և Վերբայի կողմից: Այս հեղինակները, ձգտելով սահմանել,

թե որ քաղաքական մշակույթն է լավագույնս նպաստում ժողովրդավարությանը, առանձնացրել են քաղաքական մշակույթի երեք տեսակներ՝ **«ակտիվ կամ մասնակցային մշակույթ»** (քաղաքական մասնակցության մշակույթը), **«պասիվ կամ հպատակային մշակույթ»** (օրենքին հետևելու մշակույթը) և **«տեղական կամ նահապետական մշակույթ»**:

Նրանց սահմանմամբ՝ **«ակտիվ մշակույթը»** բնութագրվում է քաղաքականության նկատմամբ քաղաքացիների առավել աշխույժ հետաքրքրությամբ: Այս դեպքում քաղաքական մասնակցությունը համարվում է քաղաքականության ամենակարևոր և անհրաժեշտ տարրը: **«Պասիվ մշակույթի»** դեպքում քաղաքացիները հանդես են գալիս ոչ թե որպես քաղաքականության սուբյեկտ, այլ որպես օբյեկտը: Քաղաքականության վրա ազդելու նրանց հնարավորությունները շատ սահմանափակ են: Այսպիսի քաղաքական մշակույթի առանձնահատկությունը քաղաքացիների՝ իշխանության հեղինակությանը ենթարկվելու պատրաստակամությունն է: **«Տեղական մշակույթը»** առանձնանում է քաղաքացիական կեցվածքի լիակատար բացակայությամբ: Այսպիսի քաղաքական մշակույթում մարդիկ իրենց նույնացնում են ոչ թե ազգի, այլ իրենց անմիջական շրջապատի հետ՝ չունենալով քաղաքականությանը մասնակցելու ո՛չ ցանկություն, ո՛չ էլ հնարավորություն: Ընդգծելով, որ ժողովրդավարական գաղափարախոսությանն առավել լիարժեքորեն համապատասխանում է ակտիվ մշակույթը՝ Ալմոնդը և Վերբան միևնույն ժամանակ գալիս են այն եզրակացության, որ «քաղաքացիական մշակույթը», ըստ էության, իր մեջ միշտ միավորում է քաղաքական մշակույթի բոլոր երեք բաղադրիչները: Քաղաքացիական մշակույթի համար ինչպես կարևոր է քաղաքական գործընթացներին քաղաքացիների մասնակցության ցանկությունը, այնպես էլ պետության կողմից քաղաքացիներին կառավարելու ունակությունը: Ալմոնդի և Վերբայի կարծիքով՝ ժողովրդավարության կայունությունը երաշխավորվում է այնպիսի քաղաքական մշակույթի պայմաններում, որտեղ բացահայտված է ակտիվ և պասիվ քաղաքացիների միջև ոսկե միջինը, իսկ պետությունը ստանձնում է միայն այն պարտավորությունները, որոնք իրականում կարող է կատարել:

Իրենց առաջին աշխատանքում (1963) Ալմոնդը և Վերբան հանգեցին այն եզրակացության, որ քաղաքացիական մշակույթի իդեալին ամենամոտը Մեծ Բրիտանիան է, որտեղ կարելի է նկատել ակտիվ և պասիվ քաղաքական մշակույթի որոշ առանձնահատկություններ: Այլ կերպ ասած՝ բրիտանացիները համոզված են, որ կարող են և պետք է ներգործեն կառավարության վրա, սակայն, միևնույն ժամանակ, պատրաստակամ են ենթարկվելու իշխանություններին: Հեղինակների կարծիքով՝ Մեծ Բրիտա-

նիային հաջորդում է ԱՄՆ-ը, որի քաղաքական մշակույթի թույլ կողմն ակտիվ մշակույթի տարրերի (քաղաքական ակտիվություն) գերակայությունն է պասիվ մշակույթի տարրերի (ենթարկվելու պատրաստակամությունը) նկատմամբ: Այդ իսկ պատճառով՝ ամերիկացիներն այդքան էլ «օրինապահ» չեն: Քաղաքացիական մշակույթի կառուցումը կամ վերակառուցումը շատ դժվար է: Այս երևույթին կարող ենք ականատես լինել Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի օրինակներով: Ֆաշիզմի պարտությունից մեկ ու կես տասնամյակ հետո այս պետություններից ոչ մեկին չի հաջողվել մշակել և զարգացնել ակտիվ քաղաքական մշակույթ: Եթե Գերմանիայում գերակշռում էր ենթարկման պասիվ մշակույթը, ապա Իտալիայում անջնջելի են բացառապես տեղական քաղաքական մշակույթի տարրերը: Իրենց հաջորդ աշխատանքում (1980) Ալմոնտըր և Վերբան, իհարկե, նշում են ժամանակակից պետություններում քաղաքական մշակույթի մի շարք փոփոխությունների մասին (մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում ազգային հպարտության և կյանքի նկատմամբ վստահության անկումը, իսկ Գերմանիայում ընդհակառակը՝ քաղաքացիական մշակույթին բնորոշ տարրերի ձևավորումը):

Հարկ է նշել, որ քաղաքական դիրքորոշումների և արժեքների դիտարկումը քաղաքացիական մշակույթի ոսպնյակում, այնուամենայնիվ, արժանացավ նաև քննադատության: Առաջին հերթին այս հայեցակարգը կասկածի տակ դրվեց այն պատճառով, որ հեղինակները քաղաքականությունը (ժողովրդավարության կայունությունը) հանգեցրին հոգեբանությանը: Առանձնապես սուր քննադատության արժանացավ քաղաքական պասիվության գաղափարը, ըստ որի՝ իշխանության հեղինակությանը ենթարկվելն առողջ քաղաքականության տարր է: «Արդյո՞ք քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաղաքականությանը, - հարցնում էին քննադատները, - ժողովրդավարական կառավարման բուն էությունը չէ»: Եթե հասարակությունը քաղաքականապես պասիվ է, ապա դրանից միայն ուրախ է իշխանությունը:

Քննադատները նշում են, որ քաղաքացիական մշակույթի տեսությունը հիմնվում է բոլորովին չապացուցված ենթադրության վրա, ըստ որի՝ մարդկանց քաղաքական վարքագիծը ձևավորվում է հասարակության մեջ գերակշռող արժեքներով և ոչ հակառակը: Հարցն այսպիսին է՝ ո՞րն է պատճառը և ո՞րն է հետևանքը: Արդյո՞ք ժողովրդավարական հասարակությունը ձևավորվում է որոշակի քաղաքացիական մշակույթի հիման վրա, թե՞ ժողովրդավարական հասարակությունն է ձևավորում քաղաքացիական մշակույթ: Իհարկե, քաղաքական մշակույթի տեսանկյունից միանգամայն կարելի է գնահատել հասարակության քաղաքական առողջության

աստիճանը, սակայն կարելի՞ է արդյոք այդ մշակույթը համարել միջոց, որը նախօրոք կարող է երաշխավորել ժողովրդավարական վարչակարգի կայունությունը: Վերջապես, Ալմոնդը և Վերբան ընկալում են քաղաքական մշակույթը որպես կատարելապես միաձին երևույթ, որը խիստ կապված է ազգային մշակույթի հետ և նույնիսկ ունի ազգային բնույթ: Բայց չէ՞ որ հասարակության մեջ կան նաև ենթամշակույթներ: Հասարակությունն ընդհանրապես շատ տարբեր է, նրանում առկա են բազմաթիվ հակասություններ և հակամարտություններ: Ի տարբերություն նրանց՝ քաղաքականության արմատական տեսաբանները բաժանում են հասարակությունը, ընդհանրապես, ըստ դասակարգերի, ռասայական և սեռական պատկանելության:

Քաղաքական մշակույթի դերի և բնույթի ընկալման բոլորովին այլ մոտեցում են առաջարկում մարքսիստական կողմնորոշում ունեցող քաղաքագետները: Թեև Մարքսը հասկանում էր կապիտալիզմը որպես մասնավոր սեփականության վրա հիմնված դասակարգային շահագործման և ճնշման համակարգ, նա ընդունում էր գաղափարների, արժեքների և համոզմունքների նշանակությունը հասարակության համար: Մարքսիզմի հիմնադիրները գրում էին, որ այն դասակարգը, որը ներկայացնում է հասարակության մեջ տիրապետող *նյութական ուժը*, մինևույն ժամանակ նաև նրանում տիրապետող *հոգևոր ուժ* է: Ըստ Մարքսի՝ գաղափարները և մշակույթը «վերնաշենքի» մասն են, որը որոշվում է տնտեսական «հենքով», այսինքն՝ արտադրության եղանակով:

Կարելի է ասել, որ մարքսիզմում ձևավորվել են մշակույթի երկու տեսություններ: Ըստ առաջին տեսության՝ մշակույթն ունի զուտ *դասակարգային* բնույթ, քանի որ մի դասի ներկայացուցիչները, որպես կանոն, ունեն միևնույն շահերը և գտնվում են միանման տնտեսական իրավիճակում: Նրանք, ամենայն հավանականությամբ, պետք է ունենան միանման գաղափարներ, նպատակներ ու համոզմունքներ: Ըստ Մարքսի՝ ոչ թե մարդկանց գիտակցությունն է սահմանում նրանց կեցությունը, այլ հակառակը՝ նրանց սոցիալական կեցությունն է սահմանում նրանց գիտակցությունը: Ուստի պրոլետարիատի մշակույթը միշտ տարբերվելու է բուրժուազիայի մշակույթից: Ըստ մշակույթի երկրորդ տեսության՝ իշխող դասի գաղափարները (որոնք Մարքսն անվանել է «գաղափարախոսություն») հեշտությամբ են տարածվում ամբողջ հասարակության վրա և դառնում են ժամանակաշրջանի «տիրապետող մտքեր»: Այդպիսով՝ Մարքսի համար իր ժամանակի քաղաքական կամ նույնիսկ քաղաքացիական մշակույթը չէր կարող լինել ոչ այլ ինչ, եթե ոչ բուրժուական գաղափարախոսություն: Ավելի ուշ մարքսիզմն այս ամենը բնորոշեց որպես բուրժուազիայի «գերիշխանություն»:

Ժամանակակից մարքսիստները, իհարկե, հեռու են խնդրի նման ընկալումից և ամեննին էլ չեն կարծում, որ բուրժուազիայի «տիրապետող գաղափարները» սահմանում են կապիտալիստական հասարակության մտավոր և մշակութային կյանքը: Նրանք պնդում են, որ չնայած հասարակության մեջ մրցակցում են տարբեր մշակույթներ, գաղափարախոսություններ և քաղաքական հայացքներ, այնուամենայնիվ՝ այդ մրցակցությունը հավասարաչափ չէ: Ավելին՝ այս ամենը հաջող է գործում այն պատճառով, որ թաքցվում է խոսքի ազատության, բաց մրցակցության, գաղափարական և քաղաքական բազմակարծության քողի հետևում. այն, ինչը Հերբերթ Մարկուզեն անվանել է «ռեպրեսիվ հանդուրժողականություն»:

Քննադատների կարծիքով՝ ընկալել քաղաքական մշակույթը որպես հասարակության մեջ տիրապետող գաղափարախոսություն, նշանակում է ներկայացնել ժամանակակից հասարակությունը որպես գաղափարապես միատարր երևույթ: Իհարկե, տիրապետող գաղափարախոսությունը լիովին կարող է ծառայել իշխող դասերի շահերին՝ նրանց հաղորդելով պատմական ճշմարտության և պատմական միևնույն նպատակին հասնելու զգացում: Այս պարագայում խնդիրը հետևյալն է՝ հնարավոր է արդյոք այդ արժեքները պարտադրել հասարակության ստորին դասերին: Մարքսիզմի տեսանկյունից՝ հասարակության մեջ տնտեսական իշխանության անհավասարաչափ բաշխման և տիրապետող գաղափարախոսական ուղղվածության միջև կապը, կարծես, լավագույն դեպքում ընդամենը արձանագրում է ընդհանրապես բոլոր հասարակություններին բնորոշ իրավիճակը, որտեղ գերիշխող խմբերը միշտ քարոզում են իրենց համար շահավետ գաղափարներ: Սակայն բավականին կասկածելի է, որ այդ հիմքի վրա ձևավորվի *տիրապետող արժեքների համակարգ*, որը գիտակցաբար և նպատակաուղղված կերպով կարող է տարածել իր գաղափարները զանգվածային լրատվության միջոցների, դպրոցների, եկեղեցու և այլ հաստատությունների միջոցով:

Ինչ վերաբերում է հետխորհրդային շրջանում քաղաքական մշակույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններին, ապա այս պարագայում կարևոր է առանձնացնել ռուս հետազոտող Ե. Մորոզովայի «Տարածաշրջանային քաղաքական մշակույթ» հետազոտությունը, որտեղ հեղինակը, ուսումնասիրելով արևմտյան քաղաքագետներ Գ. Ալմոնդի, Ա. Բրաունի, Ս. Վերբայի, Ռ. Թակերի, Ս. Ուայթի, Ռ. Ֆեյզենի և այլոց աշխատանքները, առանձնացնում է քաղաքական մշակույթի հետազոտության երեք հիմնական մոտեցում:

Վարքաբանական մոտեցում, որը հիմնվում է ճշգրիտ գիտությունների մեթոդաբանության վրա: Այս պարագայում քաղաքագիտական վերլուծու-

թյան առարկա է դառնում քաղաքական վարքագծի էմպիրիկ չափումը, որը ներառում է սոցիոլոգիական ընտրանքը, հարցազրույցը, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները քաղաքական վարքագծի գիտական վերլուծության համար:

Սուբյեկտիվիստական մոտեցում, որը լրացուցիչ հիմքեր է ստեղծում քաղաքական մշակույթի ուսումնասիրության համար (հուշեր, գեղարվեստական գրականություն, պատմական և սոցիալ-պատմական հետազոտություններ): Այս պարագայում անցյալի քաղաքական մշակույթը դիտարկվում է որպես նոր քաղաքական մշակույթի ձևավորման հիմնական գործոն:

Ինտերպրետացիոն մոտեցում, որը կոչված է վերատուրդորդել քաղաքական մշակույթի մասին գիտությունը քաղաքական համակարգի՝ որպես քաղաքական վարքի արտացոլման վերլուծությունից դեպի իրական և կատարյալ մշակութային նմուշների վերլուծություն: Այս դեպքում քաղաքական արժեքների փոխանցումը սիմվոլների միջոցով սահմանվում է որպես քաղաքական կապ:

Հնդիկ քաղաքագետ Պ. Շարանը՝ որպես հոգեբանական մոտեցման կողմնակից, քաղաքական մշակույթում առաջնայնությունը տալիս է մարդկանց սուբյեկտիվ կողմնորոշմանը՝ ընդգծելով, որ քաղաքական մշակույթը, ինքնին, ներառում է քաղաքական համակարգի հիմնական հատկանիշները և հոգեբանական չափորոշիչները:

Լինելով քաղաքական համակարգի տարր՝ քաղաքական մշակույթը կանխորոշում է քաղաքական համակարգի գործառնությունը, այսինքն՝ հանդես է գալիս որպես քաղաքական գործընթացների զարգացման և ուղղվածության գործոն:

Լեհ քաղաքագետ Եժի Վյատորը քաղաքական մշակույթը սահմանում է որպես իշխանության և քաղաքացիների փոխհարաբերություններին վերաբերող դիրքորոշումների, արժեքների և վարքագծի մոդելների ամբողջություն: Ըստ էության՝ լեհ հետազոտողն իր աշխատություններում տալիս է քաղաքական մշակույթի կառուցվածքի առավել ընդգրկուն և ընդհանուր բնորոշումը՝ ներառելով քաղաքական մշակույթում հետևյալ բաղադրիչները՝ ա) քաղաքականության իմացություն, ծանոթացում փաստերի հետ և հետաքրքրություն դրանց հանդեպ, բ) քաղաքական երևույթների գնահատում, գնահատողական կարծիք այն մասին, թե ինչպիսին պետք է լինի իշխանությունը, գ) քաղաքական դիրքորոշումների հուզական կողմ, օրինակ՝ սեր հայրենիքի հանդեպ, ատելություն թշնամու հանդեպ, դ) տվյալ հասարակությունում ընդունված քաղաքական վարքի

տիպերը, որոնք սահմանում են, թե ինչպես պետք է գործել քաղաքական կյանքում:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական մշակույթ
- Ակտիվ մշակույթ
- Պասիվ մշակույթ
- Տեղական մշակույթ
- Քաղաքացիական մշակույթ

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպիսի՞ մոտեցումներ գոյություն ունեն քաղաքական մշակույթի սահմանման վերաբերյալ:
2. Որո՞նք են քաղաքական մշակույթի դասակարգման հիմքերը:
3. Մեկնաբանե՛ք Ալմոնդի և Վերբայի առաջարկած քաղաքական մշակույթի տիպաբանությունը:
4. Որո՞նք են ակտիվ, պասիվ և տեղական քաղաքական մշակույթների առանձնահատկությունները:
5. Ինչպե՞ս պետք է ընկալել քաղաքացիական մշակույթը՝ որպես նախապայման, թե ժողովրդավարության հետևանք:
6. Արդյո՞ք արդի հասարակություններում նկատվում են քաղաքացիական ակտիվության անկման միտումներ, թե այն իրականում ընդունում է նոր ձևեր:
7. Որո՞նք են քաղաքական մշակույթի վարքաբանական, սուբյեկտիվիստական և ինտերպրետացիոն մոտեցումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գաբրուզյան Կ.** Քաղաքական մշակույթ. հատուկ դասընթաց, ԵՊՀ, 2007, Եր., 92 էջ:
2. **Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ**, Պրակ Ա, խմբ. Կ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
3. **Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ.** Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, Երևան, 2012, 94 էջ:
4. **Օրդուխանյան Է.** Քաղաքական մշակույթի տեսական-մեթոդաբանական հիմքերի վերլուծություն, /Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում 2012/, Երևան, 2012, էջ 180-195:

5. *Պարլիսյն Վ., Միրուսյան Վ., Բարազանյան Ա., Ասուվաճառուրուի Ա.* Քաղաքագիտություն հանրագիտական քառալսան, Print Master, Երևան, 2004, 488 էջ:
6. *Алмонд Г., Верба С.* Гражданская культура и стабильность демократии // Политические исследования. 1992, № 4., с. 122-134.
7. *Вебер М.* Избранные произведения. М., 1990, 808 с.
8. *Грей Дж.* Поминки по Просвещению. Политика и культура на закате современности. М., 2003, 368 с.
9. *Лассуэлл Г.* Психопатология и политика. М., изд., РАГС, 2005, 352 с.
10. *Харрисон Л., Хантингтон С.* Культура имеет значение. М., 2002, 320 с.
11. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
12. *Шестопал Е.* Политическая психология. М., ИНФРА-М, 2002, 448 с.
13. *Jeffrey C. Goldfarb.* Reinventing Political Culture: The Power of Culture versus the Culture of Power. 2011, 200 p.

**ԹԵՄԱ 8. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԳԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԵՐԸ**

Իշխանության ձգտումը և նրան ենթարկվելու պատրաստակամությունը մարդկային գիտակցության նախաձևերից են, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել մարդկանց ցանկացած համակեցության ձևավորման գործընթաց: Իշխանության նկատմամբ հասարակության վերաբերմունքը բնութագրվում է ոչ միայն նրան աջակցություն ցուցաբերելով և համերաշխությամբ, այլև՝ անհամաձայնությամբ, բողոքով, դիմադրությամբ, ինչը լիարժեքորեն ներառվում է արդի ժողովրդավարության ընկալման համատեքստում: Հասարակության մեջ քաղաքական հարաբերությունները զարգանում են երկակիորեն՝ *օրինապահություն* և *անօրինապահություն*, *համապատասխանություն* և *անհամապատասխանություն*, *հնազանդություն* և *դիմադրություն*:

Քաղաքական իշխանության երևույթը մարդկությանը հայտնի է դեռևս առաջին պետությունների կազմավորման ժամանակներից: Չնայած այն բանին, որ տարբեր երկրների և գիտական դպրոցների կողմից բազում քայլեր են կատարվել դրա էության, հատկանիշների, գործառույթների, տեսակների և ձևերի պարզաբանման ու ներկայացման համար, այնուամենայնիվ՝ քաղաքական իշխանության էության մասին վեճերը չեն դադարել:

Քաղաքական իշխանությունը լայն իմաստով՝ կամքի, հեղինակության, իրավունքի, բռնության և այլ միջոցներով մարդկանց գործունեության, վարքի վրա որոշիչ ազդեցություն թողնելու ունակությունն ու հնարավորությունն է, իսկ նեղ իմաստով՝ քաղաքական տիրապետության և պետական մարմինների համակարգ:

Միասնական քաղաքական կամքը բացառում է քաղաքացիների ազատ ընտրությունը, հետևաբար՝ խոսքը իշխանության որոշակի ձևերի մասին է: Իշխանությունն ինքնին ոչ վատն է, ոչ լավը, սակայն այն կարող է ողջ հասարակության համար ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Քաղաքական իշխանության *սուբյեկտների* շրջանակում ներառվում է ոչ միայն *պետությունը*, այլև՝ *քաղաքական կուսակցությունները*, որոշ *սովերային շահագրգիռ խմբեր*, որոնք ոչ ակնհայտորեն կարող են հանդես գալ որպես քաղաքական իշխանության սուբյեկտներ: Այդ գործոններն անհրաժեշտ են քաղաքական իշխանության սահմանման համար:

Քաղաքական իշխանության հայեցակարգերը: Ներկայումս քաղաքական իշխանության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հայեցակարգային մոտեցումներ: Դրանցից մեկը՝ ***դասականը***, առաջարկում է միմյանց լրացնող երկու տեսակետներ՝ ***ա) ուժային և բ) համաձայ-***

նուրթյան, որը հիմնվում է համընդհանուր բարիքի սկզբունքի վրա: Այս մոտեցումներն առաջարկվել են դեռևս ժամանակակից քաղաքագիտության նախահայրեր Պլատոնի և Արիստոտելի կողմից, ովքեր պահանջների բավարարումը համարում էին պետական իշխանության նպատակ: «Պետությունն առաջանում է այն ժամանակ, երբ յուրաքանչյուր ոք միայնակ չի կարողանում բավարարել իր պահանջները, որոնց կարիքը զգում է: Այդպիսով, յուրաքանչյուր ոք ներգրավում է մեկին կամ մի քանիսին իր այս կամ այն պահանջը բավարարելու գործում: Մարդիկ, ունենալով բազում կարիքներ, միավորվում են, որպեսզի ապրեն համատեղ և օգնեն միմյանց. այսպիսի համակեցությունն էլ կոչվում է պետություն», - գրում էր Պլատոնը: Իսկ նրա աշակերտ Արիստոտելն իր «Քաղաքականություն» աշխատությունում պնդում էր, որ անհրաժեշտ է միավորվել ինքնապահպանման նպատակով:

Պլատոնն ուշադրությունը սևեռում էր պայքարի, բախման վրա, որոնք, նրա կարծիքով, քաղաքական գործունեության միջուկն են: Նա գտնում էր, որ արդար քաղաքական արվեստը բարեկամներին օգուտ բերելու, իսկ թշնամիներին վնաս պատճառելու արվեստն է: Արիստոտելը, ընդհակառակը, ուշադրությունը կենտրոնացնում էր համընդհանուր համաձայնության վրա, ինչին պետք է միտված լինի քաղաքական իշխանությունը: Քաղաքական գործունեության իմաստը նա տեսնում էր սեփականության և մարդկանց տարաբնույթ անձնական շահերի շրջանակում համաձայնության միջոցով համընդհանուր բարիքի ձեռքբերման մեջ:

Իշխանության դասական սահմանումը պատկանում է Թոմաս Հոբսին, ով *իշխանությունը բնութագրում է որպես մարդու զորեղություն, որպես մյուսների նկատմամբ նրա գերակայություն*: Իսկ մարդու զորեղությունը նա բացատրում է որպես նրա՝ հետագայում ինչ-որ տեսանելի բարիքի հասնելու համար անհրաժեշտ միջոցների առկայություն: Ի դեպ՝ մարդկային ամենամեծ զորեղությունը համաձայնությամբ միավորված մարդկանց մեծամասնության ուժն է: Հոբսն այն անվանում է գերագույն կամ բացարձակ իշխանություն պետության շրջանակներում: Նա մատնանշում է գերագույն իշխանության հետևյալ հատկանիշները: Գերագույն իշխանությունը կարող է՝

- *ընդունել օրենքներ և դրանք չեղյալ հայտարարել,*
- *հայտարարել պատերազմ և կնքել խաղաղություն,*
- *քննարկել և լուծել վեճեր,*
- *նշանակել բոլոր պաշտոնատար անձանց, ղեկավարներին և խորհրդակցաններին:*

Հոբար քաղաքական է անվանում այն պետությունը, որտեղ քաղաքացիներն ընտրում են գերագույն իշխանությունն իրենց հայեցողությամբ: Նրա համար քաղաքական իշխանությունը *ասորիքուտիվ-աուբասանցիոնալ* երևույթ է, ինչպես նաև՝ դաշինքի հիման վրա ստեղծված սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունների արդյունք:

Քաղաքագիտության մեջ դիտարկում են իշխանության *ուժային և փոխհամաձայնության (կոնսենսուսային) մոդելները*, ինչպես նաև տարբերակում են իշխանության՝ *մարքսիստական, վեբերյան և պյուրալիստական (Տ. Պարսոնս, Ռ. Դահլ)* հայեցակարգեր:

Մարքսիստական հայեցակարգը հետազոտում է իշխանությունը իշխող դասի տեսանկյունից: Ինչ վերաբերում է *վեբերյան հայեցակարգին*, ապա այն սահմանում է պետությունը որպես՝ բարձրագույն իշխանությամբ օժտված և ուժ գործադրելու մենաշնորհ ունեցող քաղաքական ինստիտուտ: Իսկ *պյուրալիստական տեսություններն* իշխանությունը դիտարկում են որպես՝ ողջ քաղաքական համակարգն ընդգրկող երևույթ: Սակայն դժվար է չհամաձայնել այն քաղաքագետների հետ, ովքեր սովյալ տարբերակումները համարում են պարզեցված: Օրինակ՝ Ռոբերտ Դահլը նշում է, որ քաղաքական իշխանությունը կենտրոնացած է փոքրամասնության ձեռքում, որը նա անվանում է «քաղաքական դաս»: Դահլը պաշտպանում է ազատական ժողովրդավարությունը մարքսիստների հարձակումներից, որոնք ընդգծում էին, որ տնտեսապես իշխող դասը ղեկավարում է ամբողջ հասարակությունը:

Իշխանության *ուժային հայեցակարգն* ավելի ամբողջական զարգացում է ապրել գերմանական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի աշխատություններում: Նրանք պնդում էին, որ *որքան անհավասարաչափ է սակավաթիվ ռեսուրսների բաշխումը հասարակությունում, այնքան խորն է տիրապետող և տիրապետվող շերտերի միջև շահերի բախումը*:

Ըստ Մարքսի՝ իշխանության ուժային հայեցակարգի հիմնական դրույթն այն է, որ քաղաքական իշխանության կողմից իրականացվող կառուցվածքային բռնությունը միավորում է հասարակությունը: Այս պարագայում *քաղաքական իշխանությունն ուղղակիորեն մի դասի կազմակերպված բռնությունն է մյուս դասին ճնշելու նպատակով*:

Էնգելսը կարծում էր, որ ցանկացած դասակարգային պայքարում սովյալ պայքարի առաջնային նպատակը քաղաքական իշխանությունն է տիրապետող դասը պաշտպանում է իր քաղաքական վերադասությունը, որպեսզի հնարավորություն ստանա փոխել գոյություն ունեցող օրենքներն իր սեփական շահերին և կարիքներին համապատասխան:

Իշխանության **կոնֆլիկտային մոդելի** ներկայացուցիչ Մաքս Վեբերն իշխանությունը սահմանում է որպես՝ *սոցիալական հարաբերությունների շրջանակներում ուրիշներին իրենց կամքը թելադրելու ունակ հնարավորություն՝ հակառակ ցուցաբերվող դիմադրությանը*: Նա պնդում է, որ քաղաքական իշխանությունը հեղինակություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ դրա իրականացումը ժողովուրդն ընդունում է որպես լեգիտիմ, *ավանդույթներով, օրենքներով և առաջնորդի խարիզմայով արդարացված*:

Իշխանության **համաձայնության հայեցակարգը** խրախուսվում է հիմնականում ամերիկյան քաղաքագիտական մտքի կողմից, որտեղ իշխանությունը չի բնութագրվում որպես բախում և հարկադրանք:

Այս հայեցակարգի ներկայացուցիչներից Տ. Պարսոնսը *իշխանությունը սահմանում է որպես հանրային նպատակներին հասնելու դրական սոցիալական ունակություն*: Հասարակության ամբողջականությունը պահպանվում է ոչ թե այն պատճառով, որ գոյություն ունի իշխանություն, այլ՝ այն, որ դրա առանձին տարրերի և անհատների միջև գոյություն ունի սահմանված նորմերի և արժեքների շրջանակում գործողությունների փոխանակում, որը բավարարում է նրանց շահերը՝ այդպիսով հաստատելով կարգուկանոն: Այս դեպքում իշխանությունը դիտարկվում է բացառապես «ազդեցություն» և «հարգանք» կատեգորիաների տեսանկյունից: *Իշխանությունը քաղաքական ազդեցությունն է, սակայն ի տարբերություն տնտեսական ազդեցության, այն հիերարխիկ է, այլ ոչ թե՛ գծային: Մա վերադասի ազդեցությունն է ստորադասի նկատմամբ*: Քաղաքական ազդեցությունը հասարակական հարաբերությունների ողջ համակարգը վերահսկելու հնարավորություն է, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջոցների հավաքագրում որոշակի նպատակի հասնելու համար:

Այսպիսով՝ իշխանությունն իբրև քաղաքական ազդեցություն՝ դիտարկվում է որպես հասարակության մեջ լայնորեն տարածված մի երևույթ, որը կենտրոնացած չէ իշխող էլիտայի ձեռքում: Այս դեպքում քաղաքական համակարգը համարվում է *բաց պլյուրալիստական*, որը հնարավորություն է տալիս հանրության բոլոր անդամներին որոշակիորեն մասնակցել քաղաքական գործընթացներին: Այս մոտեցման կողմնակիցները մեղադրվում են քաղաքական իշխանության և հասարակության փոխհարաբերությունների բախումային ներուժի թերագնահատման համար:

Վերոհիշյալ երկու մոտեցումները հստակորեն սահմանագատում է Ժ. Մարիտենը՝ Իշխանությունը որպես **հեղինակություն** (authority) և որպես **հզորություն** (power): Հզորությունն ուժ է, որի միջոցով կարելի է ստիպել մյուսներին ենթարկվել: Իշխանությունը ենթադրում է ուղղորդելու և հրամայելու իրավունք հանուն համընդհանուր բարիքի: Իշխանությունը են-

թաղրում է հզորություն, սակայն հզորությունն առանց իշխանության բռնակալություն է: Քանի որ իշխանությունը նշանակում է իրավունք, ապա արժե դրան ենթարկվել բանականության սահմաններում, այսինքն՝ ենթարկվել ինչպես ազատ մարդիկ են ենթարկվում հանուն համընդհանուր բարիքի: Իշխանություն գոյություն չունի այնտեղ, որտեղ չկա արդարություն: Անարդար իշխանությունը ոչ այլ ինչ է, քան անարդար օրենք, այսինքն՝ անօրինություն: Ժողովրդավարության աղբյուրը ոչ թե միայն ինքդ քեզ ենթարկվելու ցանկություն է, ինչպես ասել է Ժ.-Ժ. Ռուսոն, այլ՝ ենթարկվելու ցանկություն, քանզի դա արդարացի է:

Իմի բերելով վերը նշված հայեցակարգերը՝ կարելի է ասել, որ *քաղաքական իշխանության էությունը դրսևորվում է անմիջապես երկու ձևով՝ բոլորի դեմ ընդհանուր լեզվոտիմ բռնությամբ, օրինական կոնֆլիկտով և բոլորի հետ խաղաղ համակեցությամբ՝ անընդհատ համաձայնություն որոնելով: Քաղաքական իշխանությունը միշտ գտնում է որոշ միջոցներ համընդհանուր բարիք ստեղծելու համար, իսկ հասարակությունը զգում է դրա կարիքը և այդ իսկ պատճառով անհրաժեշտության դեպքում քաղաքական իշխանությանը օժտում է օրինական և լեզվոտիմ ուժ կիրառելու հնարավորությամբ:*

Որոշ քննադատներ պնդում են, որ քաղաքական իշխանության նպատակը պետության բոլոր քաղաքացիների համընդհանուր բարիքը չէ՝ նշելով, որ դա *ամբողջատիրական, ավտորիտար և սոցիալիստական* իշխանությունն է, մինչդեռ անձի ազատությունը և մարդու արժանապատվությունը պաշտպանող քաղաքական իշխանությունն *ազատական, ժողովրդավարական* իշխանությունն է, որն ավելի է համահունչ արդիականության պահանջներին:

Քաղաքական իշխանության ընկալումն Արևելքում և Արևմուտքում: Իշխանության ընդհանուր հատկանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև Արևելքում և Արևմուտքում գոյություն ունեցող իշխանության հայեցակարգային տարբերություններին, ինչը թելադրված է քաղաքակրթական առանձնահատկություններով: Շվեդ գիտնական Ռոդոլֆ Չելենը պնդում է, թե իշխանության կառուցվածքը և բնույթը համապատասխանում են քաղաքակրթական գեոտոպիային: Եթե քաղաքակրթությունը դիտարկենք որպես մեկ կամ մի քանի հասարակությունների կայուն, ինքնավերարտադրվող սոցիալական կազմավորման ձև, որտեղ հասարակության անդամները կապված են համապատասխան քաղաքական, տնտեսական, կրոնական, ընտանեկան, հոգեբանական և իրավական ավանդույթներով, որոնք մի էթնոսից փոխանցվել են հաջորդին երկարատև պատմական գործընթացների արդյունքում, ապա մենք կտեսնենք

տարբերություններ նախ և առաջ իշխանության համեմատաբար բաց կամ փակ ձևի, այսինքն՝ դրա *էքստրավերտության* և *ինտրավերտության* միջև:

Արևելյան հասարակություններում ապրող մարդը հազարամյակներ շարունակ գոյատևել է խիստ կանոնակարգվող, պարփակված համայնքներում, որտեղ մինչև եվրոպական քաղաքակրթության հետ առնչվելը գործել է հասարակության կազմակերպման միևնույն ձևը: Արևելյան պետություններում, որտեղ գործում էր քոչվոր կամ կիսաքոչվոր կենսակերպը, ձևավորվել էին մարդու ինտրավերտ (ներպարփակված) տեսակը և հասարակական ինստիտուտները, մշակվել էր ինքնամեկուսացման սկզբունքը՝ որպես ազգի գոյատևման և նրա մշակույթի պահպանման ճանապարհ: Այստեղից էլ բխում է արևելյան երկրներում, որպես կանոն, ձևավորված «մեղմ» դեսպոտիան՝ իբրև քաղաքական իշխանության ձև: Եվ որքան մեծ է պետության տարածքը և բնակչության թիվը, այնքան դժվար են այնտեղ ընթանում արդիականացման գործընթացները:

Արևմուտքում, որտեղ տարածված էին գյուղատնտեսական բնակավայրերը և տնտեսությունները, որտեղ զարգանում էր քրիստոնեությունը, ձևավորվեց *քաղաքական իրավունքի* հասկացությունը, ինչն էլ թույլ տվեց հասարակությանը վերահսկել քաղաքական իշխանությունը՝ այն դարձնելով էքստրավերտ:

Գոյություն ունեն քաղաքական իշխանության ուսումնասիրության որոշակի ավանդույթներ, որոնք հատուկ են ազգային քաղաքագիտական դպրոցներին: Այսպես, օրինակ՝ ամերիկյան քաղաքագիտական դպրոցում իշխանության ուսումնասիրությունը ներառում է *քաղաքական էլիտայի* և *քաղաքական լիդերության հասկացությունները*, *իշխանության տարանջատման սկզբունքների*, *կառավարությունների հետազոտությունը*: Քանի որ այնտեղ իշխանությունն ընկալվում է որպես ազդեցություն, ապա քաղաքագիտությունը չի սահմանափակվում միայն կառավարման համակարգերի հետազոտությամբ: ԱՄՆ-ում գոյություն ունեն հանրությունների քաղաքականության հետազոտության վաղեմի ավանդույթներ: Այդպիսով՝ իշխանության մասին հարցն այնտեղ տեղափոխվում է *քաղաքական մասնակցության* հետազոտության ոլորտ, որը ենթադրում է քաղաքական լիդերների ընտրություն և որոշում է պետական քաղաքականությունը կամ նրա նկատմամբ դրսևորվող ազդեցությունը: ԱՄՆ-ում քաղաքական իշխանությունը դիտարկում են՝ **որպես հարաբերություններ** (Պ. Շարան. «Իշխանությունը սոցիալ-հոգեբանական հարաբերություն է, որը փոխպարտավորեցնում է նրանց, ովքեր տիրապետում են իշխանությանը և նրանց, ում վրա տարածվում է այդ իշխանությունը»), **որպես կառուցվածք** (Ռ. Միլս. «Իշխող էլիտան՝ ոչ ամբողջությամբ ինտեգրված կազմավորում

է, քանի որ այն բաղկացած է երեք խմբից՝ վերին ռազմական ղեկավարություն, կառավարող վաշինգթոնյան էլիտա, այսինքն՝ քաղաքական էլիտա և տնտեսական էլիտա», **որպես գործառույթ** (Թ. Պարսոնս. «Իշխանությունը հասարակության ռեսուրսների հավաքագրումն է առաջադրված նպատակներին հասնելու համար, որը ճանաչվում է ողջ հասարակության կողմից»), **որպես գործիք** (Կ. Դոյչ. «Իշխանությունը կարելի է ընկալել որպես բոլոր արժեքների ձեռքբերման գործիք»): Այս բոլոր մոտեցումներն արտացոլում են իշխանական հարաբերությունների տարբեր կողմերը, որոնցից էլ բխում է քաղաքական իշխանության էության նկարագրությունը:

Ուշագրավ է նաև լեհ քաղաքագետ Եժի Վյատրի կողմից առաջարկված քաղաքական իշխանության սահմանումը, որտեղ տարբերակվում են վեց ուղղություններ՝ **1. բիենիորիստական** (իշխանությունը սահմանվում է որպես վարքագծի հատուկ ձև, որը փոխում է մյուսների վարքագիծը), **2. նպատակային** (իշխանությունը բնութագրվում է որպես որոշակի նպատակների հասնելու միջոց), **3. գործիքային** (իշխանությունը դիտարկվում է որպես որոշակի միջոցների օգտագործման հնարավորություն), **4. կառուցվածքային** (իշխանությունը համարվում է կառավարողի և կառավարվողի միջև հատուկ հարաբերություններ), **5. կոնֆլիկտային** (իշխանությունը բնորոշվում է որպես որոշումների ընդունման հնարավորություն, որոնք կարգավորում են բարիքների բաշխումը կոնֆլիկտային իրավիճակներում), **6. ներգործող** (իշխանությունը սահմանվում է որպես ուրիշների վրա ազդեցություն):

Այս համատեքստում քաղաքական իշխանությունը սահմանվում է որպես *հարկադրանքի կամ համոզման մեթոդներով սուբյեկտի (անհատ, խումբ, կազմակերպություն, կուսակցություն, պետություն) կողմից իր կամքն ուրիշին պարտադրելու, ուրիշի գործողությունները կառավարելու ունակություն:*

Քաղաքական իշխանությունը, ինչպես ցանկացած հանրային կազմավորում, ունի երկակի՝ *օբյեկտիվ-սուբյեկտիվ* բնույթ: Դա պայմանավորված է սոցիալական բուրգի գազաթին գտնվող խմբերի շահերով, որոնք ձևավորում են իշխանությունը: Այս պարագայում իշխանության *սուբյեկտ են հանդիսանում կառավարողները, իշխողները, պաշտոնյաները, իսկ օբյեկտ՝ ժողովուրդը, բնակչությունը:* Այս պատկերացումն ամրապնդվում է ՋԼՄ-ների օգնությամբ, որոնք քաղաքական տեխնոլոգիաների միջոցով ստեղծում են իշխանության բավականին տպավորիչ պատկեր:

20-րդ դարի իշխանության ավանդական մոդելի հետստրուկտուրալիստական քննադատության ներկայացուցիչ Միշել Ֆուկոն իշխանությունը չի

դիտարկում որպես **սուբյեկտ-օբյեկտ** հարաբերություններ: Նա նշում է, որ իշխանությունն ինչ-որ մեկի ձեռքում չէ, այն չի յուրացվում ինչպես ապրանքը կամ հարստությունը: Անհատները կամագուրկ և ամեն ինչի համաձայն էակներ չեն: Իշխանությունը ձևավորող անհատները միևնույն ժամանակ նրա շարժիչ ուժն են: Ահա թե ինչու իշխանությունը զավթում է ամենը և բխում ամենքից:

Ֆուկույի իշխանության հայեցակարգում սուբյեկտներն ունեն ընտրության հնարավորություն, ինչպես նաև վարքագծի, արձագանքման և գործողության մի քանի տարբերակներ: Նրա կարծիքով՝ իշխանությունը ոչ թե պաշտոնյաներն են, պետությունը և պետական կառավարման մարմինները, այլ այն իշխողների և իշխվողների փոխհարաբերությունների արդյունքն է, հետևաբար՝ իշխանական հարաբերությունները միշտ դառնալի են, այսինքն՝ ենթակա են փոփոխման (**իշխանության օբյեկտը կարող է դառնալ սուբյեկտ և հակառակը**):

Ընտրության գաղափարը գոյություն ունի նաև Ֆրանկֆուրտյան գիտական դպրոցի ներկայացուցիչների հայեցակարգերում: Նրանց ամենագլխավոր դրույթն այն է, որ **իշխանությունը հաղորդակցության արդյունք է**: Ֆրանկֆուրտյան դպրոցի հետևորդ Հաննա Արենդտի կարծիքով՝ իշխանությունը ոչ թե առանձին սուբյեկտի սեփականությունն է, այլ այն բազմակողմ ինստիտուցիոնալ հաղորդակցություն է: Արենդտը առանձնացնում է *ուժը իշխանությունից*: Բռնությունը միշտ անձնավորված է, մինչդեռ իշխանությունը ձևավորվում է բազմաթիվ մարդկանց կողմից: Իշխանության իր մոդելում նա ներառում է մարդկանց փոխազդեցության և փոխկախվածության հանգամանքները: Արենդտը նշում է, որ ուժն այն է, ինչին ի բնե որոշակիորեն տիրապետում է ցանկացած մարդ և ինչն իրականում կարող է համարել իր սեփականը, իսկ իշխանություն, էապես, ոչ ոք չունի. այն առաջանում է այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են գործել միասին, և այն կորչում է այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են գործել առանձին: Ուժը դառնում է իշխանություն ձեռք բերելու առիթ, իսկ իշխանությունը ծագում է մարդկանց հաղորդակցության պահին:

Արենդտը տարբերում է քաղաքական իշխանության հաղորդակցության նորմերը՝ *փոխադարձություն, հավասարակշռություն, հնարավորություն, իշխանության կիրառման չափավորություն*:

Այսպիսով՝ քաղաքական իշխանության հասկացությունը, զարգանալով տարբեր փիլիսոփայական, սոցիոլոգիական և քաղաքական հայեցակարգերում, ունի իր առանձնահատկությունները: Իշխանության վերաբերյալ պատմական մոտեցման տեսանկյունից կարելի է առանձնացնել դրա երկու գլխավոր մոդելները, որոնց էությունը պայմանավորվում է երկա-

տումներով՝ *ընդհանուր-մասնավոր, կոլեկտիվ-անհատական, անհրաժեշտություն-ազատություն, բռնություն-համաձայնություն*:

Համընդհանուր բարիքի հայեցակարգի հետևորդների (*կոլեկտիվիստների*) համար իշխանությունը բոլորի համար բարիքի ապահովման արդարացի երաշխիք է, այդ թվում՝ նաև օրինական բռնության կիրառման օգնությամբ որպես բանական անհրաժեշտություն, իսկ քաղաքացու իրավունքների կողմնակիցների (*ինդիվիդուալիստների*) համար իշխանությունը անհատների ինքնակամ համաձայնության արդյունք է. պայմանով, որ այն պաշտպանելու է նրանց իրավունքներն օրենքի շրջանակներում: Հասկանալի է, որ այս երկու հայեցակարգերը, վերջին հաշվով, իրենցից ներկայացնում են մեր սոցիալականության երկու կողմերը: Մեկն իր ուշադրությունը սևեռում է ընդհանուրի, այսինքն՝ որպես մարդկանց բազմություն համարվող հասարակության վրա, իսկ մյուսը՝ ընդհանուրի մի մասի, այսինքն՝ այդ հանրույթը կազմող առանձին անհատների վրա: Այս հայեցակարգերից յուրաքանչյուրը խթանում է իշխանության քաղաքական կեցության այս կամ այն կողմը որպես՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ անկախ այն բանից, թե դրանք կառուցվում են բռնության կամ թե ինքնակամ համաձայնության հիման վրա: Երկու հայեցակարգերն էլ ընդգծում են իշխանության սոցիալական և միաժամանակ մարդակերպական (անտրոպոմորֆիկ) էությունը՝ մատնանշելով, որ դրա հաստատման հիմքում ընկած են ինչ-որ մեկի գաղտնի կամ բացահայտ պատճառաբանված անձնական կամ խմբային շահերը:

Իշխանության *ավանդական, ուժային հայեցակարգին* որպես հակակշիռ՝ ***հաղորդակցական հայեցակարգը*** դիտարկում է իշխանությունը որպես, նախ և առաջ, երկու սուբյեկտների հաղորդակցության արդյունք: Պատահական չէ, որ արդի ժողովրդավարական հասարակությունները մեծապես կարևորում են քաղաքական հաղորդակցության հիմնախնդիրը:

Դիտարկելով քաղաքական իշխանությունը որպես հաղորդակցության արդյունք՝ վերջինս սահմանվում է որպես *քաղաքական ընտրություն, որը կատարում է հասարակությունը կառավարող խմբերի, քաղաքական ուժերի կողմից առաջարկված գաղափարների արդյունքում, որտեղ գործում է քաղաքական խոսույթը: Ժողովրդավարական իշխանությունը ենթադրում է առավելապես երկխոսություն ընդդիմության և հասարակության հետ: Ավտորիտար իշխանությունը ենթադրում է կեղծ երկխոսություն կամ երկխոսության նմանակում, որը միշտ փոփոխվում է, իսկ ամբողջատիրական իշխանությունը նախընտրում է մենախոսություն, այսինքն՝ հաղորդակցական բռնություն:*

Քաղաքական իշխանության կառուցվածքը: Քաղաքական իշխանությունն արտահայտում է որոշակի փոխներգործություն և փոխհարաբերություններ, որոնց կառուցվածքային տարրերն են *սուբյեկտը* և *օբյեկտը*: Սուբյեկտը նա է, ով իշխում է: ***Որպես իշխանության սուբյեկտ (ակտոր)***՝ կարող են հանդես գալ *առանձին անհատը, կազմակերպությունը, մարդկանց համայնքը* (օրինակ՝ միջազգային հանրությունը ՄԱԿ-ում):

Իշխանական հարաբերությունների առաջացման համար անհրաժեշտ է, որպեսզի սուբյեկտն օժտված լինի մի շարք հատկանիշներով: Առաջին հերթին դա իշխելու ցանկությունն է, կամքը, ինչը դրսևորվում է կարգադրությունների կամ հրամանների տեսքով: Ինքնին իշխանությունը նրանց համար արժեք չէ: Նույնիսկ շատերը կնախընտրեին խուսափել դեկավար պաշտոններից և դրա հետ կապված պատասխանատվությունից, եթե իշխանությունը նրանց առջև չբացեր տարբեր բարիքների ձեռքբերման հնարավորություններ՝ բարձր եկամուտ, հեղինակություն, շահավետ հարաբերություններ, արտոնություններ և այլն: Նրանց համար իշխանության ձգտումն ունի գործիքային բնույթ, այսինքն՝ ծառայում է որպես այլ նպատակներին հասնելու միջոց:

Բացի իշխելու և պատասխանատվություն ստանձնելու ցանկությունից, իշխանության սուբյեկտը պետք է լինի բանիմաց, ծանոթ լինի ենթակաների վիճակին և տրամադրությանը, կարողանա պատշաճ օգտագործել իշխանության ռեսուրսները և ունենա հեղինակություն: Քաղաքական իշխանության համար ամենակարևորը սուբյեկտի կազմակերպվածությունն է: Մակայն իրականում իշխանության սուբյեկտները տարբեր աստիճանով են տիրապետում վերը նշված հատկանիշներին:

Քաղաքական իշխանության սուբյեկտներն ունեն բարդ և բազմաշերտ բնույթ: Իշխանության առաջնային ակտորներ են համարվում ***անհատները*** և ***սոցիալական խմբերը***, իսկ երկրորդական՝ ***քաղաքական կազմակերպությունները***, որոնք, լինելով քաղաքական իշխանության բարձրաստիճան սուբյեկտներ, իշխանական հարաբերություններում ներկայացնում են տարբեր խմբերին և կազմակերպություններին՝ ***քաղաքական էլիտան*** և ***առաջնորդներին***:

Սուբյեկտն իրականացնում է իշխանությունը կարգադրության, հրամանի միջոցով, որը սահմանում է իշխանության օբյեկտի վարքագիծը՝ ենթադրելով պատիժ կամ տույժ դրան չենթարկվելու դեպքում: Հրամանում բովանդակված պահանջի բնույթով է պայմանավորվում վերջինիս նկատմամբ օբյեկտի վերաբերմունքը, որն իշխանության երկրորդ կարևոր տարրն է:

Իշխանությունը երբեք չի կարող լինել մեկ գործող անձի (մարմնի) հաստիքի լի կամ հարաբերությունը, եթե, հիարկե, նկատի չունենանք անձի՝ իր իսկ նկատմամբ ունեցած իշխանությունը, ինչը ենթադրում է հնազանդվել սեփական բանականությանը: Բայց այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե սոցիալական, այլ հոգեբանական երևույթի հետ:

Իշխանությունը միշտ երկկողմանի է, անհամաչափ, որտեղ սուբյեկտն իշխում է **օբյեկտին**: Իշխանությունը հնարավոր չէ առանց օբյեկտի ենթարկման: Եթե չկա ենթարկում, ապա չկա իշխանություն՝ չնայած այն հանգամանքին, որ իշխանության ձգտող սուբյեկտն ունի իշխելու անհազ ցանկություն և նույնիսկ հարկադրանքի հզոր միջոցներ: Ի վերջո, իշխանության օբյեկտը միշտ էլ ունի ընտրություն, թեկուզ ծայրահեղ՝ մահանալ, բայց չենթարկվել: Իշխանությունից կախվածության գիտակցումն իր գործնական քաղաքական դրսևորումն է գտել քաղաքացիական անհնազանդության տեսքով, ինչը լայնորեն կիրառվում է ժամանակակից աշխարհում՝ որպես խաղաղ պայքարի միջոց:

Այսպիսով՝ որպես իշխանության սուբյեկտ կարող են հանդես գալ **պետությունը, նրա առանձին ինստիտուտները, քաղաքական էլիտան** և **առաջնորդները**: Իսկ իշխանության օբյեկտներն են ինչպես **անհատները, սոցիալական խմբերը**, այնպես էլ **մարդկանց մեծ զանգվածները՝ պետության ամբողջ բնակչությունը**: Ժողովրդավարական հասարակություններում ժողովուրդը քաղաքական իշխանության ձևավորման գործընթացում հանդես է գալիս որպես իշխանության սուբյեկտ՝ ընտրությունների միջոցով ձևավորելով քաղաքական իշխանություն, իսկ հետո՝ որպես իշխանության օբյեկտ՝ ենթարկվելով իր ձևավորած իշխանությանը:

Քաղաքական իշխանության աղբյուրներն են՝ **օրենքը, ուժը, հեղինակությունը, համաձայնությունը, հարստությունը, շահը, խարիզման, գիտելիքը, գաղափարները** և այլն:

Քաղաքական իշխանության ռեսուրսները: Իշխանության «հիմքեր» և իշխանության «ռեսուրսներ» հասկացությունները նույնը չեն: **Իշխանության հիմքեր** ասելիս հասկանում ենք իշխանության աղբյուրները: Իսկ **իշխանության ռեսուրսները** հատուկ միջոցներ են, որոնց օգնությամբ իշխանության սուբյեկտն իր նպատակներին հասնելու համար ազդում է իշխանության օբյեկտի վրա:

Քաղաքացիության մեջ տարբերում են իշխանության ռեսուրսների մի քանի տիպաբանություններ: Դրանցից առավել տարածված է իշխանության ռեսուրսների տիպաբանությունն ըստ ոլորտային սկզբունքի: Այս սկզբունքի համաձայն՝ տարբերում են իշխանության՝ **տնտեսական, տ-**

ցիալական, մշակութային, տեղեկատվական, իրավական, ուժային և այլ ռեսուրսներ:

Տնտեսական ռեսուրսները՝ առաջին հերթին սեփականությունը և դրամը, միշտ եղել են ցանկացած իշխանության կարևորագույն ռեսուրսները: Միջնադարյան ֆեոդալական հասարակարգում պետական իշխանությունն իր նպատակներին հասնելու համար լայնորեն օգտագործել է այն ժամանակվա ամենակարևոր՝ *հողի սեփականության ռեսուրսը*: Առավել բազմակողմանի տնտեսական ռեսուրսը եղել և շարունակում է մնալ դրամը: Առանց դրամի արդի հասարակություններում հնարավոր չէ ոչ հասնել իշխանության, ոչ էլ հաջողությամբ այն տնօրինել:

Սոցիալական ռեսուրսներն իշխանության կարողությունն է տարբեր գործիքների օգնությամբ, այդ թվում՝ տնտեսական, փոխել անհատների և հասարակական խմբերի սոցիալական կարգավիճակը՝ նրանց աջակցություն ցուցաբերելու նպատակով: Օրինակ՝ ԽՍՀՄ գոյության առաջին տարիներին մտավորականության սոցիալական վիճակը բավականին ցածր էր: Այդ իսկ պատճառով միջոցներ ձեռնարկվեցին մտավոր աշխատանքի հեղինակությունը և դրանով զբաղվող սոցիալական խմբերի կարգավիճակը բարձրացնելու ուղղությամբ:

Արևմտյան զարգացած երկրներում սոցիալական քաղաքականությունն այնպես է կառուցված, որ բնակչության մեծ մասը շահագրգռված է այդ քաղաքականությունը պահպանելու հարցում, քանի որ այն առանձնանում է կայուն ապահովագրական և կենսաթոշակային համակարգերով:

Իշխանության *մշակութային և տեղեկատվական* ռեսուրսները շատ բազմազան են: Տեղեկատվության հետ մեկտեղ, առանց որի անհնար է այսօր պատկերացնել որևէ սոցիալական կառույցի գործառնություն, մշակութային և տեղեկատվական ռեսուրսները ներառում են տարբեր գիտական գիտելիքներ, գաղափարներ և հոգևոր արժեքներ: Տեղեկատվական ռեսուրսների շարքում առաջնային են զանգվածային լրատվական միջոցները (ԶԼՄ): Հաճախ ԶԼՄ-ներն անվանում են «չորրորդ իշխանություն», ինչը ցույց է տալիս վերջիններիս իրական հնարավորությունները և հասարակական կարծիքի վրա ունեցած ազդեցությունը:

Ուժային ռեսուրսների շարքին են դասվում բռնության կամ հարկադրանքի միջոցները, այդ թվում՝ զենքի գործադրմամբ: Իշխանության ուժային ռեսուրսներն իրականացվում են բանակի, ոստիկանության, անվտանգության ծառայության, դատարանների, դատախազության, քրեակատարողական հիմնարկների և այլ ուժային կառույցների միջոցով: Այս կազմակերպություններն իրականացնում են պետության, քաղաքական իշխանության անվտանգության ապահովման, իշխանության տա-

պալման փորձերի կանխման, հասարակական կարգի ապահովման և պաշտպանության գործառույթներ: Նրանք օժտված են լեզվիտիմ բնություն գործադրելու իրավունքով:

Ժողովրդագրական ռեսուրսներն ինքնին մարդիկ են, քաղաքացիները, ժողովուրդը, առանց որոնց ոչ մի իշխանություն չի կարող գործել: Ժողովրդագրական ռեսուրսների օրինակ կարելի է համարել իշխանության կողմից կադրերի հավաքագրումը, նրանց բաշխումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ նաև իշխանական և կառավարման մարմիններում:

Իշխանության **իրավական ռեսուրսներն** են օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը (նախագահի հրամանագրեր, կառավարության որոշումներ և այլն), որոնք գործադրում է իշխանությունն իր գործունեության ընթացքում:

Քաղաքագետ Ամիտայ Էտցիոնին իր առաջարկած իշխանության ռեսուրսների դասակարգման մեջ իրավական նորմերն արժեքային կողմնորոշումների հետ միասին ներառում է նորմատիվային ռեսուրսների շարքում: Դրանց հետ մեկտեղ նա տարբերում է նաև իշխանության **ուսի-լիտարիստական** (օգտապաշտական) և **հարկադրական** ռեսուրսները: Հեղինակն ուսիլիտարիստական ռեսուրսների թվին է դասում տարբեր տնտեսական և սոցիալական բարիքները, իսկ հարկադրական ռեսուրսների շարքին՝ տույժերը, պատիժները, որոնք կիրառում է իշխանությունը իր նպատակներին հասնելու համար:

Քաղաքական իշխանությունն օժտված է որոշ **հատկանիշներով**: Դրանք են՝

- **ուժի գործադրման օրինականությունը** (լեգալությունը), այսինքն՝ միայն պետական իշխանությունն է, որ իրավունք ունի գործադրելու ուժ իր քաղաքացիների և իր տարածքում գտնվող անձանց նկատմամբ,
- **իշխանության գերակայությունը**, այսինքն՝ պետական իշխանության որոշումները պարտադիր են իր քաղաքացիների և իր տարածքում գտնվող անձանց համար,
- **իշխանության հրապարակայնությունը**, այսինքն՝ պետական իշխանության գործունեությունը և որոշումները պետք է լինեն հրապարակային և թափանցիկ,
- **իշխանության միակենտրոնությունը**, այսինքն՝ քաղաքական որոշումները կայացվում են մեկ միասնական կենտրոնի կողմից:

Քաղաքական իշխանության ձևերի տիպաբանության շարքում լայն տարածում է գտել նաև ֆրանսիացի քաղաքագետ Մ. Դյուվերժեի դասա-

կարգումը: Նա առանձնացնում է իշխանության երեք ձև՝ *անանուն* (անոնիմ), որը հատուկ է թույլ կազմակերպված հասարակություններին, *անհատականացված*, որն առաջանում է աշխատանքի բաժանման և գործունեության առանձին տեսակների առանձնացման ժամանակ, և *ինստիտուցիոնալացված*, որը հենվում է սոցիալական ինստիտուտների համակարգի վրա, որոնք իրականացնում են հստակ սահմանված գործառույթներ: Արդի հասարակություններում քաղաքական իշխանությունը գոյություն ունի առավելապես իր ինստիտուցիոնալացված ձևով:

Արդի քաղաքագիտության մեջ տարբերում են քաղաքական իշխանության հետևյալ **գործառույթները՝**

- *տիրապետություն* (իշխանության օբյեկտի լիակատար ենթարկումը նրա սուբյեկտին),
- *հասարակական հարաբերությունների կարգավորում* (իշխանությունը սահմանում է հասարակության զարգացման հիմնական նպատակները և այլընտրանքները, ապահովում է հասարակության ինտեգրումը, հասարակական կարգի և ամբողջականության պահպանումը)
- *վերահսկողություն* (կարգավորում է հասարակական կոնֆլիկտները և գտնում դրանց լուծման ուղիներ),
- *հավաքագրում* (համախմբում է հասարակությունը պետության համար կարևոր հարցերի շուրջ),
- այլ:

Այսպիսով՝ քաղաքական իշխանությունը, չնայած իր ռեսուրսներին և գործառույթներին, հիմնականում անհավասարաչափ է բաժանվում հասարակության մեջ: Ցանկացած երկրում, ինչպես հին ժամանակներում, այնպես էլ այսօր, մարդկանց մեծ մասն ուղղակիորեն չի մասնակցում քաղաքականությանը և պետական կառավարմանը: Նույնիսկ արդի ժողովրդավարության պայմաններում, որտեղ իշխանության աղբյուր է ճանաչվում ժողովուրդը, իշխանության իրական կրողները շարունակում են մնալ քաղաքական էլիտան և քաղաքական առաջնորդները:

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԳԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԻՐԸ

Լեգիտիմություն և քաղաքական կայունություն: *Լեգիտիմությունը քաղաքական իշխանության ճանաչումն ու ընդունումն է հասարակության կողմից: Իսկ լեգալությունը քաղաքական իշխանության իրավաբանական ամրագրումն է կոնկրետ պետական փաստաթղթում:*

Քաղաքական համակարգի կամ վարչակարգի լեգիտիմության խնդիրը, այսինքն՝ այն հարցը, թե արդյո՞ք հասարակությունը ճանաչում է քաղաքական համակարգը կամ վարչակարգը որպես «օրինական» և «արդար», կապված է քաղաքական պարտավորությունների հիմնախնդրի հետ: Իսկ ինչո՞ւ, ըստ էության, քաղաքացիները պարտավոր են ճանաչել պետական իշխանությունը: Արդյո՞ք պետության նկատմամբ նման վերաբերմունքը և նրա օրենքներին ենթարկվելը մարդկանց պարտքն է: Արդի քաղաքական խոսույթում լեգիտիմությունը, ճշմարտությունը հասկացվում են ոչ այնքան որպես բարոյական պարտականություններ, որքան որպես զուտ քաղաքական հարց, որը ենթադրում է ոչ թե այն, թե ինչու մարդիկ պետք է ենթարկվեն պետությանը, այլ այն, թե ինչու են նրանք դա անում: Որո՞նք են այն պայմանները կամ գործընթացները, որոնք իշխանությանը տալիս են գոյության իրավունք և, հետևաբար, ապահովում են վարչակարգի կայունությունը: Այս հարցերին պատասխանելու համար, իհարկե, անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել **«լեգիտիմություն»** հասկացությունը:

Լեգիտիմության խնդիրը՝ որպես սոցիոլոգիական երևույթ, ուսումնասիրել է Մաքս Վեբերը: Նա իր առջև խնդիր էր դրել դասակարգել «տիրապետության համակարգերը» և բացահայտել լեգիտիմության հիմքերը յուրաքանչյուր համակարգի պայմաններում: Արդյունքում՝ Վեբերին հաջողվեց առանձնացնել քաղաքական իշխանության, այսպես կոչված, «երեք կատարյալ տեսակ» կամ հայեցակարգային մոդել: Նրա կարծիքով՝ այդ կատարյալ տեսակները համապատասխանում են իշխանության հետևյալ երեք տեսակներին՝

- ավանդույթի վրա հիմնված իշխանություն՝ **ավանդական իշխանություն,**
- աստվածային շնորհի վրա հիմնված իշխանություն՝ **խարիզմատիկ իշխանություն,**
- օրենքի և բանականության վրա հիմնված իշխանություն՝ **ռացիոնալ-իրավական իշխանություն:**

Իշխանության այս երեք տեսակներից յուրաքանչյուրն ունի լեգիտիմության իր սեփական ձևը, աղբյուրը և մարդկանց՝ իշխանությանը ենթարկելու հնարավորության և անհրաժեշտության սեփական պատճառները: Ընդ որում՝ Վեբերի համար ավելի ընդհանուր խնդիր էր հասկանալ, թե ինչպես էր փոփոխվում հասարակությունը, ինչի համար նա փորձեց համադրել համեմատաբար պարզ, ավանդական հասարակություններում գոյություն ունեցող իշխանության համակարգերն այն համակարգերի հետ,

որոնք բնորոշ էին արդյունաբերական և բարձր բյուրոկրատացման աստիճան ունեցող հասարակություններին:

Քաղաքական լեզվատիրության առաջին տեսակը, ըստ Վեբերի, հիմնված է *պատմական սովորույթների* և *ավանդույթների* վրա: **Ավանդական իշխանությունն** ընկալվում է որպես լեզվատիր այն պատճառով, որ «գոյություն է ունեցել միշտ»: Այդ իշխանությունը ճանաչել են նախորդ սերունդները: Որպես կանոն, այսպիսի իշխանությունը հենվում է ստույգ նորմերի վրա, որոնք ամուր են, չեն կարող դրվել որևէ կասկածի տակ, չեն պահանջում հիմնավորում, քանի որ գոյություն ունեն դարեր շարունակ: Ավանդական իշխանության առավել բնորոշ օրինակներից է ցեղախմբերում կամ փոքր խմբերում գործադրվող իշխանությունը, որտեղ այն կրում է **նահապետական** (օրինակ՝ հոր իշխանությունն ընտանիքում կամ «տիրոջ» իշխանությունն իր ծառաների նկատմամբ) կամ **գերոնտոկրատական** բնույթ (այսինքն՝ առավել հեղինակավոր ավագների իշխանությունը): Ավանդական իշխանությունը դրսևորվում է նաև **իշխանության ժառանգական փոխանցման** համակարգերում (օրինակ՝ Սաուդյան Արաբիայում, Քուվեյթում և Մարոկկոյում): Չնայած այն բանին, որ արդի զարգացած արդյունաբերական երկրներում միապետի իրական դերը չնչին է՝ այս ինստիտուտը, թեկուզ և սահմանադրական ձևով, շարունակվում է պահպանվել (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Բելգիա, Հոլանդիա և Իսպանիա), ինչը նրանց քաղաքական մշակույթի կարևորագույն տարրն է:

Լեզվատիրության երկրորդ տեսակը, ըստ Վեբերի, **խարիզմատիկ իշխանությունն** է: Այս դեպքում քաղաքական իշխանությունն ընկալվում է որպես հեղինակություն, շնորհք, որի հիմքը քաղաքական առաջնորդի բացառիկ անձնական հատկանիշներն են: Բոլորովին կապ չունենալով հասարակական կարգավիճակի, դիրքի կամ պետական հիերարխիայում զբաղեցրած տեղի հետ՝ խարիզմատիկ իշխանությունը հիմնվում է բացառապես առաջնորդի՝ այլ մարդկանց դեպի իրեն ձգելու ունակության և կարողությունների վրա: Պատմականորեն նման իշխանությամբ օժտված են եղել նրանք, ովքեր համարվել են հերոսներ կամ սրբեր: Հարկ է ընդգծել, որ նորագույն պատմության մեջ չնայած այն բանին, որ շատ քաղաքական առաջնորդներ՝ Ծարլ դե Գոլը, Ջորջ Քենեդին, Մարգարեթ Թետչերը և ուրիշներ, ունեցել են որոշ խարիզմատիկ հատկանիշներ, նրանց իշխանությունը, այնուամենայնիվ, չի կարելի անվանել խարիզմատիկ: Արդի ընկալմամբ՝ նրանք բոլոր եղել են պետական գործիչներ: Քաղաքագետների կարծիքով՝ խարիզմատիկ առաջնորդներ են եղել՝ Նապոլեոնը, Մուսոլինին, Հիտլեր, Այաթոլա Խոմեյնին, Ֆիդել Կաստրոն, գնդապետ Քադաֆին և այլք:

Խարիզմատիկ իշխանությունը միայն «Աստծո պարզեր» չէ: Այդպիսի համակարգերում միշտ գոյություն ունի «անձի պաշտամունքի» գաղափարը, որը խարիզմայի ձևավորման լրացուցիչ գործոն է: Այն դեպքում, երբ լեզվատիրությունը հենվում է առաջնորդի անհատական հատկանիշների վրա, այն կարող է ունենալ երկու հետևանք: Առաջին՝ երբ խարիզմատիկ իշխանությունը չի հետևում պաշտոնական կանոններին և ընթացակարգերին, այն կարող է լինել անսահմանափակ: Քաղաքական առաջնորդն այստեղ վերածվում է անսխալական մարգարեի, իսկ զանգվածները՝ նրա հավատարիմ հետևորդների, որոնցից պահանջվում է միայն հնազանդություն: Երկրորդ դեպքում հեղինակությունն ու իշխանությունն այնքան են փոխկապակցվում մեկ անձի հետ, որ նրա ստեղծած համակարգը, որպես կանոն, չի կարողանում գոյատևել իրենից հետո: Ասվածի վառ օրինակն են՝ Նապոլեոնի, Մուսոլինիի և Հիտլերի վարչակարգերը:

Քաղաքական լեզվատիրության երրորդ ձևը, ըստ Վեբերի՝ ***ռացիոնալ-իրավական*** լեզվատիրությունն է, որտեղ իշխանությունը հիմնվում է հստակ սահմանված կանոնների վրա, որոնք իրենց դրսևորումն են գտնում օրենքներում և իրավունքում: Այսպիսի իշխանությունը բնորոշ է արդի պետությունների մեծ մասին, որտեղ նախագահի, վարչապետի կամ որևէ այլ բարձրաստիճան պաշտոնյայի լիազորությունները հստակ սահմանվում են սահմանադրական նորմերով: Իշխանության այս ձևի առավելությունը նախորդ երկու ձևերի նկատմամբ այն է, որ այստեղ իշխանության չարաշահման վտանգն ավելի փոքր է: Այսպիսի իշխանությունը, իրականացնելով աշխատանքի ռացիոնալ բաժանում, նպաստում է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Վեբերը, սակայն, քաղաքական լեզվատիրության այս ձևում տեսնում էր նաև բացասական կողմ. նա կարծում էր, որ արդյունավետությունը հղի է մշակութային-ավանդական արժեքներից իշխանության հեռացմամբ, հատկապես՝ մարդու նկատմամբ ձևական և անտարբեր վերաբերմունքով, ինչը նկատվում է արդի բյուրոկրատական կազմակերպչական մեխանիզմների տարածման արդյունքում:

Չնայած, որ քաղաքական լեզվատիրության ձևերի վեբերյան դասակարգումը մինչ օրս պահպանել է իր արդիականությունը՝ դրանում կարելի է նկատել նաև մի շարք թերություններ: Քաղաքական վարչակարգի կամ համակարգի լեզվատիրության կարևորումը շատ քիչ բան է ասում այն հանգամանքների և պատճառների մասին, որոնց հետևանքով իշխանությունը կորցնում է իր վստահելիությունը: Այս ամենը տեղի է ունենում այն դեպքում, եթե իշխանության վարած քաղաքականությունը չունի հասարակական վստահություն կամ ղեկավարը (կառավարություն, պետություն)

վարկաբեկվել է հասարակության աչքերում: *Օրինակ՝ 1990 թ. Մեծ Բրիտանիայում ստեղծված հարկային իրավիճակը, անկասկած, արթնացրեց զանգվածային դժգոհություն, որը դարձավ վարչապետ Թետչերի հրաժարականի պատճառներից մեկը: Մակայն պետք է ընդունել, որ այս դեպքում ամբողջ համակարգը չկորցրեց իր լեգիտիմությունը: Քաղաքական լեգիտիմության վերբյան հայեցակարգում մեկ այլ թերություն է առանձնացնում Բիթհեմը (1991): Նրա կարծիքով՝ Վեբերը միայն «հավատում է լեգիտիմության գաղափարին»՝ բաց թողնելով նրա ծագման հարցը:*

Բիթհեմը գտնում է, որ իշխանությունը կարելի է համարել լեգիտիմ երեք դեպքերում՝

- իշխանությունը պետք է իրականացվի սահմանված կանոններին համապատասխան՝ լինեն դրանք պաշտոնապես ամրագրված օրենքներ կամ չգրված կանոններ,
- այդ կանոնները պետք է ճանաչվեն որպես պարտադիր կառավարողների և կառավարվողների կողմից,
- հասարակության մեջ չպետք է լինեն տվյալ վարչակազմի հետ սկզբունքային անհամաձայնության տարրեր:

Այս դեպքում Բիթհեմը կարևորում է իշխանության լեգիտիմացման երկու կարևոր ինստիտուտներ՝ *պարտադիր ընտրությունները և բազմակուսակցական համակարգը*, ինչպես նաև՝ *հասարակության դիրքորոշումն արտացոլող սահմանադրական դրույթների պարտադիր բնույթը:*

Լեգիտիմության ճգնաժամ: Լեգիտիմության խնդրին բացի Վեբերից անդրադարձել են նաև նեոմարքսիզմի տեսաբանները: Եթե ուղղափառ մարքսիզմը լեգիտիմության խնդիրը պարզապես համարում էր առաքել, բուրժուական գիտակցության հորինվածք, ապա նեոմարքսիստները, սկսած Գրամշից, պատրաստ են ընդունել, որ կապիտալիզմը պահպանում է իր ռեսուրսները հիմնականում այն պատճառով, որ ունի քաղաքական աջակցություն հասարակության կողմից: Այնպիսի նեոմարքսիստներ, ինչպիսիք են՝ Յուրգեն Հաբերմասը և Կլաուս Օֆֆեն (1984), դասակարգերի հիմնախնդրից անցում կատարեցին լեգիտիմության վերարտադրության մեխանիզմի ուսումնասիրությանը (ժողովրդավարական գործընթաց, բազմակուսակցական համակարգ, սոցիալական աջակցություն, բարեփոխումներ և այլն): Մակայն միևնույն ժամանակ նրանք չեն հրաժարվում նաև այն դիրքորոշումից, որ քաղաքական համակարգում, եթե այն հիմնված է դասերի անհավասարության սկզբունքի վրա, միևնույն է միշտ էլ դժվարություններ կլինեն լեգիտիմության հետ: Իր՝ «Լեգիտիմության ճգնաժամ» (1973) աշխատանքում Հաբերմասը մատնանշում է կապիտալիստական հասարակություններում գոյություն ունեցող մի շարք «ճգնա-

ժամային միտումներ», որոնց պատճառով դժվար է պահպանել քաղաքական կայունությունը: Նրա պնդմամբ՝ այս խնդրի արմատները բխում են կապիտալիստական տրամաբանության և հասարակության պահանջների միջև հակասությունից, ինչը ժողովրդավարության պայմաններում հեշտությամբ արտացոլվում է քաղաքական կյանքում:

Հաբերմասի ընկալմամբ՝ շահույթ հետապնդող կապիտալիստական տնտեսությունը, կարծես թե, ծրագրված է կայուն ընդլայնման: Մակայն հասարակության մեջ քաղաքական և սոցիալական իրավունքների ընդլայնման դեպքում (սա է պահանջում համակարգի լեգիտիմացումը) նրանում առաջանում է որոշակի «արատավոր շրջան»: Մեխանիզմը հետևյալն է. ժողովրդավարական գործընթացն ինքնին հանգեցնում է սոցիալական աջակցության համակարգի ընդլայնմանը, հասարակությանը տալիս է քաղաքական մասնակցության ավելի լայն հնարավորություններ և ընդհանուր առմամբ ապահովում է ավելի լայն սոցիալական հավասարություն: Դրան արձագանքելով՝ պետությունը ստանձնում է ավելի մեծ տնտեսական և սոցիալական պատասխանատվություն, բարձրացնում է հարկերը և մեծացնում հանրային ծախսերը: Մակայն դա սահմանափակում է կապիտալի կուտակումը, հանգեցնում շահույթի անկման և բացասական ազդեցություն թողնում ձեռներեցության վրա: Կապիտալիստական ժողովրդավարություններն անվերջ չեն կարող լուծել միաժամանակ այս երկու խնդիրները (այն է՝ *աջակցել մասնավոր շուկայական տնտեսությանը և բավարարել հասարակական աճող պահանջարկը*): Նման երկընտրանքի պայմաններում քաղաքական համակարգի լեգիտիմության հարցն ավելի ու ավելի է բարդանում և, ի վերջո, գուցե նույնիսկ դառնում անլուծելի:

1970-ական թթ. հետազոտողներ Էնթոնի Քինգը (1975) և Ռիչարդ Ռոուզը (1980) կարևորեցին այն հանգամանքը, որ կառավարությունների աշխատանքն ավելի դժվար է դառնում այն պատճառով, որ հասարակությունը վերջիններիս ավելի ու ավելի խիստ պահանջներ է ներկայացնում: Խնդիրն այն է, որ իշխանության համար պայքարում առանձին քաղաքական գործիչներն ու կուսակցությունները փորձում են գերազանցել միմյանց խոստումներով: Բացի այդ, տարբեր ճնշման խմբեր անընդհատ պաշարում են կառավարությունը խիստ իրարամերժ պահանջներով: Կառավարությունների համար ավելի դժվար է դառնում այդ պահանջներին համապատասխանելը, քանի որ տեղի է ունենում ընդհանուր շարժում դեպի կորպորատիվիզմ, որին բնորոշ է պետական մարմինների և կազմակերպված հասարակական խմբերի միջև փոխկախվածության ավելի բարձր մակարդակ:

Ընդհանուր առմամբ, 1980-1990 թթ. քաղաքական միտումները կարելի է դիտել որպես արձագանք **լեզվափոփոխության ճգնաժամի** խնդրին: Այնպիսի տեսաբաններ, ինչպես Մեմյուել Բրիթենը (1977), խոսեցին պետության ֆինանսական ճգնաժամի և «ժողովրդավարության տնտեսական հակասություններին» մասին: 1990-ական թթ. ԱՄՆ-ում Ռեյգանի և Մեծ Բրիտանիայում Թեյչերի վարչակազմերը սկսեցին «նվազեցնել» հասարակական սպասումները՝ փոխանցելով պատասխանատվությունը պետությունից անհատին: Այդ ժամանակ սկսեցին խոսել այն մասին, որ տնտեսական բարգավաճման հարցը պարզապես վերաբերում է անհատական պատասխանատվության ոլորտին: Յուրաքանչյուր ոք ինքը պետք է հոգ տանի իր մասին՝ ծանր աշխատանքով, խնայողություններով, կենսաթոշակի մասնավոր կուտակմամբ, առողջության ապահովագրությամբ և այլն: Կառավարությունը, փաստորեն, իր վրայից հանեց նաև գործազրկության պատասխանատվությունը: Այս կապակցությամբ առաջ քաշվեց մի գաղափար, ըստ որի՝ ցանկացած դեպքում գոյություն ունի գործազրկության «բնական մակարդակ», որը, եթե աճում է, ապա միայն այն պատճառով, որ «ազաի աշխատողները, պահանջելով իրենց աշխատանքի դիմաց ավելի բարձր վարձատրություն, ինքնին իրենց դուրս են մղում աշխատաշուկայից»:

«Նոր աջերը» էլ ավելի առաջ գնացին և կասկածի տակ դրեցին բոլոր այն տեսությունները և արժեքները, որոնցով նախկինում հիմնավորվում էր պետության պատասխանատվության շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը: Նրանք փորձեցին հաստատել միանգամայն նոր արժեքներ՝ **ծայրահեղ անհատականություն և նոր շուկայական փիլիսոփայություն**, որոնք, ի վերջո, պետք է վերջ դնեին «դայակ պետության» հայեցակարգին: Նկատենք, որ այդ նախագիծը պսակվեց հաջողությամբ: Դրա վկայությունն է առնվազն այն փաստը, որ նույնիսկ սոցիալիստական կուսակցություններն այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իսպանիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան, ի վերջո, հանգեցին այդ փիլիսոփայությանը: Փաստորեն, սոցիալական արդարության, ապահովության և պետական պատասխանատվության գաղափարները կարևորող քաղաքական մշակույթին փոխարինման եկավ ընտրության ազատության, ձեռներեցության, մրցակցության և սեփական ճակատագրի առջև անձի պատասխանատվության գաղափարները կարևորող քաղաքական մշակույթը:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Իշխանություն
- Հեղինակություն և հզորություն
- Նահապետական իշխանություն
- Խարհիզմատիկ իշխանություն
- Ռացիոնալ-իրավական իշխանություն
- Լեզիտիմություն
- Լեգալություն (օրինականություն)
- Լեգիտիմության ճգնաժամ

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Որո՞նք են իշխանության հիմնական հայեցակարգերը:
2. Ի՞նչ հատկանիշներով է առանձնանում իշխանության ուժային հայեցակարգը:
3. Որո՞նք են իշխանության կոնսենսուսային հայեցակարգի առանձնահատկությունները:
4. Իշխանության ո՞ր հայեցակարգն է առավել բնորոշ արդի քաղաքական իշխանությանը:
5. Ո՞րն է իշխանության հաղորդակցական հայեցակարգի բնորոշումը:
6. Բնութագրե՛ք ժողովրդին որպես իշխանության սուբյեկտ և օբյեկտ:
7. Ինչո՞վ են տարբերվում իշխանության ընկալումներն Արևելքում և Արևմուտքում:
8. Ինչո՞վ է պայմանավորված իշխանության ռեսուրսների կարևորությունը:
9. Դասակարգե՛ք իշխանության ռեսուրսներն ըստ կարևորության:
10. Որո՞նք են քաղաքական իշխանության հատկանիշները և գործառույթները:
11. Որո՞նք են պետության լեգիտիմության պահպանման պայմանները:
12. Որո՞նք են քաղաքական լեգիտիմության վերերյան դասակարգման առավելությունները և թերությունները:
13. Ինչպիսի՞ն է նեոմարքսիստների վերաբերմունքը քաղաքական լեգիտիմության նկատմամբ:
14. Արդյո՞ք կարելի է ասել, որ կապիտալիստական համակարգերին հատուկ է լեգիտիմության ճգնաժամը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Պողոսյան Վ., Միրումյան Վ., Բարաջանյան Ա., Աստվածատուրով Ա. Քաղաքագիտություն: հանրագիտական բառարան*, Print Master, Երևան, 2004, 488 էջ:
2. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ*, Պրակ Ա, խմբ. Վ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
3. *Вебер М.* Избранные произведения. М., 1990, 808 с.
4. *Жиро Т.* Политология. Пер. с польск., Харьков, 2006, 428 с.
5. *Кретов Б., Горбунов А.* Прикладная политология: Учебное пособие. Высшая школа, М., 2009. 303 с.
6. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водлазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
7. *Цыганков П.* Власть и демократия. Зарубежные ученые о политической науке. М., 1992, 252 с.
8. *Шаран П.* Сравнительная политология, Ч.1. М., 1992, 352 с.

ԹԵՄԱ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Էլիտայի հասկացությունը: «Էլիտա» եզրույթը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «լավագույն», «ընտրյալ»: Ընդհանրական իմաստով այս հասկացությունը բնութագրում է առավել վառ ընդգծված քաղաքական և կառավարչական որակներ և գործառույթներ ունեցող անձանց, որոնց ձեռքում է կենտրոնացված իշխանության մեծ մասը:

«Քաղաքական Էլիտա» կատեգորիայի գիտական գործածումը հիմնված է ինչպես քաղաքականության տեղի և դերի, այնպես էլ հասարակության մեջ քաղաքականության կրողների մասին հստակ պատկերացումների վրա:

Ի սկզբանե՝ «Էլիտա» եզրույթը քաղաքական գիտության մեջ տարածում գտավ 20-րդ դարի սկզբին: Էլիտայի ժամանակակից առաջին դասական հայեցակարգերը առաջացել են 19-20-րդ դարերում: Դրանք կապված են Գաետանո Մոսկայի, Վիլֆրեդո Պարետոյի և Ռոբերտ Միլսեյլսի անունների հետ:

Էլիտայի մասին Մոսկայի տեսությունը: Հայտնի իտալացի սոցիոլոգ և քաղաքագետ Գաետանո Մոսկան (1858-1941) փորձում էր ապացուցել ցանկացած հասարակության անխուսափելի բաժանումը երկու՝ սոցիալապես անհավասար դիրքեր և դերեր ունեցող խմբերի միջև: Ըստ Մոսկայի՝ «Բոլոր հասարակություններում, սկսած թույլ զարգացած և մի կերպ քաղաքակրթության մակարդակի հասած հասարակություններից մինչև լուսավորյալ և հզոր հասարակություններ, գոյություն ունի մարդկանց երկու դաս՝ կառավարողների և կառավարվողների»: Կառավարողների դասը միշտ համեմատաբար փոքրաթիվ է, իրականացնում է բոլոր քաղաքական գործառույթները, մենաշնորհում է իշխանությունը և օգտվում է իրեն հատուկ առավելություններից, իսկ կառավարվողների դասն առավել մեծաթիվ է, կառավարվում և կարգավորվում է առաջին դասի կողմից:

Մոսկան վերլուծում է քաղաքական էլիտայի ձևավորման խնդիրը և վերջինիս բնորոշ հատկանիշները: Նա գտնում էր, որ էլիտայի կազմում ընդգրկվելու ամենակարևոր չափանիշը մարդկանց կառավարելու ունակությունն է, այսինքն՝ կազմակերպչական հմտությունները, ինչպես նաև էլիտային հասարակության մնացած մասից առանձնացնող՝ նյութական, բարոյական և մտավոր գերազանցությունը:

Ընդգծելով կառավարող խմբերի համախմբվածությունը և դրանց գերիշխող դիրքը հասարակության մեջ՝ Մոսկան այն անվանել է **քաղաքական դաս**, որը միշտ ենթակա է աստիճանական փոփոխությունների: Գոյու-

թյուն ունեն այս դասի զարգացման երկու միտումներ՝ *ազնվական* ու *ժողովրդավարական*: Ջարգացման ազնվական միտումը հետապնդում է քաղաքական դասի վերարտադրության ժառանգականության եթե ոչ իրավական, ապա գոնե փաստացի սկզբունքը: Քաղաքական դասի վերարտադրության ազնվական միտումները հանգեցնում են դասի «փակմանը և կարծրացմանը», դասի այլասերմանը և, որպես հետևանք, հասարակության լճացմանը: Սա ի վերջո հանգեցնում է նոր սոցիալական ուժերի ակտիվացմանը, որոնք իրենց հերթին կայաքարեն հասարակության մեջ գերիշխող դիրքեր զբաղեցնելու համար:

Երկրորդ ժողովրդավարական միտումը արտահայտվում է քաղաքական դասի թարմացման և նորացման գործում կառավարման առավել ընդգծված հատկանիշներ ունեցողների և հասարակության ակտիվ ստորին շերտերի գործունեության արդյունքում: Այսպիսի նորարարությունը խոչընդոտում է էլիտայի այլասերումը հասարակության կառավարման տեսանկյունից այն դարձնելով ավելի արդյունավետ:

Քաղաքական դասի վերաբերյալ Մոսկայի հայեցակարգը, որը մեծ ազդեցություն է ունեցել էլիտայի տեսությունների հետագա զարգացման վրա, ենթարկվեց քննադատության հասարակության կազմակերպման մեջ քաղաքական գործոնի բացարձակացման համար (կառավարող շերտին պատկանելության տեսանկյունից), ինչպես նաև տնտեսության դերի թերագնահատման համար: Այս մոտեցման կիրառումը ժամանակակից պլուրալիստական հասարակություններում հիմնականում իրավաչափ չէ:

Էլիտայի մասին Պարետոյի տեսությունը: Վիլֆրեդո Պարետոն (1848-1923), Մոսկայից անկախ, նույն ժամանակահատվածում մշակեց քաղաքական էլիտայի իր տեսությունը: Նա, ինչպես և Մոսկան, հիմնվում է այն դրույթի վրա, որ բոլոր ժամանակներում աշխարհը կառավարել և պետք է կառավարի ընտրյալ փոքրամասնությունը էլիտան: Էլիտան օժտված է հատուկ հատկանիշներով՝ հոգեբանական (բնածին) և սոցիալական (որը ձեռք է բերվել կրթության և դաստիարակության արդյունքում): Իր՝ «Ընդհանուր սոցիոլոգիայի մասին տրակտատ» աշխատանքում նա գրում է. «Դուր է գալիս դա որոշ տեսաբանների, թե ոչ, մարդկային հասարակությունը միասեռ չէ, և անհատներն էլ միմյանցից տարբերվում են ֆիզիկական, բարոյական և մտավոր հատկանիշներով»:

Իշխող էլիտան ներքուստ համախմբված է և միշտ պայքարում է իր իշխանությունը պահպանելու համար: Հասարակության զարգացումը տեղի է ունենում էլիտայի երկու հիմնական տեսակների պարբերաբար փոփոխության և շրջանառության միջոցով: Այդ էլիտաներն են. առաջինը՝ **«ադվենսները»** (ճկուն կառավարիչներ, որոնք ձգտում են կառավարման

ավելի «փափուկ» մեթոդների՝ բանակցություններ, զիջումներ, շողոքորթություն և այլն) և **«առյուծները»** (կոշտ ու վճռական կառավարիչներ, որոնք առավելապես հիմնվում են ուժի վրա): Հասարակության մեջ փոփոխություններն աստիճանաբար թուլացնում են այս երկու տեսակի էլիտաներից որևէ մեկի գերակայությունը: Այսպես, օրինակ՝ *«աղվեսներին»* տիրապետությունը արդյունավետ է պատմականորեն համեմատաբար հանգիստ ժամանակներում, սակայն այն դառնում է անարդյունավետ այն իրավիճակներում, երբ պահանջվում են վճռական գործողություններ և բռնություն: Սա հանգեցնում է հասարակության աճող դժգոհությանը և հակաէլիտայի (կոնտրէլիտա) ուժեղացմանը (*«առյուծներ»*), որը զանգվածներին հավաքագրելու միջոցով տապալում է իշխող էլիտան և հաստատում է իր գերիշխանությունը:

էլիտայի մասին Միխեյլի տեսությունը: Քաղաքական էլիտայի տեսության զարգացման գործում մեծ ներդրում ունի Ռոբերտ Միխեյլը (1876-1936): Նա ուսումնասիրել է այն սոցիալական մեխանիզմները, որոնք հասարակության մեջ ծնում են էլիտարության երևույթը: Հիմնականում համաձայնելով էլիտայի առաջացման պատճառների վերաբերյալ Մոսկայի մոտեցումների հետ՝ Միխեյլն ընդգծում է կազմակերպչական հմտությունների նշանակությունը, ինչպես նաև հասարակության կազմակերպչական կառուցվածքները, որոնք ամրապնդում են էլիտարությունը և կառավարող շերտի դիրքերը: Ըստ Միխեյլի՝ հենց հասարակության կազմակերպման ձևն է պահանջում էլիտարություն և օրինաչափորեն վերաբտադրում այն: Հասարակությունում գործում է **«օլիգարխիկ միտումների երկաթե օրենքը»**: Դրա էությունն այն է, որ խոշոր կազմակերպությունների զարգացումը, որը սոցիալական առաջընթացի անբաժան մասն է, անխուսափելիորեն հանգեցնում է հասարակության կառավարման օլիգարխացմանը և էլիտայի ձևավորմանը: Նրանց գործունեության արդյունավետությունը պահանջում է գործառնական մասնագիտացում և ռացիոնալություն, կառավարող միջուկի և ապարատի ձևավորում, որոնք աստիճանաբար, սակայն անխուսափելիորեն դուրս են գալիս շարքային անդամների հսկողությունից, այսպես ասած՝ անջատվում են նրանցից և քաղաքականությունը ծառայեցնում են սեփական շահերին՝ հոգալով առաջին հերթին սեփական արտոնյալ դիրքերի պահպանման մասին: Միևնույն ժամանակ կազմակերպության շարքային անդամները կոմպետենտ չեն, պասիվ են և անտարբեր առօրյա քաղաքական գործունեության նկատմամբ: Արդյունքում՝ ցանկացած, անգամ ժողովրդավարական կազմակերպությունում իրականում իշխում է օլիգարխիկ, էլիտար խումբը: Այս ազդեցիկ խմբերը, որոնք շահագրգռված են իրենց արտոնյալ դիրքերը պահպանելու հարցում, միմյանց

հետ հաստատում են տարատեսակ կապեր՝ մոռանալով զանգվածների շահերի մասին:

«Օլիգարխիկ միտումների օրենքի» համատեքստում Միխեյլը հանգում է բավականին հոռետեսական եզրակացությունների, որոնք կասկածի տակ են դնում ժողովրդավարության հնարավորությունն ընդհանրապես և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ժողովրդավարականությունը՝ մասնավորապես:

Էլիտայի ժամանակակից տեսության հիմնական ուղղությունները

Էլիտայի արժեքային տեսություն: Համաձայն այս տեսության՝ էլիտան սոցիալական համակարգի առավել արժեքավոր տարրն է, որը կոչված է վերջինիս պահանջմունքների բավարարմանը: Հասարակության զարգացման ընթացքում վերանում են հին պահանջմունքները, և դրանց փոխարեն առաջանում են նոր պահանջմունքներ, գործառույթներ և արժեքային կողմնորոշումներ: Սա հանգեցնում է ժամանակակից պահանջներին համահունչ որակներով օժտված մարդկանց և նրանց խմբերի ձևավորմանը: Այս կերպ պատմության ընթացքում արիստոկրատիային, որն իր մեջ մարմնավորում էր բարոյական հատկանիշները, և, ամենից առաջ, պատիվը, կրթությունը և մշակույթը, փոխարինեցին ձեռներեցները, որոնց տնտեսական նախաձեռնողականության կարիքը հասարակությունն ավելի շատ ուներ: Վերջիններս էլ, իրենց հերթին, փոխարինվեցին մենեջերներով և մտավորականներով:

Ըստ այս տեսության՝ էլիտան ոչ թե սեփական եսակենտրոն շահերի վրա հիմնված մարդկանց միավորում է, այլ մարդկանց համագործակցություն, որոնց նպատակն ընդհանուր բարիքն է: Էլիտայի ձևավորումը ոչ այնքան իշխանության համար համառ պայքարի արդյունք է, որքան հասարակության բնական ընտրության արդյունք:

Համաձայն արժեքային տեսության՝ էլիտարությունը ցանկացած հասարակության արդյունավետ գործունեության նախապայմանն է: Այն հիմնված է աշխատանքում կառավարողների և կատարողների բնական տարանջատման սկզբունքի վրա, բնականաբար՝ հիմնված է նաև հավասար հնարավորությունների սկզբունքի վրա և չի հակասում ժողովրդավարությանը:

Քանի որ մարդիկ ֆիզիկական և մտավոր առումներով հավասար չեն, ապա ժողովրդավարական պետության հիմնական խնդիրն է դառնում մարդկանց համար մեկնարկային հավասար պայմանների ապահովումը: Ուստի եզրագծին նրանք կհասնեն տարբեր ժամանակներում և տարբեր արդյունքներով: Արդյունքում՝ անխուսափելիորեն կձևավորվեն սոցիալական «չեմպիոններ» և «հետնապահներ» (աութսայդերներ):

Էլիտայի արժեքային տեսության որոշ կողմնակիցներ փորձում են մշակել Էլիտայի՝ հասարակության վրա ազդեցության քանակական ցուցանիշներ: Օրինակ՝ Ն. Բերդյաևը, հիմնվելով տարբեր երկրների և ժողովուրդների զարգացման խնդրի վերլուծության վրա, ներկայացնում է «*Էլիտայի գործակիցը*» որպես բնակչության ընդհանուր կազմում բարձր մտավոր ունակություններով օժտված մարդկանց համամասնություն: Եթե հասարակության մեջ Էլիտայի գործակիցը կազմում է ավելի քան 5%, ապա դա նշանակում է, որ նրանում առկա է զարգացման մեծ ներուժ: Իսկ, երբ այդ գործակիցը նվազում է մինչև 1%-ի, կայսրությունը դադարում է իր գոյությունը, հասարակության մեջ նկատվում է լճացում, իսկ Էլիտան վերածվում է կաստայի:

Էլիտայի ժողովրդավարական տեսություն: Էլիտայի արժեքային տեսության հիմնական դրույթներն ընկած են ժողովրդավարական Էլիտարության (Էլիտար ժողովրդավարության) հայեցակարգի հիմքում, որը լայն տարածում է ստացել ժամանակակից աշխարհում: Այս տեսության կողմնակիցները հիմնվում են Շումպետերի այն տեսակետի վրա, ըստ որի՝ ժողովրդավարությունը ներկայացվում է որպես ընտրողների վստահությունը ստանալու համար պոտենցիալ ղեկավարների միջև մրցակցություն:

Ժողովրդավարական Էլիտարության կողմնակիցները, հիմնվելով Էմպիրիկ հետազոտությունների արդյունքների վրա, պնդում են, որ իրական ժողովրդավարության համար անհրաժեշտ է ինչպես Էլիտա, այնպես էլ՝ զանգվածային քաղաքական ապատիա (անտարբերություն), քանզի չափազանց բարձր քաղաքական մասնակցությունը սպառնում է ժողովրդավարության կայունությանը:

Ժողովրդավարության սոցիալական արժեքը մեծապես կախված է Էլիտայի որակից: Կառավարող շերտն օժտված է ոչ միայն կառավարման համար անհրաժեշտ հատկանիշներով, այլև ծառայում է որպես ժողովրդավարական արժեքների պաշտպան և կարող է հավասարակշռել զանգվածներին բնորոշ քաղաքական և գաղափարական իռացիոնալությունը, զգացմունքային անհավասարակշռությունը և արմատականությունը:

Էլիտայի պլյուրալիստական տեսություն: Էլիտայի պլյուրալիստական տեսության (անվանում են նաև գործառնական տեսություն) հիմքում ընկած են հետևյալ հիմնադրույթները:

Քաղաքական Էլիտան այս տեսության մեջ դիտարկվում է որպես գործառնական Էլիտա: Կոնկրետ հասարակական գործընթացների կառավարման գործառույթների իրականացման ունակությունն այն կարևոր որակն է, որը սահմանում է պատկանելությունը Էլիտային: «Գործառնական Էլիտան, - գրում է Է. Գոլտմանը,- կազմված է մարդկանցից կամ խմբերից,

որոնք ունեն այնպիսի որակավորում, ինչն անհրաժեշտ է հասարակության մեջ որոշակի ղեկավար դիրքեր զբաղեցնելու համար: Հասարակության մյուս անդամների համեմատ՝ նրանց առավելությունը կապված է կարևորագույն քաղաքական և սոցիալական գործընթացների կառավարման կամ դրանց վրա ազդեցություն ունենալու ունակությունների հետ»:

Այս տեսությունը ժխտում է միասնական կամ միաձույլ արտոնյալ էլիտան: Ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում իշխանությունը բաժանված է տարբեր խմբերի և ինստիտուտների միջև, որոնք ուղղակի մասնակցության, ճնշման միջոցով, տարբեր միավորումների ու դաշինքների օգտագործման շնորհիվ կարող են արգելանք (վետո) դնել իրենց ոչ ձեռնտու որոշումների վրա, պնդել սեփական շահերը, գտնել փոխզիջումներ: Էլիտան միաձույլ չէ: Գոյություն ունեն տարբեր էլիտաներ: Էլիտաներից յուրաքանչյուրի ազդեցությունը սահմանափակված է իրեն հատուկ գործունեության ոլորտի շրջանակներում:

Հասարակության բաժանումը էլիտայի և զանգվածների պայմանական է և ոչ այնքան հասկանալի: Էլիտայի և զանգվածների միջև առկա է ավելի շուտ ներկայացուցչականության հարաբերություն, քան տիրապետություն կամ մշտական ղեկավարություն:

Էլիտաները գտնվում են զանգվածների մշտական վերահսկողության տակ: Ժողովրդավարական տարատեսակ մեխանիզմների՝ ընտրությունների, հանրաքվեների, հարցումների, մամուլի, ճնշման խմբերի միջոցով կարելի է սահմանափակել կամ ընդհանրապես կանխել Միխելսի կողմից ձևակերպված «օլիգարխիկ միտումների օրենքի» գործողությունները և էլիտաներին պահել զանգվածների ազդեցության ներքո:

Ժամանակակից ժողովրդավարություններում էլիտան ձևավորվում է առավել կոմպետենտ և մտահոգ քաղաքացիներից, ովքեր շատ ազատ կարող են ընդգրկվել էլիտայի կազմում, մասնակցել քաղաքական որոշումների ընդունմանը: Քաղաքական կյանքի գլխավոր սուբյեկտը ոչ թե էլիտան, այլ՝ շահերի խմբերն են: Էլիտայի և զանգվածների միջև տարբերությունները հիմնականում կապված են որոշումների ընդունման գործում շահագրգռվածության տարբերության հետ: Քաղաքական առաջատար շերտերում ընդգրկվելու հնարավորությունը պայմանավորված է ոչ միայն հարստությամբ և բարձր սոցիալական կարգավիճակով, այլև, առաջին հերթին, անձնական ունակություններով, գիտելիքներով, ակտիվությամբ և այլն:

Ժողովրդավարական պետություններում էլիտաները կատարում են հանրային կարևոր գործառույթներ՝ կապված կառավարման հետ, և նրանց սոցիալական գերիշխանության մասին խոսելն իրավաչափ չէ:

Էլիտայի պյուրալիստական տեսությունը լայնորեն կիրառվում է ժամանակակից արևմտյան ժողովրդավարությունների տեսական հիմնավորման համար:

Էլիտայի ձախ ազատական տեսություն: Էլիտայի ձախ ազատական տեսությունը, կարծես թե, հանդես է գալիս որպես գաղափարական հակադրություն Էլիտայի պյուրալիստական տեսությանը:

Ձախ ազատական էլիտարության տեսության հիմնական տարբերակիչ առանձնահատկություններն են:

- Էլիտայի ձևավորման գլխավոր հատկանիշը ոչ թե անհատական արտառոց հատկանիշներն են, այլ հրամայական դիրքերի և ղեկավար պաշտոնների տիրապետումը: Ինչպես գրում է Միլսը՝ քաղաքական էլիտան կազմված է այն մարդկանցից, ովքեր զբաղեցնում են այնպիսի պաշտոններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս առանձնանալ սովորական մարդկանց միջավայրից և ընդունել որոշումներ, որոնք կունենան լուրջ հետևանքներ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք ղեկավարում են ժամանակակից հասարակության կարևորագույն հիերարխիկ ինստիտուտներն ու կազմակերպությունները:
- Էլիտայի և զանգվածների միջև տարբերությունը մեծ է: Ժողովրդավարական ինստիտուտների (ընտրություններ, հանրաքվեներ, ճնշման խմբեր) միջոցով էլիտայի վրա ազդելու զանգվածների հնարավորությունները սահմանափակ են: Իշխող էլիտան փողի, գիտելիքի, գիտակցության մանիպուլյացիայի տարատեսակ մեխանիզմների միջոցով փաստացի առանց վերահսկողության կառավարում է զանգվածներին:
- Էլիտայի վերարտադրությունն իրականացվում է հիմնականում սեփական միջավայրի միջոցով: Ընտրության ամենակարևոր չափանիշներն են՝ ազդեցության ռեսուրսների տիրապետումը, գործնական որակները և հարմարվողական սոցիալական վարքագիծը:
- Իշխող էլիտայի հիմնական գործառույթը հասարակության մեջ սեփական գերիշխանության ապահովումն է: Հենց այս գործառույթի իրականացմանն են ուղղված վարչական խնդիրները: Միլսը հերքում է հասարակության մեջ էլիտարության անխուսափելիության ժողովրդավարական տեսանկյունը:

Արևմտյան քաղաքական գիտության մեջ էլիտայի ձախ ազատական հայեցակարգի հիմնական դրույթները ենթարկվել են խիստ քննադատության, հատկապես այն պնդումները, որ իշխող էլիտան փակ է, նրանում անմիջականորեն ընդգրկված է խոշոր բիզնեսը և այլն: Իսկ մարքսիս-

տական գրականության մեջ, ընդհակառակը, այս ուղղությունը գնահատվել է շատ դրական կերպով:

Էլիտայի տիպաբանությունը: Քաղաքական էլիտան ներքուստ տարբերակված և ոչ միատարր խումբ կամ խմբերի ամբողջություն է և պատմական տարբեր ժամանակաշրջաններում ու տարբեր երկրներում ունի տարբեր դրսևորումներ:

Կախված ազդեցության աղբյուրներից՝ տարբերում են էլիտայի հետևյալ տեսակները՝ **ժառանգական**, օրինակ՝ արիստոկրատիան, **արժեքային** կազմված այն մարդկանցից, ովքեր զբաղեցնում են բարձր և ազդեցիկ հասարակական դիրքեր և պետական պաշտոններ, **իշխող էլիտա**՝ իշխանության անմիջական կրողները, **գործառնական էլիտա**՝ մասնագետ-կառավարիչներ, ովքեր ունեն ղեկավար պաշտոններ զբաղեցնելու անհրաժեշտ որակներ: Էլիտայի շրջանակներում տարբերում են նաև էլիտայի հետևյալ տեսակները. **ընդդիմադիր էլիտա** (կոնտրէլիտա՝ հակաէլիտա), **բաց էլիտա**, որը ձևավորվում է հասարակության կողմից, և **փակ էլիտա**, որը ձևավորվում կամ վերաբրտադրվում է սեփական միջավայրի միջոցով:

Տարբերում են նաև **բարձրագույն** և **միջին** էլիտաներ: Բարձրագույն էլիտան անմիջականորեն է ազդում համապետական նշանակություն ունեցող որոշումների ընդունման գործընթացի վրա: Բարձրագույն էլիտայի մաս են կազմում բարձր համբավ ունեցող մարդիկ, օրինակ՝ նախագահի խորհրդականները, նախագահի «խոհանոցային կաբինետը», իշխանական կառույցներում բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք, առաջատար կուսակցությունների ղեկավարները:

Միջին էլիտան կազմում է բնակչության մոտ 5%-ը և ձևավորվում է երեք չափանիշների հիման վրա՝ եկամուտ, մասնագիտական կամ սոցիալական կարգավիճակ և կրթություն: Այն անհատները, ովքեր տիրապետում են այս չափանիշներից միայն մեկին կամ երկուսին, պատկանում են **մարզինալ էլիտային**:

Բազմաթիվ քաղաքագետներ նշում են միջին էլիտայի աճող դերի մասին, հատկապես վերջինիս նոր շերտերի՝ «ենթաէլիտաների» մասին, որոնք կազմված են բարձր որակավորում ունեցող աշխատողներից, մենեջերներից, գիտնականներից, ինժեներներից ու մտավորականներից: Էլիտայի այս շերտերը, սովորաբար, գերազանցում են բարձրագույն էլիտային իրազեկության, կազմակերպվածության և գործողության միասնական կարողությունների տեսանկյունից:

Քաղաքական էլիտայի մյուս տեսակը, որն ուղղակիորեն է ներգրավված քաղաքական որոշումների ընդունման գործընթացում, անվանում են **վարչական էլիտա**: Վարչական էլիտայի մեջ են մտնում գործադիր իշխանու-

թյան մարմինները, որոնք իրականում մեծ ազդեցություն ունեն քաղաքականության վրա:

Ժամանակակից հասարակության էլիտարությունը բավականաչափ ապացուցված փաստ է: Էլիտայի գոյության ժխտման կամ դրա դեմ պայքարի և բնակչության քաղաքական համահարթեցման ցանկացած փորձ միայն հանգեցնում է դեսպոտիայի, անարդյունավետ էլիտաների ձևավորմանը, ինչն էլ, ի վերջո, մեծ վնաս է հասցնում ամբողջ ժողովրդին: Քաղաքական էլիտան կարելի է վերացնել միայն այն դեպքում, երբ հասարակությունը կկարողանա ինքնակազմակերպվել: Մակայն մարդկության քաղաքականության գարգացման ներկա փուլում հասարակության ինքնակառավարումն ավելի շուտ հետաքրքիր կամ գրավիչ գաղափար է, քան իրականություն:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Էլիտա
- Ժառանգական էլիտա
- Արժեքային էլիտա
- Իշխող էլիտա
- Մարգինալ էլիտա
- Հակաէլիտա
- Գործառնական էլիտա
- Վարչական էլիտա
- Բաց էլիտա
- Փակ էլիտա

ՀԱՐՑԵՐ ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է էլիտան:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում էլիտայի վերաբերյալ Մոսկայի տեսությունը:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում էլիտայի վերաբերյալ Պարետոյի տեսությունը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում էլիտայի վերաբերյալ Միխելսի տեսությունը:
5. Որո՞նք են էլիտայի ժամանակակից տեսությունները:
6. Ո՞րն է էլիտայի արժեքային տեսությունը:
7. Ո՞րն է էլիտայի ժողովրդավարական տեսությունը:

8. Ո՞րն է Էլիտայի պլյուրալիստական տեսությունը:
9. Ո՞րն է Էլիտայի ձախ ազատական տեսությունը:
10. Էլիտայի տիպաբանությունը. Էլիտայի ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Քաղաքագիտություն. ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար.* Երևանի պետ. համալս., Եր., 2006, 588 էջ:
2. *Ашин Г.* Современные теории элит. Критический очерк. М., Междунар. отношения, 1985, 256 с.
3. *Гаджиев К.* Политология. Базовый курс. Учебник. 2-е изд., перераб. и доп. М., 2001, 505 с.
4. *Миллс Р.* Властвующая элита, Москва, 1959, 543 с.
5. *Мухаев Р.* Политология. Учебник, М., 2009, 640 с.
6. *Парето В.* Трансформация демократии, М.: Издательский дом «Территория будущего», 2011, 207 с.
7. *Пугачев В., Соловьев А.* Введение в политологию. Учебное пособие. 2000, АСПЕКТ ПРЕСС, Москва, 2000, 389с.
8. *Robert A. Nye.* The anti-democratic sources of elite theory : Pareto, Mosca, Michels, SAGE, 1977, 60 p.

**ԹԵՄԱ 10. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՐԵՎՈՒՅԹ**

Քաղաքական առաջնորդության (լիդերության) հիմնախնդիրն այսօր ինչ-որ իմաստով կարող է թվալ հնացած. չէ՞ որ հասարակության բաժանումը առաջնորդների և նրանց հետևորդների բնորոշ էր մինչժողովրդավարական դարաշրջանների քաղաքական մշակույթին, երբ առաջնորդներին ամեն ինչ միշտ «տեսանելի» էր, իսկ մյուսներին անհրաժեշտ էր պարզապես լուսավորել, հավաքել մեկ տեղ և կառավարել: Իհարկե, առաջնորդներ անհրաժեշտ են նաև ժամանակակից ժողովրդավարություններին, միայն թե այս դեպքում առաջնորդները սահմանափակված են տարբեր պարտականություններով. առաջնորդներից պահանջվում է գործունեության հանրային հաշվետվություն, նրանց միշտ էլ սահմանված կարգով կարելի է հեռացնել իրենց պաշտոններից և այլն: Այս պայմաններում այսօր մեծացել է առաջնորդության նշանակությունը. հոգեբանության մեջ ստեղծվել է նույնիսկ հատուկ միջառարկայական գիտաճյուղ, որն ուսումնասիրում է առաջնորդների և կառավարիչների բնավորությունն ու գործունեության շարժառիթները (Կրեսել, 1993): Եվ այս ամենն ունի իր պատճառները: Ի դեպ, ժողովրդավարական գործընթացն այսօր, կարծես թե, ստիպում է ուժեղ քաղաքական գործիչներին ամեն կերպ դրսևորել առաջնորդության իրենց որակները, քանզի հակառակ դեպքում դժվար թե նրանք կարողանան հաջողության հասնել ընտրողների շրջանում: Նույն ուղղությամբ են աշխատում նաև ՋԼՄ-ները (հատկապես՝ հեռուստատեսությունը), որոնց համար անձը շատ ավելի կարևոր է, քան քաղաքականությունն ինքնին: Չնայած լրատվամիջոցները ևս իրենց հերթին քաղաքական գործիչների համար դարձել են այն գործիքը, որի միջոցով շատ հարմար է հասարակությանը ներկայանալ առավել շահեկան դիրքերից: Ի վերջո, հասարակությունն ինքը ունի առաջնորդության կարիք. հասարակությունը, դառնալով ավելի բարդ և հատվածականացված, էլ ավելի այնպիսի մարդկանց կարիքն ունի, ովքեր ունակ են բացատրելու, թե, ի վերջո, ինչ է կատարվում այս աշխարհում: Առաջնորդության հարցը այնքան կարևորություն չի ունեցել և երբեք չի եղել ավելի բարդ, քան այսօր է:

Առաջնորդության տեսություններ: Քաղաքական առաջնորդության խնդրի վերաբերյալ առաջ են գալիս բազմաթիվ հարցեր. ինչքանով է առաջնորդությունը համատեղելի ազատության և ժողովրդավարության սկզբունքների հետ, արդյո՞ք առաջնորդությունը ոգեշնչում է ժողովրդին, թե խոչընդոտում և ճնշում է նրա նախաձեռնությունները, արդյո՞ք պետք է հիանալ ուժեղ առաջնորդներով, թե վախենալ նրանցից: Այս հարցերի հիմ-

քում են ընկած առաջնորդության քաղաքական բնույթի վերաբերյալ տարբեր գաղափարները: Այս համատեքստում կարելի է առանձնացնել առաջնորդության չորս հիմնական տեսություններ, որոնք առաջնորդությունը դիտարկում են որպես՝

- անհատական հատկանիշ,
- սոցիոլոգիական երևույթ,
- կազմակերպչական հրամայական,
- քաղաքական հմտությունների համալիր:

Անհատական հատկանիշ: Ավանդական իմաստով առաջնորդությունը հազվագյուտ, սակայն բնատուր շնորհ է: Ինչպես նշում է Արիստոտելը. «Մարդիկ բնությունից, ի ծնե կառավարում են ոմանց և ենթարկվում մյուսներին»: Այս ավանդության մեջ խոսքը զուտ առաջնորդի անհատական հատկանիշների մասին է, ինչը մենք հաճախ տեսնում ենք այն մարդկանց մոտ, ովքեր ներկայացնում են «*ճակատագրի ընտրյալների*» տեսակը: Այս հայեցակարգի ծայրահեղ տարբերակը «ֆյուրերի»՝ բարձրագույն առաջնորդի (առաջնորդը միշտ պետք է լինի տղամարդ) մասին ֆաշիստական (ինչու չէ նաև նիցցեական «գերմարդու») գաղափարներն են, ով միայնակ կարող է զանգվածներին հասցնել բարձրագույն նպատակին: Եթե ավելի մեղմ ձևով դիտարկենք այս նույն ավանդույթը, ապա այստեղ խոսքն առաջնորդի խարիզմայի մասին է, ինչն ընկալվում է որպես անհատի իշխանություն և հեղինակություն: Որպես խարիզմատիկ առաջնորդների դասական օրինակներ՝ հաճախ են նշում այնպիսի գործիչների, ինչպիսիք են Նիտշերը, Կաստրոն, Թեյչերը և այլք: Ցավոք, շատ ավելի քիչ են այնպիսի առաջնորդները, ինչպիսիք են Նելսոն Մանդելան և Դալայ Լաման, ում հեղինակությունը հենվում է բացառապես բարոյական հատկանիշների վրա: Ժամանակակից քաղաքագիտության և քաղաքական հոգեբանության մեջ շատ հաճախ առաջ են քաշվում այնպիսի մոտեցումներ, որոնք շեշտը դնում են գլխավորապես առաջնորդի անձնական հատկանիշների վրա:

Սոցիոլոգիական երևույթ: Այս հայեցակարգն առաջնորդության հիմնախնդիրն ուսումնասիրում է որպես զուտ սոցիոլոգիական երևույթ: Համաձայն այս մոտեցման՝ առաջնորդներ չեն ծնվում. մարդուն առաջնորդ են «դարձնում» հասարակությունը, ինչպես նաև որոշակի սոցիալ-պատմական հանգամանքները: Ըստ այս տեսության՝ ոչ թե առաջնորդն է հասարակությանը պարտադրում իր կամքը, այլ՝ ընդհակառակը, նա հանդես է գալիս որպես հասարակական պահանջմունքների կրող: Այս մոտեցումն առավելապես բնորոշ է մարքսիզմին, ըստ որի՝ հասարակությունը զարգանում է տնտեսական գործոնների և դասակարգային պայքարի ազդեցության ներքո: Այս տեսության համար կարևոր է ոչ թե առաջնորդի անձը, այլ

այն հանրային շահերը, որոնք նա արտահայտում է: Չնայած Մարքսն այս տեսության մեջ տեսնում էր մի բացառություն՝ «բռնապարտիզմը», որը ձևավորվել է Ֆրանսիայում Լուի Բոնապարտի կողմից 1851 թ. իրականացրած պետական հեղաշրջումից հետո: Ձևավորված վարչակարգում Մարքսը տեսնում էր զուտ անհատական բռնապետության հատկանիշներ, որը հնարավոր դարձավ իրացնել այն պատմական պահին, երբ բուրժուազիան կորցրեց իշխանությունը, իսկ պրոլետարիատը բավարար չափով պատրաստ չէր իշխանությունն իր ձեռքը վերցնելու համար: Բայց նույնիսկ այս դեպքում Մարքսը ենթադրում էր, որ Լուի Բոնապարտի բռնապետությունն արտահայտում էր դասակարգային շահերը. այդ ժամանակվա Ֆրանսիայում գերակշռող մանր գյուղացիական գործունեությամբ զբաղվողների շահերը: Նույն կերպ՝ Տրոցկին, վերլուծելով Խորհրդային Միությունում ստալինիզմի ռեժիմը, գրել է այն մասին, թե ինչպիսի մեծ դեր է խաղացել պետական ապարատը Ստալինի հզորության ապահովման գործում: Գոյություն ունի այս տեսակետին գաղափարապես մոտ մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ առաջնորդները կոլեկտիվ վարքի արդյունք են: Ինչպես իր՝ «Ամբոխը» (1895) աշխատանքում գրում է Գյուստավ լը Բոնը՝ առաջնորդները միշտ հետևում են զանգվածին, և երբեք ոչ հակառակը:

Կազմակերպչական հրամայական: Այս հայեցակարգը առաջնորդությունը դիտարկում է որպես տեխնիկական և ռացիոնալ երևույթ: Այստեղ առաջնորդությունը հանդես է գալիս որպես ցանկացած ժամանակակից կազմակերպության պահանջումներն պատասխան՝ հատկապես բարդ ներքին միասնությամբ և ղեկավարությամբ: Այս իմաստով առաջնորդության երևույթը նույնացվում է բյուրոկրատիայի երևույթի հետ: Ժամանակակից խոշոր կազմակերպությունները պահանջում են գործառույթների մասնագիտացում և աշխատանքի բաժանում, իսկ սա, իր հերթին, ստեղծում է պաշտոնների և պարտականությունների հիերարխիա: Այսպիսի միջավայրում անխուսափելիորեն առաջանում է առաջնորդության մի տեսակ, որը Մաքս Վեբերն անվանում է **ռացիոնալ-իրավական իշխանություն**: Այսպիսի առաջնորդությունը գրեթե միշտ անդեմ է (անձնավորված չէ) և հիմնված է ֆորմալ և հստակ սահմանված կանոնների վրա: Այստեղ հարկ է հիշել, որ այն ժամանակ, երբ պետական կառավարումը ստացավ սահմանադրական բնույթ, քաղաքական առաջնորդները, ըստ էության, իրենց տրամադրության տակ ունեցան ամենաուժեղ բյուրոկրատական ապարատը:

Քաղաքական հմտությունների համալիր: Այս տեսության մեջ առաջնորդությունը դիտարկվում է որպես հմտություն, ձեռքբերովի կարողություն, որպես արվեստ, որը կարելի է սովորել և հետո գործնականում կի-

բառել: Նման մոտեցման դեպքում նախապես ենթադրվում է, որ առաջնորդը պետք է մանիպուլյացիայի ենթարկի զանգվածներին, ինչը, իհարկե, զանգվածային հաղորդակցությունների դարաշրջանում ժողովրդավարական գործընթացի անխուսափելի առանձնահատկությունն է: Այս խնդրակարգին մոտ է նաև անձի պաշտամունքի հիմնախնդիրը, որը առաջ է եկել անձի իշխանության այնպիսի ռեժիմներում, ինչպիսիք են՝ Մաո Յզե Դունի, գնդապետ Քադաֆիի և Մադամ Նուսեինի ռեժիմները: Ավելին՝ երբեմն թվում է, որ այս առաջնորդները առերևույթ խարիզմատիկ, կատարյալ գործիչներ են. իրականում այս ամենը մանրակրկիտ և համակարգված աշխատանքի արդյունք է: Օրինակ՝ ժամանակին Հիտլերի ելույթները Նյուրնբերգում բեմադրվում էին մանրակրկիտ կազմակերպված ձևով, և այդ ամենի համար պատասխանատու էր Ալբերտ Շպեերը: Մասնավորապես՝ ֆյուրերի յուրաքանչյուր բառը և յուրաքանչյուր քայլը մշակվում էր ամենայն մանրամասնությամբ. ամբողջ բեմադրությունը կազմակերպված էր այնպես, որ Հիտլերի հայտնվելու ժամանակ մթնոլորտը ծայրաստիճան թեժացած լինի: Չի կարելի ասել, որ այսօր առաջնորդները չունեն այս չափ պատշաճ ներկայանալու կարիք, թեև, իհարկե, հեռուստատեսության դարաշրջանում պետք է լինել շատ ավելի համեստ և զուսպ, քան կարելի էր զանգվածային հանրահավաքների և քաղաքական ցույցերի դարաշրջանում: Չնայած այսօր էլ առաջնորդներին նման հարցերում օգնում են հեռուստատեսության ոլորտի մասնագետ-խորհրդատուները, PR մասնագետները և այլք:

Առաջնորդության ոճը: «Առաջնորդության ոճ» հասկացությունը վերաբերում է այն մոդելներին և ռազմավարություններին, որոնց միջոցով առաջնորդը ձգտում է հասնել իր նպատակներին: Այս հարցում շատ հաճախ կարևոր նշանակություն ունեն անձը և քաղաքական գործչի նպատակները, վերջինիս շրջապատող ինստիտուցիոնալ միջավայրը, տվյալ քաղաքական համակարգում իշխանության հասնելու գործող մեխանիզմները, ՉԼՄ-ները և հասարակության քաղաքական մշակույթը: Հետազոտողներն առանձնացնում են առաջնորդության երեք ոճ (Բերնե, 1978)

- «չմիջամտող» առաջնորդի ոճ,
- «համակարգող» առաջնորդի ոճ,
- «բարեփոխիչ» առաջնորդի ոճ:

«Չմիջամտող» առաջնորդի ոճին բնութագրական է այն, որ այստեղ առաջնորդը մեծ դժկամությամբ է դուրս գալիս իր՝ զուտ անձնական պատասխանատվության և իրավասությունների շրջանակներից. պատկերավոր ասած՝ լինել անհամար նախարարություններով և գերատեսչություններով պետական ապարատի «ղեկին» նրա նախասիրությունը չէ: Այս-

պիսի առաջնորդի օրինակ կարող է ծառայել Ռեյզանը, ում շատ քիչ էին հետաքրքրում իր վարչակազմի առօրյա գործերը: Թվում է՝ Ջորջ Բուշ կրտսերը ևս ի սկզբանե փորձում էր որքան հնարավոր է մեծ լիազորություններ պատվիրակել իր հիմնական խորհրդականներին, Բայց, այսպես կոչված, «ահաբեկչության դեմ պատերազմը» նրան ստիպեց ստանձնել առաջնորդության ավելի ակտիվ ուժ: Այն, ինչը «չմիջամտող» առաջնորդի ուժի համար առավել կարևոր է, գուտ գաղափարական բնույթի առաջնորդությունն է. ավելին՝ այն պարզապես պահանջում է երևութների նկատմամբ ռազմավարական մտածողություն: Այս մտտեցումը, Բացի այդ, ունի ևս մեկ ուժեղ կողմ. քանի որ ենթականերին տրվում է ավելի լայն ինքնուրույնություն, այս դեպքում հեշտությամբ ծնվում է թիմային ոգին, իսկ առաջնորդն էլ, իրեն ազատելով առօրյա գործերից, կարող է կենտրոնանալ ավելի կարևոր քաղաքական հարցերի վրա: Այս ուժի թույլ կողմն այն է, որ կառավարության պետական քաղաքականությունը լավ համակարգված չէ, իսկ նախարարներին ու բարձրաստիճան պետական ծառայողներին տրված է չափից ավելի և երբեմն նույնիսկ անվերահսկելի ազատություն:

«Համակարգող» առաջնորդի ուժը ենթադրում է առաջնորդի շատ ավելի ակտիվ և շատ ավելի նախանձախնդիր մասնակցություն կառավարության առօրյա գործերին, թեև այս տեսակի առաջնորդները նման ակտիվություն հաճախ դրսևորում են գուտ պրագմատիկ նկատառումներով. իրենց կուսակցական շարքերում միասնականություն պահպանելու համար, կառավարության միագիծ քաղաքականությունը պահպանելու համար, ընտրագանգվածի մոտ սեփական աջակցությունը ընդլայնելու համար: Այսպիսի առաջնորդներին պատկերավոր կերպով կարելի է անվանել բրոքերներ՝ միջնորդներ, ովքեր կոլեգիալ կառավարությունում անընդհատ հաշտեցնում են հակառակորդներին, որոնում են փոխզիջումներ, հավասարակշռում են խմբակցությունների գործունեությունը: ԱՄՆ-ում առաջնորդի այս տեսակի շարքին կարելի է դասել Լինդոն Ջոնսոնին և Ջորջ Բուշ ավագին, Մեծ Բրիտանիայում՝ Հարոլդ Վիլսոնին և Ջոն Մեյջորին: Այս գործիչների մոտ ակնհայտորեն առկա էր մենեջերին, ինչու չէ նաև տեխնոկրատներին բնորոշ հատկանիշներ. նրանց համար առաջինը «գործն էր և միայն գործը», մնացած ամեն ինչ հեշտությամբ կկարգավորվեր: Սակայն այս ուժը ևս ունի իր աքիլլեսյան գարշապարը. այս տեսակի առաջնորդներին կարելի է անվանել պատեհապաշտներ, առանց հստակ սկզբունքների և հստակ նպատակների քաղաքական գործիչներ: Իրականում, նրանք չեն էլ թաքցնում այդ ամենը: Օրինակ՝ Ջորջ Բուշ ավագը 1992 թ. նախագահական ընտրությունների ժամանակ հայտարարեց, որ ինքը չի

հասկանում այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ օրինակ՝ «ռազմավարական մտածողությունը», ինչով այդ պահին զգայուն վնաս հասցրեց իր հեղինակությանը:

Առաջնորդության երրորդ ոճը «**բարեփոխիչ**» առաջնորդի ոճն է: Այս տիպի առաջնորդները ոչ այնքան համակարգողներ են, որքան ոգեշնչողներ, ներշնչողներ, նույնիսկ մարգարեներ: Նրանց ներհատուկ են ոչ միայն սկզբունքային գաղափարական համոզմունքներ, այլև սեփական գաղափարների և համոզմունքների իրագործման համար քաղաքական կամք: Նրանք չեն ձգտում փոխզիջման ու կոնսենսուսի և աջակցության համար ուղղակիորեն դիմում են կառավարության իրենց գործընկերներին, իրենց կուսակցությանը, ի վերջո, անհրաժեշտության դեպքում նաև ողջ հասարակությանը: Հովարդ Գարդները (1966) այս առիթով ասել է. «Առաջնորդը մի մարդ է, ով «ստեղծում է մի առասպել», և իր ուժը կախված է հենց դրանից այնքանով, թե որքանով ինքը կկարողանա մարմնավորել իրեն այդ առասպելում, և թե արդյոք նրա առասպելը կկարողանա ողջ հասարակությանը տանել իր հետևից»:

Այսպես, Գեներալ դը Գոլը արմատապես փոխեց քաղաքական առաջնորդության մասին պատկերացումները և գաղափարները ոչ միայն այն պատճառով, որ ստեղծեց Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետությունը, այլև այն բանի համար, որ նա ստանձնեց «հայրենիքի հոր» և «Ֆրանսիայի առաջնորդի» դերը: Առաջնորդության նման ոճը ներհատուկ էր նաև Մարգարեթ Թետչերին, ով գնում էր դեպի իշխանություն «համոզմունքների կառավարություն» կարգախոսով:

Շատ հաճախ «բարեփոխիչ» առաջնորդի ոճը նույնացնում են պոպուլիզմի հետ. ընդ որում՝ առաջնորդներն այստեղ, ըստ էության, դեմ չեն ցույց տալու, որ իրենք ներկայացնում են հենց «ազգի» շահերն ու ձգտումները: Այս ոճի առավելությունը հստակ է. այսպիսի առաջնորդների հետ ավելի հեշտ է իրականացնել արմատական բարեփոխումներ սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներում, բայց պետք է հասկանալ նաև, որ առաջնորդության այս ոճը կարող է հանգեցնել ավտորիտարիզմի, էլ չխոսենք գաղափարական կոշտ անզիջողականության մասին:

Քաղաքական առաջնորդության տիպաբանության վերաբերյալ կան տարածված նաև այլ մոտեցումներ:

Ըստ ինդիաների լուծման մակարդակի և մասշտաբների չափանիշի՝ քաղաքական առաջնորդները բաժանվում են՝

- **ազգային առաջնորդներ** (օրինակ՝ Միմոն Բոլիվար, Ջուզեպե Գարիբալդի, Շարլ դը Գոլ, Մահաթմա Գանդի և այլք),

- **որևէ կոնկրետ դասի առաջնորդներ** (օրինակ՝ Պյոտր I, Օլիվեր Կրոմվել, Նապոլեոն, Բիսմարկ, Կարլ Մարքս և այլք),

Ըստ գործող սոցիալական կառուցվածքի՝ քաղաքական առաջնորդները լինում են՝

- **կայունացնող առաջնորդներ**, ովքեր նպաստում են գործող սոցիալական կառուցվածքի զարգացմանը (օրինակ՝ Պ.Ա. Ստոլիպին, Մարգարեթ Թետչեր, Ֆրանկլին Դ. Ռուզվելտ և այլք),
- **առաջնորդներ, ովքեր ձգտում են ոչնչացնել գոյություն ունեցող սոցիալական կառուցվածքը** (օրինակ՝ Լենին, Լև Տրոցկի, Մաո Յզե Դուն, Ֆիդել Կաստրո, Չե Գևարա և այլք):

Քաղաքական առաջնորդությունն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- **ինտեգրատիվ**. այս գործառնության հիմնական բովանդակությունը համակեցության նորմերի և հասարակության տարբեր շերտերի քաղաքական շահերի միասնության ապահովումն ու դրանց ներկայացումն է որոշակի քաղաքական ծրագրում,
- **համակարգող**. այս գործառնության խնդիրն է ապահովել իշխանության երեք ճյուղերի (օրենսդիր, գործադիր, դատական) միջև գործունեության միասնությունը, նրանց միջև փոխհարաբերությունների և հասարակությունում ընդունված արժեքների և նորմերի միջև համապատասխան փոխկախվածությունը, դրանց փոխազդեցությունը,
- **պրագմատիկ**. այս գործառնության խնդիրն է ներկայացնել կոնկրետ ծրագրեր, գտնել և ընդունել օպտիմալ որոշումներ հասարակության քաղաքական խնդիրների լուծման համար,
- **հաղորդակցման գործառնություն**. այս գործառնության խնդիրն է ժամանակին ապահովել զանգվածների և իշխանության միջև շարունակական և ճշգրիտ տեղեկատվության փոխանակման գործընթացը, ինչն օգնում է կանխել քաղաքացիների և քաղաքական ղեկավարության միջև օտարումը,
- **սոցիալական արբիտրաժի և սոցիալական ապահովության գործառնություն**. այս գործառնության խնդիրն է պաշտպանել զանգվածներին անօրինությունից, պահպանել հասարակությունում կարգուկանոնը և օրինականությունը վերահսկողության, պատժի և համապատասխան այլ միջոցներով,
- **նորարարությունների նախաձեռնում**. այս գործառնության խնդիրն է ժամանակին հայտնաբերել և պահպանել իշխանական հարաբե-

րությունների ժամանակակից մոդելները, որը թույլ է տալիս ապահովել հասարակության բնականոն զարգացումը:

Այսօր որքան էլ քաղաքական առաջնորդները ձգտեն այս կամ այն ոճին, միևնույն է պետք է հասկանան մեկ բան, որ նրանք կանգնած են անհամեմատ ավելի բարդ խնդիրների առջև, քան իրենց նախորդները: Մա, իհարկե, կարևոր է նշել, քանի որ հասարակության վերաբերմունքը առաջնորդների հանդեպ, հասարակության գնահատականը նրանց գործունեության նկատմամբ անմիջականորեն կապված է այն հանգամանքի հետ, թե մարդիկ ինչ վերաբերմունք ունեն ընդհանրապես քաղաքականության վերաբերյալ: *Առաջին խնդիրը*, որին բախվում են ժամանակակից քաղաքական առաջնորդները, հետևյալն է. այսօր հասարակությունն ինքնին դարձել է այնքան բարդ, գլոբալ բնույթի գործընթացների ազդեցությունն այնքան է մեծացել հասարակության վրա, որ քաղաքական գործիչների համար այս պայմաններում պարզապես շատ դժվար է «գործ անելը»: Նրանք կարծես դատապարտված են ձախողման, և համոզված են, որ հասարակությունն իրենցից հիասթափվելու է:

Երկրորդ խնդիրը, որը ծառանում է ժամանակակից քաղաքական առաջնորդների առջև այն է, որ հասարակական գիտակցությունից անհետանում են բացարձականացված, պարզ ու հասկանալի պատկերացումները, որոնք բնորոշ էին ժամանակի գաղափարախոսներին. այսօր շատ ավելի դժվար է «ստեղծել կամ հնարել առասպել» և հասարակությանը տանել այդ առասպելի հետևից:

Երրորդ խնդիրը. հասարակությունն այսօր դառնում է ավելի հատվածավորված և տարբերակված, այդ պատճառով էլ առաջնորդների համար ավելի դժվար է առաջարկել այնպիսի մի ծրագիր, որը հիմնված կլինի ընդհանուր մշակույթի և ընդհանուր արժեքների վրա:

Վերջապես, *չորրորդ խնդիրը*. այսօր, կարծես թե, բոլոր պատճառները կան խոսելու «քաղաքական» և «ոչ քաղաքական» աշխարհների միջև հստակ տարանջատման մասին, քանի որ այսօրվա քաղաքական առաջնորդներն իրենց կենսաձևով, աշխարհընկալմամբ և նույնիսկ խոսույթով (դիսկուրս) հիմնականում կարիերային քաղաքական գործիչներ են և շատ հեռու են հասարակության շարքային քաղաքացիներից: Բիարկե, քաղաքական գործիչները կարող են ազատ խոսել մարդկանց հույսերի ու ձգտումների մասին, պարզապես սովորական մարդկանց համար այդ ամենն արդեն «այնքան էլ հետաքրքիր չէ»: Եվ քանի որ դա այդպես է, հասարակության շրջանում մեծանում է օտարումը ավանդական քաղաքականությունից, և հասարակությունը սկսում է որոնել առաջնորդներ բոլորովին այլ տեղերում:

Քաղաքագետները տարբեր մոտեցումներ ունեն քաղաքական առաջնորդության հիմնախնդրի վերաբերյալ: Առաջնորդությունը դիտարկվում է որպես զուտ անհատական հատկանիշների՝ խարիզմայի մարմնավորում, որպես սոցիոլոգիական երևույթ, որտեղ առաջնորդներն արտացոլում են որոշակի սոցիալ-պատմական գործընթացների կամ իրադարձությունների ոգին և իմաստը, որպես անհրաժեշտ պատասխան կազմակերպության միասնության և կառավարման, և, վերջապես, որպես քաղաքական արվեստ, որին միանգամայն հնարավոր է տիրապետել: Քաղաքական առաջնորդն էլ մի անձ է, ով կարող է ազդել հասարակության մյուս անդամների վրա քաղաքական բնույթի համատեղ գործողություններում նրանց ինտեգրելու նպատակով և համընդհանուր նպատակների իրագործման համար:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Առաջնորդություն (լիդերություն)
- Ազգային առաջնորդ
- Կայունացնող առաջնորդ
- Արմատական բարեփոխիչ

ՀԱՐՑԵՐ ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է քաղաքական առաջնորդությունը:
2. Քաղաքական առաջնորդության ինչ տեսություններ կան:
3. Ո՞րն է քաղաքական առաջնորդության «անհատական հատկանիշի» տեսությունը:
4. Ո՞րն է քաղաքական առաջնորդության «սոցիոլոգիական երևույթի» տեսությունը:
5. Ո՞րն է քաղաքական առաջնորդության «կազմակերպչական հրամայականի» տեսությունը:
6. Ո՞րն է քաղաքական առաջնորդության «քաղաքական հմտությունների համալիրի» տեսությունը:
7. Որո՞նք են քաղաքական առաջնորդության ոճերը:
8. Քաղաքական առաջնորդության ի՞նչ տեսակներ կան:
9. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում քաղաքական առաջնորդությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ**, Պրակ Ս, խմբ. Վ. Միրումյան, Վ. Պողոսյան: Եր., 2005, 56 էջ:
2. **Քաղաքագիտություն: Ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար**. Եր., 2006, 586 էջ:
3. **Лассуэлл Г.** Психопатология и политика. М., изд., РАГС, 2005, 352 с.
4. **Смирнова А., Тишукова В.** Основы политологии: учебно-методическое пособие для высших учебных заведений. Великий Новгород, НовГУ им. Ярослава Мудрого, 2002, 166 с.
5. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
6. **Шестопад Е.** Политическая психология. М., ИНФРА-М, 2002, 448 с.
7. **Kellerman B.** Political Leadership: A Source Book (Pitt Series in Policy and Institutional Studies), University of Pittsburgh Press, 1986, 480 p.

ԹԵՄԱ 11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԻԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«*Գաղափարախոսությունը*» քաղաքագիտության այն հասկացություններից է, որոնց շուրջ եղել են, կան և, իհարկե, դեռ կլինեն շատ բանավեճեր: Չնայած այն բանին, որ այսօր այս եզրույթն օգտագործվում է չեզոք իմաստով՝ որպես սոցիալական փիլիսոփայության կամ որևէ աշխարհայացքի պարզ բնորոշում, այնուամենայնիվ՝ պատմականորեն այն անցել է բավականին դժվարին ուղի: Եղել են ժամանակներ, երբ այս եզրույթն ընկալվել է շատ բացասական իմաստով. *քաղաքական ընդդիմախոսների տեսակետները* «գաղափարախոսություն» անվանելը նշանակել է նրանց տալ նվաստացուցիչ գնահատական:

«Գաղափարախոսություն» եզրույթն առաջին անգամ գործածել է 1796 թ.-ին ֆրանսիացի փիլիսոփա Դեստյուտ դը Տրասին (1754-1836): Նրա ընկալմամբ այս եզրույթը նշանակել է «գաղափարների» մասին նոր գիտություն, որը պետք է ուսումնասիրեր մարդկանց մտքերի ծագումը: Դը Տրասին կարծում էր, որ գաղափարախոսությունը ժամանակի ընթացքում կդառնա այնպիսի ճանաչված գիտություն, ինչպես կենսաբանությունը և կենդանաբանությունը: Սակայն, այս եզրույթը նորովի մեկնաբանեց և իմաստավորեց 19-րդ դարի փիլիսոփա Կարլ Մարքսը: Նա ընկալում էր գաղափարախոսությունը որպես «իշխող դասի» գաղափարների ամբողջություն, որի միջոցով իրագործվում են հասարակության դասակարգերի բաժանումը և ցածր դասերի շահագործումը:

Ըստ Մարքսի՝ գաղափարախոսությունն իրենից ներկայացնում էր կեղծ գիտակցություն, որի միակ նպատակն էր հասարակության ստորին դասերին պահել մոլորության մեջ և նրանց թույլ չտալ տեսնել դասակարգային հասարակության մեջ գոյություն ունեցող իրական հակասությունները:

Ազատական և պահպանողական ավանդույթները յուրովի էին մեկնաբանում գաղափարախոսությունը: Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում առաջացած ամբողջատիրական (տոտալիտար) բռնապետությունների պարագայում ազատական գաղափարների հետևորդներ Կարլ Պոպերը (1902-1994), Ջ.Լ. Թալմոնը և Հաննա Արենդտը սկսեցին դիտարկել գաղափարախոսությունը որպես հասարակական վերահսկողության գործիք, որն ապահովում է հասարակական համաձայնությունը և հնազանդությունը: Ստեղծագործելով «սառը պատերազմի» տարիներին այս տեսաբանները մեկնաբանում էին ֆաշիզմի և կոմունիզմի գաղափարախոսությունները որպես մտածողության «փակ» համակարգի երկու տարբերակներ, որոնք հակված էին մենա-

շնորհային ճշմարտության և բացառում էին որևէ այլախոհություն: Դրանց համեմատ **ազատականությունը** (լիբերալիզմ), որի համար սկզբունքային է անհատի ազատությունը, ինչպես նաև **պահպանողականությունը** (կոնսերվատիզմ) և **ժողովրդավարական սոցիալիզմը** ընկալվում էին ոչ թե որպես գաղափարախոսություններ, այլ որպես «բաց» համակարգեր, քանի որ վերջիններս թույլ են տալիս և խրախուսում են կարծիքների և համոզմունքների ազատությունը, քննադատությունը և ընդդիմությունը:

«Գաղափարախոսության» պահպանողական ըմբռնումը մշակել է բրիտանացի քաղաքական փիլիսոփա Մայքլ Օուկշոթը: Նա իր աշխատանքներում ավանդական պահպանողականությունը հանգեցրել է ռացիոնալիզմի՝ ենթադրելով, որ աշխարհն իր բոլոր բարդություններով ըմբռնելի չէ մարդու համար: Նրա կարծիքով՝ քաղաքականության մեջ «մարդիկ լողում են անհատակ ու անսահման ծովում»: Այս տեսանկյունից գաղափարախոսությունները պատկերվում են որպես վերացական «մտածողության համակարգեր», որոնք ավելի շուտ աղավաղում են քաղաքական իրականությունը, քանի որ փորձում են բացատրել այն, ինչը, ըստ էության, անբացատրելի է: Այդ պատճառով պահպանողականները սովորաբար միշտ հերքել են, որ իրենք ունեն որևէ գաղափարախոսություն՝ նախընտրելով ներկայացնել պահպանողականությունը որպես «մտակառույց» կամ «դիրքորոշում», և հիմնական շեշտը դրել են պրագմատիզմի, ավանդույթի և պատմության վրա:

Վերը նշված բոլոր մոտեցումների թերությունն այն է, որ դրանցում գաղափարախոսությունը ներկայացվում է բացասական լույսի ներքո, ինչը սահմանափակում է այդ հասկացության գործածության շրջանակը: Ստացվում է այնպես, որ որոշ քաղաքական վարդապետություններ (դոկտրին) կարելի է անվանել գաղափարախոսություններ, իսկ մյուսները՝ ոչ:

Այսպիսով՝ Մարքսը պնդում էր, որ իր գաղափարներն ունեն ոչ թե գաղափարախոսական, այլ գիտական բնույթ: Ազատականները ժխտում են իրենց փիլիսոփայության պատկանելությունը գաղափարախոսությունների աշխարհին: Եվ, վերջապես, պահպանողականները դարեր ի վեր պնդում են, որ իրենք քաղաքականության մեջ հավատարիմ են ոչ թե գաղափարախոսական, այլ պրագմատիկ դիրքորոշմանը: Ընդ որում՝ այս մոտեցումներից յուրաքանչյուրն ունի իր քաղաքական արժեքների ու գաղափարների համակարգը: Գաղափարախոսության ընկալման համար անհրաժեշտ է չեզոք և համապարփակ մոտեցում, ինչպես նաև պետք է մերժել այն, որ գաղափարախոսությունը կարող է լինել «լավ» կամ «վատ», ճշմարիտ կամ կեղծ, ազատագրող կամ ստրկացնող: Գաղափարախոսության

արդի հասարակական-գիտական ընկալման առավելությունն այն է, որ վերջինս հասկացվում է որպես *համոզմունքների և ամբողջական գաղափարների մի համակարգ, որն այս կամ այլ կերպ ուղղորդում է քաղաքական գործողությունը*:

Հասարակության կյանքում գաղափարախոսության դերը և նշանակությունը պայմանավորված են նրա իրականացրած **գործառույթներով**, որոնցից առավել կարևորներն են՝

- **կողմնորոշիչ գործառույթը**, որի դեպքում քաղաքական գաղափարախոսությունները ներառում են հասարակության, հասարակական առաջընթացի, անհատի, իշխանության մասին պատկերացումները,
- **հավաքագրող գործառույթը**, որի դեպքում քաղաքական գաղափարախոսությունները հանդես են գալիս որպես քաղաքական գործունեության և հասարակության, սոցիալական խմբերի հավաքագրման անուղղակի պատճառներ,
- **ինտեգրման գործառույթը**, որի դեպքում քաղաքական գաղափարախոսությունները դիմադրում են մասնավոր շահերին և այդպիսով դառնում ինտեգրման գործոն,
- **հավասարակշռող (մեղմիչ) գործառույթը**, որի դեպքում քաղաքական գաղափարախոսությունները մեղմում են հասարակության, սոցիալական խմբերի և անհատների միջև ծագած սոցիալական լարվածությունը,
- **որոշակի սոցիալական խմբի շահերի արտահայտման և պաշտպանման գործառույթը**, որի դեպքում քաղաքական գաղափարախոսություններն արտահայտում և պաշտպանում են որոշակի սոցիալական խմբերի շահերը հասարակության մեջ:

Պետք չէ շփոթել գաղափարախոսությունը *պրոպագանդայի* հետ: Եթե գաղափարախոսությունը որևէ էական քաղաքական պատկերացումների ամբողջությունն է, ապա պրոպագանդան դրանք հասարակության մեջ տարածելու հիմնական միջոցն է:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են հետևյալ հիմնական գաղափարախոսությունները:

Հիմնական քաղաքական գաղափարախոսություններ

Ազատականություն (լիբերալիզմ)՝ քաղաքական-գաղափարախոսական շարժում, որը միավորում է ազատական ժողովրդավարության կողմնակիցներին, որոնք հանդես են գալիս տնտեսական և հոգևոր գործունեության նկատմամբ աշխարհիկ և եկեղեցական իշխանության կողմից ցանկացած վերահսկողության դեմ (Ջ. Լոկ, Ա. Սմիթ, Շ.Լ. Մոնտեսքյո, Ի. Կանտ, Ա. դե Տոկվիլ և այլք):

Նոր ազատականություն (նեոլիբերալիզմ)՝ ազատականության նորացված ձև, որն ավելի հանդուրժողական է պետության կողմից տնտեսությանը միջամտելու հարցում:

Պահպանողականություն (կոնսերվատիզմ)՝ քաղաքական գաղափարախոսություն, որը կողմ է ավանդույթների, պետական և հասարակական կառուցվածքի պահպանմանը (Է. Բյորկ, Շ. դե Մեստր, Լ. դը Բոնալդ և այլք):

Նոր պահպանողականություն (նեոկոնսերվատիզմ)՝ քաղաքական հոսանք, որի հիմքում հասարակական զարգացման նոր պայմաններին հարմարեցված պահպանողականության գաղափարներն են (Ջ. Բեյ, Է. Յունգեր, Ռ. Արոն և այլք):

Սոցիալիզմ՝ քաղաքական հոսանք, որի հիմքում պրոլետարիատի իշխանությունն է, կապիտալիզմի տապալումը և հանրային սեփականության հաստատումը (Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ռ. Օուեն, Շ. Ֆուրյե և այլք):

Սոցիալ-ժողովրդավարություն՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ժողովրդավարության հաստատման միջոցով կապիտալիզմի աստիճանական բարեփոխման վարդապետություն: Սոցիալ-ժողովրդավարությանը հատուկ է հասարակության առավել խոցելի խմբերի շահերի պաշտպանությունը:

Ազատականություն (լիբերալիզմ): Չնայած այն բանին, որ *ազատականությունը*՝ որպես քաղաքական ուսմունք, ձևավորվել է 19-րդ դարի սկզբին՝ նրա որոշ տարրեր մշակվել են դեռևս նախորդ երեք դարերի ընթացքում: Ըստ էության, ազատականությունը ճորտատիրության անկման և կապիտալիստական հասարակության ձևավորման արդյունքն է: Վաղ ազատականությունը, բնականաբար, ձգտում էր ձևավորել արդյունաբերական միջին խավ: Այդ ժամանակներից ի վեր ազատականությունը և կապիտալիզմը սերտորեն կապված են միմյանց հետ: Ի սկզբանե այն գուտ քաղաքական վարդապետություն էր, որը քննադատում էր աբսոլյուտիզմն ու ֆեոդալական արտոնությունները՝ դրանց հակադրելով սահմանադրական, իսկ ավելի ուշ՝ ներկայացուցչական կառավարման ձևերը: 19-րդ դարի սկզբին զարգացում ստացավ տնտեսական ազատականությունը, որը խրախուսում էր ազատ կապիտալիզմը և դատապարտում տնտեսության մեջ պետական միջամտության ցանկացած ձև: Այս գաղափարը դարձավ *դասական ազատականության* անկյունաքարը: 19-րդ դարի վերջին առաջացավ *սոցիալական ազատականությունը*, որը սկսեց կարևորել հասարակության ստորին շերտերի շահերի, դրանց ուղղված սոցիալական բարեփոխումների անհրաժեշտությունը և պետական միջամտությունը տնտեսական կյանքում: Այս մոտեցումը բնորոշեց ժամանակակից ազատականությունը:

Ժամանակակից ազատականությունը բնութագրվում է պետական միջամտության նկատմամբ շատ ավելի համաձայնողական վերաբերմունքով: Այսօր ԱՄՆ-ում «ազատական» են կոչում նույնիսկ նրան, ով հանդես է գալիս ոչ թե փոքր, այլ *մեծ կառավարության* (big government) օգտին: Նման արմատական փոփոխությունը բացատրվում է այն բանի գիտակցմամբ, որ արդյունաբերական կապիտալիզմը, թողնելով մարդկանց շուկայի քմահաճույքին, ի վերջո, ծնեց սոցիալական անարդարության նոր դրսևորումներ: Ջոն Ստյուարտ Միլի ավանդույթի ազդեցությունը կրող «նոր ազատականներ» Թ. Գրինը (1836-1882), Լ. Հոբհաուսը (1864-1929) և Ջ. Հոբսոնը (1858-1940) հանդես եկան ազատության հայեցակարգի ավելի լայն, «դրական» հիմնավորմամբ: Խոսքը վերաբերում էր ոչ թե այն ազատությանը, երբ մարդուն հանգիստ են թողնում (քանի որ դա կարող է նշանակել սովից մահանալու ազատություն), այլ այն ազատությանը, որը ենթադրում է ազատ զարգացում և անձի ինքնարտահայտում:

Այս տեսակետը հիմք դարձավ, այսպես կոչված, սոցիալական ազատականության կամ, այլ կերպ ասած, «համընդհանուր բարեկեցության» ազատականության համար: Այստեղ հիմնական գաղափարն այն է, որ պետական միջամտությունը, հատկապես սոցիալական նպաստների ձևով,

ընդլայնում է ազատության սահմանները, որը պաշտպանում է մարդուն երբեմն՝ անխուսափելի անհաջողություններից: Նշված պատճառներից ելնելով՝ ժամանակակից ազատականությունը հրաժարվել է ազատ կապիտալիզմի իդեալից: Այս հարցում հատուկ դեր է խաղացել Ջ. Քեյնսի տեսությունը, որի համաձայն՝ տնտեսական աճը և բարգավաճումը հնարավոր են միայն «կառավարվող» կամ վերահսկվող կապիտալիզմի պայմաններում, երբ կառավարությունը ստանձնում է հիմնական տնտեսական խնդիրները: Սակայն, նոր ազատականները պատրաստ են աջակցել կառավարության միջամտության նոր գաղափարին միայն որոշակի պայմաններում: Նրանց հիմնական մտահոգությունը հասարակության ամենաթույլ, ամենախոցելի խմբերի ճակատագիրն է, իսկ նպատակը՝ նրանց օգնելը բարեկեցության համապատասխան մակարդակի հասնելու համար:

Ազատականության (լիբերալիզմի) տարրերը: *Անհատապաշտություն (ինդիվիդուալիզմ):* Անհատապաշտությունն ազատականության ամենակարևոր հատկանիշն է: Ըստ այս մոտեցման՝ մարդիկ առաջնայնորեն և գլխավորապես դիտվում են որպես անհատներ: Անհատը, որպես այդպիսին, ավելի կարևոր է ցանկացած սոցիալական խմբից և կոլեկտիվից: Նա յուրահատուկ է իր բարոյական արժանիքներով: Այդ իսկ պատճառով ազատականությունը ձգտում է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ անհատի համար կլինեն զարգացման և բարեկեցության բոլոր պայմանները, իսկ յուրաքանչյուր մարդ հնարավորություն կստանա ամբողջությամբ իրացնելու իր ունակությունները բարեկեցության ձգտելու ճանապարհին:

Անձի ազատություն: Այս հատկանիշը ևս ազատականության հիմնարար արժեքներից մեկն է, որն ավելի կարևոր է, քան հավասարությունը, արդարությունը կամ իշխանությունը: Անձի ազատության սկզբունքն ուղղակիորեն բխում է *անհատապաշտության* սկզբունքից և յուրաքանչյուրին սեփական հայեցողությամբ գործելու հնարավորություն տրամադրելու ձգտումից: Իրականում, սակայն, ազատականները նախընտրում են խոսել «ազատության մասին օրենքի շրջանակներում»՝ հստակ գիտակցելով, որ մեկ անձի ազատությունը կարող է սպառնալիք դառնալ մյուսների ազատության համար կամ հանգեցնել, ընդհանրապես, ամենաթողության: Հետևաբար՝ այս դեպքում խնդրի լավագույն լուծումն անձին այնպիսի անհատական ազատության տրամադրումն է, որը չի կարող սպառնալ մյուսների ազատությանը:

Բանականություն: Ազատականները կարծում են, որ աշխարհն ընկալելի է: Հետևաբար՝ նրանք հակված են հավատալ, որ անհատն ունակ է ինքնուրույն կայացնել խոհեմ որոշումներ և լինել իր գործերի լավագույն

դատավորը: Այստեղից հետևում է, որ մարդիկ ունակ են կարգավորելու հասարակության մեջ առաջացող հակամարտությունները խաղաղ ճանապարհով, այսինքն՝ քննարկումների և բանակցությունների, այլ ոչ թե բռնության և պատերազմի միջոցով:

Հավասարություն: Անհատապաշտությունը ենթադրում է մարդկանց միջև ի բնե հավասարություն, այսինքն՝ մարդիկ «ծնվում են հավասար»: Այստեղից բխում է հավասարության սկզբունքն իրավունքում («օրենքի առաջ բոլորի հավասարություն») և քաղաքականության մեջ («մեկ անձ՝ մեկ քվե, բոլոր քվեները հավասար են»): Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդիկ իրենց կարողություններով և աշխատունակությամբ տարբեր են՝ ազատականությունը չի ընդունում սոցիալական հավասարության գաղափարը, փոխարենը՝ նախընտրում է խոսել «հնարավորությունների հավասարության» մասին, որը թույլ է տալիս մարդկանց իրացնել իրենց ի սկզբանե անհավասար ներուժը: Այստեղից բխում է ազատականության մեջ առկա *մերիտոկրատիայի* (արժանիների իշխանության) գաղափարը, որը ենթադրում է տաղանդ և քրտնաջան աշխատանք:

Հանդուրժողականություն: Ազատականները համոզված են, որ հանդուրժողականությունն անհատական ազատության և հասարակության մշակութային զարգացման երաշխիքն է: Առողջ հասարակության անսխալական ցուցիչը *բազմակարծությունն* (*պլյուրալիզմ*) է, որը դրսևորվում է մշակութային կամ քաղաքական բազմազանության մեջ: Բազմակարծությունը նպաստում է հասարակության մեջ տարբեր հայացքների, տեսակետների փոխանակմանը և զարգացնում է հասարակությունն ազատ շուկայական հարաբերությունների հիման վրա: Ավելին՝ ազատականությունը պնդում է, որ նույնիսկ մրցակցող շահերի միջև գոյություն ունի «նախապես հաստատված ներդաշնակություն», այդ իսկ պատճառով հասարակության մեջ չկան և չեն կարող լինել անլուծելի կոնֆլիկտներ:

Հասարակական համաձայնություն (կոնսենսուս): Ազատականության համաձայն՝ իշխանությունը և հասարակական հարաբերությունները պետք է հիմնված լինեն հասարակական կոնսենսուսի և կամավոր համաձայնությունների վրա: Ցանկացած կառավարում պետք է հիմնված լինի «կառավարվող կողմերի համաձայնության վրա»: Դա է պատճառը, որ ազատականությունը հավատարիմ է ժողովրդավարության և քաղաքական ներկայացուցչության սկզբունքներին: Ազատականության մեջ իշխանությունը միշտ ձևավորվում է «ներքևից», հետևաբար՝ օժտված է լեզվիտիմությամբ:

Մահմանադրականություն: Չնայած այն բանին, որ ազատական գաղափարախոսության տեսանկյունից պետությունը միշտ եղել է հասարակա-

կան կարգի և կայունության կարևոր երաշխիք՝ միևնույն է հասարակության մեջ գոյություն ունի այնպիսի զգացում կամ վտանգ, որ իշխանությունը կարող է վերածվել բռնապետության (ըստ լորդ Ակթոնի՝ «ցանկացած իշխանություն այլասերում է»): Հետևաբար՝ իշխանությունը պետք է սահմանափակել: Այս խնդիրը լուծվում է պետական իշխանության ինստիտուտների միջև հակակշիռների և գապումների բաժանման միջոցով, ինչն ամրագրվում է Սահմանադրությամբ: Վերջինս սահմանում է պետության և անհատի միջև հարաբերությունների ձևը:

Նոր ազատականություն (նեոլիբերալիզմ): *Նոր ազատականությունը* ազատ շուկայական տնտեսության նորացված ձևն է, որի տեսական հիմքերը մշակել և զարգացրել են տնտեսագետներ Ֆրիդրիխ Հայեկը և Միլթոն Ֆրիդմանը, ինչպես նաև փիլիսոփա Ռոբերտ Նոզիկը: Նոր ազատականությունը հիմնվում է երկու պոլների վրա՝ *շուկա* և *անհատ*: Նոր ազատականության հիմնական նպատակը «պետության սահմանների տեղաշարժն է» այն հույսով, որ պետական կարգավորումից ազատված կապիտալիստական շուկան ինքնուրույն կարող է ապահովել տնտեսական արդյունավետություն: Տեսաբանների պնդմամբ պետության «անտեսանելի ձեռքը» սահմանափակում է անհատական նախաձեռնությունը և ձեռներեցությունը: Կառավարությունը, նույնիսկ լավագույն մտադրությունների պարագայում, անխուսափելիորեն վնասում է մարդկանց գործերին: Նոր ազատականներին մտահոգում է սեփականության հարցը: Նրանք նախընտրում են մասնավոր սեփականությունը հանրային կամ ազգային սեփականության ձևերից, այսինքն՝ «ամեն մասնավոր բան լավ է, իսկ հանրայինը՝ վատ»: Նոր ազատականների համար նախկին *խնամակալ-պետությունը* ստեղծել էր կախվածության հասարակություն՝ դուրս մղելով ազատ շուկայի ընտրության հնարավորությունը: Այսօր այս նույն գաղափարներն իրենց ուղին են հարթում գլոբալացման միջոցով, ինչը, որոշ հեղինակներ անվանում են *նոր ազատական մոդելի գլոբալացում*:

Պահպանողականություն (կոնսերվատիզմ): Պահպանողական գաղափարները և մոտեցումներն առաջին անգամ սահմանվել են 18-րդ դարի վերջին: Այն բնութագրվում էր որպես արձագանք տնտեսական և քաղաքական արագ փոփոխություններին, որոնց խորհրդանիշը 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունն էր: Այդ իրավիճակում պահպանողականությունը մարմնավորում էր *հին կարգին* հավատարիմ մնալու գաղափարը: Դիմակայելով ազատականության, սոցիալիզմի և ազգայնականության առաջ քաշած գործընթացներին՝ պահպանողականությունը սկսեց պաշտպանել կիսաքայքայված ավանդական հասարակական կարգը: Սակայն պահպանողական գաղափարների միջև ի սկզբանե չկար միասնություն:

Մայրցամաքային Եվրոպայում ձևավորվեց մի ուղղություն, որի հեղինակը Ժոզեֆ դը Մեստրն էր (1753-1821): Պահպանողականության նրա մոդելն ուներ բացահայտ ազնվական և ռեակցիոն բնույթ, որն ի սկզբանե մերժում էր ցանկացած փոփոխություն: Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում մշակվեց պահպանողականության ավելի ճկուն և, ի վերջո, կենսունակ մի մոդել, որի հեղինակը Էդմունդ Բյորկն էր իր հայտնի կարգախոսով՝ «*փոփոխվել պահպանելու համար*»: Այսպիսի մոտեցումը թույլ տվեց պահպանողականներին 19-րդ դարում անցնել սոցիալական բարեփոխումների գաղափարին հիմնվելով պատերնալիստական «*մեկ ազգ*» կարգախոսի վրա: Այս շարժումը Մեծ Բրիտանիայում իր գագաթնակետին հասավ 1950-ական թթ., երբ Պահպանողական կուսակցությունը վերջապես հաշտվեց հետպատերազմյան կարգերի հետ և առաջ քաշեց ժողովրդավարության իր սեփական տարբերակը Քեյնսի սոցիալական վարդապետության հիման վրա: Սակայն այս շարժումն արդեն 1970-ական թթ. բախվեց «նոր աջեր» պահպանողական ընդդիմության հետ, որն իր հակաէտատիստական և հակապատերնալիստական գաղափարներով վերադարձավ վաղ ազատականության դասական արժեքներին:

Պահպանողականության (կոնսերվատիզմի) տարրերը

Ավանդույթ: Պահպանողականության գլխավոր գաղափարը «կուտակածը պահպանելն է»: Պահպանողականությունը ժամանակի միջոցով փորձված ավանդույթների, սովորույթների և ինստիտուտների պահպանման գաղափարախոսությունն է: Այստեղ ավանդույթը դիտվում է որպես անցյալի կուտակված իմաստություն, որը պետք է պահպանել հանուն ապրող և ապագա սերունդների բարօրության: Այս ամենը նույնքան կարևոր է, որքան հասարակության մեջ կայունության և անվտանգության հարաբերությունների ամրապնդումը, ինչը մարդկանց թույլ է տալիս զգալ ժամանակների միջև հասարակական և պատմական կապը:

Պրագմատիզմ: Պահպանողականները միշտ նշել են, որ մարդկային միտքը սահմանափակ է ի համեմատ աշխարհի անսահման բարդության: Հետևաբար՝ նրանք գրեթե բնագոյային հարթության վրա անվստահություն են հայտնում վերացական սկզբունքներին ու տեսություններին և, ընդհակառակը, վստահում են պատմական փորձին՝ հիմնվելով պրագմատիզմի վրա: Պահպանողականները նախընտրում են իրենց սեփական տեսակետներն անվանել ոչ թե գաղափարախոսություն, այլ «մտակառույց» կամ «մոտեցում կյանքի նկատմամբ»:

Մարդու անկատարություն: Մարդկային բնության վերաբերյալ պահպանողականների պատկերացումը բավականին հոռետեսական է: Այստեղ մարդիկ դիտվում են որպես սահմանափակ, անօգնական ու փոքրոգի

արարածներ, ուրբեր վախենում են դուրս գալ հազարավոր անգամներ փորձված երևույթների սահմաններից և ձգտում են միայն հանգիստ ու բարեկեցիկ կյանքի: Մարդիկ բարոյապես այլասերված, եսասեր, ազահ և անհազ իշխանության ձգտող էակներ են: Այստեղից, այլ ոչ թե հասարակությունից են բխում հանցագործությունները և այլ սոցիալական խնդիրներ: Հետևապես՝ հաստատված կարգը պահպանելու համար անհրաժեշտ են *ուժեղ պետություն, խիստ օրենքներ և տույժեր:*

Ստորակարգություն (հիերարխիա): Պահպանողականների համոզմամբ հասարակության մեջ մարդկանց սոցիալական դիրքի և սոցիալական կարգավիճակի միջև տարբերությունները բնական են և անխուսափելի: Մարդիկ ունեն տարբեր դերեր և պարտականություններ՝ լինեն գործատուներ, թե աշխատողներ, ուսուցիչներ, թե ուսանողներ, ծնողներ, թե երեխաներ: Սակայն այս անհավասարությունը, սկզբունքորեն, չի առաջացնում որևէ կոնֆլիկտ, քանի որ հասարակությունը կազմված է ներքին կապերից, այսինքն՝ մարդկանց միջև փոխադարձ պարտավորություններից, որտեղ ավելի մեծ պատասխանատվություն ունեն հասարակության վերին շերտերը:

Իշխանություն և հեղինակություն: Պահպանողականները մշտապես պնդել են այն գաղափարը, որ իշխանությունը և հեղինակությունը բխում են ոչ թե հասարակության «ներքևից», այլ «վերևից»: Ճշմարիտ առաջնորդը սահմանում է հասարակության զարգացման ուղղությունը և աջակցում կարիքավորներին՝ տալով նրանց փորձ, գիտելիք և կրթություն (օրինակ՝ ծնողների իշխանությունը երեխաների նկատմամբ): Մի ժամանակ այս ամենը բխում էր «բնական արիստոկրատիայից»: Այսօր իշխանությունն ու առաջնորդությունը տրվում են փորձի և կրթության արդյունքում: Այն հասարակությունը, որը չի ճանաչում հեղինակություն և առաջնորդություն, չի գիտակցում ինքն իրեն և կորցնում է իր ներքին միասնությունը:

Սեփականություն: Պահպանողականությունը մեծապես կարևորում է սեփականության հարցը, որը մարդուն տալիս է անվտանգություն, ապահովում է կառավարությունից անկախության որոշակի չափ, ստիպում է հարգել օրենքը և մյուսների սեփականությունը: Մենք բոլորս ընդամենը սեփականության խնամակալներ ենք, որը ժառանգել ենք նախնիներից և պետք է փոխանցենք գալիք սերունդներին:

Նոր պահպանողականություն (նեոկոնսերվատիզմ): Նոր պահպանողականությունը, ըստ էության, վերածնում է 19-րդ դարի պահպանողականության սոցիալական սկզբունքները: Նրա հիմնական նպատակն ընտանիքի, կրոնի և ազգի «հեղինակության» և ավանդական արժեքների վերականգնումն է: Նոր պահպանողականների կարծիքով միայն հեղինակու-

թյունն է երաշխավորում հասարակության կայունությունը, քանի որ այն ձևավորում է կարգապահություն և հարգանք ավանդույթների նկատմամբ, որոնք ապահովում են հասարակության ամբողջականությունը: Այս գաղափարին հակադրվում է *ամենաթողությունը*՝ սեփական ես-ի պաշտամունքը, ինչը, նոր պահպանողականների կարծիքով, իրենց հետ բերեցին 1960-ականները: Նոր պահպանողականության մյուս կարևոր խնդիրը բազմամշակույթ և բազմակրոն հասարակության ձևավորումն է, որը հանգեցնում է վերազգային մարմինների և կառույցների առաջացմանը, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը և Եվրոպական Միությունը:

Սոցիալիզմ: Թեև սոցիալիստական գաղափարներ կարելի է նկատել դեռևս Պլատոնի «Պետություն» և Թոմաս Մորի «Ուտոպիա» աշխատանքներում, այնուամենայնիվ, *սոցիալիզմը* որպես քաղաքական գաղափարախոսություն ձևավորվել է միայն 19-րդ դարի սկզբում: Սոցիալիզմի հիմքը ի սկզբանե եղել է արհեստագործությունը, որը հետզհետե ճնշվել է արդյունաբերական կապիտալիզմի կողմից: Իր ամենավաղ դրսևորմամբ սոցիալիզմը կրել է արմատական, ուտոպիստական և հեղափոխական բնույթ: Սոցիալիզմի նպատակը կապիտալիստական տնտեսության վերացումը և դրա փոխարինումն էր որակապես նոր սոցիալիստական հասարակությամբ, որը պետք է հիմնված լիներ հանրային սեփականության վրա: Այս ուղղության ամենահայտնի ներկայացուցիչ Կարլ Մարքսի գաղափարները դարձան 20-րդ դարի կոմունիստական գաղափարախոսության հիմքը:

Մակայն, 19-րդ դարի սկզբից սոցիալիզմում ձևավորվեց բարեփոխիչ (ռեֆորմիստական) մի ճյուղ, որն արտացոլում էր աշխատավոր դասի աստիճանական ինտեգրումը կապիտալիզմին աշխատանքի պայմանների բարելավման, աշխատանքի վարձատրության բարձրացման, արհմիությունների ամրապնդման և սոցիալիստական աշխատավորական կուսակցությունների ձևավորման միջոցով: Բարեփոխիչ մոտեցումը հնարավորություն ստեղծեց խաղաղ, աստիճանական և իրավական անցում կատարել սոցիալիզմի «խորհրդարանական ճանապարհով»: Այս գաղափարախոսությունն ուներ երկու աղբյուր: Առաջինը *բարոյական սոցիալիզմի մարդասիրական ավանդույթն էր*, որի հեղինակներն են Ռոբերտ Օուենը (1771-1858), Շարլ Ֆուրիեն (1772-1837) և Վիլյամ Մորիսը (1854-1896): Իսկ երկրորդը *ռևոլյուցիոնիստական մարքսիզմը էր*, որը հիմնականում մշակել է Էդուարդ Բեքնշտեյնը (1850-1932):

20-րդ դարում սոցիալիստական շարժումը բաժանվում է երկու հակադիր ճամբարների: Լենինին և բոլշևիկներին հետևող *սոցիալիստ հեղափոխականները*, ի վերջո, կողմնորոշվեցին որպես *կոմունիստներ*: Իսկ սահմանադրական քաղաքականության ջատագով *սոցիալիստ բարեփոխիչ-*

ները հետագայում հայտնի դարձան որպես **սոցիալիստ ժողովրդավարներ**: Բանավեճեր էին ծավալվում ոչ միայն սոցիալիզմին անցնելու հարցի, այլև սոցիալիստական գաղափարների էության շուրջ: Սոցիալիստ ժողովրդավարները վճռականորեն հրաժարվեցին հանրային սեփականության և պետական պլանավորման սկզբունքներից՝ փորձելով վերախմաստավորել սոցիալիզմի «համընդհանուր բարօրության պետության», հասարակական միջոցների ողջամիտ վերաբաշխման և տնտեսության ռազմավարական կառավարման գաղափարները: 20-րդ դարի վերջում, սակայն, երկու հոսանքներն ապրեցին ծանր ճգնաժամ՝ ստիպելով շատերին խոսել «սոցիալիզմի վախճանի» մասին: Մավաճի վառ ապացույցը եղավ կոմունիզմի փլուզումը:

Սոցիալիզմի տարրերը:

Հասարակություն: Սոցիալիզմը մարդուն դիտարկում է որպես հասարակական էակ, իսկ համայնքը՝ որպես մարդկանց զարգացումն ապահովող առավել կարևոր գործոն: Այստեղ անձը ձևավորվում է հասարակական հարաբերությունների, սոցիալական խմբերի և կոլեկտիվների ազդեցության ներքո: Հետևաբար՝ սոցիալիստները հակված են բացատրել մարդու վարքագիծը սոցիալական գործոններով, այլ ոչ թե բնածին հատկանիշներով:

Եղբայրություն: Սոցիալիստները կարևորում են այն գաղափարը, որ մարդիկ պետք է փոխկապակցված լինեն եղբայրության հարաբերություններով: Հետևաբար՝ այս մտեցումը հաստատում է համագործակցության և կոլեկտիվիզմի գերակայությունը մրցակցության և անհատապաշտության նկատմամբ: Համագործակցելու դեպքում մարդիկ միավորում են իրենց ջանքերը և ամրապնդում համայնքի կապերը, իսկ մրցակցելիս հակադրվում են միմյանց, ինչը հանգեցնում է թշնամանքի և կոնֆլիկտի:

Հասարակական հավասարություն: Հավասարությունը ևս սոցիալիզմի հիմնարար արժեքներից է: Հաճախ սոցիալիզմն ընկալվում է որպես *էգալիտարիզմի* մի տեսակ, որտեղ հավասարությանը տրվում է գերակայություն այլ արժեքների նկատմամբ: Այս պարագայում հատուկ կարևորություն ունի սոցիալական հավասարության գաղափարը, այսինքն՝ արդյունքների, այլ ոչ թե հնարավորությունների հավասարությունը: Հավասարությունն ընկալվում է նաև որպես սոցիալական կայունության և հասարակության ներքին համախմբվածության պայման, ինչպես նաև հասարակության անդամներին համապատասխան իրավական և քաղաքական իրավունքներ տրամադրելու հիմք:

Պահանջարկ: Սոցիալիստական գաղափարախոսության հավասարության սկզբունքը ենթադրում է, որ հասարակական բարիքը պետք է բաժան-

վի ըստ պահանջարկի, այլ ոչ թե որևէ այլ հիմքով: Այս սկզբունքի դասական արտահայտությունը կարելի է գտնել Մարքսի հասարակական բարիքի բաշխման բանաձևում՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների»: Ըստ այս փիլիսոփայության՝ միայն իր հիմնական կարիքները բավարարելուց հետո (սնունդ, ջուր, կացարան, անվտանգություն և այլն) մարդը սկսում է մասնակցել հասարակական կյանքին: Այս մոտեցման մեջ թերևս պարզ չէ, թե ինչպես կարելի է հասնել բարոյական գործոնների առավելությանը նյութական գործոնների նկատմամբ:

Հասարակական դաս: Սոցիալիստական գաղափարախոսությունը հաճախ կապվում է դասակարգային քաղաքականության որոշակի ձևի հետ: Նախ այս դեպքում ինքնին հասարակությունը հանդես է գալիս իր դասակարգային կառուցվածքով, որտեղ բարիքները բաշխվում են դասակարգային հիմքերով: Երկրորդ՝ սոցիալիզմն ի սկզբանե արտահայտել է շահագործվող պրոլետարիատի դասակարգային շահերը՝ համարելով վերջինիս հասարակական առաջընթացի և սոցիալական հեղափոխության շարժիչ ուժը: Այս գաղափարախոսության տեսանկյունից դասակարգային տարբերությունները կրում են անցողիկ բնույթ: Սոցիալիստների խնդիրը կա՛մ տնտեսական և սոցիալական անհավասարությունը հաղթահարելն է, կա՛մ այն զգալիորեն մեղմելը:

Հանրային սեփականություն: Սեփականության խնդրի լուծումը վիճելի հարց է նաև սոցիալիստական գաղափարախոսության համար: Այստեղ կարծիքները համընկնում են միայն այն հարցում, որ արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականությունը թույլ է տալիս ծառայեցնել նյութական ռեսուրսներն ընդհանուր բարիքին, իսկ մասնավոր սեփականությունն առաջացնում է եսասիրություն՝ բաժանելով հասարակությունը հարուստների և աղքատների միջև: Սոցիալիստական միտքը, սակայն, այսօր հեռացել է սեփականության հարցի այս նեղ ընկալումից:

Սոցիալ-ժողովրդավարություն: Սոցիալ-ժողովրդավարությունը չունի այն տեսական ամբողջականությունը և հետևողականությունը, որոնք բնորոշ են դասական ազատականությանը կամ արմատական սոցիալիզմին: Եթե ազատականությունը գաղափարական տեսանկյունից հավատարիմ է շուկային, իսկ սոցիալիզմը հանրային սեփականությանը, ապա սոցիալ-ժողովրդավարությունը փորձում է գտնել շուկայի և պետության, անհատի և հասարակության միջև հավասարակշռությունը: Սոցիալ-ժողովրդավարության նպատակը կապիտալիզմի՝ որպես նյութական արտադրության միակ արդյունավետ համակարգի և հասարակական բարիքների բաշխման համակարգի միջև փոխզիջման ձեռքբերումն է, որը պետք է

հիմնվի ոչ թե շուկայական, այլ բարոյական սկզբունքների վրա: Սոցիալական ժողովրդավարությունը մշտապես մտահոգվել է հասարակության առավել անպաշտպան, թույլ և խոցելի խմբերի խնդիրներով:

Վերջին շրջանում բավականաչափ փոխվել է հասարակության դասակարգային կառուցվածքը, քանի որ բարձրացել է «սպիտակ օձիքների» դերը, ինչը նշանակում է, որ սոցիալ-ժողովրդավարության գաղափարախոսությունը, որն ավանդաբար կենտրոնացած էր աշխատավոր դասի շահերի պաշտպանության վրա, ընտրական տեսանկյունից հետզհետե դառնում է պակաս խոստումնալից: Համաշխարհային տնտեսության գլոբալացման տեսանկյունից ավելի ակնհայտ է դառնում ազգային նեղ տնտեսական քաղաքականության անհամատեղելիության խնդիրը նոր համաշխարհային տնտեսական գործընթացների հետ: Հատկապես զարգացած երկրներում արդյունաբերության ազգայնացման և կենտրոնական տնտեսական պլանավորման պրակտիկան ցույց տվեց իր լիակատար ձախողումը: Իսկ կոմունիզմի փլուզումը ցույց տվեց, ընդհանրապես, «վերևից ներքև» սկզբունքով կառուցված բոլոր հասարակությունների անարդյունավետությունը:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են նաև այլ քաղաքական գաղափարախոսություններ՝ *Ֆաշիզմ*, *անարխիզմ*, *Ֆեմինիզմ*, *Էկոլոգիզմ*, *Ֆունդամենտալիզմ* և այլն:

Ֆաշիզմը ձևավորվել է Իտալիայում 1919 թ.-ին և 20-րդ դարի 30-ական թթ.: Իր տարբեր դրսևորումներով այն դարձել է տիրապետող գաղափարախոսություն եվրոպական մի շարք երկրներում՝ Իտալիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Իսպանիայում: Ֆաշիզմը հենվում է ժողովրդական զանգվածների, զանգվածային քաղաքական կուսակցության, արհմիությունների, ինչպես նաև քաղաքական առաջնորդի անառարկելի հեղինակության վրա:

Անարխիզմը սոցիալ-քաղաքական հոսանք է, որը հայտարարում է պետության ոչնչացման անհրաժեշտությունը և հարկադիր իշխանության բոլոր ձևերի փոխարինումը քաղաքացիների ազատ և կամովի միությանը: Որպես քաղաքական հոսանք՝ անարխիզմը ձևավորվել է 19-րդ դարի 40-70-ական թթ. Արևմտյան Եվրոպայում: Անարխիզմի կարևոր ուղղություններից է պետության և իրավունքի գաղափարախոսական արդարացումների քննադատությունը:

Ֆեմինիզմը հասարակական-քաղաքական շարժում է՝ ուղղված կանանց իրավունքների ընդլայնմանը, հասարակական և քաղաքական կյանքում նրանց դերի բարձրացմանը: Ֆեմինիզմի հիմքում ընկած է հատուկ կանացի մշակույթ ստեղծելու պահանջը, որը բացառում է մարդկանց միջև

բռնությունը: Արմատական ֆեմինիզմի գաղափարախոսները գտնում են, որ հասարակության մեջ կնոջ նկատմամբ խտրականության պատճառը կանանց և տղամարդկանց բաժանումն է կենսաբանական դասերի, որի հիմքում ընկած է վերարտադրության գաղափարը:

Չնայած այն բանին, որ **էկոլոգիզմը** սովորաբար հասկացվում է որպես միանգամայն նոր գաղափարախոսություն, որը պայմանավորված է 20-րդ դարի վերջին ի հայտ եկած բնապահպանական կամ կանաչների շարժումով՝ նրա արմատները կարելի է տեսնել դեռևս 19-րդ դարում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխության դեմ պայքարում: Այս գաղափարախոսության գլխավոր մտահոգությունը ժամանակակից տնտեսության կողմից շրջակա միջավայրին հասցվող վնասն է, որը պայմանավորվում է 20-րդ դարի երկրորդ կեսին առաջացած վտանգավոր գործունեերով՝ միջուկային զենք, թթվային անձրևներ, օզոնային շերտի քայքայում, գլոբալ տաքացում և այլն: Այս ամենին ավելանում է նաև կյանքի որակի և մարդկության հեռանկարների վատթարացման մտահոգությունը:

Ֆունդամենտալիզմը ծայրահեղության հասնող հետևողականությամբ պաշտպանում է որոշակի արժեքներ, գաղափարներ և նպատակներ: Քաղաքականության մեջ ֆունդամենտալիզմի հետևորդները, չընդունելով ոչ մի առարկություն և շեղում իրենց որդեգրած գաղափարների ու արժեքների նկատմամբ, իրենց նպատակին հասնելու համար ունակ են ամեն կարգի այլախոհների նկատմամբ գործադրելու ամենածայրահեղ բռնի միջոցները: Ֆունդամենտալիզմը հիմնականում ունենում է կրոնական կողմնորոշում:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ազատականություն (լիբերալիզմ)
- Պահպանողականություն (կոնսերվատիզմ)
- Սոցիալիզմ
- Սոցիալ-ժողովրդավարություն
- Նոր ազատականություն
- Նոր պահպանողականություն
- Ֆաշիզմ
- Ֆեմինիզմ
- Էկոլոգիզմ
- Ֆունդամենտալիզմ

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ո՞րն է քաղաքական գաղափարախոսությունների կարևորությունը հասարակության և անհատի կյանքում:
2. Ո՞րն է գաղափարախոսության և պրոպագանդայի միջև տարբերությունը:
3. Ինչու՞ է գաղափարախոսության հասկացությունն այդքան հաճախ առաջացրել բացասական ընկալումներ:
4. Ինչու՞ վ՞ են կարևոր գաղափարախոսության գործառույթները:
5. Արդյո՞ք այսօր կարելի է խոսել ազատականության և սոցիալիզմի միջև առկա տարբերությունների մասին:
6. Ինչպիսի՞ հանգամանքներ են նպաստել ֆաշիզմի վերելքին:
7. Իրականանալի՞ են արդյոք անարխիստների պահանջները:
8. Ինչու՞ է ժամանակակից հասարակությունում աճում էկոլոգիզմի, ֆեմինիզմի և ֆունդամենալիզմի դերը:
9. Արդյո՞ք դրանք կարող են փոխարինել հիմնական քաղաքական գաղափարախոսություններին:
10. Արդյո՞ք կարող է հասարակությունը գոյատևել առանց գաղափարախոսության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ*, Պրակ Բ, խմբ. Վ. Միրումյան, Վ. Պողոսյան և այլք: Եր., 2005, 51 էջ:
2. *Պողոսյան Վ., Միրումյան Վ., Աստվածատուրով Ս., Բարաջանյան Ա. Քաղաքագիտություն*: հանրագիտական բառարան, Երևան, 2004, 488 էջ:
3. *Շանթ Լ.* Մեր անկախությունը, Պոսթըն, 1925, 306 էջ:
4. *Енгоян А.* Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. Ер., Изд-во РАУ, 358 с.
5. *Соловьев А.* Политология. Политическая теория, политические технологии.: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
6. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов / Пер. с англ. под ред. Г.Г. Водлазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
7. *Heywood A.* Political Ideologies: An Introduction 5th Edition, Palgrave Macmillan; 5 edition, 2012, 392 p.

ԹԵՄԱ 12. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Քչերին է հայտնի, որ կուսակցություններն առաջացել են համեմատաբար վերջին ժամանակներում: Այժմ ամենուր կուսակցություններ են: Կուսակցություններ չկան միայն այնտեղ, որտեղ ամեն ինչ ճնշվում է քաղաքական դիկտատուրայի կամ ռազմական համակարգի կողմից: Այսօր արդեն կուսակցությունը դարձել է ժամանակակից քաղաքականության հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմը: Անկախ այն բանից, թե ինչ են դրանք իրականում իրենցից ներկայացնում՝ «ժողովրդավարության կատարյալ գործիք», թե՞ «բռնապետության և հալածանքների աղբյուր», միևնույն է՝ կուսակցությունների դերն անժխտելի է պետության և քաղաքացիական հասարակության, պետական կառավարման մարմինների և շահերի խմբերի միջև կապի հաստատման համար:

Կուսակցությունների կարելի է հանդիպել պետությունների ճնշող մեծամասնությունում և գրեթե ցանկացած տիպի քաղաքական համակարգում: Դրանք կարող են լինել ավտորիտար կամ ժողովրդավարական կուսակցություններ, կարող են իշխանության գալ ընտրությունների կամ հեղափոխության միջոցով, ունենալ ձախ, աջ կամ կենտրոնամետ գաղափարախոսություն:

Հիշեցնենք, սակայն, որ կուսակցություններն այնուամենայնիվ ձևավորվել են համեմատաբար վերջերս՝ 19-րդ դարում: Կուսակցություններն ի հայտ եկան որպես զանգվածային քաղաքականության՝ ներկայացուցչական կառավարության և ընտրական համակարգերի հաստատման դարաշրջանի անբաժանելի մաս: Մինչ այդ գոյություն ունեցող, այսպես կոչված, «կուսակցությունները» կամ «խմբակցությունները» ոչ այլ ինչ էին, քան համախոհների կամ քաղաքական գործիչների փոքր խմբեր, որոնք ձևավորվել էին որոշ ակնավոր գործիչների կամ նույնիսկ ընտանիքների շուրջ: Թագավորական պալատներում առաջացան «պալատական կուսակցություններ»՝ կազմված ազնվականներից և խորհրդատուներից, որոնք հուսահատ պայքարում էին թագավորական գահի վրա ազդեցություն ունենալու համար:

«Կուսակցություն» հասկացությունը: Ներկայումս կարելի է ասել, որ, որպես իր պատմական զարգացման հետևանք, կուսակցությունը ստեղծվել է որպես մասնագիտական, կազմակերպական խումբ՝ համախմբելով առավել ակտիվ կողմնակիցների, որոնց նպատակը բարձրագույն քաղաքական իշխանության ձեռքբերումը, պահպանումն ու իրականացումն է:

Կուսակցությունը գաղափարախոսական կապերի վրա հիմնված մարդկանց խումբ է, որը պայքարում է իշխանության համար՝ այդ կերպ իրականացնելով իր սոցիալական բազայի շահերը:

Կուսակցությունների գոյության երկար տարիների պատմությունը բյուրեղացրել է նրանց ներհատուկ ներքին բաղադրիչներ: Առաջին հերթին դրանք ներառում են կուսակցությունների ղեկավարներին, կուսակցության բյուրոկրատական ապարատը, կուսակցության գաղափարախոսությունը, կուսակցության ակտիվը և պասիվ անդամներին:

Կուսակցությունները պետք է տարբերել ինչպես քաղաքական և հասարակական շարժումներից, որոնք չունեն ընդհանուր գաղափարախոսություն, այնպես էլ՝ շահերի խմբերից, որոնց նպատակը ոչ թե իշխանության հասնելն է, այլ վերջինիս վրա ազդեցություն ունենալը:

Կուսակցությունները տարբերվում են այլ հասարակական կազմակերպություններից հետևյալ հիմնական հատկանիշներով՝

- կուսակցությունների նպատակն իշխանության նվաճումն ու իրականացումն է (թեև փոքր կուսակցությունները կարող են ընտրություններն օգտագործել պարզապես իրենց մասին հանրությանը հայտնելու համար),
- կուսակցությունը «կուսակցական տոմսերով» խիստ և հստակ կառուցվածքայնացված կազմակերպություն է,
- կուսակցություններն ունեն ծրագրեր, որոնք ընդգրկում են պետական նշանակության հարցերի ամենալայն շրջանակը,
- կուսակցության բոլոր անդամներն այս կամ այն չափով կիսում են նույն քաղաքական հայացքները և միավորված են ընդհանուր գաղափարախոսության շուրջ:

Կուսակցությունների առաջացման պատմական փուլերը: Կուսակցությունների ձևավորման պատմությունը կարելի է բաժանել երեք առավել խոշոր պատմական փուլերի:

Առաջինը արիստոկրատական խմբավորումներն էին, որոնք ձևավորվել էին ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում: Դրանք չունեին ընդհանուր գաղափարախոսություն. նպատակը միայն իշխանության փոփոխությունն էր՝ առանց տնտեսական և քաղաքական կարգի փոփոխության:

Երկրորդը քաղաքական ակումբներն էին, որոնք ձևավորվել էին ֆեոդալիզմի վերջին փուլում: Դրանցից առավել հայտնի էին *Յակոբինյան ակումբը* Ֆրանսիայում և *Չարլտոնը*՝ Անգլիայում: Ի տարբերություն արիստոկրատական խմբավորումների՝ քաղաքական ակումբները ունեին քիչ թե շատ հստակ ընդգծված ընդհանուր գաղափարախոսություն: Դրանց

նպատակը իշխանության փոփոխությունն էր տնտեսական և քաղաքական կարգի փոփոխության հետ մեկտեղ:

Երրորդը գանգվածային կուսակցություններն են, որոնք ձևավորվել են 19-րդ դարում: Դրանք ժամանակակից կուսակցություններն են, որոնք ունեն ինքնուրույն գաղափարախոսություն, ընտրագանգված, բարդ կազմակերպչական կառուցվածք և այլն:

Հարկ է նշել, որ կուսակցությունը անմիջապես չդարձավ լիարժեք քաղաքական ինստիտուտ, որը կարող էր էական ազդեցություն ունենալ իշխանական հարաբերություններում: Կուսակցությունների որպես քաղաքական գործընթացի ակտիվ մասնակիցների վերածման վրա անմիջական ազդեցություն ունեցան այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ անհատներին քաղաքական իրավունքների տրամադրումը, ընտրական համակարգերի և խորհրդարանների առաջացումը:

Սակայն, արտահայտելով խմբային շահեր և ինչ-որ կերպ ցույց տալով իրենց անկախությունը և ընդդիմությունը պետության նկատմամբ՝ կուսակցությունները միանշանակ ընկալվում էին որպես ճգնաժամի և հասարակության մասնատման աղբյուր: Հակակուսակցականությունը (antipartizm) ամենատարածված հոգեբանական և գաղափարական հոսանքն էր: Սրա հիմնական պատճառը լայնորեն տարածված համոզմունքն էր այն մասին, որ պետությունն է ժողովրդական ինքնիշխանության և հասարակության ընդհանուր կամքի միակ արտահայտողը:

Հաստատելով այս վարկածը՝ Մ. Օստրոգորսկին նշում է, որ կուսակցության անդամների մեծ մասը կուսակցության վերնախավի կողմից ենթարկվում է մանիպուլյացիայի: Կուսակցությունները փորձում էին խլել խորհրդարանից օրենսդրական գործառույթը, ճնշել քաղաքականապես տեղեկացված խմբերի ինքնաբուխ գործողությունները, ոչնչացնել ազատական ժողովրդավարությունը: Այնպես որ, նրա կարծիքով՝ կուսակցությունների փոխարեն պետք է ձևավորվեն ազատ հասարակական միավորումներ և շարժումներ, որոնք իրենց առջև կդնեն առավել հստակ և հավակնոտ նպատակներ: Ընդ որում՝ դրանց անդամների մասնակցությունը չպետք է նշանակի, որ այդ նույն անդամը չի կարող անդամակցել մեկ այլ միավորման կամ մասնակցություն ունենալ մեկ այլ միավորման աշխատանքներին: Այս մոտեցման նպատակն այն է, որ մարդիկ մի հարցում լինեն հակառակորդներ, իսկ մյուս հարցում՝ դաշնակիցներ:

Կուսակցությունների պատմության ժամանակակից փուլը վկայում է այն մասին, որ կուսակցությունները դարձել են ոչ միայն քաղաքական գործընթացի օրգանական մաս, այլև քաղաքական կարգի կազմակերպման և հրապարակային իշխանության գործառնության հիմնական տարրեր:

Բուրժուական պետականության խորհրդարանական և սահմանադրական հիմքերի զարգացմանը համընթաց՝ կուսակցություններն ամրապնդեցին իրենց քաղաքական և իրավական կարգավիճակը:

Կուսակցությունների դասակարգումը: Պետությունների և ժողովուրդների քաղաքական զարգացման պատմական և սոցիալ-մշակութային պայմանների բազմազանությունը հանգեցրեց տարբեր կուսակցական կառույցների առաջացմանը, որոնք միմյանցից տարբերվում են իրենց կառուցվածքով, գործառույթներով, գործունեության առանձնահատկություններով:

Կուսակցությունների դասակարգման չափանիշների վերաբերյալ կան տարածված բազմաթիվ մոտեցումներ: Օրինակ՝ կուսակցությունները լինում են *իշխող* և *ընդդիմադիր*, *օրինական* և *անօրինական*, *առաջնորդ-կուսակցություններ* և *հետնապահ-կուսակցություններ*, *կադրային* և *զանգվածային* կուսակցություններ, *ներկայացուցչական* և *ինտեգրող* կուսակցություններ, *սահմանադրական* և *հեղափոխական* կուսակցություններ, *ձախեր* և *աջեր*:

Քաղաքագիտության մեջ կուսակցությունների վերաբերյալ առավել տարածված դասակարգումներից մեկը ֆրանսիացի գիտնական Մորիս Դյուվերժեի դասակարգումն է, ով տարբերում է ***կադրային, զանգվածային*** և ***խիստ կենտրոնացված կուսակցություններ***:

Կադրային կուսակցությունները ձևավորվում են, որպես կանոն, «վերևից» տարբեր խորհրդարանական խմբերի և ճնշման խմբերի հիման վրա: Դրանք շեշտը դնում են պրոֆեսիոնալ քաղաքական գործիչների և էլիտար շրջանակների մասնակցության վրա: Այս կուսակցությունները սովորաբար ակտիվանում են միայն նախընտրական քարոզարշավների ժամանակ: Կադրային կուսակցությունները ձևավորվել են խորհրդարանական խմբակցությունների հիման վրա այն ժամանակ, երբ ընտրական իրավունքը նոր էր ձևավորվում: Այսօր «կադրեր» եզրույթն առավել հաճախ օգտագործվում է (ինչպես տարածված է կոմունիստական կուսակցություններում) որպես բարձր մակարդակի մասնագիտական պատրաստվածություն ունեցող կուսակցության անդամներ, որոնցից պահանջվում է բարձր քաղաքական ակտիվություն և տեղեկացվածություն: Այս առումով կադրային կուսակցություններ էին Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը (ԽՄԿԿ), նացիստական կուսակցությունը Գերմանիայում և ֆաշիստական կուսակցությունը Իտալիայում: Այսպիսի կադրային կուսակցություններ են նաև ժամանակակից Չինաստանի կոմունիստական կուսակցությունը (ՉԿԿ) և ինչ-որ չափով նաև Հնդկաստանի Ազգային կոնգրեսը: Կադրային կուսակցությունների տարբերակիչ գծերից է կախ-

վածությունը քաղաքականապես ակտիվ վերնախավից (սովորաբար վերջինին հատուկ է զինվորական կարգապահությունը), որին տրվում է «հասարակության գաղափարական ավանգարդի» դերը: Չնայած այն բանին, որ կադրային կուսակցությունների անդամների առջև դրվում էին ամենախիստ գաղափարական պահանջները, հաճախ այդ կուսակցություններին մարդիկ անդամագրվում էին բացառապես կարիերայի և օպորտունիզմի (պատեհապաշտության) նպատակներից ելնելով:

Զանգվածային կուսակցություններին բնորոշ գծերից է այն, որ դրանք ձևավորվում են քաղաքական գործիչների մի խմբի կողմից, և դրանց կազմակերպական կառուցվածքի հիմքը քաղաքական կոմիտեն է (առաջնորդներ, ակտիվիստներ):

Զանգվածային կուսակցությունները լավ կազմակերպված և կանոնակարգված, ինչպես նաև կենտրոնացված կազմակերպություններ են, անդամակցության հստակ կանոնադրությամբ, որտեղ կարևորվում է գաղափարական միասնությունը և անդամների հայացքների ընդհանրությունը: Զանգվածային կուսակցության համար ամենակարևորն իր կազմի ընդլայնումն է և լայն ընտրազանգված ունենալը: Զանգվածային կուսակցությունների հիմնական առանձնահատկությունը սեփական շարքերը հնարավորինս լայն զանգվածներով համալրելն է: Թեև զանգվածային կուսակցությունները կազմավորված են հիմնականում ժողովրդավարական հիմքերով, առնվազն ձևաբանորեն՝ իրենց անդամներից, բացառությամբ մի փոքր խմբի, սովորաբար չի պահանջվում ակտիվ մասնակցություն կուսակցության աշխատանքներին, այլ ընդհանուր համաձայնություն կուսակցության սկզբունքներին և նպատակներին:

Եվ վերջապես՝ **խիստ կենտրոնացված կուսակցությունների** հիմնական բնորոշ առանձնահատկությունը, ըստ Դյուվերժեի, այն է, որ այսպիսի կուսակցություններում գաղափարական բաղադրիչը դառնում է հիմնարար: Նման կուսակցություններին (Դյուվերժեն դրանց թվին է դասում կոմունիստական և ֆաշիստական կուսակցությունները) բնորոշ հատկանիշներից է բազմաթիվ ստորակարգային (հիերարխիկ) կապերի առկայությունը, խիստ, գրեթե զինվորական կարգապահությունը, գործողությունների բարձր կազմակերպվածությունը, քաղաքական առաջնորդների նկատմամբ առանձնակի հարգանքն ու ակնածանքը:

«Աջեր և ձախեր» քաղաքական դասակարգումը քաղաքական կուսակցությունների և շարժումների, քաղաքական գործիչների գաղափարների և համոզմունքների, գաղափարական դիրքորոշումների սխեմատիկ պատկերացումներն են: «Աջեր և ձախեր» երևույթի գաղափարական արմատները սկիզբ են առնում ֆրանսիական հեղափոխության ժամանակներից, որն

արտացոլում է այն, թե ինչպես էին «տեղավորվել» պատգամավորները 1789 թ. Գլխավոր Նահանգների առաջին նիստի ժամանակ: Մակայն գոյություն չունի ճշգրիտ բացատրություն «աջեր» և «ձախեր» հասկացության համար: Ընդհանուր առմամբ՝ «ձախից աջ» գծային քաղաքական դասակարգումը ցույց է տալիս տնտեսության և պետության դերի հետ կապված տարբերությունները: Ձախերը պաշտպանում են կոլեկտիվիզմի գաղափարը և պետական միջամտության սկզբունքը հասարակության գործերին, իսկ աջերը, ճիշտ հակառակը, նախապատվությունը տալիս են ազատ շուկային և անհատականությանը:

Այս ամենի հետևում, սակայն, այնուամենայնիվ, թաքնվում են ավելի խոր գաղափարական և արժեքային տարբերություններ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

Գծապատկեր 6.

Ձախեր	Աջեր
ազատություն	իշխանություն
հավասարություն	հիերարխիա (ստորակարգություն)
եղբայրություն	կարգ ու կանոն
իրավունք	պարտականություններ
առաջընթաց	ավանդույթ
բարեփոխումներ	ոեակցիա

Մահմանադրական կուսակցությունը, խստորեն հետևելով քաղաքական խաղի կանոններին, հաճախ հանդես է գալիս որպես ժողովրդավարության դրոշակակիր, և, եթե հասարակությունում կան այսպիսի կուսակցություններ, ապա դա համարվում է տվյալ հասարակության քաղաքական առողջության ցուցանիշ: Եվ հակառակը՝ այն կուսակցությունները, որոնք, մենաշնորհել են քաղաքական իշխանության նկատմամբ իրավունքը, վերածվում են շահարկման և քաղաքական վերահսկողության գործիքի: Այդուհանդերձ՝ քաղաքական կուսակցությունների գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- ներկայացուցչություն,
- վերնախավի ձևավորում և համալրում,
- պետության զարգացման նպատակների սահմանում,
- շահերի ներկայացում և ագրեգացիա,
- քաղաքացիների սոցիալականացում և հավաքագրում,
- իշխանության ձևավորում:

Կոալիցիա՝ քաղաքական ուժերի ժամանակավոր դաշինք, որը ձևավորվում է կա՛մ ընդհանուր վտանգի գիտակցման, կա՛մ էլ նպատակներին առանձին-առանձին հասնելու անկարողության գիտակցման արդյունքում:

Ընտրական կոալիցիա՝ միություն, որի դեպքում կողմերը համաձայնության են գալիս ոչ թե ընտրությունների ժամանակ միմյանց դիրքերը թուլացնելու, այլ՝ համագործակցաբար ավելի շատ ձայներ ստանալու համար:

Օրենսդրական կոալիցիա՝ երկու կամ ավելի կուսակցությունների միջև համաձայնություն խորհրդարանում որոշակի կամ կոնկրետ ծրագրի իրականացմանը աջակցելու նպատակով:

Կոալիցիոն կառավարությունների հիմքում ընկած է նախարարական պորտֆելների բաշխման պայմանավորվածությունը երկու կամ ավելի կուսակցությունների միջև: «Մեծ կոալիցիան» կամ «ազգային կառավարություն» ներառում են բոլոր հիմնական կուսակցություններին, սակայն, այս գաղափարը հասունանում է միայն պետական ճգնաժամի կամ երկրի տնտեսությունում արտակարգ դրության ժամանակ:

Հակակուսակցական կուսակցություններ՝ կուսակցություններ (շարժումներ, խմբեր), որոնց նպատակը ավանդական կուսակցական համակարգի խաթարումն է: Մա մի համակարգ է, որտեղ շեշտը դրվում է ոչ թե խորհրդարանում աշխատանքի, այլ հասարակության հետ աշխատանքի վրա: Այսինքն՝ համաձայնության կամ փոխզիջման չգալով խորհրդարանական խմբակցությունների հետ՝ այսպիսի կուսակցությունները միշտ դիմում են հասարակությանը:

Քաղաքական կուսակցությունների գործառույթները: Կուսակցությունը, որպես ուղղահայաց կապի կարևորագույն միջոց ժողովրդի և պետության միջև, իրականացնում է գործառույթների երկու խումբ, որոնք վերաբերում են քաղաքական գործընթացի գրեթե բոլոր փուլերին: **Կուսակցության ներքին գործառույթները** ներառում են *կուսակցության բյուջեի ձևավորումը, դեկավար կազմի ընտրությունը, կուսակցական բյուրոկրատիայի և շարքային անդամների միջև հարաբերությունների պահպանումը* և այլն:

Ինչ վերաբերում է **արտաքին գործառույթներին**, ապա դրանցից առավել կարևորը *քաղաքական իշխանության նվաճումն ու օգտագործումն է՝ ի*

շահ սեփական սոցիալական բազայի (կուսակցության ակտիվ և պասիվ անդամներ, կուսակցությանը ձայն տված քաղաքացիներ):

Այլ կերպ ասած, էթե շահերի խմբերը փորձում են լուծել որոշակի խնդիրներ հաստատված կառավարման ռեժիմի շրջանակներում, ապա կուսակցությունները, առաջ քաշելով ներքին և արտաքին քաղաքական խնդիրների վերաբերյալ սեփական մոտեցումները և լուծման ուղիները, հավակնություններ են դրսևորում հենց այդ նույն բարձրագույն քաղաքական իշխանության փոփոխության համար:

Քաղաքական կուսակցությունների կարևորագույն գործառնություններից են նաև *քաղաքական առաջնորդների և էլիտայի ընտրությունն ու հավաքագրումը* քաղաքական համակարգի բոլոր մակարդակներում: Առավել հաճախ դա տեղի է ունենում ընտրություններին սեփական թեկնածուների առաջադրման ձևով: Մակայն կուսակցությունների գործունեության հրապարակային բնույթը առաջին հերթին կապված է իշխանության տարբեր ճյուղերի և տարբեր քաղաքական ինստիտուտների և կառույցների հետ մշտական կապի պահպանության հետ: Կուսակցական փորձագետների և վերլուծաբանների աշխատանքների օգտագործումը պետական կառավարման տարբեր մակարդակներում հնարավորություն է տալիս կուսակցություններին առաջադրել կամ առաջարկել կուսակցության առավել հայտնի և հեղինակավոր ներկայացուցիչներին որոշակի պետական պաշտոններում: Այսպիսով՝ կուսակցություններն առանց ընտրության կարող են մասնակիորեն վերահսկել հասարակության և պետության կառավարման որոշակի կառույցներ:

Կուսակցությունների մեկ այլ կարևոր գործառնություններից է *քաղաքացիների քաղաքական սոցիալականացումը*, այսինքն՝ վերջիններիս մոտ համապատասխան որակների և հմտությունների ձևավորումը իշխանական հարաբերություններում մասնակցության համար:

Կուսակցությունների համար սեփական քաղաքական խնդիրների լուծման ամենաբնորոշ միջոցներից են՝ սեփական թեկնածուների առաջադրումը ընտրություններին, քաղաքացիներին կուսակցության ծրագրերի ներկայացումը հնարավորինս առավել թվով կողմնակիցներ կամ ձայներ հավաքելու նպատակով և այլն: Այս համատեքստում է, որ կուսակցություններն առավել ակնհայտ և հստակ կերպով իրականացնում են իրենց գործառնությունները նախընտրական և ընտրական քարոզչության ժամանակ: Առաջադրելով սեփական թեկնածուներին օրենսդիր մարմնի ընտրություններում՝ կուսակցությունները սկսում են իրականացնել ակտիվ գործողություններ, որոնք ուղղված են ոչ միայն սեփական ներկայացուցիչների աշակցությանը, այլև որոշակի գաղափարների տարածմանը և զանգվածա-

յին գիտակցության մեջ դրանց ներդրմանը: Եվ եթե, օրինակ, փոքր կուսակցությունները չեն կարող առաջադրել մրցունակ թեկնածուներ համապետական կամ տեղական ընտրություններում, ապա նրանք, այնուամենայնիվ, ընտրարշավները օգտագործում են սեփական գաղափարախոսության տարածման նպատակով՝ փորձելով հասարակության մոտ ստեղծել դրական կերպար սեփական նպատակների, գաղափարների և արժեքների նկատմամբ:

Կուսակցական համակարգեր: Կուսակցական համակարգը իշխանության համար իրական պայքար մղող կուսակցությունների ամբողջությունն է, ինչպես նաև տարբեր կուսակցությունների և պետության ու այլ պետական հաստատությունների միջև կայուն հարաբերությունների և կապերի ամբողջությունը:

Կուսակցական համակարգերի ձևավորման վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնների թվին կարելի դասել հասարակության սոցիալական կառուցվածքի բնույթը, գործող օրենսդրությունը (առաջին հերթին ընտրական օրենքները), սոցիալ-մշակութային ավանդույթները:

Կուսակցական համակարգերի բնույթի և գործառնության վրա կարող են ազդել նաև օրենքները: Օրինակ՝ օրենքները կարող են սահմանափակել նվազ քաղաքական ազդեցություն ունեցող կուսակցությունների գործունեությունը, խոչընդոտել արմատական ուղղվածությամբ ընդդիմադիր կուսակցությունների մասնակցությունը ընտրություններին, թույլատրել բռնի գործողություններ անօրինական կուսակցական միավորումների նկատմամբ: Մեծամասնական ընտրական համակարգերի դեպքում (հաղթում է այն թեկնածուն, ով ստացել է ձայների մեծամասնությունը), սովորաբար, ձևավորվում է երկկուսակցական համակարգ կամ մեկ գերիշխող կուսակցությամբ համակարգ: Համամասնական ընտրական համակարգերը, ընդհակառակը, առավել մեծ թվով քաղաքական ուժերի հնարավորություն տալով մասնակցելու իշխանության ներկայացուցչական մարմինների ձևավորմանը, խթանում են բազմակուսակցական համակարգի և կուսակցական կոալիցիաների ստեղծումը՝ դյուրին դարձնելով նոր կուսակցությունների ձևավորումը:

Այն հասարակություններում, որտեղ առկա են զանազան տնտեսական կառուցվածքներ, մշակութային և լեզվական բազմազանություն, տարբեր սոցիալական, ազգային, կրոնական և շահերի իրացման այլ ուղիներ և ինստիտուտներ, որպես կանոն, ստեղծվում են բազմակուսակցական համակարգերի ձևավորման նախադրյալներ: Եվ հենց համամասնական ընտրական համակարգն է, որ, ինչպես ցույց է տալիս քաղաքական զարգաց-

ման համաշխարհային փորձը, ստեղծում հասարակության ժողովրդավարական զարգացման ամենաօպտիմալ ձևը:

Տարբերում են նաև հետևյալ կուսակցական համակարգերը՝

- **միակուսակցական համակարգ**, երբ երկրում օրինական գործում է միայն մեկ կուսակցություն, իսկ մնացած կուսակցությունների գործունեությունը օրենքով արգելված է,
- **կիսակուսակցական համակարգ**, որտեղ գործում է կոալիցիա՝ կազմված գերիշխող կուսակցությունից և այդ կուսակցությանը հայացքներով մոտ մեկ այլ, պակաս հայտնի կուսակցությունից,
- **երկկուսակցական համակարգ**, երբ երկրում օրինական գործում են մի շարք կուսակցություններ, սակայն նրանից միայն երկուսն են իրական պայքար մղում իշխանության համար և հասարակության մոտ վայելում համեմատաբար համարժեք ժողովրդականություն,
- **երկուսուկես կուսակցական համակարգ**, որի դեպքում գործում են երկու հեղինակավոր կուսակցություններ՝ երրորդ՝ միաժամանակ այլընտրանքային կուսակցության միջնորդությամբ, որը հնարավորություն է տալիս հաշտեցնել այդ երկու հակառակորդներին,
- **բազմակուսակցական համակարգ**, որտեղ գործում են երեք և ավելի համեմատաբար հավասարազոր կուսակցություններ:
- **կեղծ բազմակուսակցական համակարգ**, որտեղ գործում են մի շարք կուսակցություններ, սակայն մեկը գերիշխող է: Այս համակարգում տեղի է ունենում կուսակցության և պետական ապարատի սերտաճում, որն ուղեկցվում է կոռուպցիայի նկատմամբ արտաքին վերահսկողության բացակայությամբ:

Թվարկված կուսակցական համակարգերից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Այսպես՝ Ճապոնիայի, Իսպանիայի փորձը վկայում է մենաշնորհային իշխող կուսակցությամբ բազմակուսակցական համակարգի առավելությունների մասին: Իսկ Շուվանդիայի, Դանիայի, Բելգիայի, Ավստրիայի քաղաքականապես կայուն զարգացումը խոսում է առանց գերիշխող կուսակցությամբ բազմակուսակցական համակարգի օգտին: Երկկուսակցական մոդելը, որը հաստատվել է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում, Կանադայում, Ավստրալիայում և մի շարք այլ երկրներում, քաղաքացիներին տրամադրում է ընտրության հնարավորություն, կառավարությանը՝ քաղաքական կուրսի փոփոխության հնարավորություն, իսկ հասարակությանը՝ կայունության հնարավորություն՝ միաժամանակ բարդացնելով նաև քաղաքական դաշտում նոր կուսակցությունների առաջացումը: Եթե կուսակցությունները գործում են տարանջատ կամ տարբեր հիմնարար արժեքներ ունեցող հասարակություն-

ներում, ապա սոցիալ-մշակութային հակասությունները հասնում են առավել սրված քաղաքական առճակատման: Այն երկրներում, որտեղ «երրորդ» կուսակցությունը կարող է զգալի ճշգրտումներ մտցնել սահմանված քաղաքական կարգի շրջանակներում (այսինքն «խլել» զգալի չափով ձայներ այն կուսակցությունից, որին նախընտրում է ընտրողների 70-80%-ը), ապա հասարակության մեջ ձևավորվում են կայուն կենտրոնացված քաղաքականության բոլոր նախադրյալները:

Ջ. Սարտորիի առաջ է քաշում ավելի բարդ դասակարգում՝ հիմնված կուսակցությունների միջև գաղափարական տարբերության («բնեռացվածության») վրա: Ըստ Ջ. Սարտորիի՝ գոյություն ունի յոթ տեսակի կուսակցական համակարգ. «*միակուսակցական*» (մեկ գաղափարախոսության) համակարգ և «*ատոմացված*» (տարբեր գաղափարախոսությունների): Միջանկյալ տիպի համակարգերին է նա դասում «*հեզանոն կուսակցությամբ*» համակարգերը, «*գերիշխող կուսակցությամբ*» համակարգերը, «*երկկուսակցական*» համակարգը, «*սահմանափակ պլյուրալիզմի*» և «*արմատական պլյուրալիզմի*» համակարգերը, որոնք արտահայտում են զարգացման և գաղափարական պլյուրալիզմի աստիճանը այս կամ այն կուսակցության գործունեության մեջ: Սարտորիի կարծիքով՝ հինգ և ավելի կուսակցության առաջացումը ստեղծում է «*ծայրահեղ բազմակուսակցականություն*», ինչը վտանգավոր է պետության գոյության համար:

«Շահերի խմբեր» հասկացությունը: «Շահերի խմբեր» հասկացությունը բնորոշում է քաղաքական ինստիտուտների ամբողջություն, որոնք միջնորդավորում են հասարակություն-պետություն փոխհարաբերությունները: Տեսականորեն շահերի խմբերի տեղը և դերը հասարակության և պետության մեջ հիմնավորվել են 19-20-րդ դդ. անգլիացի փիլիսոփաների և տնտեսագետների աշխատանքներում, որոնք շահերի խմբերը դիտարկում էին որպես հասարակության հատուկ միավորներ: Ամերիկացի գիտնական Ա. Բենթլին «Կառավարման գործընթացը» գրքում (1908) շահերի խմբերը դիտարկում է որպես մարդկանց որոշակի միություն, որոնց «անդամների թիվը սահմանափակվում է միայն մեկ ցուցանիշով՝ շահերով, հանուն որոնց այդ խմբերը ստեղծվել և գործում են»:

Հաշվի առնելով քաղաքագիտությունում գերիշխող մոտեցումները՝ շահերի խմբերը կարելի է սահմանել որպես հիմնականում կամավոր միավորումներ՝ հատուկ ստեղծված մարդկանց կողմից պետական և քաղաքական այլ ինստիտուտների հետ հարաբերություններում սեփական շահերի արտահայտման և պաշտպանության համար: Այս քաղաքական միավորումները իբրև պետության և բնակչության միջև հարաբերությունների միջնորդներ, ներկայացնում են տարբեր սոցիալական, ազգային, կրոնա-

կան և մարդկանց այլ հանրությունների շահերը և ունեն սեփական շահերի իրագործման համար իշխանության վրա ազդելու ռեսուրսների լայն շրջանակ: Այդպիսի ռեսուրսների թվին կարելի է դասել վերջիններիս տնտեսական և ֆինանսական հնարավորությունները, սեփական անդամների քաղաքական մասնակցության փորձը, կազմակերպչական կառուցվածքները և այլն: Կախված քաղաքական համակարգի բնույթից՝ շահերի խմբերը ունեն քաղաքական որոշումների վրա ազդելու սեփական մեխանիզմները:

Առաջ քաշելով քաղաքական պահանջներ և աջակցելով կառավարության և պետական այլ կառույցներում կոնկրետ գործիչներին՝ շահերի խմբերը հնարավորություն են ստանում առաջարկելու սեփական անդամներին պետական կառավարման մարմիններում, ինչպես նաև ազդելու կադրերի ընտրության գործընթացի վրա՝ այդպիսով իսկ ազդելով որոշում ընդունող անձանց վրա: Այս կերպ շահերի խմբերը կարողանում են ազդեցություն ունենալ քաղաքական էլիտայի ձևավորման վրա, հասարակության տարբեր իշխանական կառույցների վրա:

Ֆրանսիացի քաղաքագետ Մ. Դյուվերթեն առանձնացնում է շահերի խմբերի երկու տեսակ՝ **հատուկ** (գրադվում է միայն քաղաքական գործունեությամբ) և **մասնավոր** (իրականացնում է սոցիալական գործառույթների ավելի լայն շրջանակ՝ կապված բիզնեսի կազմակերպման և այլնի հետ):

Շահերի խմբերի շրջանակներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում **ճնշման խմբերը**:

Ինչպես նշվում է ամերիկյան հանրագիտարանում (The Encyclopedia Americana)՝ ճնշման խմբերը «մարդկանց որոշակի խմբեր են, որոնք փորձում են ճնշում գործադրել կառավարության վրա սեփական նպատակներին հասնելու համար»:

Նկարագրելով այդ միությունների գործունեությունը՝ գիտնականները դրանց տվել են տարբեր անվանումներ՝ «պոտենցիալ խմբեր», «պաշտոնական դեմքեր», «լոբբի», «պարտադիր բնույթի խմբային շահեր» և այլն:

Ինչպես նշում է Ս. Ֆրայերը՝ նման միությունները ձգտում են նպատակատուղված ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացի վրա, միևնույն ժամանակ չեն հավակնում ուղղակի կամ անմիջական մասնակցության պետական կառավարման գործում: Այդպիսով՝ նրանք խուսափում են որևէ քաղաքական պատասխանատվությունից սեփական գործողությունների համար:

Ճնշման խմբերը սեփական նպատակների և խնդիրների լուծման համար որպես հիմնական միջոցներ և մեթոդներ օգտագործում են *խորհրդատվություններ, առաջարկություններ* որոշում կայացնողներին, տարբեր

պատասխանատու անձանց և կառավարման մարմիններին, ինչպես նաև որոշումների իրականացման համար օգնության ցուցաբերում քաղաքական գործիչներին և կառավարիչներին, քաղաքական խմբերի ֆինանսավորում, աշխատանքներ խորհրդարանական հանձնաժողովների հետ, ոչ ֆորմալ կապերի օգտագործում և այլն: Մինևույն ժամանակ շահերի խմբերի զինանոցում նաև ներառված են՝ շանտաժ, որոշում կայացնողներին ապօրինի ծառայությունների տրամադրում, սպառնալիքներ, կաշառք, ձայների գնում, ֆինանսական օժանդակություն ապօրինի կազմակերպություններին, քաղաքական գործիչների անձնական կյանքի վերահսկողություն վարկաբեկման նպատակով և այլն (այս մեթոդները հատկապես ազդում են առաջին անգամ պատգամավոր ընտրված անձանց վրա): Այսպիսով՝ ճնշման խմբերի գործառույթների իրականացման բնույթը կախված է այն հանգամանքից, թե արդյոք ք օրինական են, թե ոչ նրանց գործունեության միջոցները:

ՀԻՇԵՔ ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կուսակցություն
- Հակակուսակցականություն
- Կադրային կուսակցություն
- Չանգվածային կուսակցություն
- Աջեր և ձախեր
- Սահմանադրական կուսակցություն
- Կոալիցիա
- Միակուսակցական համակարգ
- Կիսակուսակցական համակարգ
- Երկկուսակցական համակարգ
- Բազմակուսակցական համակարգ
- Հեգեմոն կուսակցություն
- Շահերի խումբ
- Ճնշման խումբ

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպե՞ս կրնոթագրեք քաղաքական կուսակցությունը:
2. Քաղաքական կուսակցությունների վերաբերյալ ի՞նչ դասակարգումներ կան:
3. Ի՞նչ է բազմակուսակցական համակարգը:

4. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում կուսակցությունները:
5. Ի՞նչ է կուսակցական համակարգը:
6. Ինչպիսի՞ կուսակցական համակարգեր կան:
7. Կուսակցությունների ի՞նչ տեսակներ կան:
8. Ի՞նչ է սահմանադրական կուսակցությունը:
9. Ի՞նչ է հակակուսակցական կուսակցությունը:
10. Ի՞նչ է շահերի խումբը:

ԳՐԱԿԱՆԱՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքագիտություն:** Ուս. ձեռնարկ ԲՈւՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
2. **Քեդյան Գ.** Քաղաքական կուսակցություններ, Եր., 1996, 266 էջ:
3. **Քեդյան Գ.** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, 288 էջ:
4. **Дюверже М.** Политические партии, Москва, 2000, 558 с.
5. **Лейпхарт А.** Демократия в многосоставных обществах. М., 1997, 287 с.
6. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии.: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
7. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
8. **Lijphart A.** Patterns of Democracy, Yale University Press, 1999, 351 p.
9. **Sartori G.** Parties and Party Systems: A Framework for Analysis, Volume I by Cambridge, Cambridge University Press, 1976. 370 p.

**ԹԵՄԱ 13. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ.
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ներկայացուցչական ժողովրդավարությունն անհնար է առանց քվեարկության և ընտրությունների: Ընտրությունները ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում քաղաքական գործընթացի անբաժանելի մասն են: Ընտրությունները մարդուն հնարավորություն են ընձեռում մտնելու մեծ քաղաքականություն, դառնալու պատգամավոր կամ նույնիսկ նախագահ: Այս ամենով հանդերձ՝ ընտրությունների միջոցով սովորական քաղաքացիները ակտիվորեն մուտք են գործում քաղաքական կյանք, նրանք սկսում են զգալ իրենց նշանակությունը, հնարավորություն են ստանում ազդելու քաղաքական իշխանության մարմինների ձևավորման գործընթացի վրա:

Որոշ տեսաբաններ նույնիսկ պնդում են, որ ժողովրդավարության էությունը հենց ընտրություններն են: Այս տեսակետը, օրինակ, պաշտպանել է Յ. Շումպետերն իր «Կապիտալիզմ, սոցիալիզմ և ժողովրդավարություն» գրքում (1942): Ըստ հեղինակի՝ «Ժողովրդավարություն նշանակում է միայն մեկ բան. հնարավորություն ընդունելու կամ չընդունելու այն մարդկանց, ովքեր դեկավարում են մեզ»: Դիտարկելով ժողովրդավարությունը որպես սոսկ քաղաքական մեթոդ՝ Շումպետերը, ըստ էության, այն նույնացնում է մրցակցային ընտրությունների հետ: Ժամանակակից տեսաբանները, ովքեր այս հարցն այնքան էլ նեղ իմաստով չեն դիտարկում, ընդունում են Շումպետերի այն տեսակետը, որ համակարգի ժողովրդավարացման աստիճանը մեծապես կախված է այն նորմերից և մեխանիզմներից, որոնք կարգավորում են ընտրությունների անցկացման գործընթացը: Իրավական նորմերով ձևակերպվում են ներկայացուցչական մարմիններում և պետական ընտրովի պաշտոններում թեկնածուներին առաջադրվող հիմնական պահանջները, կարգավորվում է ընտրությունները կազմակերպող իշխանական մարմինների գործունեությունը, սահմանվում է ընտրողների և ընտրական միավորումների կարգավիճակը, սահմանվում են նախընտրական քարոզարշավի և քվեարկության կարգն ու ընթացակարգերը, ինչպես նաև որոշվում են ընտրության արդյունքների հաշվարկման կարգն ու դրանց բողոքարկման եղանակները:

Հետևաբար՝ պետք է հասկանալ, թե ընտրությունների ինչ ձևեր գոյություն ունեն:

Սուաջին հարցը, որ ուշադրության կենտրոնում պետք է լինի, այն է, թե պետության մեջ ո՞ր պաշտոնները պետք է լինեն ընտրովի:

Երկրորդ հարցը. Ի՞նչ կատեգորիաների քաղաքացիների վրա է տարածվում ընտրական իրավունքը: Ձայնի իրավունքի սահմանափակումը կախված սեռից, ռասայից, սեփականությունից աշխարհի բազմաթիվ երկրներում այլևս պատմություն է, սակայն, այնուամենայնիվ, որոշ ինդիաներ դեռ պահպանվում են: Օրինակ՝ ԱՄՆ տարբեր նահանգներում ընտրություններում գրանցվելու կամ չգրանցվելու հարցը թողնված է ընտրողների հայեցողությանը, ինչի արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ չեն գրանցվում և չեն քվեարկում: Իսկ Ավստրալիայում, Բելգիայում և Իտալիայում ճիշտ հակառակն է. ընտրություններին մասնակցությունը պարտադիր է: Տարբեր երկրներում պարտադիր քվեարկության ապահովման համար իրականացվում են տարբեր միջոցառումներ: Օրինակ՝ Իտալիայում ընտրություններին չմասնակցած քաղաքացիների փաստաթղթերում դրվում է կնիք հետևյալ բովանդակությամբ՝ «Չի քվեարկել»: Այս երկրներում ընտրություններին մասնակցության մակարդակը բավականին բարձր է: 80-ական թվականներին տարբեր երկրներ գրանցեցին մասնակցության հետևյալ ցուցանիշները. Ավստրալիա՝ 83%, Բելգիա՝ 87%, Հունաստան՝ 87%, Իտալիա՝ 93%: Արևմտյան Եվրոպայում ընտրություններին մասնակցության միջին ցուցանիշը կազմում է մոտ 70% (իսկ ԱՄՆ-ում մոտ 50%, այն էլ՝ նախագահական ընտրությունների ժամանակ): Իսկ Նիդեռլանդներում, որտեղ պարտադիր քվեարկությունը վերացվեց 1967 թ., մասնակցության ցուցանիշը անմիջապես նվազեց 94.7%-ից մինչև 83,5 %-ի:

Երրորդ հարցը. Ի՞նչ կարգով է տեղի ունենում քվեարկությունը: Օրինակ ԽՍՀՄ-ում մինչև 1989 թ. գործող նորմի համաձայն՝ անցկացվում էր բաց քվեարկություն: Սակայն այսօր ժամանակակից քաղաքական ընտրությունները հիմնականում անցկացվում են գաղտնի քվեարկությամբ (սա երբեմն կոչվում է «ավստրալիական քվեաթերթիկ», քանի որ առաջին անգամ այս սկզբունքը կիրառվել է 1856 թ. Հարավային Ավստրալիայում): Համարվում է, որ գաղտնի քվեարկությունը երաշխավորում է «ազնիվ» ընտրությունների կազմակերպումն առնվազն այն բանով, որ նվազեցնում է կոռուպցիան և ընտրողների ահաբեկումը:

Չորրորդ հարցը. արդյո՞ք ընտրությունները մրցակցային են:

Հինգերորդ հարցը. Ինչպե՞ս են, ըստ էության, անցկացվում ընտրությունները:

Ըստ ընդունված համընդհանուր կարծիքի՝ ընտրություններն ընկալվում են որպես մեխանիզմ, որը հասարակությանը հնարավորություն է տալիս ընտրված քաղաքական գործիչների միջոցով իրականացնել որոշակի քաղաքականություն, և, եթե անհրաժեշտ է, պահանջել հաշվետվություն այդ նույն քաղաքական գործիչներից իրենց գործունեության համար: Այս

համատեքստում ընտրությունները գործում են «ներքևից-վերև» ուղղությամբ. ներքևից, այսինքն՝ հասարակությունն է սկսում քաղաքական գործիչների համալրման գործընթացը, նույն վեկտորի միջոցով իրականացվում է ներկայացուցչությունը, և հենց այս նույն ուղղությամբ էլ տարատեսակ շահերի խմբեր ձգտում են ազդել քաղաքական գործընթացի վրա: Բայց կա նաև մեկ այլ՝ ավելի արմատական տեսակետ (օրինակ՝ Գինսբերգի տեսակետը, 1982 թ.): Այս տեսակետը կարևորում է այն միջոցները կամ գործիքները, որոնց օգնությամբ կառավարությունը և քաղաքական էլիտան վերահսկում են հասարակությանը՝ դարձնելով այն առավել կառավարելի: Այս դեպքում խոսքը, բնականաբար, ընտրությունների «վերևից-ներքև» կազմակերպման և իրականացման մասին է, ինչն ամրապնդում է համակարգի լեգիտիմությունը, ձևավորում է հասարակական կարծիք և ամրապնդում էլիտայի դիրքերը: Կարելի է սակայն պնդել, որ ընտրությունները միակողմանի մեխանիզմներ չեն, քանի որ այստեղ հարց է առաջանում, թե ո՞վ է ում վերահսկում. հասարակությունը քաղաքական գործիչներին, թե՞ քաղաքական գործիչները՝ հասարակությանը: Ինչպես քաղաքական հաղորդակցության մյուս ուղիները՝ ընտրությունները ևս կարելի է դիտարկել որպես «երկկողմանի փողոց», որը թույլ է տալիս կառավարությանը և հասարակությանը, էլիտային և զանգվածներին վերահսկել միմյանց: Ասվածի համատեքստում կարելի է առանձնացնել ընտրությունների հետևյալ հիմնական գործառույթները՝ *քաղաքական կորպուսի համալրում, կառավարության ձևավորում, ներկայացուցչության ապահովում, ազդեցություն քաղաքականության վրա, հասարակության քաղաքական սոցիալականացում, համակարգի լեգիտիմացում, էլիտայի դիրքերի ամրապնդում:*

Թերևս, միգուցե, ընտրությունների ամենակարևոր գործառույթն այն է, որ նրանք, ովքեր խոսում են հասարակության անունից, վաղ թե ուշ ընկնում են հասարակության «դատավճռի» տակ:

Տարբերում են **ուղղակի** և **անուղղակի** ընտրություններ: *Ուղղակի ընտրության* դեպքում ընտրողները անմիջապես ընտրում են առաջադրված թեկնածուներից որևէ մեկին, մինչդեռ *անուղղակի ընտրության* դեպքում ընտրությունը կրում է միջնորդավորված բնույթ (ընտրիչների միջոցով):

Ընտրական համակարգ: Ընտրական համակարգը օրենքների, միջոցների և մեթոդների ամբողջություն է, որոնք կարգավորում են ընտրությունների կազմակերպումն ու իրականացումը: Այդ օրենքները, միջոցները և մեթոդները տարբեր երկրներում ունեն տարբեր դրսևորումներ: Ընդհանուր առմամբ՝ ընտրական համակարգերը տարբերվում են հետևյալ հատկանիշներով՝

- ընտրողներին տրվում է հնարավորություն ընտրություն կատարել կա՛մ թեկնածուների միջև, կա՛մ կուսակցությունների միջև,
- ընտրողները կարող են քվեարկել կա՛մ միայն մեկ թեկնածուի, կա՛մ մի քանի թեկնածուների օգտին, սակայն վերջինիս դեպքում պետք է թեկնածուներին դասավորել ըստ նախընտրության առաջնայնության,
- ընտրազանգվածը կարող է բաժանվել կամ չբաժանվել ըստ ընտրատարածքների,
- մեկ ընտրատարածքից կարող է ընտրվել կա՛մ մեկ թեկնածու, կամ մի քանի թեկնածուներ,
- ընտրվելու համար անհրաժեշտ ձայների տոկոսը կարող է փոփոխվել այսպես կոչված «պարզ մեծամասնությունից» (թեկնածուներից մեկի օգտին տրված առավելագույն քանակությամբ ձայներ), մինչև «բացարձակ» մեծամասնություն:

Ընտրական համակարգեր: Կատարյալ ընտրական համակարգ գոյություն չունի:

Ընտրական համակարգերը տարբերվում են միմյանցից բազմաթիվ չափանիշներով: Գոյություն ունեն ընտրական համակարգերի բազմաթիվ ձևեր. կարելի է նույնիսկ ասել՝ «որքան պետություն, այնքան էլ ընտրական համակարգ»: Այնուամենայնիվ, ընտրական համակարգերի ամենատարածված տեսակները երեքն են՝ **համամասնական, մեծամասնական** և **խառը**:

Համամասնական ընտրական համակարգը կիրառվում է Իսրայելում, բազմաթիվ եվրոպական երկրներում, այդ թվում՝ Բելգիայում, Լյուքսեմբուրգում և Շվեյցարիայում, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանում:

Համամասնական ընտրական համակարգ կիրառվում է միայն բազմամանդատ ընտրատարածքներում: Յուրաքանչյուր ընտրական միավորում կամ կուսակցություն ընտրողներին առաջարկում է քվեարկել ոչ թե մեկ թեկնածուի օգտին, այլ թեկնածուների ցուցակի օգտին, որը, սովորաբար, հաստատվում է տվյալ ընտրական միավորման կամ կուսակցության համագումարի ժամանակ: Այս դեպքում տեղերը բաշխվում են ըստ կուսակցության կամ ընտրական միավորման ստացած ձայների համամասնության: Համամասնական ընտրական համակարգի անվանումը բխում է հենց այստեղից:

Իսկ թե ցուցակում ընդգրկված թեկնածություններից ով պետք է, ի վերջո, անցնի խորհրդարան, որոշվում է երկու սկզբունքով: Առաջինը հերթականության սկզբունքն է, համաձայն որի՝ մանդատը տրվում է ցուցակում ընդգրկված թեկնածուներին հերթականությամբ, իսկ համաձայն երկրորդ

սկզբունքի, որը կոչվում է նախընտրության (պրեֆերենցիալ) սկզբունք, ընտրողին իրավունք է տրվում նախապատվության սկզբունքով ընտրել ցուցակում ընդգրկված նախընտրելի թեկնածուներին՝ առավել նախընտրելի թեկնածուին նշելով թիվ 1, երկրորդին թիվ 2 և այլն: Համամասնական ընտրական համակարգը կիրառվում է միայն կոլեգիալ մարմինների (օրինակ՝ խորհրդարան) ընտրությունների ժամանակ: Համամասնական ընտրական համակարգի բնորոշ **առանձնահատկություններն են՝**

- երկրի ամբողջ տարածքը դիտվում է որպես մեկ ընտրատարածք,
- ընտրություններից առաջ կուսակցությունները ներկայացնում են թեկնածուների իրենց ցուցակը,
- ընտրողները քվեարկում են ոչ թե թեկնածուների, այլ քաղաքական ուժերի (կուսակցություն, դաշինք) օգտին,
- խորհրդարանում քաղաքական ուժերը ստանում են այնքան տեղ, որքան ձայն են հավաքել ընտրությունների արդյունքում, այսինքն՝ մանդատները բաշխվում են ըստ նրանց հավաքած ձայների համամասնության,
- որպես կանոն կիրառվում է որոշակի քանակական «արգելք» (տվորաբար՝ ընտրական շեմը կազմում 5%) նվազ քաղաքական ազդեցություն ունեցող կուսակցությունների մուտքը խորհրդարան սահմանափակելու համար:

Համամասնական ընտրական համակարգին բնորոշ են նաև որոշ **թերություններ՝**

- համակարգը նպաստում է կուսակցությունների կենտրոնացմանը և նրանց դիրքերի ամրապնդմանը, քանի որ նրանք են որոշում, թե ով պետք է առաջադրվի և ընդգրկվի կուսակցության ցուցակում, և ավելին՝ թե որ տեղը պետք է զբաղեցնի այս կամ այն թեկնածուն տվյալ կուսակցության ցուցակում,
- բազմաթիվ կուսակցությունների առկայությունը կարող է հանգեցնել թույլ և անկայուն կառավարության ձևավորմանը,
- կուսակցությունների և ընտրողների միջև կապը այս համակարգում լիովին բացակայում է:

Համամասնական ընտրական համակարգի **ուժեղ կողմերն են՝**

- Ընտրողներին տրվում է հստակ ընտրության հնարավորություն կուսակցությունների և նրանց առաջարկած թեկնածուների միջև,
- վերացվում են հնարավոր քաղաքական «ծայրահեղությունները»՝ դժվարացնելով արմատական գաղափարախոսությամբ փոքր կուսակցությունների իշխանության գալու հնարավորությունը,

- ապահովում է ուժեղ կառավարության ձևավորման հնարավորությունը, քանի որ օրենսդիր մարմնում տեղերի մեծամասնությունը միշտ ստանում է որևէ կուսակցություն,
- այսպիսի կառավարությունը սովորաբար կայուն է, քանի որ միակուսակցական կառավարությունը, որպես կանոն, ունի ներքին համերաշխություն:

Մեծամասնական ընտրական համակարգը կիրառվում է Մեծ Բրիտանիայում (Համայնքների պալատի ընտրությունների ժամանակ), ԱՄՆ-ում, Կանադայում, Հնդկաստանում և մի շարք այլ երկրներում:

Մեծամասնական ընտրական համակարգի (ֆրանս. majorité - մեծամասնություն) հիմքում ընկած է մեծամասնության սկզբունքը: Ընտրություններն այս դեպքում, սովորաբար, անցկացվում են միամանդատ ընտրատարածքներում, և հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, ով ստանում է ձայների մեծամասնությունը: Մեծամասնական ընտրական համակարգի ամենատարածված տեսակներն են՝ *հարաբերական, բացարձակ և որակյալ* մեծամասնությամբ համակարգերը: **Հարաբերական մեծամասնության** դեպքում հաղթում է այն թեկնածուն, ով մյուս թեկնածուների համեմատ հավաքել է առավել շատ ձայներ: **Բացարձակ մեծամասնության** դեպքում հաղթում է այն թեկնածուն, ով հավաքել է ավելի քան 50% ձայն (առնվազն 50% գումարած մեկ ձայն): **Որակյալ մեծամասնության** դեպքում հաղթում է այն թեկնածուն, ով հավաքել է ընտրողների ձայների 2/3-ը կամ 3/4-ը: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում համապատասխան թվով ձայներ, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլում առավել շատ ձայներ հավաքած երկու թեկնածուները: Նշենք, որ երկրորդ փուլը կարող է ընտրողների մոտ առաջացնել «հոգնածություն» և ընտրությունների նկատմամբ հետաքրքրության անկում:

Մեծամասնական ընտրական համակարգի **առանձնահատկություններն** են՝

- երկիրը բաժանված է համապատասխան քանակի ընտրատարածքների,
- ընտրողները ընտրում են միայն մեկ թեկնածու՝ սովորաբար նշելով վերջինիս անունը քվեաթերթիկում,
- թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է ավելի շատ ընտրող:

Մեծամասնական ընտրական համակարգին բնորոշ են նաև որոշ **թերություններ**՝

- մեծ թվով (որոշ դեպքերում մեծամասնությունը) ձայների կորուստ, մյուս թեկնածուներին (ովքեր չեն հաղթել) տրված ձայները կորչում են,
- պետական կառավարման համակարգում ստեղծվում է անկայուն վիճակ, քանի որ կառավարության փոփոխությունը քաղաքականության մեջ կարող է հանգեցնել արմատական տեղաշարժերի,
- թույլ է քաղաքական պատասխանատվության տեսանկյունից:

Ամերիկացի քաղաքագետների կարծիքով՝ մեծամասնական ընտրակարգի դեպքում միամանդատ ընտրատարածքներում թեկնածուներն ունեն տարածքներ, որոնք նրանք կարող են համարել «իրենցը»։ պատկերավոր ասած՝ այդ ընտրատարածքներում նրանց ընտրվելու հավանականությունն ավելի բարձր է: Այս համակարգը, մյուս համակարգերի համեմատ, հիմնականում ստեղծում է հնարավորություն և հիմք է հանդիսանում թեկնածուների և ընտրողների միջև ավելի անհատականացված, անձնական որոշակի հարաբերությունների ձևավորման համար: Նման հարաբերությունները հաճախ հիմնված են տվյալ ընտրատարածքում առանձին անհատների, խմբերի և կազմակերպությունների շահերի ապահովման, «սեփական ընտրատարածքին ծառայելու» անկուսակցական, ապագադափարական սկզբունքների վրա: Այսինքն՝ միամանդատ ընտրատարածքներով մեծամասնական ընտրական համակարգը պայմաններ է ստեղծում ընտրողների և թեկնածուների միջև ավելի անհատականացված, անձնավորված և սերտ հարաբերությունների ձևավորման համար: Դրանք բացարձակապես անկուսակցական, ապագադափարական հարաբերություններ են, որոնց հիմքում ընկած է «ընտրատարածքին ծառայելու» սկզբունքը:

Մակայն ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Ֆրանսիայի և արևմտաեվրոպական մի շարք երկրների քաղաքական փորձը ուղղակիորեն չի հաստատում թեկնածուների և ընտրողների միջև հարաբերությունների այս ձևը:

Մեծամասնական համակարգի թերությունները բացահայտվում են նաև այն ժամանակ, երբ հարցը դիտարկում ենք ներկայացուցչության չափանիշի տեսանկյունից:

Կարելի է պնդել, որ ցանկացած մեծամասնական համակարգ ծնում է հետևյալ քաղաքական երևույթը. երկկուսակցական համակարգ և միակուսակցական կառավարություն:

Այս փաստերի լույսի ներքո կարող է թվալ, որ համամասնական ընտրակարգը լիովին ապահովում է ներկայացուցչականությունը: Նախ նշենք, որ չպետք է շփոթել կամ նույնացնել համամասնական ընտրական համակարգը ընտրությունների արդարության հետ: Համամասնական ընտրա-

կարգերը ևս ունեն իրենց քննադատները: Այդ համակարգերը քննադատում են այն բանի համար, որ դրանք հակված են ստեղծելու կոալիցիոն կառավարություններ: Չնայած, ի տարբերություն միակուսակցական կառավարությունների, կոալիցիոն կառավարությունները հիմնված են ընտրողների առնվազն 50%-ի աջակցության վրա, և նրանց քաղաքական կուրսը, միշտ որոշվում է ընտրություններից հետո:

Բացի այդ, այս դեպքում, կոալիցիայի ներսում կուսակցության իրական ազդեցությունը կարող է չհամապատասխանել ստացած ձայների համամասնությանը: Որպես օրինակ՝ նշենք Գերմանիան, որտեղ ոչ մեծ կուսակցությունները (օրինակ՝ Ազատ դեմոկրատները) թելադրում են իրենց պայմանները մեծ կուսակցություններին՝ սպառնալով միանալ կոալիցիայի կազմում մեկ այլ կուսակցության: Մի խոսքով՝ ստացվում է այնպես, որ «պոչը դեկավարում է շանը»:

Ունենալով խորհրդարանական մեծամասնության աջակցությունը՝ միակուսակցական կառավարությունը կարող է մինչև ժամկետի ավարտը մնալ իշխանության դեկին՝ ի տարբերություն կոալիցիոն կառավարությունների, որոնք թույլ են և անկայուն: Կոալիցիոն կառավարությունում տեղի է ունենում հայացքների և դիրքորոշումների համաձայնեցման անվերջ գործընթաց, ինչը սպառնում է կոալիցիայի կազմաքանդմանը:

Վերջին հաշվով, դեռևս հայտնի չէ, թե որն է, ըստ էության, այս կամ այն ընտրական համակարգի «վնասը»:

Խառը ընտրական համակարգը կիրառվում է Գերմանիայում, Ռուսաստանում (Պետդոմայի ընտրություններին ժամանակ), Նոր Զելանդիայում, Միացյալ Թագավորությունում:

Խառը ընտրական համակարգը ներառում է համամասնական և մեծամասնական ընտրակարգերի մի համադրություն՝ այս երկու ընտրակարգերին բնորոշ թերությունները նվազագույնի հասցնելու նպատակով: Ըստ այս համակարգի՝ խորհրդարանի մի մասն ընտրվում է համամասնական, մյուս մասը՝ մեծամասնական ընտրակարգով: Խառը ընտրական համակարգի բնորոշ **առանձնահատկություններն** են՝

- ընտրողները լրացնում են երկու քվեաթերթիկ. քվեաթերթիկներից մեկում քվեարկում են նշված ընտրատարածքից առաջադրված թեկնածուներից մեկի օգտին, իսկ մյուս քվեաթերթիկում՝ որևէ քաղաքական ուժի օգտին,
- խառը ընտրական համակարգը թույլ է տալիս համատեղել երկու համակարգերի առավելությունները, ինչի արդյունքում ձևավորվում է ավելի ներկայացուցչական օրենսդիր մարմին,

- այս համակարգը ընտրողներին հնարավորություն է տալիս մեկ ընտրատարածքից ընտրել մի թեկնածուի որևէ մեկ կուսակցությունից (կամ անկուսակցական) և, միաժամանակ, քվեարկել մեկ այլ կուսակցության օգտին:

Հայաստանի Հանրապետությունում խառը ընտրական համակարգն առաջին անգամ կիրառվել է 1995 թ.-ի Ազգային Ժողովի ընտրության ժամանակ, երբ 150 պատգամավոր ընտրվեց մեծամասնական, իսկ 40 պատգամավոր համամասնական ընտրակարգով: 2012 թ.-ից Ազգային Ժողովի ընտրություններն անցկացվեցին հետևյալ համամասնությամբ՝ 90 պատգամավոր ընտրվում էր համամասնական ընտրակարգով, 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Սակայն 2015 թ. Սահմանադրության փոփոխությունից հետո ՀՀ-ում հաստատվեց համամասնական ընտրակարգ:

Ընտրական վարքագիծ: Ընտրական վարքագծի հիմնախնդրի վերաբերյալ աճող հետաքրքրությունը համընկավ քաղաքագիտության մեջ բիենիո-րիզմի (վարքաբանական տեսության) տարածման հետ: Քանի որ քվեարկությունը քաղաքական վարքագծի չափման ամենատարածված ձևն է, այդ պատճառով էլ ընտրական վարքագծի վերաբերյալ հետազոտությունները շարունակվում են մինչ այսօր:

«Վարքաբանական հեղափոխության» գազաթնակետը շատերը համարում էին այն, որ քվեարկության վերաբերյալ ուսումնասիրությունները կդառնան բոլոր քաղաքական համակարգերի առանձնահատկությունների բացահայտման բանալին և թույլ կտան ձևակերպել զանգվածային քաղաքական հոգեբանության վերաբերյալ օրենքները: Ուսումնասիրելով ընտրական վարքագծի գաղտնիքները՝ մենք ստանում ենք քաղաքական համակարգի բնույթի, ինչպես նաև սոցիալական և քաղաքական փոփոխությունների և գործընթացների վերաբերյալ բավական շատ գիտելիքներ:

Ընտրական վարքագծի վրա ազդում են որոշ գործոններ: Այդ գործոնները վերաբերում են կոնկրետ ընտրություններին. այս դեպքում դժվար է հստակ ընդհանրացումներ անել քվեարկության ձևերի վերաբերյալ: Այս պարագայում ընտրությունների ժամանակ հիմնական գործոնը տնտեսության վիճակն է, քանի որ մեծ կապ կա կառավարության և տնտեսական ցուցանիշների միջև, ինչպիսիք են գործազրկությունը, գնաճը և բնակչության եկամուտները: Պատահական չէ, որ երկրորդ ժամկետով վերընտրվելու հնարավորությունները բարձրացնելու համար կառավարությունն անում է ամեն ինչ նախընտրական շրջանում տնտեսական ցուցանիշները բարելավելու համար:

Մեկ այլ գործոն, որն ազդում է քվեարկության արդյունքների վրա, անձն է և կուսակցության առաջնորդի հասարակական հեղինակությունը, ինչը

հատկապես կարևոր է, քանի որ լրատվամիջոցները վաղուց արդեն բոլորին սովորեցրել են, որ առաջնորդը համարվում է կուսակցության «բրենդը»: Ի դեպ, սա նաև նշանակում է, որ եթե կուսակցությունը գտնում է, որ իր ընտրական դիրքերը թույլ են, իսկ առաջնորդն ակնհայտորեն ժողովրդականություն չի վայելում, ապա պետք է առաջնորդին փոխել: Մեկ այլ գործոն է նաև այն, թե ինչպես և որքան արդյունավետ են կուսակցություններն անցկացնել իրենց նախընտրական քարոզարշավը:

Ընտրական գործընթաց և ընտրաքառավ: Պետական իշխանության մարմիններում ընտրությունների անցկացումը կապված է քաղաքական գործունեության այնպիսի հատուկ տեսակի հետ, երբ հավակնորդները մտնում են մրցակցության մեջ և ձեռնարկում տարբեր քայլեր, որպեսզի կարողանան շահել պոտենցիալ ընտրողների վստահությունը: Քաղաքական «բեմահարթակում» սկսում են տեղի ունենալ տարատեսակ միջոցառումներ. անցկացվում են հանրահավաքներ, ժողովներ, հանդիպումներ թեկնածուների և բնակչության հետ, քաղաքական առաջնորդները մամուլում և այլուր հանդես են գալիս քննադատական հայտարարություններով և ծրագրերով, փողոցներում հայտնվում են գովազդային պաստառներ, բաժանվում են բուկլետներ և այլն:

Իրադարձությունների այս բազմազանությունը, որը նախաձեռնվում և ստեղծվում է մարդկանց կողմից նախընտրական և ընտրական գործընթացների ժամանակ, կարելի է սահմանել **«ընտրական գործընթաց»** հասկացությամբ: Սա մի գործընթաց է, որը տալիս է երկրում ընտրությունների հետ կապված քաղաքական իրադարձությունների ընդհանուր բնութագիրը: Ընտրական գործընթացը տեղի է ունենում ընտրական օրենսդրության նորմերի համաձայն, որոնցով սահմանվում և կարգավորվում է խմբերի ու անհատների քաղաքական վարքագիծը:

Այս ամենով հանդերձ՝ յուրաքանչյուր թեկնածու կամ ընտրական դաշինք, մտնելով նախընտրական պայքարի մեջ, ձգտում է լուծել իր խնդիրները և դրա համար որոշակի ջանքեր է գործադրում: Այսպիսով՝ ընտրական քարոզարշավը (նախընտրական քարոզարշավ) կարելի է սահմանել որպես կուսակցությունների, ընտրական միավորումների, թեկնածուների և նրանց թիմերի կողմից սեփական նախընտրական նպատակներին հասնելու գործողությունների ամբողջություն: Սակայն դա երկրում տեղի ունեցող միասնական ընտրական գործընթացի միայն մի մասն է:

Նախընտրական քարոզարշավը քաղաքական կառավարման հատուկ տեսակ է: Այս գործընթացում որպես կառավարման սուբյեկտ հանդես է գալիս քաղաքական թիմը (կուսակցական կազմակերպություն, համախոհների խումբ, քաղաքական խորհրդատուներ), որը ղեկավարում է թեկնա-

ծուն, և որպես օբյեկտ՝ պոտենցիալ ընտրողները: Կառավարման նպատակը որոշվում է այն խնդիրներով, որոնք իր առջև դնում է թեկնածուն: Ինչպես ցույց է տալիս փորձը՝ ոչ բոլոր թեկնածուներն են մասնակցում նախընտրական քարոզարշավին հաղթանակի նպատակով: Ումանք դիտարկում են քարոզարշավը որպես հնարավորություն իրենց անձի վրա ուշադրություն հրավիրելու համար՝ հաջորդ ընտրություններին մասնակցելու և հաջողություն ունենալու նպատակադրումով և այլն:

Յուրաքանչյուր քարոզարշավ անցկացվում է նախաձեռնողների կողմից քաղաքական մրցակիցների դեմ կոշտ պայքարում: Չէ՞ որ ընտրական գործընթացը, ըստ էության, մրցակցային գործընթաց է, որի ընթացքում թեկնածուները լարված մրցակցություն են վարում քաղաքական բուրգի հիերարխիայում հեղինակավոր դիրքեր և պաշտոններ զբաղեցնելու, լայն զանգվածների վրա ազդեցություն ունենալու և կարևորագույն ռեսուրսներին տիրապետելու համար: Եվ որպեսզի այս մրցակցությունը չվերածվի պարզունակ առճակատման և չհանգեցնի ճգնաժամի, յուրաքանչյուր երկրում ստեղծվել են այս հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմեր: Իհարկե, օրենսդրությունը չի կարող կարգավորել ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների գործունեությունը, սակայն, այնուամենայնիվ, դա նրանց համար ստեղծում է որոշակի իրավական դաշտ, որից դուրս նրանց գործունեությունը կհանգեցնի տարբեր պատժամիջոցների:

Հանրաքվե: Հանրաքվեն քաղաքացիների քաղաքական մասնակցության հատուկ ձև է: Հանրաքվեն «ուղղակի ժողովրդավարության» ձև է, համաժողովրդական քվեարկության հատուկ տեսակ: Հանրաքվեի դեպքում քվեարկության օբյեկտը ոչ թե այս կամ այն թեկնածուն է, այլ ինչ-որ կարևոր հարց, որի դեպքում իշխանությունները անհրաժեշտ են համարում պարզել ժողովրդի կարծիքը: Սա կարող է լինել հարց՝ կապված անկախության կամ ինքնորոշման հետ (1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվե), դա կարող է լինել հարց՝ կապված կառավարման ձևի հետ (հանրաքվեները Իտալիայում 1946 թ. և Հունաստանում 1974 թ. կառավարման միապետական ձևից հանրապետական ձևին անցնելու վերաբերյալ) և այլն:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընտրություններ
- Ընտրական համակարգ
- Քվեարկություն

- Ընտրարշավ
- Համամասնական ընտրակարգ
- Մեծամասնական ընտրակարգ
- Խառը ընտրակարգ
- Ընտրական գործընթաց
- Ընտրական վարքագիծ
- Հանրաքվե

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է ընտրությունը:
2. Ի՞նչ է ընտրական համակարգը:
3. Ո՞րն է մեծամասնական ընտրական համակարգը:
4. Ո՞րն է համամասնական ընտրական համակարգը:
5. Ո՞րն է խառը ընտրական համակարգը:
6. Ինչպե՞ս կրնորոշեք ընտրական վարքագիծը:
7. Ի՞նչ է ընտրական գործընթացը և ընտրարշավը:
8. Ինչո՞վ են պայմանավորում ընտրությունների կոնկրետ ձևերը:
9. Ին՞չ է հանրաքվեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքագիտություն:** Ուս. ձեռնարկ ԲՈւՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
2. **Ачкасова В., Гуторова В.** Политология. Учебник для ВУЗов. 2006, 692 с.
3. **Крегов Б., Горбунов А.** Прикладная политология: Учебное пособие. Высшая школа, М., 2009. 303 с.
4. **Мухаев Р.** Политология. Учебник, М., 2009, 640 с.
5. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии.: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
6. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
7. **Carsten A., Dag A.** Comparisons, Regimes, Elections, Finland, 2012, 354 p.

**ԹԵՄԱ 14. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ, ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Քաղաքական վարքագծի էությունը: Քաղաքական վարքագիծը քաղաքականության մեջ քաղաքական հոգեբանության տեղի և դերի արտահայտման կարևորագույն ձևն է: Հենց այստեղ է, որ հոգեբանությունը ծառայում է քաղաքական կյանքում մարդկային գործունեության և՛ որպես մեխանիզմ, և՛ որպես հատուկ գործոն:

Քաղաքական վարքագիծը, ինչպես քաղաքագիտության ցանկացած այլ հիմնարար կատեգորիա, ենթակա է տեսական իմաստավորման: Ներկայումս քաղաքական վարքագծի բնույթի և էության վերաբերյալ քաղաքագիտության մեջ ձևավորվել է մի քանի տեսանկյուն: Այսպիսով գիտնականների զգալի մասը քաղաքական վարքագիծը դիտարկում է որպես **գործողությունների ամբողջություն** (գործողություններ և փոխազդեցություններ), որոնք տեղի են ունենում քաղաքական կյանքում և տարբերվում են իշխանության վրա ազդեցության աստիճանով:

Բավականին տարածված է նաև քաղաքական վարքագծի **իրավիճակային** մեկնաբանությունը, որի հեղինակներն ընդգծում են հատկապես այն արտաքին գործոնները, որոնք ազդում են մարդու գործողությունների վրա: Որպես կանոն՝ խոսքը այս դեպքում ֆիզիկական և սոցիալական միջավայրի մասին է: Այս կապակցությամբ Ռ. Մերտոնը առաջ է քաշում արտաքին միջավայրին հարմարվելու տարբեր միջոցների հարցը. **հարմարվողական** (կոնֆորմիստական), ինչը նշանակում է մարդու կողմից գործող կամ ձևավորված կարգերի ընդունում, **ծիսական** (ոխտուալ), որն արտահայտում է մարդու խորհրդանշական և ոչ քննադատական վերաբերմունքը արտաքին միջավայրի նկատմամբ, և **նորարարական** (ինովացիոն), որը ենթադրում է արտաքին միջավայրի նկատմամբ մարդու դիրքորոշումների, գործունեության ակտիվության և անկախության պահպանում: Նորարարական ձևերը խրախուսում են քաղաքական նպատակներին հասնելու գործնական միջոցները (այստեղ կարևորվում են քաղաքական ակտիվության ստեղծագործական ձևերը):

Քաղաքական վարքագծի տեսակները: Ամենատարածված **կոնֆորմիստական** վարքագիծը զրկում է մարդուն գործողությունների սրությունից, քաղաքական իրավիճակին հստակ պատասխան տալու ունակությունից: Կոնֆորմիստական տրամադրվածությամբ սուբյեկտը, որպես կանոն, չի նկատում իշխանությունների սխալները և հաճախ ներում է իշխանություններին նույնիսկ հանցագործությունների համար, հատկապես այն դեպքերում, երբ դրանք անմիջականորեն չեն առնչվում իր շահերին: Վար-

քազծի այս տեսակը նպաստում է քաղաքական համակարգում իշխանության կողմից այդքան ցանկալի կայունությանը և, հետևաբար, խրախուսվում է իշխանությունների կողմից: **Միսական** վարքագիծը նույնպես գործնականում որևէ վտանգ չի ներկայացնում իշխող վարչակարգի համար: Միայն **նախաձեռնողական** վարքագիծն է, որ կարող է (եթե իհարկե այդ նախաձեռնողականությունն ուղղված է իշխանության աջակցությանը) խթանել փոփոխությունները:

Որոշ գիտնականներ, բնութագրելով քաղաքական վարքագիծը, շեշտը դնում են հատկապես մարդու սուբյեկտիվ մտադրությունների վրա: Օրինակ՝ Մ. Վեբերն այս առումով առանձնացնում է գործողությունների հետևյալ ձևերը՝ **նպատակային-ռացիոնալ**, **արժեքային-ռացիոնալ**, **հուզական** (աֆեկտիվ) և **ավանդական**, որոնք իրենց ուրույն տեղն ունեն քաղաքականության մեջ:

Նշված մոտեցումները հնարավորություն են տալիս քաղաքական վարքագիծը սահմանել որպես քաղաքականության մեջ տարբեր դերակատարների սուբյեկտիվ դրդապատճառներով գործողությունների ամբողջություն, որոնք փորձում են իրականացնել իրենց նպատակներն ու խնդիրները սեփական համոզմունքների, պատկերացումների, դիրքորոշումների, գնահատականների համապատասխան:

Հարկ է նշել, որ քաղաքական վարքագիծը կարող է պայմանավորված լինել նաև արտաքին դրդապատճառներով և ենթագիտակցական շարժառիթներով: Սակայն, այնուամենայնիվ, վարքագիծը մեծամասամբ պայմանավորված է մարդկանց կողմից սեփական կարիքների և շահերի իրացման տարբեր ձևերով:

Քաղաքական վարքագծի տեսությունները: **Կոնֆլիկտային տեսության** կողմնակիցների կարծիքով՝ անձի քաղաքական վարքագիծը ձևավորվում է երեք շարժառիթների հիման վրա. **կոռպերատիվ** (ընդհանուր, համագործակցային), երբ սուբյեկտը շահագրգռված է գործընկերոջ բարօրությամբ և վերջինիս շահերը դիտարկում է որպես իր շահերի և ձգտումների անբաժանելի մաս, **անհատապաշտական**, որն անտեսում է ցանկացած տեսակի նպատակահարմարություն, բացառությամբ սեփական շահերը, և **մրցակցային**, ինչը նշանակում է մրցակցող կողմերի դիրքորոշումների և շահերի սուր հակադրության անխուսափելիություն և խաղ հանուն հաղթանակի, որի պարագայում մրցակցին հասցված վնասը դիտարկվում է որպես գործողությունների դրական վերջնարդյունք:

Համակարգային վերլուծության ներկայացուցիչները քաղաքական վարքագծի վճռորոշ դրդապատճառներ են համարում հեղինակավոր առաջնորդների նկատմամբ նախնական հակումը, նրանց ոճի և հավակնություն-

ների պատճենումը: Ա. Դատնար, Ռ. Կարին, Լ. Հուսդուն և **ռազմական ընտրության տեսության** այլ հետևորդներ անտեսում են քաղաքական վարքագծի վերը նշված դրդապատճառները՝ անհատի վարքագծում մատնանշելով միայն օգուտի ձգտելու վերջինիս ցանկության առաջատար դերը:

«**Քաղաքական սոցիալականացում» հասկացությունը:** Քաղաքական սոցիալականացումը տվյալ հասարակության մշակութային արժեքների, քաղաքական կողմնորոշումների, քաղաքական վարքագծի ձևերի յուրացման գործընթացն է:

Քաղաքական սոցիալականացումը մարդու հաղորդակցումն է կոնկրետ քաղաքական համակարգի նորմերին և ավանդույթներին, ինչպես նաև քաղաքական մասնակցության հմտությունների ձևավորումը:

Քաղաքական սոցիալականացումն իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ՝ 1) սահմանում է քաղաքական նպատակներն ու արժեքները, որոնց ձգտում է մարդը քաղաքական մասնակցության միջոցով, 2) ձևավորում է քաղաքական վարքագծի ընդունելի ձևերի և կոնկրետ իրավիճակում այս կամ այն գործողության նպատակահարմարության մասին պատկերացումներ, 3) սահմանում է անհատի վերաբերմունքը շրջակա միջավայրի և քաղաքական համակարգի նկատմամբ, 4) ձևավորում է որոշակի վերաբերմունք քաղաքական սիմվոլիկայի վերաբերյալ:

Քաղաքական սոցիալականացման ձևերը: Տարբերում են քաղաքական սոցիալականացման երկու ձև՝ **ուղղակի** և **անուղղակի** (կամ առաջնային և երկրորդական): Ուղղակի սոցիալականացումը քաղաքական գիտելիքների ուղղակի ձեռքբերումն է: Անուղղակի սոցիալականացումն անհատի մոտ արդեն ձևավորված բնավորության հատկանիշների անուղղակի «պրոյեկցիան» է քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործում:

Սոցիալականացման գործընթացում ներգրավված են և միմյանց հետ փոխգործակցում են մի քանի սուբյեկտներ. *սոցիալականացվողը* կամ ըստ էության, այն անձը, ում ուղղված է սոցիալականացման գործընթացը, *սոցիալականացման գործակալությունները* կամ *ինստիտուտները*, որոնք իրականացնում են սոցիալականացումը (ուսումնական հաստատություններ, կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, ՉԼՄ-ներ և այլն), *սոցիալականացման գործակալները* (սոցիալականացնողներ), ում միջոցով կազմակերպվում է սոցիալականացումը (ուսուցիչներ, հասարակական շարժումների ակտիվիստներ, հասարակական գործիչներ, լրագրողներ և այլն):

Քաղաքական սոցիալականացման փուլերը: Քաղաքական սոցիալականացումը շարունակական գործընթաց է և ընթանում է մի քանի փուլերով: Առաջին՝ **քաղաքականացման փուլում** ծնողների ազդեցությամբ երեխան

ձևավորում է առաջին պատկերացումները քաղաքական աշխարհի մասին: Երկրորդ՝ **անձնավորման փուլում** իշխանության ընկալումը անձնավորվում է: Իշխանության նմուշներ են դառնում նախագահի, վարչապետի, ոստիկանի կերպարները և այլն: Երրորդ՝ **իդեալականացման փուլում** պետության առաջին դեմքերին վերագրվում են որոշակի խարիզմատիկ հատկություններ, և այդ հիմքի վրա ձևավորվում է կայուն հուզական վերաբերմունք քաղաքական համակարգի նկատմամբ: Չորրորդ՝ **ինստիտուցիոնալացման փուլը** բնութագրվում է քաղաքականության անձնավորված ընկալումից վերացականի անցմամբ: Պատկերացումներ են ձևավորվում իշխանության ինստիտուտների մասին:

Քաղաքական սոցիալականացման մոդելները: Գոյություն ունեն քաղաքական սոցիալականացման մի քանի մոդելներ: Ամերիկացի քաղաքագետ Ռ. Մերելմանը առանձնացնում է չորս մոդել:

Առաջին՝ **հասակարգային մոդելը** բնութագրվում է իշխանության, գործող իրավակարգի, ավանդական ինստիտուտների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմամբ: Այստեղ սոցիալականացման ամենակարևոր գործակալություններն են՝ դպրոցը և ընտանիքը, ինչպես նաև անձին շրջապատող միջավայրը և հասակակիցները:

Երկրորդ՝ **հեզեմոն մոդելը** ձևավորվում է երիտասարդության կողմից, թշնամաբար է տրամադրված ցանկացած սոցիալական և քաղաքական համակարգի նկատմամբ, բացառությամբ՝ «սեփական» համակարգի: Այս մոդելում սոցիալականացման հիմնական գործակալությունները լրատվամիջոցներն են:

Երրորդ՝ **պլյուրալիստական մոդելում** սոցիալականացման նպատակը քաղաքացիների մոտ սեփական քաղաքական շահերի մասին պատկերացումների, դրանց իրականացմանը մասնակցելու ցանկության, բարձր մակարդակի քաղաքացիական մասնակցության ձևավորումն է: Արդյունքում՝ քաղաքացիները ձգտում են միավորվել որոշակի քաղաքական խմբերում և կարող են ազատորեն փոխել այդ խմբերը՝ կախված քաղաքականության արդյունքների և սեփական շահերի իրացման աստիճանից: Այս մոդելում սոցիալականացման գործակալություններն են՝ կուսակցությունները և շահերի խմբերը:

Չորրորդ՝ **կոնֆլիկտային մոդելը** ձևավորում է հավատարմություն որոշակի խմբի նկատմամբ և պատրաստակամություն աջակցելու վերջինիս այլ խմբերի դեմ պայքարում: Սոցիալականացման գործակալություններն են՝ քարոզչություն իրականացնող մարմինները, որոնք ներկայացնում են տվյալ խմբի շահերը:

Սոցիալականացման առաջին մոդելն առավելապես բնորոշ է *անգլո-ամերիկյան* մշակույթին: Երկրորդ մոդելը բնորոշ է ոչ *արևմտյան քաղաքակրթության* երկրներին: Երրորդը բնորոշ է *մայրցամաքային-եվրոպական* մշակույթին: Եվ վերջապես, վերջին չորրորդ մոդելը բնորոշ է *փակ* (ավտորիտար) քաղաքական համակարգերին:

Արևմտյան Եվրոպայում քաղաքական սոցիալականացման խնդիրներն առանձնահատուկ սրությամբ բարձրացվեցին այն երկրներում, որտեղ տեղի էր ունենում անցում ամբողջատիրությունից և ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն: Այսպիսով՝ հետպատերազմյան Գերմանիայում նորաստեղծ ժողովրդավարությունը երկար ժամանակ ուղեկցվում էր անկայունությամբ զանգվածային գիտակցության մեջ ժողովրդավարական արժեքների բացակայության կամ դրանց դեռևս թույլ դրսևորման պատճառով: Արևմտյան գերմանացիների քաղաքական մշակույթում ժողովրդավարական արժեքների առաջընթացը նկատելի դարձավ 60-ական թթ. վերջին 70-ական թթ. սկզբին: Եվ նույնիսկ 70-ական թթ. կեսերին տնտեսական ճգնաժամը, որը վերջինիս պատմության մեջ ամենածանր ճգնաժամերից էր, չկարողացավ քայքայել արդեն ձևավորված ժողովրդավարական, սոցիալական և քաղաքական համակարգի լեգիտիմությունը, ինչը վկայում է արևմտագերմանական քաղաքական մշակույթում ժողովրդավարության գաղափարների արմատավորվածության մասին: Ժամանակակից Գերմանիայում շարունակում է գործել քաղաքական սոցիալականացման հզոր և արդյունավետ համակարգը:

Ժամանակակից Հայաստանում, երբ նախկին քաղաքական համակարգի փոփոխության արդյունքում հին արժեքները կորցրին իրենց գերիշխանությունը, իսկ նոր արժեքներն էլ չարմատավորվեցին հասարակական գիտակցության մեջ, հասարակության առջև ծառայան բազմաթիվ հարցեր. ի՞նչ նպատակներ պետք է հետապնդի քաղաքական սոցիալականացումը, ո՞ր արժեքները կարող են դառնալ համաձայնության առարկա տարբեր սոցիալական խմբերի միջև, այդ արժեքներից որո՞նք կարող են փոխարինել նախկիններին և այլն:

Հարկ է նշել նաև, որ ավագ սերնդի կողմից յուրացված քաղաքական վարքագծի և մասնակցության մոդելներն այլևս չեն պատասխանում նոր քաղաքական իրողություններին և միայն ապակողմնորոշում են անհատին: Քաղաքական վարքագծի նոր մոդելները ձևավորվում և յուրացվում են դանդաղորեն:

Անհրաժեշտ է ձևավորել սոցիալականացման նոր ինստիտուտներ, որոնք կհամալրեն նախկին համակարգի վերացման արդյունքում առաջացած վակուումը:

«Քաղաքական մասնակցություն» հասկացությունը և ձևերը: Քաղաքական մասնակցությունը քաղաքացիների ազդեցությունն է քաղաքական համակարգի գործառնության, քաղաքական ինստիտուտների ձևավորման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վրա:

Գոյություն ունեն քաղաքական մասնակցության տարբեր ձևեր. ակտիվիստական գործունեություն, որն ուղղված է թեկնածուների և կուսակցությունների աջակցությանը ընտրական քարոզարշավների ժամանակ, մասնակցություն ցույցերին, մասնակցություն քաղաքական կուսակցությունների և շահերի խմբերի գործունեությանը: Քաղաքական մասնակցության ձևերի վերաբերյալ առավել մանրամասն դասակարգում է առաջարկել բրիտանացի գիտնական Ա. Մարշը, ով առանձնացնում է քաղաքական մասնակցության երեք հիմնական ձև՝ **օրթոդոքսալ, ոչ օրթոդոքսալ և քաղաքական հանցագործություն:** Քաղաքական օրթոդոքսալ մասնակցության շարքին են դասվում քաղաքական համակարգի կայուն գործառնությունն ապահովող գործողությունները, իսկ ոչ օրթոդոքսալ են համարվում չարտոնված կամ քաղաքական համակարգի դեմ ուղղված գործողությունները (բողոքական վարքագիծ): Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործությանը, ապա այն իրենից ներկայացնում է ոչ լեգիտիմ բռնությամբ ուղեկցվող ապօրինի գործողություններ:

Քաղաքական մասնակցության մեկ այլ դասակարգում է առաջարկել ամերիկացի քաղաքագետ Լ. Միլբրայթը: Նա տարբերում է քաղաքական մասնակցության **կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ** ձևերը: Կոնվենցիոնալ մասնակցություն ասելով՝ Միլբրայթը նկատի ունի օրինական մասնակցությունը, իսկ ոչ կոնվենցիոնալ մասնակցությունը ենթադրում է իշխանության և քաղաքական համակարգի դեմ ուղղված ապօրինի գործողություններ: Առաջինի թվին են դասվում քվեարկությունը, մասնակցությունը կուսակցությունների աշխատանքներին և նախընտրական քարոզարշավներին, իսկ երկրորդի թվին են դասվում մասնակցությունը խռովություններին, դավադրություններին, հեղաշրջումներին, քաղաքական ահաբեկչությանը, ծայրահեղականությանը և այլն:

Կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության ձևերը սահմանվում են օրենսդրությամբ և կարգավորվում են վերջինիս կողմից: Այսպիսի քաղաքական մասնակցությունը վերահսկվում է իշխանության կողմից, հետևաբար ենթարկվում է որոշակի սահմանափակումների, որն իր հերթին խոչընդոտում է քաղաքական մասնակցության տվյալ ձևին լիարժեք զարգացումը:

Ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության առավել հաճախ հանդիպող ձևերից են խռովությունը, պուտչը, ապստամբությունը, հեղափո-

խութունը և այլն: Այս երևույթները դրսևորվել են պատմության տարբեր փուլերում և շարունակվում են մինչ օրս:

Մտորև ներկայացնենք ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության վերոնշյալ ձևերը:

Խռովություն գործող սոցիալական իրականության դեմ ուղղված մարդկանց մեծ զանգվածների գործնական ակտիվությունն է: Այն կրում է տարբերային բնույթ և չունի ոչ մի դրական ծրագիր, որն ուղղված կլինի խախտված նորմերի վերականգնմանը: Հետագոտողների մի մասը խռովությունը դասում է ապստամբության ձևերի շարքին:

Ապստամբություն՝ սոցիալական զանգվածային գործողության ավելի բարձր աստիճան է, քան խռովությունը: Այն ունի կազմակերպված դեկավարներ և ներառում է որոշակի նպատակներ, որոնք հիմնավորվում են ոչ բարդ ծրագրերով, կարգախոսներով, ինչը գործնականում բացառվում է խռովության դեպքում: Ապստամբության մասնակիցները հակադրվում են իշխանության ներկայացուցիչներին՝ քննադատելով նրանց գործողությունները: Ապստամբությունը դասակարգային հակամարտություն է, այլ ոչ թե խմբային պայքար:

Ապստամբությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. ապստամբությունը որոշ դասակարգերի բացահայտ զինված գործունեությունն է, որն ուղղված է քաղաքական իշխանության, ինչպես նաև գործող քաղաքական վարչակարգի դեմ: Դրա նպատակները պայմանավորում են վերջինիս ձևերը: Այս տեսանկյունից Ա. Միգերը տարբերակում է ապստամբության հետևյալ ձևերը:

1. **Բռնա՝** զանգվածների տարերային, չկազմակերպված գործունեություն: Որպես կանոն՝ այն ունի տեղային բնույթ, չի ենթադրում համազգային խնդիրների լուծում. դրա սոցիալական հիմքը կազմված է հալածված հասարակական զանգվածներից:
2. **Ռազմական պրուտչ՝** պետական հեղաշրջում կատարելու նպատակով դավադիրների ռեակցիոն գործունեություն:
3. **Խռովություն՝** պետական հեղաշրջման նպատակով գործող քաղաքական իշխանության դեմ ուղղված ռեակցիոն ռազմական խմբավորման զինված գործունեություն, որը հաջողության հասնելու դեպքում հաստատում է ռազմական դիկտատուրա, ոչնչացնում է ժողովրդավարական հաստատությունները, վերացնում է ժողովրդավարական իրավունքները և ազատությունները, կիրառում է զանգվածային ահաբեկում:
4. **Ռազմական հեղաշրջում՝** պետական իշխանությունը բռնի կերպով փոխելու ձև, որի արդյունքում երկրի կառավարումը ստանձնում են զինվորականները:

5. **Չանգվածային գինված ապստամբություն**՝ նպատակը քաղաքական իշխանության զավթումն է: Դրանով են սկսվել քիչ թե շատ նշանակալի քաղաքական հեղափոխությունները (օրինակ՝ ֆրանսիական Մեծ հեղափոխությունը, 1789թ.):

Ժամանակակից աշխարհում առաջանում են ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության նոր ձևեր, որոնց թվին կարելի է դասել **քաղաքական ծայրահեղականությունը** և **քաղաքական ահաբեկչությունը**: Հետագոտողների մի մասը հակված է դրանք չհամարել որպես քաղաքական մասնակցության ձևեր, քանզի դրանք վերագրվում են քրեորեն պատժելի հանցանքներին, սակայն մյուսները գտնում են, որ ընդդիմությունը ևս մի ժամանակ արգելված էր և համարվում էր հակակառավարական գործունեություն, որի համար սահմանվում էր ծանր պատիժ: Մինչդեռ այսօր ժողովրդավարական երկրներում ընդդիմությունը քաղաքական գործընթացների ազատ մասնակից է:

Ինչ վերաբերում է քաղաքական ահաբեկչությանը, ապա այն ևս իր քաղաքական նպատակներին հասնելու համար կիրառում է բռնություն: Այստեղ պետք չէ իհարկե շփոթել «ահաբեկչություն» հասկացությունը «ահաբեկչական» «գործունեություն» հասկացության հետ: Գոյություն ունի ահաբեկչության վերաբերյալ մոտ հարյուր սահմանում, սակայն այդ սահմանումների հիմնական գաղափարը հետևյալն է՝ բռնությունը կամ բռնության սպառնալիքը համարվում են ահաբեկչության միջոց: Մի շարք քաղաքագիտական բառարաններում «ահաբեկչություն» եզրույթը սահմանվում է որպես ծայրահեղական կազմակերպությունների և անձանց ընդդիմադիր գործունեություն, երբ բռնությամբ կամ դրա սպառնալիքով տվյալ ուժերը փորձում են հասնել իրենց նպատակներին: Գոյություն ունի նաև ահաբեկչության մեկ այլ էական բաղադրիչ: Խոսքը վերջինիս քաղաքական ուղղվածության մասին է: Այս դեպքում դիտարկվում է ահաբեկչության՝ որոշակի քաղաքական նպատակների հասնելու երևույթը: Ի դեպ՝ այդ քաղաքական նպատակները բազմազան են: Դրանք կարող են ուղղված լինել պետական կարգի փլուզմանը, տնտեսական, քաղաքական, սոցիալական բարեփոխումների անցկացմանը, որոնք անտեսվում են իշխանությունների կողմից:

Քաղաքական մասնակցությանը հակադրվում է քաղաքական վարքագծի այսպիսի ձևը, ինչպիսին է՝ **աբսենտեիզմը**: Աբսենտեիզմ նշանակում է քաղաքական գործընթացներին (քվեարկությանը, ընտրարշավներին, բողոքի ակցիաներին, կուսակցությունների, շահերի խմբերի գործունեությանը և այլն) մասնակցության մերժում, քաղաքականության և քաղաքական նորմերի նկատմամբ հետաքրքրության կորուստ, այսինքն՝ քաղաքա-

կան ապատիա (անտարբերություն): Աբսենտեիզմ, որպես քաղաքական վարքագծի ձև, գոյություն ունի ցանկացած հասարակությունում, սակայն նրա դրսևորման աստիճանը, ինչպես նաև անտարբեր մարդկանց համամասնությունը վկայում են տվյալ հասարակությունում քաղաքական համակարգի, նրա նորմերի և արժեքների լեգիտիմության լրջագույն ճգնաժամի մասին:

Որոշ քաղաքագետների կարծիքով՝ սեփական խնդիրները ինքնուրույնաբար լուծելու կարողությունը, սեփական շահերը պաշտպանելու կարողությունը անհատի մոտ կարող է առաջացնել քաղաքականության անօգտակարության, անպետքության զգացում, և, ընդհակառակը, առավել հզոր խմբերի կողմից սեփական շահի նկատմամբ սպառնալիքը կարող է անհատին ստիպել «դիմելու» քաղաքականությանը որպես սեփական շահերի պաշտպանության միջոց: Քաղաքական ապատիայի պատճառ կարող են դառնալ քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը, քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացի վրա ազդեցության անհնարիմության զգացումը: Աբսենտեիզմ հիմնականում նկատվում է տարբեր ենթամշակույթների ներկայացուցիչների, կրթության ցածր մակարդակ ունեցող անձանց մոտ:

Քաղաքական մասնակցության տեսություններ: Քաղաքագիտության մեջ առանձնացնում են քաղաքական մասնակցության հետևյալ տեսությունները:

Ռացիոնալ ընտրության տեսություն: Համաձայն այս տեսության՝ քաղաքական մասնակցության գլխավոր սուբյեկտը ազատ անհատն է, որը ձգտում է առավելագույնս իրացնել իր շահերը, սեփական բարեկեցությունը: Սրանից հետևում է, որ անհատի մասնակցությունը քաղաքականությանը հնարավոր է միայն այն պայմանով, որ ակնկալվող կամ հնարավոր եկամուտները կգերազանցեն ծախսերը:

Ռացիոնալ ընտրության տեսության քննադատները նշում են, որ հետապնդելով ակնթարթային շահույթի նպատակ՝ անհատները կարող են անտեսել հետագա հնարավոր անցանկալի հետևանքները:

Քաղաքական մասնակցության մոտիվացիոն տեսություններ: Քաղաքական մասնակցության ամենատարածված և առավել ընդհանուր մոտիվների (դրդապատճառների) շարքին են դասվում **գաղափարական, նորմատիվային և դերային** մոտիվները:

Գաղափարական մոտիվի գերակայությունը նշանակում է, որ անձը մասնակցում է քաղաքական կյանքին՝ կիսելով և պաշտպանելով հասարակության պաշտոնական գաղափարախոսությունը: Նման դրդապատճառն ապահովում է անձնական քաղաքական արժեքների նույնականա-

ցումը պետության քաղաքական արժեքների հետ: Մակայն, անձնական ու քաղաքական արժեքների անհամապատասխանությունը կարող է առաջացնել չափազանց բացասական և, նույնիսկ, թշնամական վերաբերմունք պետության և քաղաքական համակարգի նկատմամբ:

Նորմատիվ մոտիվը կարգավորում է մարդու քաղաքական վարքագիծը քաղաքական համակարգի կողմից թելադրված կանոններով՝ առանց այդ կանոնները համաձայնեցնելու անհատական արժեքներին և մոտեցումներին: Անհատի վարքագիծը հիմնված է իշխանության ուժի ճանաչման վրա, որն անհատի մոտ ձևավորվել է քաղաքական սոցիալականացման ընթացքում: Քաղաքական համակարգին ենթարկվելը դիտարկվում է որպես չափազանց արժեքավոր և ճիշտ կողմնորոշում:

Ղեկային մոտիվները կապված են գործող քաղաքական համակարգում անհատի սոցիալական դերի հետ: Մարդու վարքագծի գերիշխող ղեկային մոտիվն ուղղակիորեն կապված է իր սոցիալական կարգավիճակի և ինքնագնահատականի հետ: Որքան ցածր է անձի սոցիալական կարգավիճակը, այնքան ավելի հավանական է դառնում նրա արմատական վերաբերմունքը գործող իշխանության նկատմամբ, ինչն էլ կարող է հետագայում դառնալ անկայունության պատճառ:

Զարգացող երկրներում քաղաքական մասնակցության և անկայունության փոխհարաբերությունների հիմնախնդրին անդրադարձել է Մեմյուել Հանթինգթոնը իր՝ «Քաղաքական կարգը փոփոխվող հասարակություններում» գրքում:

Ըստ Հանթինգթոնի՝ արդիականացող ավտորիտարիզմի պայմաններում կայունության ապահովումը պահանջում է զանգվածների քաղաքական մասնակցության դերի սահմանափակում, հակառակ դեպքում քաղաքական ինստիտուտների հուսալիությունը կխափանվի: Պարադոքսն այն է, որ զանգվածների դժգոհությունն ու անբավարարվածությունը (հիասթափությունը) իրենց կարգավիճակից, անխուսափելիորեն մեծացնում է զանգվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներում:

Ամուր և բավարար չափով չձևավորված համապատասխան քաղաքական ինստիտուտների բացակայության դեպքում մասնակցության նման բարձր մակարդակը կարող է դառնալ անկայունության և բռնության պատճառ:

Այսպիսով՝ քաղաքական համակարգի կայունությունը չխաթարող քաղաքական մասնակցության համար առավել կարևոր պայմաններն են՝ ինստիտուցիոնալացման բարձր մակարդակը, որը հնարավորություն է ընձեռում ակտիվ քաղաքական գործունեության համար գործող նորմերի,

ընթացակարգերի և օրենքների շրջանակներում, և սոցիալական դժգոհության ցածր մակարդակը:

Խմբերի քաղաքական գործունեության վրա, իհարկե, մեծ ազդեցություն ունի նաև երկրում կուսակցական համակարգի գործառնության բնույթը: Այն երկրներում, որտեղ գերիշխում է մեկ կուսակցություն, շահերի խմբերի գործունեությունն էականորեն սահմանափակվում է: Այս պարագայում՝ նրանք այս կամ այն չափով «կապված» են իշխող կուսակցության հետ:

Մրան հակառակ բազմակուսակցական համակարգերը պարարտ հող են ստեղծում շահերի խմբերի գործունեության համար: Այնպիսի համակարգերում, ինչպիսին է օրինակ՝ ամերիկյանը, որտեղ քաղաքական կուսակցություններն ավելի թույլ են և՛ կազմակերպվածության, և՛ կարգապահության առումով, խմբերի ազդեցության հնարավորություններն օրենսդրական գործընթացի վրա մեծանում են: Առավել ցայտուն կերպով սա դրսևորվեց 1970-ական թթ., երբ ԱՄՆ ազդեցիկ գործարար շրջանակներին հաջողվեց առանց լուրջ խնդիրների խափանել նախագահ Քարթերի՝ էներգետիկայի ոլորտին վերաբերող ծրագիրը, թեև իր կուսակցությունը այդ ժամանակ մեծամասնություն էր կազմում ինչպես Ներկայացուցիչների Պալատում, այնպես էլ՝ Սենատում:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական վարքագիծ
- Հարմարվողական (կոնֆորմիստական) վարքագիծ
- Նորարարական (ինովացիոն) վարքագիծ
- Քաղաքական սոցիալականացում
- Քաղաքական մասնակցություն
- Խռովություն
- Կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ մասնակցություն
- Աբսենտեիզմ (հրաժարում քաղաքական գործընթացներին մասնակցությունից)

ՀԱՐՑԵՐ ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է քաղաքական վարքագիծը:
2. Ի՞նչ է քաղաքական սոցիալականացումը:
3. Ի՞նչ է քաղաքական մասնակցությունը:
4. Որո՞նք են քաղաքական վարքագծի տեսակները:
5. Քաղաքական վարքագծի ի՞նչ տեսություններ կան:

6. Քաղաքական սոցիալականացման ի՞նչ մոդելներ կան:
7. Քաղաքական սոցիալականացման ի՞նչ ձևեր կան:
8. Քաղաքական մասնակցության ի՞նչ ձևեր կան:
9. Որո՞նք են քաղաքական մասնակցության տեսությունները:
10. Ի՞նչ է արքենտեիզմը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Շափաղաթյան Հ.** Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, Եր., 2007, 160 էջ:
2. **Օրբրիխանյան Է.** Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խստույթի վերլուծություն. Եր., «Լիմուշ» հրատ., 2010, 228 էջ:
3. **Гончаров Д.** Теория политического участия. Москва, 1997, 208 с.
4. **Соловьев А.** Политология. Политическая теория, политические технологии.: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
5. **Василик М.** Политология. Хрестоматия. М., Гардарики, 2000, 843 с.
6. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водлазова, В.Ю. Вельского. М., 2005, 544 с.
7. **Dahl R.** Polyarchy: Participation and Opposition. New Heaven: Yale University Press, London, 1971, 74 p.
8. **Milbrath L.** Political Participation. Chicago, 1965, 364 p.

ԹԵՄԱ 15. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Միջազգային քաղաքականություն» հասկացությունը: Այն, որ քաղաքականություն իրականացվում է ոչ միայն հասարակության ներսում, այլև նրա սահմաններից դուրս, ժողովուրդը հասկանում էր դեռևս հնագույն ժամանակներում՝ սկսած Հին Հունաստանում քաղաք-պետությունների միջև պատերազմներից և հակամարտություններից: Մակայն միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգն առաջացել է միայն 16-17-րդ դդ. կենտրոնացված պետությունների ձևավորման ժամանակ: Այս գործընթացն իր արտահայտությունն է գտնել Վեստֆալյան հաշտության համաձայնագրում (1648), որը վերջ դրեց Երեսնամյա պատերազմին, և որի համաձայն՝ եվրոպական տերություններն առաջին անգամ պաշտոնապես հռչակեցին պետական ինքնիշխանության սկզբունքը: Հետագայում՝ պետությունների եվրոպական համակարգին միացավ նաև ԱՄՆ-ն, որը 1908 թ. Իսպանիայի նկատմամբ հաղթանակից հետո միջազգային հանրության մոտ ձեռք բերեց գերտերության համբավ, ինչպես նաև Ճապոնիան, որը ստացավ նույն կարգավիճակն այս անգամ արդեն Ռուսաստանի նկատմամբ 1904-1905 թթ. տարած հաղթանակի շնորհիվ: 19-րդ դ. վերջում իմպերիալիզմը և Աֆրիկայում ու Ասիայում «հանուն գաղութների» եվրոպական պայքարը միջազգային համակարգին տվեցին իսկապես համաշխարհային բնույթ:

20-րդ դարը համաշխարհային քաղաքականության ձևավորման կարևորագույն փուլն էր այն առումով, որ պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև հակամարտության ու համագործակցության հարաբերությունը տարածվեց ամբողջ աշխարհում: Առավել դրամատիկ դրսևորում այն ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918), Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945) և «Մառը պատերազմի» ժամանակահատվածներում: 20-րդ դարի ավարտին պարզ դարձավ, որ փոխվել են քաղաքական կյանքի հիմքերը: Առաջացավ քաղաքականությունը ներքին և արտաքին ասպեկտների բաժանելու խնդիր:

Պետությունները, գործելով սեփական սահմաններից դուրս (սահմանների ներսում պետություններն ունեն լիակատար ներքին ինքնիշխանություն), ստիպված են լուծելու նաև մի շարք այլ լրացուցիչ խնդիրներ. սահմանել և ուժեղացնել վերահսկողությունը սեփական տարածքում գործունեություն ծավալող արտաքին ուժերի կամ կառույցների նկատմամբ, պահպանել ամբողջականությունը և անվտանգությունը արտաքին սպառնալիքներից, սովորել համաձայնեցնել սեփական շահերն ավելի ուժեղ մրցակիցների շահերի հետ և այլն: Միջազգային ասպարեզում աստիճանաբար

ստեղծվում և զարգանում էին պետությունների համագործակցության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են՝ դաշնակցային հարաբերությունները և հակամարտությունը, պրոտեկտորատը (հովանավորչություն) և համագործակցությունը և այլն, որոնք ձևավորում էին որոշակի միջպետական կապերի և հարաբերությունների ինքնուրույն տրամաբանություն: Վերջիններին երկարատև պատմական զարգացման ընթացքում՝ ձևավորվեց միջազգային քաղաքականության՝ որպես քաղաքականության ինքնուրույն ուղղության ոլորտը:

Այս և այլ միտումների վերլուծության համար պետք է նախ պարզաբանել բոլոր այն մոտեցումները, դիրքորոշումները, որոնց միջոցով, ընդհանուր առմամբ, ուսումնասիրվում է միջազգային և համաշխարհային քաղաքականությունը: Այս ոլորտում առանձնացնում են հետևյալ հիմնական «դպրոցները»

- իդեալիզմ,
- ռեալիզմ,
- պլյուրալիզմ,
- մարքսիզմ:

Իդեալիզմ: Քաղաքական իդեալիզմի էությունն այն է, որ այն դիտարկում է միջազգային քաղաքականությունը բարոյական արժեքների և նորմերի տեսանկյունից և դրանց շրջանակներում: Քաղաքական իդեալիզմին շատ քիչ են հետաքրքրում էմպիրիկ վերլուծությունները (այսինքն՝ կարևոր չէ, թե ինչպես են պետությունները, ըստ էության, իրականացնում իրենց քաղաքականությունը): Քաղաքական իդեալիզմն առավելապես կարևորում է նորմատիվային ասպեկտները (այսինքն, թե ինչպես պետք է պետություններն իրականացնեն իրենց քաղաքականությունը): Այդ իսկ պատճառով՝ քաղաքական իդեալիզմը երբեմն դիտարկվում է որպես ուսուսյիզմի ենթատեսակ:

Իդեալիստների համոզմունքների հիմքում ընկած է ուժային և ռազմական միջոցներից որպես միջպետական հարաբերությունների կարգավորման մեխանիզմներից հրաժարումը: Նախապատվությունը տրվում է միջազգային իրավունքի համակարգին և ինստիտուտներին: Ուժերի հավասարակշռության փոխարեն՝ իդեալիստները առաջարկում են միջպետական հարաբերությունների կարգավորման մեկ այլ մեխանիզմ, այն է՝ **կոլեկտիվ անվտանգության մեխանիզմը**: Այս գաղափարը հիմնված էր այն ենթադրության վրա, որ բոլոր պետություններն էլ ունեն համանման նպատակներ՝ խաղաղություն և համընդհանուր անվտանգություն, քանի որ ուժային հավասարակշռության անկայունությունը հանգեցնում է ռե-

սուրսների անիմաստ վատնմանը: Նույնիսկ մեկ պետության ագրեսիան մեկ այլ պետության նկատմամբ վնասում է բոլորին:

Պատմության ընթացքում մշակվել են իդեալիստական քաղաքականության բազմաթիվ տեսություններ: Միջնադարում, օրինակ, Թովմա Աքվինացին (1224-1274) խոսում էր «արդար պատերազմի» մասին: Սակայն նա պնդում էր, որ պատերազմը կարող է արդարացված լինել, եթե պահպանվեն հետևյալ երեք պայմանները: Նախ՝ պատերազմ պետք է հայտարարի լիիշխան տիրակալը: Երկրորդ՝ պատերազմի առաջնային նպատակը պետք է լինի կատարված անարդարության շտկումը: Երրորդ՝ պատերազմի ընթացքում չպետք է տուրք տալ դաժանության ու ազախության կրքերին, այլ պետք է պահպանել բարությունը և խուսափել չարից: Հետագայում Իմանուիլ Կանտն առաջ քաշեց *համաշխարհային կառավարություն* ստեղծելու նման մի ծրագիր: Նրա կարծիքով՝ բարոյականությունն ու բանականությունը միաժամանակ մարդուն հիշեցնում են, որ պատերազմ չպետք է լինի, իսկ ապագայում մարդկությանը վիճակված է գալու «ունիվերսալ և հավերժական խաղաղության» գաղափարին:

Իդեալիզմի տեսակներից մեծամասնությունը զուգորդվում է ինտերնացիոնալիզմի՝ սկզբունքի հետ, այսինքն՝ կարևորվում է այն համոզմունքը, որ մարդու գործունեությունը պետք է կազմակերպել ոչ միայն ազգային սկզբունքների, այլև համամարդկային սկզբունքների համաձայն: Այս տեսակետը, իր հերթին, արտացոլվում է այն ենթադրությունում, որ մարդկանց կյանքը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում պետք է կազմակերպված լինի ներդաշնակության և համագործակցության հիման վրա: Իդեալիզմի ամենաազդեցիկ ձևերից մեկը դարձավ լիբերալիզմը: Չնայած այն բանին, որ ազատականները (լիբերալները) ավանդաբար պետությունը դիտարկում են որպես հասարակության քաղաքական կազմակերպման հիմնական միավոր, ճիշտ նույն կերպ, նրանց համար կարևոր է եղել պետությունների փոխկապակցվածությունը և ազատ

* *Ինտերնացիոնալիզմը* վերազգային կամ գլոբալ համագործակցության սկզբունքի տեսական իմաստավորումն է կամ գործնական կիրառումը: Այս սկզբունքի հիմքում ընկած է մարդկային բնության մասին այն պատկերացումը, որը տրամագծորեն հակասում է քաղաքական ազգայնականությանը, առաջին հերթին՝ այն տեսակետին, որ քաղաքական ինքնությունը որոշվում է ազգային պատկանելությամբ: Ինտերնացիոնալիզմի ակունքներն առավելապես մոտ են ազատական և սոցիալիստական ավանդույթներին: Ազատական ինտերնացիոնալիզմի հիմնական սկզբունքն այն է, որ համամարդկային իրավունքներն անհամեմատ ավելի բարձր են ազգի ինքնիշխանությունից: Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը պաշտպանում է համաշխարհային դասային համերաշխության սկզբունքը («պրոլետարական ինտերնացիոնալիզմ»):

առևտուրը. պատերազմը, նրանց կարծիքով, «չի կարող արդարացված լինել»: Այս տիպի ինտերնացիոնալիզմում կարևորվում են նաև հավաքական անվտանգության գաղափարը և միջազգային իրավունքի սկզբունքը, որոնք ամրագրված են այնպիսի կազմակերպությունների կանոնադրություններում, որոնցից է՝ ՄԱԿ-ը: Օրինակ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը պնդում էր, որ Առաջին համաշխարհային պատերազմը ևս արդյունք է բազմազգ կայսրությունների վարած միլիտարիզմի և էքսպանսիոնիզմի «հին քաղաքականության». պատերազմների դեմ լավագույն հակաթույնը կարող է լինել աշխարհում ժողովրդավարական ազգային պետությունների կառուցումը, որոնք ի վիճակի կլինեն համագործակցել փոխադարձ հետաքրքրությունների շրջանակներում և հետաքրքրված չեն լինի պատերազմներով ու թալանով: 1918 թ. ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, ձևակերպելով հետպատերազմյան կարգավորման 14 կետերը, գործնականում հայեցակարգային տեսք տվեց իդեալիստների հայացքներին: Մասնավորապես՝ որպես համաշխարհային քաղաքական հարաբերությունների կարգավորման հիմնական մեխանիզմներ՝ նա առաջարկեց հետևյալը. բաց և խաղաղ բանակցությունների անցկացում, խաղաղ և պատերազմական պայմաններում առևտրի ազատ կազմակերպման ապահովում, ազգային սպառազինության կրճատում անհրաժեշտ և բավարար մինիմումի, որը կհամապատասխանի ազգային անվտանգության ապահովմանը, ազատության և պետական ինքնիշխանության սկզբունքի հիման վրա ցանկացած տեսակի վեճերի անկողմնակալ լուծումը միջազգային կազմակերպությունների կողմից և այլն:

Եվ հենց այդ ժամանակ կարելի է ասել, որ սկզբունքորեն գրեթե առաջին անգամ հնչեց աշխարհում հավաքական անվտանգության համակարգի ստեղծման գաղափարը: Ենթադրվում էր, որ միջպետական վեճերի լուծման համար դատավորը կլինի միջազգային քաղաքական մի մարմին, որին վերապահված կլինի ագրեսորին հավաքական կերպով պատժելու բացառիկ իրավունքը: Սակայն ձևավորված Ազգերի Լիգան, որը մարմնավորում էր արդարության, խաղաղության, կարգ ու կանոնի մարդկանց ձգտումները, չկարողացավ կանխել ԽՍՀՄ-ի ագրեսիան Ֆինլանդիայի դեմ, Իտալիայի ագրեսիան Եթովպիայի դեմ և մի շարք այլ ռազմական հակամարտություններ: Ազգերի Լիգան անգոր գտնվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը կանխելու գործում:

Իդեալիզմի ճակատագիրն անամպ չէր. իդեալիզմը շարունակաբար քննադատվում էր ռեալիզմի տեսաբանների կողմից: Սակայն իդեալիզմը

նոր ուժով վերածնվեց արդեն 20-րդ դարի վերջին նեոիդեալիզմի* տեսքով: Նեոիդեալիզմը գերտերությունների դարաշրջանի անբարո ուժային քաղաքականության արձագանքն էր:

Բայց, թերևս, իդեալիզմի վերածննդի համար առավել հզոր խթան դարձավ այն բանի համընդհանուր գիտակցումը, որ աշխարհը կանգնած է ամբողջական միջուկային ոչնչացման վտանգի առաջ, և որպես դրա արդյունք՝ դիտարկվում էր ռազմական ծախսերի էսկալացիան, որում Արևելքը և Արևմուտքը մրցում էին տասնամյակներով: Սկիզբ առավ խաղաղության համար շարժումը, որ բխում էր խոշորագույն ինտերնացիոնալիստական փիլիսոփայությունից շեշտը դնելով խաղաղասիրության (պացիֆիզմ) վրա՝ սկզբունքորեն մերժելով պատերազմի և բռնության բոլոր ձևերը: Նեոիդեալիզմի գաղափարներն արտացոլվեցին նաև «միջազգային հանրություն» հասկացության մեջ, որի առաջացումը, սովորաբար, կապում են հայտնի ավստրալացի դիվանագետ և գիտնական Ջոն Բերտոնի (1972) անվան հետ: «Համաշխարհային հանրության» հայեցակարգը ենթադրում է, որ ինքնիշխան ազգային պետությունների գաղափարը հնացել է: Այդ պետությունների փոխարինում է բարդ և փոխկապակցված հարաբերությունների մի մոդել, որը Բերտոնը անվանեց «սարդոստայն»: Սրանից, հավանաբար, պետք էր հետևություն անել, որ ավանդական միջազգային քաղաքականությունը պետք է իր տեղը զիջի միջազգային հակամարտությունների լուծման և պետությունների միջև փոխգործակցության ոչ բռնի ձևերին:

Ռեալիզմ: Ռեալիստական ավանդույթը, որը երբեմն անվանում են նաև **քաղաքական ռեալիզմ**, միանգամայն կարելի է համարել միջազգային քաղաքականության ամենահին տեսությունը:

Քաղաքական ռեալիզմի նշանավոր դեմքերից կարելի է համարել Սուն Ցզիին («Պատերազմի արվեստը»), Նիկոլո Մաքիավելլին և Թոմաս Հոբսին: Սակայն քաղաքական ռեալիզմի վերլուծության գերիշխող հարացույցը ձևավորվեց միայն 20-րդ դարում՝ երկու համաշխարհային պատերազմներից հետո և դրանց արդյունքում: Մինչ իդեալիզմը կենտրոնանում է միջազգային հարաբերությունների բարոյական կողմի վրա, քաղաքական ռեալիզմը շեշտը դնում է սեփական շահերի վրա հիմնված պետության

* **Նեոիդեալիզմը** հայեցակարգ է միջազգային հարաբերությունների վերաբերյալ, որն ընդգծում է բարոյականության «գործնական» նշանակությունը, հատկապես՝ մարդու իրավունքների պաշտպանության և պետությունների անկախության սկզբունքները:

ուժային քաղաքականության* վրա: Քաղաքական ռեալիզմի կենտրոնական դիրքորոշումն այն է, որ պետությունը միջազգային ասպարեզում հիմնական դերակատարն է, և, լինելով ինքնիշխան*, պետությունը կարող է գործել անկախ, նույնիսկ ավելին՝ ազգայնականության բարձրացմանը և ժամանակակից ազգ-պետությունների ձևավորմանը համընթաց՝ պետությունը դարձել է սերտ կապերով միահյուսված քաղաքական հանրույթ կամ համայնք, որտեղ ամեն ինչ պետք է ստորադասել ազգի շահերին:

Ռեալիզմի առաջատար տեսաբաններից Է. Կարրը (1939) և Հանս Մորգենթաուն (1948) քննադատում էին մասնավորապես իդեալիզմի հավատը ինտերնացիոնալիզմի և միջազգային հարաբերություններում բնական ներդաշնակության նկատմամբ: Հ. Մորգենթաուն «Քաղաքական հարաբերությունները ազգերի միջև. պայքար հանուն ազդեցության և խաղաղության» գրքում (1948) փորձել է արդարացնել այն միտքը, որ իշխանությունը, որը նա կապում էր մարդկային բնույթի անփոփոխելիության հետ, միջազգային հարթակում պետության վարքագծի հիմքն է: «Միջազգային քաղաքականությունը,- գրում է Մորգենթաուն, ինչպես ցանկացած քաղաքականություն, պայքար է իշխանության համար: Անկախ այն բանից, թե ինչ նպատակներ են հետապնդվում միջազգային քաղաքականության մեջ, միննույն է վերջնական և անմիջական նպատակը պայքարն է հանուն իշխանության:

Է. Կարրը, օրինակ, պնդում է, որ երկու համաշխարհային պատերազմների ժամանակահատվածում միջազգային իրավունքի և կոլեկտիվ անվտանգության նկատմամբ զուր հույսերը պարզապես խոչընդոտեցին Ատ-

* **Ուժի քաղաքականությունը** քաղաքականության վերաբերյալ մոտեցում է՝ հիմնված այն ենթադրության վրա, որ մարդու ձգտումը իշխանության նրան տրված է բնությունից, ի ծնե:

* **Ինքնիշխանությունը** առավել ընդհանուր իմաստով մի հասկացություն է, որն արտահայտում է պետության՝ սեփական սահմանների շրջանակներում բացարձակ և անսահմանափակ իշխանության գաղափարը: Հարկ է, սակայն, տարբերակել իրավական և քաղաքական ինքնիշխանությունը, ինչպես նաև դրանց ներքին և արտաքին ասպեկտները: Իրավական ինքնիշխանությունը վերաբերում է պետության բարձրագույն օրենսդիր իշխանությանը, այսինքն՝ վերջինիս անվերապահ իրավունքը՝ քաղաքացիներից պահանջելու ենթարկվել օրենքների: Քաղաքական ինքնիշխանությունը վերաբերում է պետության անսահմանափակ քաղաքական իշխանությանը, վերջինիս բնություն կիրառելու մենաշնորհին քաղաքացիական հնազանդություն ապահովելու համար: Ինքնիշխանության ներքին կողմը արտացոլում է պետության ներսում բարձրագույն իշխանության գաղափարը, որը բխում է պետության բարձրագույն իշխանության մարմինների գաղափարից, որոնց որոշումները պետության տարածքում համապարտադիր են բոլոր քաղաքացիների, խմբերի և հաստատությունների համար: Ինքնիշխանության արտաքին կողմը վերաբերում է միջազգային համակարգում պետության տեղին և դերին, վերջինիս ունակությանը հանդես գալու այդ համակարգում որպես անկախ ուժ:

լանտիկայի երկու կողմերում քաղաքական գործիչներին գիտակցել գերմանական վտանգը և կասեցնել այն:

Քանի որ ըստ ռեալիստների՝ աշխարհում չկա առավել բարձրագույն իշխանություն, քան ինքնիշխան պետության իշխանությունն է, միջազգային քաղաքականությունն իրականացվում է «բնության օրենքներով», անարխիսիայի օրենքներով, և ոչ՝ ներդաշնակության: Միջազգային համակարգում անարխիսիայի դրսևորումները պայմանավորված են այն հանգամանքով, որ յուրաքանչյուր պետություն մտածում է միայն իր ազգային շահերի մասին, առաջին հերթին՝ հատկապես իր գոյատևման և սեփական սահմանների պաշտպանության մասին: Այստեղ առավելապես կարևորվում է անվտանգության ապահովման հարցը, քանի որ միջազգային հարաբերություններում բարձրագույն դատավորի բացակայության պայմաններում յուրաքանչյուր պետություն ստիպված է առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնել պաշտպանության և անվտանգության խնդիրների վրա: Հետևաբար՝ յուրաքանչյուր պետություն, մրցակցելով այլ պետության կամ պետությունների հետ, ձգտում է ստեղծել ուժերի այնպիսի հավասարակշռություն, որը մրցակցության և ուժի հակադրության պայմաններում հանդես կգա որպես զսպման մեխանիզմ, որի պայմաններում պետությունը կկարողանա ձեռք բերել գերազանցություն այլ պետության նկատմամբ՝ այդպիսով երաշխավորելով իր անվտանգությունը:

Հենց այս հիմքով է, որ ռեալիստները միջազգային հարաբերություններում շեշտը դնում են ուժի գործոնի վրա՝ այն դիտարկելով գլխավորապես ռազմական տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ պետության նման վարքագծի արդարացման համար հիմք կարող է ծառայել 19-րդ դարի հայտնի պրուսական գեներալ Կ. ֆոն Կլաուզեմիցի ընդհանուր ձևակերպումը. «Ցանկանում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի»: Միջազգային անարխիա, այնուամենայնիվ, չի նշանակում մշտական հակամարտություն և հավերժական պատերազմ. նրանք պնդում միայն այն, որ պետությունների համակարգի շրջանակներում հակամարտությունը և համագործակցությունը տեղավորվում են ներկայումս աշխարհում գոյություն ունեցող ուժերի հավասարակշռության (balance of power)* տրամաբանության շրջանակներում: Բացի այդ, հետապնդելով ազգային անվտանգության շահերը, պետությունները միավորվում են տարբեր

* *Ուժերի հավասարակշռությունը (բալանս)* պետությունների միջև համագործակցության մոդել է, որտեղ փոխադարձ ագրեսիայի և էքսպանսիայի հնարավորություններն այնքան սահմանափակ են, որ դրանք «գործնականում» գրեթե անհնար են և ոչ նպատակահարմար:

դաշինքներում և կոալիցիաներում, որոնք նպաստում են ուժերի ավելացմանը, և եթե այդպիսի դաշինքների միջև ձևավորվում է հավասարակշռություն, ապա դա ապահովում է խաղաղություն և միջազգային անվտանգություն: Այս ամենով հանդերձ՝ չպետք է, սակայն, մոռանալ միջազգային համակարգերի դինամիկայի մասին: Երբ խախտվում է ուժերի հավասարակշռությունը, մեծանում է պատերազմի հավանականությունը:

1980-ական թթ. Ուոլջի (1979) և մի շարք այլ տեսաբանների աշխատանքների արդյունքում զարգացում ստացավ *նեոռեալիզմ*^{*} (երբեմն անվանում են «նոր» կամ կառուցվածքային ռեալիզմ): Շարունակելով ուժը դիտարկել որպես միջազգային հարաբերություններում որոշիչ գործոն՝ այս մոտեցման կողմնակիցները համաշխարհային գործընթացները բացատրում են ոչ այնքան պետությունների կողմից հռչակված նպատակների դիրքերից, որքան միջազգային համակարգի կառուցվածքային գործոնների դիրքերից:

Այնուամենայնիվ՝ ռեալիզմը և նեոռեալիզմը ևս ենթարկվեցին հետագա քննադատության: Նրանց հիմնականում քննադատում էին այն հարցում, որ, առանձնացնելով քաղաքականությունը էթիկայից, այդ տեսությունները դրանով էականորեն արդարացնում են ինչպես ռազմական էքսպանսիան, այնպես էլ՝ գերտերությունների հեգեմոն ձգտումները: Քննադատները նաև կարծում էին, որ ուժի քաղաքականությունը ոչ թե ապահովեց խաղաղություն, այլ ամբողջ մոլորակը կանգնեցրեց միջուկային աղետի եզրին:

Ռեալիզմի նկատմամբ քննադատական մոտեցումներն առավելապես սրվեցին սկսած 20-րդ դարի վերջից: Քննադատությունը հետևյալում էր. ռեալիզմը, որպես համաշխարհային քաղաքականության հիմնական դերակատար դիտարկելով պետությանը, չնկատեց միջազգային հարաբերություններում ձևավորվող պլուրալիստական միտումները:

Պլուրալիզմ: Ավանդական իմաստով *պլուրալիզմը* սոցիալ-քաղաքական հայեցակարգ է, որն ընդգծում է այնպիսի գործոնի կարևորությունը, ինչպիսին է՝ տարբեր մրցակցող կառույցների կամ խմբերի միջև ուժի և իշխանության ապակենտրոնացումը: Որպես միջազգային հարաբերությունների հայեցակարգ՝ պլուրալիզմը, ընդգծելով պետությունների «թափանցելիության» հանգամանքը, հանդես եկավ որպես այլընտրանք «պե-

^{*} *Նեոռեալիզմը* հայեցակարգ է միջազգային հարաբերությունների վերաբերյալ, որն էական ուղղումներ է մտցնում ուժային քաղաքականության մոդելի մեջ՝ ընդգծելով միջազգային համակարգում կառուցվածքային սահմանափակումները, այսինքն՝ մատնացույց է անում այն գործոնները և հանգամանքները, որոնք օբյեկտիվորեն սահմանափակում են միջազգային համակարգի մասնակիցների գործունեության ազատությունը:

տականակենտրոն» այն մոդելին, որը որդեգրել էր ռեալիզմը: Ռեալիզմի՝ իր բոլոր թերություններով հանդերձ լուսաբանման համար հիմք կարող է ծառայել Ջոն Բերտոնի՝ «բիլիարդի սեղանի» վերաբերյալ հայտնի դատողությունը: Հենց այս տեսքով, ինչպես բիլիարդի գնդերը սեղանի վրա, որոնք կատարելապես կոշտ օբյեկտներ են և բախվում են իրար՝ այդպիսով շարժում հաղորդելով միմյանց, այսպիսին է ռեալիզմը պատկերացում համաշխարհային քաղաքականությունը: Պյուրալիստների համոզմամբ՝ դա բացարձակապես սխալ է, քանզի այստեղ իսպառ բացակայում են վերագրային դերակատարները, ինչպիսիք են՝ վերագրային կորպորացիաները և ոչ կառավարական կազմակերպությունները, և այստեղ բացակայում է պետությունների փոխկապակցվածության հասկացությունը, հատկապես սնտեսական ոլորտում:

Այս պատճառով պյուրալիզմն առաջարկում է «տարբեր դերակատարների մոդելը», որտեղ ազգային կառավարությունների դերի պատշաճ գիտակցմանը զուգահեռ՝ միաժամանակ ընդգծվում է, որ այսօր միջազգային հարաբերությունները ձևավորվում են տարբեր գործոնների և շահերի խմբերի առավել լայն շրջանակների ազդեցության ներքո, քան նախկինում:

Սա թույլ է տալիս միջազգային հարաբերությունների դերակատարների շարքում ընդգրկել այնպիսի կառույցներ, ինչպիսիք են օրինակ՝ «Գրինփիսը», «Պաղեստինի Ազատագրման Կազմակերպությունը», «Կոկա-Կոլա» ընկերությունը և Վատիկանը: Ի դեպ, պյուրալիզմը կասկածի տակ է դնում միջազգային հարաբերություններում անկախ գործող դերակատարի տեսակետը՝ նշելով, որ համաշխարհային քաղաքականության բոլոր դերակատարները (կառավարական և ոչ կառավարական) գործում են փոխզուգահեռ և հակակշիռների շրջանակներում, ինչը, ընդհանուր առմամբ, բացառում է ցանկացած տեսակի դերակատարի ամբողջական անկախությունը: Նման մտտեցմամբ, օրինակ, վերլուծելով 1962 թ. Կուբայի ճգնաժամը՝ Ալիսոնը (1971) ցույց տվեց, որ կառավարության որոշումները ոչ միշտ են բխում ազգային շահերից, որքան չինտվնիկների բյուրոկրատական միջավայրի քաղաքականությունից:

Եվ վերջում պետք է նշել, որ պյուրալիզմը թույլ տվեց գիտակցել միջազգային հարաբերությունների այնպիսի միտումը, ինչպիսին է՝ ուժային քաղաքականությունից հրաժարումը: Այս մտտեցման կողմնակիցները կարծում են, որ փոխկապակցված աշխարհում շարժումը դեպի համագործակցություն և ինտեգրում (սա առավելապես բնորոշ է Եվրոպային), ի վերջո, կարող է դառնալ համաշխարհային քաղաքականության գլխավոր շարժիչ ուժը:

Մարքսիզմ: Միջազգային հարաբերությունների վերաբերյալ մարքսիստական մեթոդաբանությունը խստագույն տարբերվում է մյուս հարացույցներից: Այդ առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարքսիզմը մեծ ուշադրություն է դարձնում տնտեսական ուժի գործոնին և միջազգային կապիտալի գործունեությանը: Չնայած Մարքսն առավելապես զբաղվում էր ազգային կապիտալիզմի կառույցների խնդրով և հատկապես բուրժուազիայի և պրոլետարիատի միջև թշնամական փոխհարաբերությունների խնդրով՝ նրա աշխատանքները վերաբերել են նաև միջազգային հարաբերություններին: Բավական է միայն հիշել Մարքսի այն հայեցակարգը, ըստ որի՝ բանվոր դասակարգի համերաշխությունը ազգային սահմաններ չի ճանաչում: 1848 թ. Կոմունիստական կուսակցության մանիֆեստն ավարտվեց հետևյալ կոչով՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միավորվե՛ք»: Մինչ ազատական և ռեալիստական տեսությունները կարծում են, որ իշխանությունն աշխարհում կազմակերպվում է ուղղահայաց, ինչով էլ պայմանավորված է աշխարհում պետությունների ներկայիս հիերարխիան, մարքսիզմն առաջ քաշեց իշխանության կազմակերպման հորիզոնական գաղափարը, որի հիմքը միջազգային դասն է: Սակայն կապիտալիզմը, որպես համաշխարհային համակարգ, չէր ուսումնասիրվել բոլոր կողմերից, մինչև որ չհայտնվեց Լենինի «Իմպերիալիզմը»^{*} որպես կապիտալիզմի բարձրագույն աստիճան» (1917) գիրքը: Լենինը փորձեց ապացուցել, որ կապիտալիզմի արտահանումն ազգային սահմաններից դուրս պայմանավորված է շահույթի ապահովման նպատակով կապիտալի արտահանմամբ, իսկ սա էլ, իր հերթին, կապիտալիստական պետությունների միջև բախում է առաջացնում, որի արդյունքում էլ հենց տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմը՝ իմպերիալիստա-

^{*} **Իմպերիալիզմը** լայն իմաստով պետության քաղաքականությունն է՝ ընդլայնելու իր իշխանությունը սեփական տարածքի սահմաններից դուրս: Այս եզրույթի սկզբնական կիրառումը վերաբերում էր ազգայնականության կամ ռասիզմի կարգախոսներով ռազմական էքսպանսիայի և կայսերական բռնազավթումների գաղափարախոսության արդարացմանը: Այսօր «իմպերիալիզմ» եզրույթը հաճախ օգտագործվում է նկարագրելու քաղաքական և տնտեսական գերիշխանության համակարգերը, որոնք ստեղծվել են նախորդ իմպերիալիստական քաղաքականության հետևանքով: Մարքսիզմի մեկնաբանությամբ՝ իմպերիալիզմը տնտեսական երևույթ է: Իսկ նեոմարքսիզմը կարևորում է իմպերիալիզմի ավելի խոր և ոչ ակնհայտ ձևերը՝ դրանք սահմանելով «նեոգաղութատիրություն» հայեցակարգով: Սա մի իրավիճակ է, երբ զարգացած երկրները վերահսկում են իրենցից կախվածության մեջ գտնվող տարածքները՝ օգտագործելով տնտեսական լծակները՝ առանց խախտելու այդ երկրների անկախության ձևական սկզբունքները: Իսկ ռեալիզմի կողմնակիցները, ընդհակառակը, իմպերիալիզմը դիտարկում են որպես գուտ քաղաքական երևույթ, երբ պետությունները էքսպանսիայի և նվաճման միջոցով փորձում են ուժեղացնել և ամրապնդել իրենց ռազմավարական դիրքերը մյուս պետությունների նկատմամբ:

կան պատերազմը, քանի որ դա պատերազմ էր հանուն գաղութների նկատմամբ վերահսկողության Աֆրիկայում, Ասիայում և աշխարհի այլ մասերում:

Ժամանակակից մարքսիստները կամ նեոմարքսիստները, ըստ էության, հրաժարվեցին Մարքսի ու Լենինի դասական մոդելից: Պատճառը հիմնականում այն էր, որ իմպերիալիզմը 20-րդ դարի սկզբին չհանգեցրեց կապիտալիզմի ամենաբարձր ձևին. անընդունելի էր նաև այն նեղ և սահմանափակ դիրքորոշումը, որ պետության քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան կապիտալի շահերի պարզ արտացոլումը: Ընդունելով պետության «հարաբերական անկախության» գաղափարը՝ մարքսիստները, փաստորեն, մոտեցան պյուրալիզմի սկզբունքներին, համաձայն որոնց՝ համաշխարհային թատերաբեմում կենսագործում են մի շարք ուժեր՝ ենթազգային, ազգային և վերազգային: Մակայն նեոմարքսիստական մոտեցման հիմնական առանձնահատկությունը հետևյալն է. այն դեպքում, երբ դասական մարքսիզմը շեշտը դնում էր ազգային «կապիտալիզմների» միջև մրցակցության վրա, նեոմարքսիզմը կենտրոնանում է այն հանգամանքի վրա, թե 20-րդ դարում ինչպես է զարգացել գլոբալ կապիտալիստական համակարգը:

Համաձայն *նեոմարքսիզմի*, այս համակարգի հիմնական առանձնահատկությունը բազմազգ կորպորացիաների ցանցերի տեսքով միջազգային մակարդակում դասային շահերի կազմակերպումն է: Ենթադրվում է, որ կորպորացիաները ոչ միայն պարզապես դուրս մղեցին ինքնիշխան պետություններին համաշխարհային քաղաքականության ասպարեզից, այլև այդ կորպորացիաները, ինչպես ինքնիշխան պետություններն ու միջազգային կազմակերպությունները կենսագործում են համաշխարհային կապիտալիզմի երկարաժամկետ շահերը սպասարկող համակարգի շրջանակներում: Ըստ նեոմարքսիզմի՝ արտադրության այս գլոբալ համակարգն ունի խիստ կանոնակարգված բնույթ. այստեղ աշխարհը բաժանված է «կենտրոնի» և «ծայրամասի»: «Կենտրոնը», իսկ դա ոչ այլ ինչ է, քան զարգացած Արևմուտքը, պահպանում է իր զարգացման բարձր մակարդակը տեխնոլոգիական նորարարությունների և բարձր մակարդակով համակարգված ներդրումների միջոցով: Իսկ «ծայրամասը»՝ թույլ զարգացած Հարավը, ծառայում է որպես էժան աշխատուժի և հումքի աղբյուր: Այս գլոբալ անհավասարությունն իր արտացոլում ունի նաև պետության ներսում, արդեն ազգային տնտեսությունների մակարդակով, որտեղ մարզային «կենտրոնները» ինտեգրված են համաշխարհային տնտեսությանը, իսկ ծայրամասային շրջանները հազիվ պահպանում են իրենց թշվառ գոյությունը:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քաղաքական իդեալիզմ
- Քաղաքական ռեալիզմ
- Քաղաքական պլյուրալիզմ
- Մարքսիզմ
- Գերտերություն
- Ուժի քաղաքականություն
- Ուժերի հավասարակշռություն (բալանս)

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Միջազգային քաղաքականության ի՞նչ դպրոցներ գոյություն ունեն:
2. Ո՞րն է միջազգային քաղաքականության իդեալիստական մոտեցումը:
3. Ո՞րն է միջազգային քաղաքականության ռեալիստական մոտեցումը:
4. Ո՞րն է միջազգային քաղաքականության պլյուրալիստական մոտեցումը:
5. Ո՞րն է միջազգային քաղաքականության մարքսիստական մոտեցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Շիրինյան Լ.* Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, 208 էջ:
2. *Антология мировой политической мысли.* Т. 2. Зарубежная политическая мысль. XX век М., 1997, 831с.
3. *Ирхин Ю., Зотов В., Зотова Л.* Политология. Учебник. М., 2002, 511 с.
4. *Лебедева М.* Мировая политика, М., 2007, 365 с.
5. *Мельвиль А.* Категории политической науки. М., Московский государственный институт международных отношений (Университет) МИД РФ, (РОССПЭН), 2002, 656 с.
6. *Мухаев Р.* Политология. Учебник для студентов юридических и гуманитарных факультетов. М., ПРИОР, 2000, 400 с.
7. *Соловьев А.* Политология. Политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.
8. *Хейвуд Э.* Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544с.

ԹԵՄԱ 16. ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄ

20-րդ դարի ավարտը մարդկության մոտ ձևավորեց գիտակցություն այն մասին, որ աշխարհը, ինչպես կասեր Մարշալ Մաքլուհենը, դարձել է մի մեծ «գլոբալ համայնք»: Գլոբալացումը ամբողջությամբ փոխեց մեր պատկերացումները քաղաքականության և քաղաքական հարաբերությունների էության վերաբերյալ: Քաղաքականության ավանդական ընկալումը առաջին հերթին «կապված» է պետության հետ. հենց պետությունն էր համարվում քաղաքականության հիմնական դերակատարը, իսկ քաղաքական վերլուծության ուշադրության կենտրոնում էր գտնվում զուտ պետության գործունեության ազգային մակարդակը: Այս մոտեցումը, բնականաբար, հստակորեն տարբերակում էր ներքին և արտաքին քաղաքականությունը, այսինքն՝ այն, թե ինչ է տեղի ունենում ազգային պետության շրջանակներում, և թե ինչ է կատարվում նրա սահմաններից դուրս: Վերջինիս դեպքում նմանատիպ քաղաքական գործընթացները բացատրելու համար օգնության է գալիս մի նոր և զարգացող գիտաճյուղ՝ «միջազգային հարաբերությունները»: Գլոբալացումը, սակայն, ստվերեց (ումանք կասեն նույնիսկ ջնջեց) «ներքինի» և «արտաքինի» միջև սահմանները՝ ուղղորդելով մարդկությանը դեպի մեկ միասնական «գլոբալ հասարակություն»: Չնայած ազգային պետությունը շարունակում է համաաշխարհային թատերաբեմում մնալ կարևորագույն և առաջատար դերակատարը, այնուամենայնիվ՝ միանգամայն անհնար է ժխտել, որ այսօր կայուն կերպով աճում է միջազգային և վերազգային կառույցների դերն ու նշանակությունը:

Գլոբալացման գործոնները և միտումները: Գլոբալացումը բարդ երևույթ է, և, եթե կարելի է ասել, շատ «նենգ» հայեցակարգ:

Գլոբալացման գլխավոր հիմնախնդիրը, ըստ էության, այն է, որ այստեղից անհնար է առանձնացնել մեկ բան, իսկ հետո ասել. «Ահա սա է գլոբալացումը», քանի որ դա ոչ թե մեկ, այլ բազմաթիվ գործընթացների ամբողջություն է. երբեմն հատվող և միմյանց վրա կառուցվող, երբեմն փոխհակասող, տրամագծորեն տարբեր, երբեմն էլ՝ փոխլրացնող: Այստեղ առանձնացնել որևէ մեկ երևույթ կամ գործընթաց հնարավոր չէ. միգուցե բացառությամբ Կենիչի Օհմայի (1989) «աշխարհի առանց սահմանների» գաղափարը: Խոսքը ոչ միայն սովորական քաղաքական, ազգային ու պետական սահմանների փոխթափանցելիության մասին է, այլև այն մասին, որ այն կյանքը, որտեղ մարդիկ առանձնացված էին ժամանակի և տարածության մեջ, կարծես թե մնում է անցյալում: Այս առիթով Շոլտեն ասում է (2000). «Գլոբալացումը կառուցված է մարդկանց միջև «արտատարածքային» հարաբերությունների վրա, ինչպես նաև տարածքի նոր կազմաձևման վրա,

որտեղ տարածությունը կարծես թե կրճատվում է, որտեղ հարաբերությունների աճող մեծամասնությունը ձեռք է բերում «անդրսահմանային» բնույթ»։ Օրինակ՝ համակարգչի մեկ սեղմակի միջոցով աստղաբաշխական գունարները փոխանցվում են ամբողջ աշխարհում այնպես, որ արժույթի և տարբեր այլ ֆինանսական շուկաները կայծակնային արագությամբ արձագանքում են բոլոր տնտեսական իրադարձություններին։ Համանման կերպով՝ մալուխային և արբանյակային տեխնոլոգիաներն ամբողջ աշխարհում ապահովում են հեռախոսային հաղորդագրությունների փոխանցումը և հեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը։

Գլոբալացումը կարելի է դիտարկել տնտեսական, մշակութային և քաղաքական հարթություններում։ Տնտեսական գլոբալացման հայեցակարգը հիմնված է այն վարկածի վրա, որ այսօր ազգային տնտեսությունը, պատկերավոր ասած, առանձին կղզի չէ. աշխարհում բոլոր տնտեսություններն էլ շատ, թե քիչ ընդգրկված են համաշխարհային տնտեսության մեջ։

Կոմունիզմի անկումը մեծ արագացում հաղորդեց գլոբալացմանը. գլոբալ կապիտալիստական համակարգն իր մեջ կլանեց վերջին խոշոր բոկի երկրները, որոնք մինչ այդ «դուրս էին մնացել» կապիտալիզմի սահմաններից։ Կարելի է ենթադրել, որ տնտեսական գլոբալացումն իր հերթին ևս նպաստեց կոմունիզմի փլուզմանը։ Արդյունքում՝ թուլացան կառավարության դիրքերը տնտեսության կառավարման ոլորտում, ինչը ևս գլոբալացման անխուսափելի հետևանքն է։

Մշակութային գլոբալացումը ստեղծում է պայմաններ, որոնց արդյունքում տեղեկատվությունը, ապրանքներն ու ծառայությունները, որոնք արտադրվում են աշխարհի այս կամ այն ծայրում, միավորվում են միասնական գլոբալ հոսքի մեջ, ինչի հետևանքով ժողովուրդների, տարածաշրջանների և մարդկանց միջև մշակութային տարբերությունները առավել կամ նվազ չափով համահարթեցվում են։ Այս գործընթացի շարժիչ ուժը տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխությունն է, արբանյակային կապի տարածումը, հեռահաղորդակցության ցանցերը, ինտերնետը և տեղեկատվական տեխնոլոգիաների այլ ձևերը, գլոբալ տեղեկատվական գործակալությունները, այլ կերպ ասած՝ **գլոբալ տեղեկատվական հասարակության***

* 20-րդ դարում սկիզբ առած տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխությունը ուղենշում է մարդկության զարգացումը դեպի նոր տեղեկատվական հասարակություն։ Ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները արմատապես վերափոխեցին մարդկային կազմակերպման տարածքային, քաղաքական, տնտեսական, մշակութային սահմանները։ Գլոբալ հեռահաղորդակցության ցանցերի համակարգը իրար է կապում և փոխներթափանցում է ավանդական ազգային, քաղաքական, տնտեսական, մշակութային սահմանները՝ որակապես վերաձևելով ողջ հասարակության հյուսվածքը։

աստիճանական ձևավորումը: Հարկ է սակայն նշել, որ մշակույթը ինչպես նպաստում է գլոբալացմանը, այնպես էլ հակադրվում է դրան: Բնավ, բավական չէ միայն արտադրել հովիվության ֆիլմեր և հաղորդումներ, հեղեղել շուկան սպորտային համազգեստների հայտնի բրենդներով և այլն. նույնիսկ ամբողջ աշխարհում այս ամենը վաճառելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տեղական ճաշակը, սովորույթները և, ընդհանրապես, տեղական մշակույթը:

Ինչ վերաբերում է *քաղաքական գլոբալացմանը*, ապա այն հիմնականում պայմանավորված է միջազգային կազմակերպությունների աճող կարևորության հետ: Այդ կազմակերպությունները պետք է հստակորեն դասակարգել: Գոյություն ունեն վերազգային կազմակերպություններ, որոնք իրենց լիազորություններն իրականացնում են ոչ թե կոնկրետ պետության ներսում, այլ մի շարք պետություններում: Այս տիպի կազմակերպությունների մեծ մասն ի հայտ է եկել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրանք են՝ ՄԱԿ-ը, Եվրոպական Տնտեսական Համայնքը և վերջինիս իրավահաջորդներ՝ Եվրոպական Համայնքը և Եվրամիությունը, Համաշխարհային Բանկը, Արժույթի Միջազգային Հիմնադրամը, (ԱՄՀ), Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունը (ՏՀԶԿ) և Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ): Միջազգային կազմակերպությունները բավարարում են միջկառավարական հարաբերությունների սկզբունքներին, կառավարություններին տրամադրում են մեխանիզմներ, գոնե տեսականորեն, ձեռնարկելու համաձայնեցված գործողություններ՝ ոչ ինքնիշխանության հաշվին: Ի տարբերություն դրանց՝ վերազգային մարմինները իրավասու են ազգային պետություններին թելադրել այս կամ այն որոշումը: Բացի այդ, արտացոլելով իր ավատարմությունը ինտերնացիոնալիզմին և համաշխարհային կառավարության գաղափարին՝ քաղաքական գլոբալացումը, եթե կարելի է այսպես արտահայտվել, հետ է մնում տնտեսական և մշակութային գլոբալացումից, քանի որ այսօր կարելի է խոսել ոչ այնքան համաշխարհային կառավարության, որը ինչ-որ հեռավոր մի բան է, այլ, թերևս, գլոբալ քաղաքացիական հասարակության մասին, որը ներառում է վերազգային կորպորացիաների, ոչ կառավարական կազմակերպությունների և միջազգային ճնշման խմբերի գործունեությունը:

Գլոբալացում. հայեցակարգեր և բանավեճեր: Այսօր գլոբալացման շուրջ գոյություն ունեն մի շարք հարցեր: Բազմաթիվ կառավարություններ և առաջատար քաղաքական կուսակցություններ ամբողջությամբ կիսում են գլոբալացման փիլիսոփայությունը՝ ձգտելով օգտվել նոր գլոբալ տնտեսության հնարավորություններից: Մյուս կողմից՝ ոչ միայն զարգա-

ցած երկրներում, այլև զարգացող երկրներում ձևավորվել են հակազլոբալիստական շարժումներ: Որոշ առումներով գլոբալացման կողմնակիցների և հակառակորդների տարանջատումն այսօր փոխարինել է աջերի և ձախերի նախկին բաժանմանը, որը ժամանակին հիմնված էր կապիտալիզմի և սոցիալիզմի միջև գաղափարական պայքարի վրա: Ումանք նույնիսկ կարծում են, որ գլոբալացման վերաբերյալ այս կողմ և դեմ բանավեճերը, ըստ էության, ոչ այլ ինչ են, քան կապիտալիզմի վերաբերյալ հին ու նոր բանավեճերի կրկնություն, քանի որ բոլոր հարցերը, ըստ էության, կապված են շուկայի և առևտրի հետ: Մի խոսքով՝ հիմնական խնդիրը շարունակում է մնալ կապիտալիզմը: Գլոբալացման կողմնակիցները (նրանց նաև անվանում են *գլոբալիստներ*) պնդում են, որ կապիտալիզմն իր հետ բերում է բարգավաճում, բազմաթիվ հնարավորություններ, և աշխարհի շատ երկրներում մեծ թվով մարդիկ կարող են օգտվել գլոբալացման հնարավորություններից: Գլոբալացման քննադատները (հակազլոբալիստներ), իրենց հերթին, կարծում են, որ կապիտալիզմը համարժեք է անհավասարության և շահագործման: Գլոբալացման արդյունքում պարզապես առաջանում են աղքատության, անհավասարության և անարդարության նոր ձևեր:

Գլոբալացման վերաբերյալ քննարկումներում առավել հնչեղ հարցն այն է, թե վերջ ի վերջո գլոբալացում կա՞, թե ոչ: Եվ եթե կա, ապա որո՞նք են դրա շարժիչ ուժերը: Նրանք, ովքեր «հավատում» են գլոբալացման գոյությանը (անկախ այն բանից՝ «կողմ» են գլոբալացմանը, թե «դեմ»), պնդում են, որ այս հայեցակարգի ձեռքբերումն այն է, որ այն ուշադրություն է հրավիրում աշխարհում կարևորագույն, նույնիսկ հեղափոխական տնտեսական, մշակութային, տեխնոլոգիական և քաղաքական փոփոխությունների վրա: Գլխավորն այս ամենում համաշխարհային առևտրի անհավանական կերպով աճող մակարդակն է, ֆինանսական և արժույթային գործարքների ծավալի կտրուկ աճը, նորագույն տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների յուրացումը, որոնք ապահովում են ակնթարթային հասանելիություն ամբողջ աշխարհի տեղեկատվական ռեսուրսներին, և, վերջապես, նոր տեսակի ապրանքների մուտքը շուկա, որոնք գործնականում վաճառվում և օգտագործվում են ամբողջ աշխարհում: Այսօր, նույնիսկ խոսում են *հիպերգլոբալացման* մասին, որը կարելի է բնութագրել որպես տեխնոլոգիական դետերմինիզմի ծայրահեղ ձև, ըստ որի՝ նորագույն տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ համակարգչայնացված ֆինանսական առևտուրը, արբանյակային կապը, բջջային հեռախոսակապը և ինտերնետը, անխուսափելիորեն ծնում են մշակութային և տնտեսական նոր մոդելներ գլոբալ մասշտաբով: Չպետք

է, սակայն, անուշադրության մատնել հակառակ իրողությունները, երբ գլոբալացման տեմպերը 1990-ական թվականներից ի վեր սկսեցին զգալիորեն նվազել, իսկ ապա 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո լիովին դանդաղեցին, երբ գլոբալ տնտեսությունը անկում ապրեց, իսկ պետությունների միջև հարաբերություններում ի հայտ եկավ այնպիսի գործոն, ինչպիսին է՝ անվտանգության միջոցառումների դերի բարձրացումը:

Իրենց հերթին, նրանք, ովքեր «չեն հավատում» գլոբալացման գաղափարին, (ամենից հաճախ դրանք քաղաքագիտության մեջ «ձախ» ավանդույթի ներկայացուցիչներն են), պնդում են, որ գլոբալացման գաղափարի մեջ բացարձակապես ոչ մի նոր բան չկա կամ էլ դրա նշանակությունը չափազանցված է զուտ քաղաքական դրդապատճառներով: Դեռևս 19-րդ դարի կեսին Կարլ Մարքսը, ում այսօր ավելի շուտ համարում են որպես գլոբալացման առաջին տեսաբան, ոչ թե դասակարգային պայքարի գաղափարախոս, նշում էր կապիտալիզմի միջազգային բնույթի մասին: 20-րդ դարի սկզբին Ջ.Ա. Շոբսոնը (1858-1940) և Լենինը նույնպես գրել են կապիտալիզմի և իմպերիալիզմի ներքին համարժեքության մասին: Ավելին՝ հոռետեսները մատնանշում էին այն փաստը, որ անկախ այն բանից, թե որքան մեծ էին համաշխարհային առևտրի ծավալները՝ սկսած 19-րդ դարի վերջերից, նույնիսկ այսօր ազգային պետությունների սահմաններում տնտեսական ակտիվությունը իր ծավալով զգալիորեն գերազանցում է անդրսահմանային տնտեսության մասշտաբները: Այլ կերպ ասած՝ ազգային տնտեսությունները դեռ երկար ժամանակ հնարավոր չի լինի հաշվից դուրս թողնել, ինչպես դա անում են գլոբալացման տեսաբանները: Հետևաբար, ի վերջո, այս համատեքստում պարզ է դառնում, որ գլոբալացումը ոչ թե տեխնոլոգիական կամ տնտեսական հեղափոխական ուժ է, այլ պարզապես գաղափարական թիկնոց այն քաղաքական գործիչների և տեսաբանների համար, ովքեր հավատարիմ են մնում նեոլիբերալ տնտեսության սկզբունքներին և սպասարկում են խոշոր բիզնեսի շահերը (Հըրսթ և Թոմսոն, 1999): Գլոբալացման վերաբերյալ այս բոլոր քննարկումները նրանց ձեռնտու են երկու պատճառով: Նախ՝ նրանք արդարացնում են այնպիսի գործընթացները, ինչպիսիք են՝ աշխատանքի շահագործման նոր ձևերը, արհմիությունների դերի թուլացումը, սոցիալական ծախսերի կրճատումը, հատկապես՝ սոցիալական նպաստների կրճատումը, և երկրորդ՝ այդ գործընթացները բացատրում են ոչ թե մեծ բիզնեսի գործունեությամբ, որի շահերը նրանք կիսում են, այլ ինչ-որ անդեմ մի ուժի, այն է՝ գլոբալացման գործոնով:

Սակայն ամենաթեժ քննարկման թեման գլոբալացման ազդեցության հարցն է սոցիալական և տնտեսական հավասարության հարաբերության

վրա: Գլոբալացման քննադատները մատնանշում են անհավասարության բոլորովին նոր, բայց արդեն խորապես արմատացած ձևերի առաջացման մասին: Գլոբալացումը, նրանց կարծիքով, խաղ է հաղթողների և պարտվողների միջև, որտեղ հաղթողները բազմազգ կորպորացիաներն են և բոլոր արդյունաբերական զարգացած երկրները՝ ԱՄՆ գլխավորությամբ, իսկ պարտվողները՝ զարգացող երկրներն են աշխատանքի վարձատրման ցածր մակարդակով, բիզնեսի՝ նվազագույն կամ նույնիսկ գոյություն չունեցող կարգավորմամբ և արտադրության այնպիսի ձևերով, որոնք նախատեսված են առավելապես ներքին, այլ ոչ արտաքին շուկայի համար: Այն ժամանակ, երբ 1980-90-ական թվականներին ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի տնտեսությունները՝ հիմնված գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի վրա, զարգանում էին կայուն ձևով, աշխարհի ամենաաղքատ երկրներում սկսվեց կենսամակարդակի բացարձակ անկում, հատկապես Աֆրիկայում՝ Սահարայից դեպի հարավ, որտեղ բնակչության 40%-ը ապրում էր աղքատության շեմից ցածր պայմաններում: Կապիտալիզմի շահագործող բնույթի վերաբերյալ մարքսիստական ոգով Վալեր-շտայնը (1984) բացահայտեց տնտեսական և քաղաքական զարգացման անհավասարության կառուցվածքային այն պայմանները, որոնք հանգեցրին համաշխարհային տնտեսական համակարգի «կենտրոնի» և նրա «ծայրամասի» միջև անջրպետի խորացմանը: Դրանից հետո աշխարհը սկսեց ավելի քիչ խոսել Արևելքի և Արևմուտքի միջև գլոբալ հակամարտության մասին և ավելի հաճախ՝ Հյուսիսի և Հարավի միջև առճակատման կամ հակադրության* մասին:

* «Հյուսիս և Հարավ հակադրություն» արտահայտությունը շրջանառության մեջ մտավ, այսպես կոչված, «Հյուսիս-Հարավ. գոյատևման ծրագիր» (1980թ.) և «Հյուսիսի ու Հարավի համագործակցությունը հանուն աշխարհի զարգացման» (1983թ.) «Բրանդտի զեկույցներ» հրապարակումով: Աշխարհի բաժանումը «Հյուսիսի» և «Հարավի» արտացոլում է այս շրջաններում արդյունաբերական զարգացման տարբերությունները: Այն դեպքում, երբ արդյունաբերության առյուծի բաժինը կենտրոնացած է Հյուսիսային կիսագնդում, Հարավային կիսագնդում հիմնականում գերակշռում են չքավորությունը և ավերակները: Ընդ որում՝ այստեղ «Հյուսիս» և «Հարավ» եզրույթներն ունեն ոչ թե աշխարհագրական, այլ հայեցակարգային նշանակություն: Այս հայեցակարգը նախատեսված է հրավիրելու աշխարհի ուշադրությունը այն մեխանիզմների վրա, որոնց միջոցով զարգացող երկրներին տրվող աջակցությունը, «երրորդ աշխարհի» պարտքերը և բազմազգ կորպորացիաների գործունեությունը միայն ամրապնդում են հսկայական ներդրումներով և արդյունաբերականացման ամենաբարձր աստիճանով Հյուսիսի և, ընդհակառակը, աշխատանքի վարձատրության ամենացածր մակարդակով, թշվառ ներդրումներով և առավելապես ագրարային տնտեսությամբ Հարավի միջև կառուցվածքային անհավասարությունը: Պետք է նշել, որ «Բրանդտի զեկույցներում» նշվում էր Հյուսիսի և Հարավի փոխկապակցվածության մասին, ընդ որում՝ հատուկ շեշտադրվում էր այն, որ երկա-

Գլոբալիստները, սակայն, հակադրվում են այս գաղափարին հետևյալ կերպ. այո, միգրացե, հարուստներն իսկապես դարձել են ավելի հարուստ, բայց աղքատներն էլ այսօր այնքան աղքատ չեն, ինչպես նախկինում: Լիբերալիզմի հետևորդները միայն ողջունում են համաշխարհային տնտեսության ձևավորումը այն համոզմունքով, որ ազատ առևտուրը թույլ է տալիս յուրաքանչյուր երկրի մասնագիտանալ այն ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտում, որոնք իրենց համար ավելի հեշտ է արտադրել, իսկ դա հանգեցնում է աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը և ձեռնտու է բոլորին: Օրինակ, շարունակում են նրանք, արտադրության տեղափոխումը զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ շահավետ է և՛ մեկի, և՛ մյուսի համար: Առաջինները շահում են, քանի որ այդ կերպ նրանք կրճատում են արտադրական ծախսերը և նվազեցնում գները, իսկ մյուսներն էլ շահում են, քանի որ նրանց մոտ էլ աճում է, թեկուզ շատ քիչ, աշխատանքի վարձատրությունը, որը խթանում է ազգային տնտեսության զարգացումը և ձեռներեցությունը: Այս տեսանկյունից, ի վերջո, հետևում է, որ գլոբալացումից օգուտ չեն ստանում միայն այն երկրները կամ աշխարհի այն անկյունները, որոնք դուրս են մնացել վերջինիս սահմաններից:

Սակայն գլոբալացման վերաբերյալ քննարկման առաջնային թեման, այնուամենայնիվ, կապված է ժողովրդավարության հետ: Էնտուզիաստները գլոբալացումը դիտարկում են որպես ամբողջ աշխարհում ժողովրդավարացմանը նպաստող ամենաուժեղ գործոն, իսկ առավել լավատեսները, օրինակ՝ Ֆ. Ֆուկույաման, նույնիսկ պնդում են, որ դա հանգեցնելու է «պատմության վերջին» այն իմաստով, որ շուկայական կապիտալիզմի տարածումը ուղեկցվում է ազատական-ժողովրդավարական սկզբունքների ու կառույցների համընդհանուր ընդունման գործընթացով: Այս ամենում առկա է այն գաղափարը, որ տնտեսական ազատությունը անքակտելիորեն կապված է քաղաքական ազատության հետ, քանի որ շուկայական տնտեսության առաջացրած բարդ և բազմազան գործընթացները կարող է վերահսկել միայն բաց և ժողովրդավարական հասարակությունը:

Ռեզինսլացում (տարածաշրջայնացում): Որոշ տեսաբաններ գլոբալացման մեջ տեսնում են համագոյակցության և ներդաշնակության միտում, որն ուժեղացնում և ամրապնդում է տնտեսական և քաղաքական փոխկախվածությունը աշխարհի տարբեր մասերի միջև: Կա, սակայն, մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ գլոբալացման գործընթացները ստեղծում

ըստման հետևանքում առաջինի բարեկեցությունը ուղղակիորեն կախված է վերջինիս զարգացումից:

են նոր հակասություններ ու հակամարտություններ: Այդ միտումները ակնհայտորեն տեսանելի են ազգային կառավարման մոդելների արդյունավետության նվազեցման և ռեգիոնալացման ամրապնդման տեսանկյունից: Քանի որ ավանդական ազգային պետության համար այլևս ավելի ու ավելի դժվար է ապահովել հասարակության անվտանգությունը, կայունությունը և տնտեսական բարեկեցությունը, ապա այդ խնդիրների լուծումը տեղափոխվում է արդեն հարևան կամ աշխարհագրորեն մոտ պետությունների համագործակցության շրջանակներ: Այնուամենայնիվ, գլոբալացման և ռեգիոնալացման կապը դեռևս ամբողջությամբ պարզ չէ:

Որպես ռեգիոնալացման շարժիչ ուժեր պետք է դիտարկել ռազմավարական, տնտեսական և, թերևս, մշակութային գործոնները: Տարածաշրջանային կազմակերպությունները առաջացան անմիջապես 1945 թ.-ից հետո՝ դառնալով «սառը պատերազմից» առաջացած որոշ ռազմավարական հակասությունների արտահայտությունը: Այդ կազմակերպություններից առավել կարևորներն էին ՆԱՏՕ-ն և Վարշավայի Պայմանագրի Երկրների Կազմակերպությունը, թեև հետագայում ձևավորվեցին նաև այլ կառույցներ, օրինակ՝ Հարավ-Արևելյան Ասիայի Պայմանագրի Երկրների Կազմակերպությունը (ՇԵԱՊՕ): Մինչև կոմունիզմի փլուզումը՝ 1989-1991 թթ., ՆԱՏՕ-ն և Վարշավյան Պայմանագիրը, թերևս, այնքան էլ ակտիվ չէին, որոնք ավելի շուտ ռազմական ջրբաժանի դեր էին կատարում ԱՄՆ գլխավորությամբ Արևմուտքի և ԽՍՀՄ գլխավորությամբ Արևելքի միջև: Պետություններից որևէ մեկը չէր միջամտում մյուսի ազդեցության ոլորտին (օրինակ՝ ՆԱՏՕ-ն ձեռնպահ մնաց միջամտելու այն իրադարձություններին, երբ Վարշավյան Պայմանագրի երկրների զորքերը ճնշեցին Հունգարիայում ապստամբությունը, իսկ Խորհրդային Միությունն էլ, իր հերթին, չմիջամտեց Վիետնամի պատերազմին): Բացի այդ՝ այս երկու բլոկների միջև ձևավորվել էր որոշակի ռազմական հավասարակշռություն (պարիտետ)՝ պայմանավորված միջուկային զենքով: «Սառը պատերազմի» ավարտից հետո ՆԱՏՕ-ն մնաց տարածաշրջանային մասշտաբով միակ խոշոր ռազմական կազմակերպությունը, ինչն էլ արմատապես փոխեց վերջինիս դերն ու նպատակները:

Սակայն այսօր ՆԱՏՕ-ն ընդլայնվում է, և նախկին Վարշավյան Պայմանագրի պետությունները մեկը մյուսի հետևից անդամակցում են ՆԱՏՕ-ին, և դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ պետությունները ցանկանում են ապահովել իրենց ռազմական և քաղաքական անկախությունը Ռուսաստանից: Բացի այդ՝ ՆԱՏՕ-ի՝ զուտ ռազմական բնույթի գործառնություններն այսօր փոխարինվում են մարդասիրական միջամտության (ինտերվենցիա) և խաղաղապահության ռազմավարությամբ,

թեն, ինչպես ցույց է տալիս 1999 թ.-ին Կոսովոյում մարդասիրական միջամտության ընթացքը, դա, բնավ, չի բացառում ավանդական պատերազմական գործողությունները:

Սակայն, միանշանակ, ռեգիոնալացմանը մեծ թափ հաղորդեց տնտեսությունը: Պետք է հասկանալ, որ միջազգային առևտուրը կարող է ինչպես ներդաշնակեցնել շահերը, այնպես էլ՝ առաջացնել առավել խոր հակասություններ:

Եվ, վերջապես, ռեգիոնալացումն ունի նաև իր կարևոր մշակութային ասպեկտը: Չնայած մշակութային գլոբալացումը կարող է հանդես գալ որպես համահարթեցնող ուժ՝ տարածելով սպառողական կապիտալիզմի արժեքները, այն նաև կարող է կյանքի կոչել բոլորովին հակառակ գործընթացներ: Օրինակ՝ այդ գործընթացների արդյունքում կարող է արթնանալ տեղական մշակույթների, լեզուների և այլնի նկատմամբ հետաքրքրությունը (Ֆուկույամա, 1992): Ավելին, խաթարելով քաղաքական նացիոնալիզմի հիմքերը՝ գլոբալացումն առաջացնում է այնպիսի նախադրյալներ, որոնք ստեղծում են մարդկանց էթնիկ, մշակութային և կրոնական ինքնանույնացման նոր ձևեր: Այս ամենի ոչ այնքան բարենպաստ սցենարը, ըստ Հանթինգթոնի (1996), կարող է ապագայում հանգեցնել «քաղաքակրթությունների բախման», քանի որ, նրա կարծիքով, 21-րդ դարում տարբեր քաղաքակրթությունների ազգերի և խմբերի միջև հակամարտության հիմքերը կլինեն ոչ թե գաղափարախոսական կամ տնտեսական պատճառները, այլ մշակութային գործոնները: Այսպիսով՝ Հանթինգթոնը պնդում է, որ հակամարտության այս դաշտում հիմնական դերակատարները կլինեն *արևմտյան, չինական, ճապոնական, հնդկական, իսլամական, բուդդայական, լատինամերիկյան և ուղղափառ-քրիստոնեական քաղաքակրթությունները*: Հաջորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, նրա կանխատեսմամբ, կբախվեն ոչ թե պետությունները, այլ, ամենայն հավանականությամբ, քաղաքակրթությունները. առաջին հերթին Չինաստանը և Արևմուտքը կամ Արևմուտքը և իսլամական աշխարհը:

Տարածաշրջանային տնտեսական դաշինքները:

Ազատ Առևտրի Հյուսիսամերիկյան Համաձայնագիր (North American Free Trade Agreement, NAFTA) - Ստորագրվել է 1993 թ.-ին Կանադայի, Մեքսիկայի և ԱՄՆ կողմից: Այս կազմակերպությունը ստեղծվեց մասամբ որպես պատասխան թափ հավաքող եվրասիտեգրման գործընթացին, սակայն, ընդհանուր առմամբ, ձգտումները ուղղված են Արևմտյան կիսագնդի շրջանակներում տնտեսական համագործակցության ընդլայնմանը:

Եվրոպական Միություն (European Union) - Ստեղծվել է 1993 թ.-ին Եվրոպական Տնտեսական Համայնքի (հիմնադրվել է 1957 թ.) հիմքի վրա:

Եվրոպական Միության անդամների թիվը 1957 թ.-ից մինչև 2013 թ. աճել է 6-ից 28-ի. այսօր ԵՄ-ն ընդլայնվում է նաև դեպի արևելք: ԵՄ-ն իրենից ներկայացնում է տնտեսական և քաղաքական մակարդակներում տարածաշրջանային ինտեգրման առավել առաջադեմ ձև:

Ասիական-Նադադովկիանոսյան Տնտեսական Համագործակցություն (Asian-Pacific Economic Cooperation, APEC) - Այս ոչ ֆորմալ ֆորումը հիմնադրվել է 1989 թ.-ին 12 պետությունների կողմից: Այսօր նրա անդամների թիվը հասնում է 18-ի և ներառում է Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, Ճապոնիան և ԱՄՆ-ն: Այս երկրների բնակչության ընդհանուր թիվը կազմում է աշխարհի բնակչության 40%-ը և համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 50%-ը:

Հարավ-Արևելյան Ասիական Ազգերի Ասոցիացիա (Association of South-East Asia Nations, ASEAN) - Ստեղծվել է 1967 թ.-ին Բրունեյի, Ինդոնեզիայի, Մալայզիայի, Ֆիլիպինների, Սինգապուրի և Թայլանդի կողմից: Ավելի ուշ ասոցիացիային միացավ նաև Վիետնամը: Այս ասոցիացիայի հիմնական նպատակը ազատ առևտրի գոտու ստեղծումն ու զարգացումն է, որը պետք է ապահովի Հարավ-Արևելյան Ասիայի երկրների տնտեսական անկախությունը:

Մերկոսուր (Mercosur) - Մերկոսուրը ներառում է Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը և Ուրուգվայը. այս երկրներին միացել են նաև Չիլին և Բոլիվիան: Մա Լատինական Ամերիկայում առևտրի ամենախոշոր դաշինքն է, որը ձգտում է իր ազատ առևտրի գոտում ներառել Կոլումբիան, Էկվադորը, Պերուն և Վենեսուելան:

Համաամերիկյան Ազատ Առևտրի Գոտի (Free Trade Area of The Americas, FTTA) - Այս գոտին իրենից ներկայացնում է մի համաձայնագիր, որը ստորագրվել է 1994 թ.-ին Մայամիում համաամերիկյան զագաթնաժողովի ժամանակ և նպատակ ունի ստեղծել ազատ առևտրի գոտի, որն արդեն 2005 թ.-ին պետք է ընդգրկեր ամբողջ Արևմտյան կիսագունդը: Այս գոտում ընդգրկված են 34 ժամանակավոր անդամներ, իսկ գերիշխող դիրքերը զբաղեցնում են ԱՄՆ-ն և Կանադան:

Եվրասիական Տնտեսական Միություն (ԵԱՏՄ) - Մա տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է՝ օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ, հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով:

ԵԱՏՄ-ում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպես նաև համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականությունը տնտեսության բնագավառում:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն են՝ Հաստատանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Ղրղզստանը:

ԵԱՏՄ-ը ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, կոոպերացիայի, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսունակության բարձրացման համար կայուն պայմաններ ստեղծելու նպատակով:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ **գլոբալացումը** (համընդհանրացում, համաշխարհայնացում՝ երկրների տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ համակարգերի միասնականացում, միօրինականացում)՝ այն 20-րդ դարի գլխավոր փոփոխությունն է, որի միտումները խիստ ընդգծվեցին 21-րդ դարի առաջին տասնամյակին: Գլոբալացումը անխուսափելիորեն ստանդարտացնում է կյանքը, ջնջում է ազգային և մշակութային տարբերությունները: «Գլոբալացումը, լինելով տեխնիկական առաջընթացի «հարազատ դուստրը», ստեղծել է տեղեկատվական միջավայր, որը թույլ է տալիս տարբեր երկրների տնտեսություններին ձուլվել համաշխարհային համակարգի մեջ և ապահովել կապիտալի, ապրանքների և ծառայությունների տեղաշարժը» (Ռ. Մուխան): Գլոբալացումը հակասական գործընթաց է. այն ընթանում է **ինտեգրացիոն** (մասերի ամբողջացում, ներգրավում) և **դեգինտեգրացիոն** (**դեգ** - նախաձանց, որ նշանակում է ոչնչացում, հեռացում, բացակայություն կամ աղավաղում) միտումների հաջորդականությամբ: Գլոբալացումը, ծնվելով տնտեսական հարաբերություններում, այնուհետև թևակոխեց հասարակական կյանքի այլ ոլորտներ ևս: Անկասկած է, որ գլոբալացումը տալիս է երկրներին առավելություններ՝ առաջին հերթին համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներին ծանոթանալու, տնտեսական ոլորտում՝ աշխատանքի միջազգային բաժանման մեջ տեղ զբաղեցնելու, ծավալվող քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորություն: Սակայն, գլոբալացումը իր գրավչությամբ հանդերձ այնքան էլ «անմեղ» չէ, քանզի այն սպառնում է ժողովուրդների և պետությունների ազգային շահերին, ինքնության պահպանմանը՝ կատարելով համահարթեցնող գլանի դեր: Պատահական չէ, որ աշխարհում ծավալվում է գլոբալացման հակառակորդների շարժումը: Ուժեղանում է նաև ազգային պետությունների դիմակայությունը: Այս իմաստով հատուկ պատասխանատվություն ունեն տարածքով փոքր, սակայն մշակութային ներուժով հզոր պետությունները՝ իրենց ազգային-պետական շահերի և քաղաքակրթական ինքնատիպության պահպանման գործում: Այդպիսին է մերօրյա Հայաստանը, նշանաբանով՝ «ինտեգրվել՝ չձուլվելով»:

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Իմպերիալիզմ
- Գլոբալացում
- Հյուսիս և Հարավ հակադրություն
- Ռեգիոնալացում (տարածաշրջանացում)
- Եվրոպական Միություն

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է ինքնիշխանությունը:
2. Ի՞նչ է ինտերնացիոնալիզմը:
3. Ի՞նչ է գլոբալացումը:
4. Ի՞նչ հայեցակարգեր գոյություն ունեն գլոբալացման վերաբերյալ:
5. Ի՞նչ է ռեգիոնալացումը:
6. Ի՞նչ տարածաշրջանային դաշինքներ կան:
7. Ո՞րոնք են գլոբալացման նախանշող գործոնները:
8. Ո՞րոնք են գլոբալացմանը նպաստող տնտեսական գործոնները:
9. Ի՞նչ է իր հետ բերում գլոբալ տնտեսությունը. բոլոր պետություններին համար լայն հնարավորություններ, թե անկայունության և անհավասարության խորացում:
10. Ինչպե՞ս, այնուամենայնիվ, գնահատել գլոբալացումը. առասպե՞լ, թե իրականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Շիրինյան Լ.* Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, 208 էջ:
2. *Շիրինյան Լ.* Համարկում՝ տարանջատումով: [Այսրկովկասի համալիր անվտանգ. տեսանկյունը]: Դրոշակ, 2010, Թիվ 2, էջ 21-28:
3. *Ирхин Ю., Зотов В., Зотова Л.* Политология. Учебник. М., Юристь, 2002, 511 с.
4. *Мельвилль А.* Категории политической науки. М., Московский государственный институт международных отношений (Университет) МИД РФ, (РОССПЭН), 2002, 656 с.
5. *Мухаев Р.* Политология. Учебник для студентов юридических и гуманитарных факультетов. М., ПРИОР, 2000, 400 с.
6. *Соловьев А.* Политология. Политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, 559 с.

7. **Уткин А.** Глобализация. Процесс и осмысление, М., 2001, 254 с.
8. **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., 2005, 544с.
9. **Held D.** A Globalizing World. Culture, Economics, Politics, New York, London, 2005, 199 p.

ԹԵՄԱ 17. ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՊՈԼԻՏԻԿԱ)

Երկրաքաղաքականության օբյեկտը և առարկան, հիմնական օրենքները, հասկացությունները և գործառնությունները: «Գեոպոլիտիկա» հասկացությունը, որն ինքնուրույն գիտության վերածման ճանապարհի վրա է, բաղկացած է հունարեն երկու բառերից. geo-երկիր և politicos - պոլիսի (պետության) ձևը, կազմակերպությունը և գործունեությունը, նրա հարաբերությունը քաղաքացու և այլ պետությունների հետ կամ կարճ՝ քաղաքականություն:

«Գեոպոլիտիկա» հասկացության հայերեն համարժեքը հետխորհրդային տարիներին լայն տարածում և կիրառություն գտած **«աշխարհաքաղաքականությունն»** է, որը, սակայն, ավելի ընդհանրական պատկերացում է, քան գիտաքաղաքական ճշգրտություն և պատմականության ներուժ պարունակող **«երկրա(գեո)»** քաղաքականությունը: Նշված տարբերության զգացողությունն էլ որոշ հայ հեղինակների պարտադրում է, հավանաբար, կիրառել «գեոպոլիտիկայի» մի այլ համարժեք՝ «գեոքաղաքականություն»: Նոր առաջարկվող առարկայի բովանդակությունը իր բազմազանության մեջ արտացոլելու և բովանդակային հարստությունը ընդգրկելու նկատառումով մենք կօգտագործենք «երկրաքաղաքականություն» ճշգրիտ տարբերակը:

Որպես գիտաճյուղ՝ երկրաքաղաքականությունը սկսեց ձևավորվել և շրջանառության մեջ մտավ 20-րդ դարում հանձին շվեդ աշխարհագրագետ Ռուդոլֆ Չելենի «Պետությունը որպես կյանքի ձև» (Der Staat als Lebensform) աշխատանքի՝ հրատարակվելով 1916 թվականին: Այն առանձնացավ մինչև այդ գոյություն ունեցող «քաղաքական աշխարհագրությունից»: Չելենի պատկերացումով՝ երկրաքաղաքականությունը գիտություն է պետության՝ որպես աշխարհագրական օրգանիզմի մասին, որը զարգանում է տարածության մեջ:

Դասական իմաստով երկրաքաղաքականությունը դիտվում է որպես պետության աշխարհագրական տարածքի ազդեցություն նրա քաղա-

* Գեո... (հուն. ge - երկիր) - բարդ բառերում ցույց է տալիս բառիմաստի կապը երկրագնդին, երկրի կեղևին և այլն.- *Հայրապետյան Ս.* Օտար բառերի բառարան, 2-րդ վերամշակված հրատ., Եր., 2011: **Գեո**-ի երկրաքաղաքական իմաստի, աշխարհագրական բաղադրիչի լայն ընկալման մասին տե՛ս *Исаев В.* Геополитика. Учебное пособие. СПб., 2006, էջ 10-11:

Գեոպոլիտիկա տերմինը Ռ. Չելենը առաջին անգամ կիրառել է 1889 թվականին Շվեդիայի սահմաններին նվիրված իր հոդվածներից մեկում: Տե՛ս *Sven Holdar.* The ideal state and the power of geography: the life-work of Rudolf Kjellén», Political Geography, vol. 11, n°3, May 1992, p. 307-323.

քական նպատակների և շահերի վրա: Արդի պայմաններում երկրաքաղաքականությունը ընկալվում է ավելի լայն և բազմապլան՝ որպես տարածության և քաղաքականության կապերի ու փոխհարաբերությունների մասին գիտություն: Երկրաքաղաքականությունը ուսումնասիրում և վերլուծում է աշխարհագրական, պատմական, մշակութա-քաղաքակրթական, քաղաքական և այլ ազդեցիկ գործոնների փոխգործությունը, որոնք ազդում են պետության ռազմավարական ներուժի վրա:

Երկրաքաղաքականությունը բաղկացած է իրար հետ սերտորեն փոխկապված և փոխլրացնող երկու մասերից. որպես գիտաճյուղ (**հիմնարար** երկրաքաղաքականություն) և որպես գործնական կիրառության ոլորտ: Առաջինը ակադեմիական մասն է, որը ենթադրում է այնպիսի դատողություններ, որոնք զերծ են ազգային նախապաշարումներից և սուբյեկտիվիզմից: Այստեղ են կատարվում տեսական հետազոտությունները, ինչպես նաև առաջադրվում են նոր գաղափարներ (իդեաներ) և դոկտրիններ: Երկրորդը, որը **կիրառականն** է, դիտվում է գլխավորապես իբրև երկրառազմավարության մաս, որտեղ իրացվում են պետության (պետությունների խմբերի) կենսականորեն կարևոր շահերը:

Երկրաքաղաքականության մեջ կարելի է առանձնացնել երևույթների դիտարկման երկու մակարդակ. **համաշխարհային** երկրաքաղաքականություն (մակրոմակարդակ) և ազգային երկրաքաղաքականություն (միկրոմակարդակ): Առաջինի ուսումնասիրության առարկան միջազգային հարաբերություններն են, երկրորդինը՝ պետությունն ինքնին: Համաշխարհային երկրաքաղաքականությունը երևույթները քննում է երեք ոլորտներում՝ *համամոլորակային, միջազգային գլոբալ և միջազգային տարածաշրջանային* (ռեգիոնալ): Ազգային երկրաքաղաքականությունը ևս երևույթները քննում է երեք ոլորտներում՝ *ազգային-արտաքին, ազգային-ներքին և տեղային* (լոկալ):

Որպես գիտաճյուղ (դիսցիպլին)՝ երկրաքաղաքականությունը ընդգրկում է երկու բաժին՝ **տեսական և էմպիրիկ** (փորձարարական): Որոշ հեղինակներ տեսականը բաժանում են երկու մասի՝ *կրեատիվի* (ստեղծագործականի, նախաձեռնողի) և *պատմագրականի*: Էմպիրիկ երկրաքաղաքականությունը կարելի է բաժանել պատմական և վերլուծական (անալիտիկ) բաղադրիչների, որոնք զբաղված են անցյալում և ներկայում կոնկրետ երկրաքաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ:

Երկրաքաղաքականության գլխավոր օրենքը հիմնարար երկվության (դուալիզմ) օրենքն է, որը դրսևորվում է **մոլորակի աշխարհագրական կառուցվածքի և քաղաքակրթությունների** պատմական դասակարգման (տիպաբանություն) մեջ: Այդ երկվությունը արտահայտվում է **ցամաքային**

հզորության (թելուրոկրատիա) և ծովային հզորության (թալասոկրատիա) հակադրության միջև: Առաջինը դրսևորվում է **ռազմա-ավտորիտար** քաղաքակրթության (օրինակ՝ Հին Սպարտա, Հին Հռոմ), երկրորդը՝ **առևտրական** քաղաքակրթության (Հին Աթենք, Հին Կարթագեն) տեսքով: Այդ երկվությունը, ինչպես գտնում են երկրաքաղաքականության դասականները, հատկապես Ալֆրեդ Մահանը և Հալֆորդ Մակքինդերը, ի սկզբանե իր մեջ կրում է թշնամանքի սաղմեր, որ ընկնելով քաղաքական և ռազմական համապատասխան միջավայր, առաջացնում են երկու տարերքի (հեղուկ, հոսուն և պինդ, մշտական) և մշակութա-պատմական քաղաքակրթությունների (ժողովրդավարության՝ դեմոկրատիայի, և գաղափարաիշխանության՝ իդեոկրատիայի) երկու տեսակների անհաշտ թշնամանք:

Հարյուրամյակներով մայրցամաքային քաղաքակրթությունը (Ցամաք)՝ Սպարտա, Աթենք, Հռոմ, ճնշել է ծովայինին, սակայն հետագայում գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ, առևտրի և այլ գործոնների շնորհիվ ամրապնդվեցին ծովային քաղաքակրթության (Օժվ) դիրքերը: Այստեղից բխում է երկրաքաղաքականության երկրորդ օրենքը՝ մարդկության պատմության մեջ **տարածքի (տարածության) գործոնի հզորացման/ ուժեղացման օրենքը:** Անգլիայի պատմության օրինակը ցցուն է:

Որպես երկրաքաղաքականության հիմնական օրենքի ածանցյալ օրենք հանդես է գալիս **Ցամաքի և Օժվի համադրման օրենքը**, որի արդյունքում առաջանում է «ծովեզերքի գոտի» («ափամերձ գոտի», береговая зона) կամ Rimland՝ թալասոկրատիայի և թելուրոկրատիայի ֆրագմենտ (բեկոր, հատված): Ունենալով զարգացման սեփական տրամաբանություն՝ Rimland-ն այդուհանդերձ իրացվում է երկրաքաղաքական երկվության շրջանակներում (Ալ. Դուգին): Միաժամանակ հանդես գալով որպես գոտի, սահմանային երկրաշերտ՝ ծովային եկվորների կողմից ավիր դիտվում է ոչ թե մայրցամաքի գիծ, այլ մի տարածք, որը կարելի է պոկել մայրցամաքային զանգվածից՝ վերածելով այն բազայի, ցամաքի վրա հետագա հարձակման ռազմական անկլավի (Ն. Նարտով):

Երկրաքաղաքականությունը որպես գիտաճյուղ ունի իր հասկացութային գործիքակազմը, որի հիմնարար հասկացություններն ու տերմինները հանդես են գալիս որպես ունիվերսալ (ընդհանրական) կատեգորիաներ: Դրանցից են՝ երկրաքաղաքական տարածություն, երկրաքաղաքական դաշտ, երկրաքաղաքական տարածաշրջան (ռեզիոն), երկրաքաղաքական գիծ, երկրառազմավարություն (զեոստրատեգիա), սահմաններ, պետության ազգային անվտանգություն, ազգային պետություն, ազգային (պետական) շահեր, ազգային հզորություն, երկրաքաղաքական կոդ (կոդեքս), տա-

րածք, ագրեսիա և էքսպանսիա, ուժերի հաշվեկշիռ (բալանս), աշխարհի երկրաքաղաքական կառուցվածք և այլն:

Երկրաքաղաքականության հիմնական գործառույթներն են՝ *ճանաչողական, ախտորոշման (դիագնոստիկ), կանխորոշման (պրագնոստիկ), կառավարման, գաղափարախոսական* և այլն:

Երկրաքաղաքականության հետզոտության մեթոդաբանությունը, հիմնական հարացույցները: Երկրաքաղաքականության մասնագետների մեծ մասը խուսափում է այս հարցի քննարկումից: Սակայն խնդրի բարդությունը նրանից խուսափելու պատճառ լինել չի կարող: Մինչդեռ երկրաքաղաքական գործընթացները, որոնք տարբեր գործոնների բարդ փոխգործության արդյունք են, թելադրում են օգտվել ինչպես ընդհանուր և այլ գիտություններում կիրառվող մեթոդներից, այնպես էլ մշակել սեփականը: Այս իմաստով գովելի է Վ. Վ. Ժելտովի և Մ. Վ. Ժելտովի առաջարկած մեթոդների համախումբը: Այդ շարքում առաջինը **համակարգային** (սիստեմային) մեթոդն է: Այս մեթոդը թույլ է տալիս հասարակական կյանքի ցանկացած ոլորտ դիտել որպես ամբողջական, բարդ կազմավորված և ինքնակարգավորվող օրգանիզմ: Այդ օրգանիզմը անընդհատ փոխգործում է շրջակա միջավայրի հետ համակարգի «մուտքերի» և «ելքերի» միջոցով: Համակարգային մեթոդին սերտորեն առնչակցվում է **կառուցվածքագործառնականը**, որը հասարակությունը, պետությունը, պետությունների միությունը դիտում է որպես մի համակարգ, որն ունի բարդ կառուցվածք, որի յուրաքանչյուր տարրը (էլեմենտը) օժտված է որոշակի գործառույթով և բավարարում է համակարգի որոշակի պահանջմունքներն ու սպասումները: Համակարգի յուրաքանչյուր տարր գործում է որոշակի «ծրագրով», որը կանխորոշվում է կազմավորման կառուցվածքով: Յուրաքանչյուր միության գլխավոր խնդիրը համակարգի հավասարակշռության պահպանությունն է, նրա տարրերի գործառույթների (դերերի) կանոնավոր կատարումը: Երկրաքաղաքականության համար կարևոր է նաև **պատմահամեմատական** մեթոդի կիրառությունը տարբեր երևույթների ու գործոնների ա) գենեզիսը (ծագումը, ծագումնաբանությունը) հասկանալու և բ) համանմանության (անալոգիա) միջոցով նույն երևույթների ու գործոնների միջև ընդհանրությունները հասկանալու և տարբերությունները իմաստավորելու համար: Գործառնական (ֆունկցիոնալ) մեթոդի հետ ներդաշնակորեն «աշխատում» է **բիհեևորիստական** կամ **վարքաբանական** մեթոդը: Այս մեթոդը քաղաքականության տեսանկյունից 1880 թվականին մեկնաբանել է ամերիկացի գիտնական և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը այն առումով, որ քաղաքականությունը ունի մարդկային չափում, որ մարդկանց վարքագծի գլխավոր մոտիվը հոգեբանական է: Իր ուրույն դերն ունի

երկրաքաղաքականության մեջ քաղաքագիտությունից լայնորեն հայտնի **ինստիտուցիոնալ** մեթոդը, որոնց միջոցով էլ իրականացվում է քաղաքական գործունեությունը պետության մեջ, կուսակցությունների, կազմակերպությունների և այլնի կենսագործունեության մեջ: Այս մեթոդի դերը ցայտուն ձևով դրսևորվում է հետսոցիալիստական երկրների երկրաքաղաքական տարածքում: **Անտրոպոլոգիական** (մարդաբանական) մեթոդը, երկրաքաղաքականության կտրվածքով, շեշտը դնում է ոչ թե սոցիալական երևույթների ուսումնասիրության, այլ մարդու բնույթի իմաստավորման վրա: Այդ մեթոդի կողմնակիցները ուշադրության կենտրոնում են պահում մարդկային վարքագծի մոտիվները, որոնք, նրանց կարծիքով, դետերմինացված են մարդու բնույթով:

Երկրաքաղաքականության մեթոդաբանության զինանոցում առանձին փունջ են կազմում **էմպիրիկ** (փորձարարական) հետազոտությունների մեթոդներն ու հնարքները, որոնք մշակվել են և լայն կիրառություն ունեն սոցիոլոգիայում, վիճակագրության մեջ, կիրեռնետիկայում և այլ գիտություններում: Այստեղ կարևոր են փաստաթղթերի վերլուծությունը, հարցումները, խաղերի տեսությունն ու այլ միջոցներ, մաթեմատիկական ապարատի տիրապետումը:

Յուրաքանչյուր գիտության մեթոդաբանությունը ուղղորդված է հետազոտվող օբյեկտի ամբողջական ճանաչողությանը: Ինչպես ցույց տվեց ժամանակին (1962 թ.) գիտության մեթոդաբան ամերիկացի Թոմաս Կունը («Գիտական հետազոտությունների կառուցվածքը»)՝ յուրաքանչյուր գիտության զարգացումը տեղի է ունենում **հարացույցի** (հուն. *paradeigma*, օրինակ՝ կերպար)՝ «գիտելիքի ձեռքբերման, հիմնավորման ու արժևորման այն եղանակներն ու չափանիշները, որոնք տիպային են դառնում գիտության զարգացման այս կամ այն ժամանակաշրջանում, այս կամ այն բնագավառի համար» (Շ. Գևորգյան), փոփոխման (հերթափոխման, հերթագայության) արդյունքով: Այդ իմաստով՝ երկրաքաղաքական տարածքում նոր երևույթների առաջացումը, որոնց բնույթը այլևս հնարավոր չէ նկարագրել ու բացատրել գիտության նախկին տեսության տերմիններով և հասկացություններով, հանգեցրել է երկրաքաղաքական հարացույցի փոփոխության, որոնք են (ըստ Ռ. Մուխանի)՝

ա) **Ինստիտուցիոնալ-իրավական հարացույց, պետություն կամ ազգ:** Սա կոնցեպտուալ սխեմա է, որը ենթադրում է, որ միջազգային հարաբերությունները պետք է կառուցվեն համաձայն **իրավունքի** սկզբունքների ու նորմերի: Հասարակության ինստիտուտները (օրինակ՝ պետություն, իրավունք, շուկա, ընտանիք, բյուրոկրատիա) մարդկային գործունեության տրամաբանորեն հաջորդական կերպարներ են, որոնց օգնությամբ մարդիկ

արտադրում և վերարտադրում են իրենց նյութական գոյությունը և կազմակերպում են տարածությունն ու ժամանակը:

բ) **Երկրաքաղաքական հարացույց.** միջազգային հարաբերությունները դիտում է որպես պետությունների անընդհատ պայքար համաշխարհային տիրապետության և գլոբալ քաղաքականության ասպարեզում առաջնորդության (լիդերության), տարածքի և հաղորդակցության ուղիների վրա վերահսկողության համար: Գլխավոր փաստարկը ռազմական ուժն է:

գ) **Երկրա(զեռ)տնտեսական հարացույց.** աշխարհ-համակարգային վերլուծության դպրոց: Որոշ հեղինակների կարծիքով պետությունների փոխհարաբերությունները երկրաքաղաքականից անցել են երկրատնտեսական հարաբերությունների հարթություն: Արդի աշխարհը ապրում է երկրատնտեսական օրենքներով, համակարգային աշխարհը ապրում է «աշխարհ-տնտեսություններով» (Ֆերնան Բրոդել):

դ) **Երկրագաղափարախոսական հարացույց.** հիմնված է երկրաքաղաքականության և գաղափարախոսության փոխհարաբերության, նրանց փոխներթափանցման գործընթացի վրա: Այս փոխհարաբերությունից ծնվում է միջազգային հարաբերությունների համակարգի շրջանակներում պետությունների փոխգործության երկու մոդել՝ կոնֆրոնտացիոն (առճակատման) և ինտեգրացիոն (համարկման):

ե) **Երկրաքաղաքակրթական հարացույց.** հետսոցիալիստական երկրաքաղաքականությունը համաշխարհային քառսի մեջ որոշակի «կանոն» գտնելու համար առաջադրեց միջազգային հարաբերությունների մեկնաբանման քաղաքակրթական տեսանկյուն, առաջ մղվեց «մշակութային կողը»: Մեմյուել Հանթինգթոնի կողմից առաջադրվեց «քաղաքակրթությունների բախման» (1993 թ.) հիպոթեզը: Աշխարհի երկրաքաղաքական կառուցվածքը ներկայացվեց (լրացվեց) խոշորագույն հինգ-վեց քաղաքակրթությունների երկխոսության-հակադրության (բախում) սխեմայով:

զ) **Երկրատեղեկատվական հարացույց.** տեղեկատվական հեղափոխությունը 20-րդ դարի վերջերին - 21-րդ դարի սկզբներին հանգեցրեց հետարդյունաբերական նոր հասարակության հայեցակարգին: Սա այն հասարակությունն է, որտեղ տեղեկատվությունը (ինֆորմացիան) դառնում է կարևորագույնը՝ ամեն մի առարկայի հետ համեմատած:

Ինքնին հասկանալի է, որ ներկայացված հարացույցներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, միաժամանակ գերծ չէ թերություններից և, գլխավորը, միակողմանի է: Ուստի յուրաքանչյուրի առավելությունների կիրառումն ու նրանց համադրումն են, որ կարող են ապահովել երկրաքաղաքական հետազոտությունների և կանխատեսումների արդյունավետությունը:

Աշխարհագրական դետերմինզիւր և նրա դերը երկրաքաղաքականության ձևավորման ու զարգացման գործում: Հայ աշխարհագրական դետերմինիստները: Անառարկելի է, որ երկրաքաղաքականությունը, որը 20-րդ դարի երևույթ է, նախորդել է աշխարհագրական միջավայրի վերաբերյալ ուսումնասիրությունների նախորդ պատմությանը, որ ինչպես աշխարհագրական միջավայրի մասին ուսմունքները, այնպես էլ երկրաքաղաքականությունը սերտ առնչակցություն ունեն աշխարհագրական դետերմինիզմի (լատ. determine - որոշում եմ) հայեցակարգի հետ: Եվ այդ իմաստով վերջինս երկրաքաղաքականության աղբյուրներից գլխավորն է, ինչքան էլ 20-21-րդ դդ. այն տրանսֆորմացիայի (փոխակերպում) ենթարկած լինի:

Վերջին շրջանի հետազոտությունները ցույց են տալիս, որ երկրաքաղաքականության աղբյուր են հանդիսանում գիտության երկու այլ ուղղություններ ևս՝ քաղաքակրթական հայեցակարգերն ու ռազմաստրատեգիական դոկտրինները (մտածողության ավանդույթները): Վերջին տասնամյակներին՝ հատկապես Մեյյուել Հանթինգթոնի կողմից «Քաղաքակրթությունների բախում» (1993 թ.) աշխատանքի հրապարակումից հետո, այս ուղղությունը՝ քաղաքակրթական մոտեցումը, դարձավ շատ հրատապ և պահանջված, որի զարգացման գործում մեծ ավանդ ունեն ռուս գիտնական Նիկոլայ Դանիլևսկին, հայ մտածող Լևոն Շանթը, Օսվալդ Շպենգլերը, անգլիացի Առնոլդ Թոյնբին և ուրիշներ:

Ռազմաստրատեգիական դոկտրինների ստեղծման գործում իրենց ավանդն ունեն գերմանացի տեսաբաններ Կարլ ֆոն Կլաուզևիցը, Հելմուտ Կարլ Բեռնհարդ Մոլտկեն (Մոլտկե-ավագ), Հելմուտ Յոհան Լյուդվիգ ֆոն Մոլտկեն (Մոլտկե-կրտսեր), հայ հեղինակներ Մինաս Տեր-Մինասյանը (Ռուբեն), Վահան Նավասարդյանը: Այս շարքի մեջ իր ուրույն տեղն ունի իտալացի մտածող Նիկոլո Մաքիավելին պետության և քաղաքականության վերաբերյալ իր յուրահատուկ հայացքներով, տարածաշրջանային ռազմաստրատեգիական միությունների ստեղծման վերաբերյալ տեսակետով և այլն:

Ինչ վերաբերում է աշխարհագրական դետերմինիզմին, ապա հարկ է նկատել, որ այս ոլորտում առաջադրված գաղափարները թաղված են հեռավոր Հին Աշխարհի ընդերքում, որի համաձայն՝ մարդկային հասարակության զարգացումը շատ բաներով պայմանավորված է աշխարհագրական գործոններով՝ երկրակեղևի կառուցվածք, գետին, կլիմա և այլն, պետական սահմանների հաստատումը հիմնվում է ուժեղի իրավունքի վրա և ամբողջովին կախված է նվաճողների կամքից: Այս ուղղության ճանաչված մտածողներն են Հերոդոտոսը, Հիպոկրատը, Թուկիդիդեսը, Քսենոփանեսն ու Արիստոտելը՝ անտիկ աշխարհից, Իբն Խալլունը՝ արաբ

պատմաբան, և ֆրանսացի Ժան Բոդենը՝ կլիմայի դերի իրենց արժևորումով:

Աշխարհագրական դետերմինիզմի ոլորտում իրենց տեղն ունեն, անշուշտ, ֆրանսիացի Շառլ Լուի Մոնտեսքյուն («Օրենքների ոգու մասին») այն պահանջով, որ որևէ երկրի օրենքները պետք է համապատասխանեն տվյալ երկրի աշխարհագրական պայմաններին, և գերմանացիներ Յոհան Հերդերն ու Ալեքսանդր Հումբոլդը, ըստ որոնց՝ քաղաքակրթության զարգացման համար էական է աշխարհի ամբողջական նկարագրի ձեռք բերումը՝ աշխարհագրության ազդեցությամբ:

Գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտը ցույց է տալիս ֆիզիկական միջավայրի ազդեցությունը «բարոյական աշխարհագրության» (ազգային բնավորություն), քաղաքական աշխարհագրության, «առևտրական աշխարհագրության» (տնտեսություն) և «թեոլոգիական աշխարհագրության» (կրոնի տարածքային տարածում) վրա: Իսկ Գեորգ Հեգելը «Պատմության փիլիսոփայության» մեջ ցույց տվեց տարբեր ժողովուրդների պատմության դետերմինացվածությունը աշխարհագրական գործոններով: «Համաշխարհային պատմության աշխարհագրական հիմքերը» բաժնում շոգ և զգալապես ցուրտ կլիմայի մեջ տեսավ երկրի այն բնական հատկությունները, որոնք ընդմիջտ բացառում են այդ երկրները «համաշխարհային պատմական շարժումներից»:

Եվ ինչպես ցույց տվեց համաշխարհային զարգացման պատմությունը, 19-րդ դարի ողջ ընթացքում, աշխարհագրական դետերմինիզմը աստիճանաբար տեղաշարժվեց Գերմանիա, որտեղ Ֆրիդրիխ Ռատցելը ոչ միայն շարունակեց տվյալ ուղղության մշակումն ու զարգացումը, այլև անցում կատարեց դեպի քաղաքական աշխարհագրություն:

Աշխարհագրական դետերմինիզմը իր ներկայացուցիչներն է ունեցել նաև հայ պատմագրության մեջ: Առաջինը, թերևս, Անտոն Գարագաշյանն է («Քննական պատմություն հայոց»): Հայտնի են Ստեփանոս Պալասանյանի («Հայոց պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», 1890), Լեոյի (Առաքել Բաբախանյան) դատողությունները Հայաստանի աշխարհագրական դիրքի, երկրի նախարարական կառուցվածքի, պետականության ճակատագրի, աշխարհագրական դիրքի և միջավայրի առանձին տարրերի ազդեցության վերաբերյալ՝ երկրի ու մարդկանց հոգեկան աշխարհի վրա (Մինասյան, Կոստան Զարյան): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Խաչիկ Սամվելյանի դատողությունները բնական պայմանների ու մշակույթի զարգացման վերաբերյալ («Հին Հայաստանի մշակույթը. պատմական ակնարկներ», 1931): Ի. Սամվելյանը գրում է. «Ամեն մի ժողովրդի մշակույթի զարգացումը պատկերացնելիս անհրաժեշտ է ի նկատի առնել

այն բնական միջավայրը, որտեղ ընթացել է տվյալ ժողովրդի բովանդակ կյանքը: Բնական միջավայրն է պայմանավորում տվյալ ժողովրդի արտադրողական ուժերի բնույթն ու զարգացումը, նրա տնտեսական գործունեության ամբողջ էությունը»:

Ճիշտ է, որ աշխարհագրական դետերմինիզմն ունի, պայմանավորված ժամանակաշրջանով և գիտությունների զարգացման մակարդակով, որոշակի սահմանափակություններ, չափազանցում է որոշ գործոնների դերը մարդկության զարգացման գործում: Սակայն կրկնակի սխալ կլիներ նրա անտեսումը, մասնավորապես՝ Այսրկովկասի տարածաշրջանում, որտեղ տվյալ դետերմինիզմը երբեմն գործում է դասական «ճշգրտությամբ», որտեղ «երկրի աշխարհագրական դիրքը» (Կարլ Ռիտեր) էապես ազդում է նրա ներքին զարգացման վրա և պայմանավորում նույն երկրի անվտանգության կոորդինատները: Իսկ եթե զլոբալ մակարդակում աշխարհագրական գործոնների ազդեցությունները չեզոքացվում են ինդետերմինիստական գործընթացներով, ապա ռեգիոնալ (տարածաշրջանային) մակարդակում նրանց ազդեցությունը զգալիապես պահպանվում է: Հետևապես, խնդիրը ոչ թե տվյալ հայեցակարգի մերժման մեջ է, այլ նորովի մեկնաբանման և իմաստավորման:

Հայաստանի աշխարհագրական (երկրաքաղաքական) դիրքի բացառիկ նկարագրություն (բնութագիր) է տալիս Մինաս Տեր-Մինասյանը (Ռուբեն). «Ոչ: Հայաստանը մեղք չունի իր աշխարհագրական դիրքով. նա պատճառ չէ մեր թուլացման. ընդհակառակը, յուր դիրքով նա պիտի նպաստեր հայության հզորության, եթե հայության ոգին չպակսեր մեկ բան կազմակերպական արվեստը»: [Հայը] բարձր որակ ունի, բայց նաև մի թերություն, որ զինքը անուժ զանցառելի կդարձնե թե իրեն և թե իրեն հայրենիքի համար... «Մենք փոշիացած ենք մեր այդ ներքին թերության՝ հավաքականության կազմակերպման պակասի հետևանքով» (Ռուբեն՝ Մինաս Տեր-Մինասյան):

Երկրաքաղաքական դարաշրջանները: Նոր ժամանակների սկիզբը համարվում է 1492 թվականը, երբ Կոլումբոսի կողմից հայտնագործվեց Ամերիկան: Դրանով Եվրոպան իր շրջագծի մեջ ընդգրկեց երկրագնդի մի այլ մասը՝ անչափ ընդլայնելով մարդկային հասարակության կենսագործունեությունը: Այսուհետև մարդկությունը զարգացավ **երկրաքաղաքական դարաշրջանների** հաջորդականությամբ կամ, ինչպես նշում են Վ. Ժելտովն ու Մ. Ժելտովը, **ուժային դաշտերի** փոփոխությամբ, որտեղ յուրաքանչյուր շրջան ունի իր **ուժերի հաշվեկշիռը, ազդեցության ոլորտներն ու սահմանները:** Հնագույն (դասական) քաղաքակրթությունների զլոբալ էվոյուցիան, «ցամաքային» Հռոմի և «ծովային» Կարթագենի հակադրությունը

մեծավ մասամբ կանխորոշեցին 20-21-րդ դդ. առաջին տասնամյակների գլխավոր իրողությունները: Որպես կանոն՝ երկրաքաղաքական դարաշրջանները բացում և փակում են, այլ կերպ՝ հաստատագրում են փոխանցումները, համընդգրկուն միջազգային պայմանագրերը:

Այդ շարքի մեջ որպես **առաջին երկրաքաղաքական դարաշրջան** հանդես է գալիս աշխարհի գաղութային բաժանումը Պորտուգալիայի և Իսպանիայի միջև (Թորդեսիլյասի 1494 թ. պայմանագիրը), որով սկզբնավորվեց **Թորդեսիլյասի երկրաքաղաքական դարաշրջանը**՝ աշխարհի երկրաքաղաքական պատկերը իր երկու ստորաբաժանումներով. ա) Պորտուգալիայի և Իսպանիայի հակադրություն և աշխարհի բաժանում միմյանց միջև, բ) հակադրություն Իսպանիայի և Հոլանդիայի միջև, երբ վերջինս հարավի ծովային ուղիների տիրակալ Պորտուգալիային դուրս մղեց իր գերակայության շրջանից:

Երկրորդ երկրաքաղաքական դարաշրջանը բացվում է 1648 թ. Վեստֆալի պայմանագրի հաստատմամբ՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև երեսնամյա պատերազմի ավարտի արդյունքով: **Վեստֆալյան դարաշրջանում** Եվրոպայում ձևավորվեցին ազգ-պետությունները, սկսվեց արդյունաբերական հեղաշրջումների շրջանը. եվրոպական պատմությունը վերածվեց համաշխարհայինի: Այս դարաշրջանը ևս ընդգրկում է իր մեջ աշխարհի երկու նկարագիր (պատկեր). ա) Անգլիան դարձավ խոշոր տերություններից մեկը. Անգլիայի պայքարը Հոլանդիայի հետ պայմանավորեց տվյալ նկարագրի բովանդակությունը, բ) հակամարտությունը աստիճանաբար անցավ անգլո-ֆրանսիական հակադրության հարթություն:

Երրորդը **Վիեննայի երկրաքաղաքական դարաշրջանն** է (1815 թ.), երբ տվյալ պայմանագիրը ձևավորեց երկրաքաղաքական ուժերի նոր դասավորությունը: Սկզբունք դարձավ աշխարհագրական տարածքի կայսերական վերահսկողությունը: Աշխարհի քաղաքական նկարագրի բովանդակությունը կազմեց ծովերում գերիշխանություն ունեցող Անգլիայի և Եվրասիական ցամաքամասում գերիշխող Ռուսաստանի միջև մրցակցությունը: Դրիմի պատերազմից (1854-1856) հետո մրցակցությանը մասնակցում են բազմաթիվ տերություններ: Համակարգը ստանում է «եվրոպական կոնցերտ (համանվագ)» անվանումը, որի էվոլյուցիան հանգեցնում է Անտանտի և Եռյակ միության ձևավորմանն ու հակադրությանը:

Վերսալյան պայմանագիրը (1919) բացեց **երկրաքաղաքական հաջորդ դարաշրջանի** դուռը: Այստեղ ևս առկա է աշխարհի երկու երկրաքաղաքական նկարագիր/պատկեր: Սկզբնական շրջանում գերիշխում են հաղթական երկրները՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ: Երեք կայսրություններ՝ Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա և Օսմանյան, չքանում են աշխարհի

քաղաքական քարտեզի վրայից: Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան և ԽՍՀՄ-ը վտարակ (“изгой”) երկրներ են: Տվյալ «բազմաբևեռ» աշխարհը գոյատևում է մինչև 1930-ական թվականների կեսերը, այնուհետև ձեռք է բերում բլոկային (դաշինքային) կոնֆիգուրացիա (ուրվագիծ)։ **Հակակոմիստերնյան պակտ՝** Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, **Ատլանտյան պայմանագիր՝** Մեծ Բրիտանիա և ԱՄՆ, նրանց հարող Ֆրանսիա և ԽՍՀՄ:

Յալթայի երկրաքաղաքական դարաշրջանը ձևավորվեց պատերազմից հետո, որը սկզբնական շրջանում ներկայանում էր ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի տեսքով, իսկ «սառը պատերազմի» ավարտին, մի կարճ շրջան, ձեռք բերեց «բազմաբևեռ» աշխարհակարգի տեսք և բովանդակություն:

Հ.Գ.- Հետերկրկեն աշխարհի գերիշխանությունից հետո, թվում է, աշխարհը սահում է միաբևեռությունից դեպի բազմաբևեռ աշխարհակարգ: (**Աշխարհակարգ. 1**) միջազգային քաղաքական, միջազգային իրավական, տնտեսական, տեղեկատվական հարաբերությունների համակարգ, որը պատմականորեն ձևավորվել է ժամանակի տվյալ շրջանում, 2) միջազգային հարաբերությունների համակարգի որոշակի որակական վիճակ հասարակական զարգացման այս կամ այն էտապում (Վ. Պուգաչով):

Երկրաքաղաքականության ձևավորման հետ միասին առաջադրվեց «աշխարհի երկրաքաղաքական նկարագիր (պատկեր, տեսք)» հասկացությունը, որը 19-րդ դարի վերջերին նշանակում էր, մի կողմից, հզոր տերությունների՝ մետրոպոլիաների ուժերի հավասարակշռություն, մյուս կողմից՝ գաղութների ահռելի տարածքներ, որը ավարտուն և վերջնական չէր: «Աշխարհի երկրաքաղաքական նկարագիրը» ընկալվում է որպես ուժերի, դերակատարների հզորություն, երկրաքաղաքական սուբյեկտների որոշակի փոխհարաբերություն, որոնցից յուրաքանչյուրը տիրում է և վերահսկում որոշակի տարածք և ջրատարածություն (ակվատորիա, ավազան): Աշխարհի երկրաքաղաքական նկարագիրը միշտ գտնվում է այս կամ այն սահմանի փոխակերպման (տրանսֆորմացիայի, փոփոխության) վիճակում՝ պետության տարածական աճի հետևանքով, ինչպես նաև շնորհիվ առաջատար տերությունների միջև ուժերի տատանվող հարաբերակցության (Բ. Իսան):

Երկրաքաղաքական մտքի էվոյուցիան. նախապատմությունը, զարգացման դասական շրջանը: Յուրաքանչյուր տեսական համակարգի զարգացածության չափը, դինամիզմը և նրա տարրերի ներդաշնակությունը պայմանավորվում է զանազան գործոններով, որոնց թվում գլխավոր դերակատարություն ունի տվյալ համակարգի հիմքը կազմող գաղափարների պատմությունը: Այնտեղ են բացահայտվում գաղափարների զարգացման

տրամաբանությունը և ծավալվում ավանդույթները: Այս իմաստով բացառություն չէ նաև երկրաքաղաքականությունը, որի շրջանակներում առարկան անցել է **աշխարհագրական դետերմինիզմ - քաղաքական աշխարհագրություն - երկրաքաղաքականություն** եռաստիճան զարգացման փուլերով (ներառյալ ժամանակակից մեկնաբանությունները):

Եթե հաղթահարենք գիտությունների զարգացման եվրոպակենտրոն մոտեցումը, պետք է ընդունենք, որ երկրաքաղաքական պատկերացումները աշխարհագրական դետերմինիզմի երանգավորումով ձևավորվել են Հին Արևելքում՝ Չինաստանում և Հնդկաստանում, որտեղից կնշեինք երկու կոթողային տեքստեր. **Կոնֆուցիուսի «Լուև Յույ»-ը** («Զրույցներ և ասույթներ», մ. թ. ա. 551-479 թթ., գլ. 6, ասույթ 23) և հնդիկ բրահման **Կաուտիլյայի «Արտհաշաստրան»** (Քաղաքականության գիտություն կամ պետական կառավարման գիտություն, մ. թ. 2-3 դդ., մաս 2, բաժին 19): Ընդհանրապես, ի մի բերելով Հին Արևելքի քաղաքական պատմության և մտածողների առաջադրած հիմնախնդիրները, կարելի է արձանագրել, որ Հին Չինաստանում և Հին Հնդկաստանում «երկրաքաղաքական խնդիրները համանման են՝ հակադրություն քոչվորներին, տարբեր քաղաքակրթությունների պայքար, թագավորությունների ներքին պայքար գերիշխանության համար, կայսրությունների առաջացում, ծաղկում, մայրամուտ և անկում» (Բ. Իսան):

Աշխարհագրության և քաղաքականության կապը ավելի ցայտուն դրսևորվեց անտիկ աշխարհի մտածողների մոտ: Այստեղ այն ըմբռնումը գոյացավ, որ մարդկության զարգացումը որոշվում է էապես աշխարհագրական գործոններով, իսկ պետական սահմանները հիմնավորվում են ուժեղի իրավունքի վրա և ամբողջովին կախված են նվաճումներից:

Օրինակ՝ հին հույները սկզբում աշխարհը բաժանում էին համաձայն կլիմայական պայմանների: Փիլիսոփա **Պարմենիդեսը** (6-րդ դ. մ.թ.ա.) առաջադրեց հինգը ջերմային գոտիների մասին տեսությունը՝ **շոգ, երկու սառը և երկու միջանկյալ**: Այդ տեսությունից Արիստոտելը (մ.թ.ա. 384-322) բխեցրեց այն հետևությունը, որ հույները բնակեցրին միջանկյալ գոտին (երկրաշերտ) մյուսների հանդեպ ունեցած գերազանցության հետևանքով:

Հետագայում անտիկ աշխարհի աշխարհագրական հայեցակարգերը հաշվի էին առնում պետության բնութագրերից ցամաքի և ծովի գործոնները: Այդ մասին հատկապես խոսել է **Արիստոտելը** «Պոլիտիկայում»: Կրետե կղզու առավելությունները ցուցադրելու համար Արիստոտելը գրում է, թե կարծես Կրետեն բնության կողմից ստեղծվել է Հունաստանի վրա իշխելու համար: **Հիպոկրատը** «Օդերի, ջրերի և տեղանքների մասին» աշխատանքում վերլուծել է աշխարհագրական պայմանների և կլիմայի

ազդեցությունը մարդկային բնույթի (բնավորության) և հասարակարգի վրա: Նա գտնում էր, որ մեծավ մասամբ մարդկանց ձևերը և բարքերը արտացոլում են երկրի բնույթը: Ակնհայտ է, որ քաղաքակրթության զարգացումը, քաղաք-պետությունների աճը առաջացնում էին երկրաքաղաքական խնդիրներ բազմացող ազգաբնակչության կենսատարածքի ընդլայնման պատճառով և այլն:

Անտիկ աշխարհի խնդիրները իրենց արձագանքը ստացան և կարծես փոխանցվեցին արաբ պատմագիր **Իբն Խալդունին** (1332-1406): Վերջինս առաջնային նշանակություն էր տալիս բնական պայմանների, հատկապես՝ կլիմայի ազդեցությանը պատմության և հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Աշխարհագրական դետերմինիզմի զարգացման ճանապարհին կարեվորագույն էտապ է աշխարհագրական խոշոր հայտնագործությունների ժամանակաշրջանը: Ֆրանսիացի Ժան **Բոդենի** (1530-1596) «Պետության մասին» հինգ գրքերում աշխարհագրական գործոնները աստվածային կամքի և մարդկային կամայականության հետ միասին դիտվում են պետական կառուցվածքը ձևավորող դետերմինանտներ: Իսկ ինքնիշխան պետության կախվածությունը շրջակա բնական պայմաններից ժամանակակից երկրաքաղաքականության թեզիսներին մոտ դրույթ է:

Ֆրանսիացի փիլիսոփա, լուսավորիչ Շարլ **Մոնտեսքյոն** (1689-1755) թերևս աշխարհագրական դետերմինիզմի ամենահայտնի դեմքն է: «Օրենքների ոգու մասին» (1748) աշխատանքում նա ժողովուրդների բնավորությունը, բարքերն ու սովորույթները, նրանց տնտեսական և քաղաքական կարգը բացատրում էր աշխարհագրական պայմաններով, կլիմայով: Մասնավորապես՝ Մոնտեսքյոն պահանջում էր երկրի օրենքները համապատասխանեցնել այդ պայմաններին: Մոնտեսքյոն մեծ նշանակություն էր տալիս քաղաքական կարգի, առաջին հերթին պետականության ազդեցությանը աշխարհագրական միջավայրի վրա:

Գերմանացի մտածող Յոհան **Հերդերը** (1744-1805) կարծում էր, որ քաղաքակրթության զարգացումը տեղի է ունենում ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ: Արտաքին ազդակներ էր հաշվում ֆիզիկական բնությունը, առաջին հերթին այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ կլիման, հողը (երկիրը), աշխարհագրական դիրքը: Իսկ Ալեքսանդր **Հումբոլդը** (1769-1859) գտնում էր, որ աշխարհագրությունը պետք է տա աշխարհի ամբողջական պատկերը և ծառայի մարդու կոնկրետ սոցիալական, քաղաքական և տնտեսական նպատակներին:

Իմանուիլ **Կանտի** (1724-1804) տեսակետով՝ ֆիզիկական աշխարհագրությունը ազդում է «բարոյական աշխարհագրության» (ազգային բնա-

վորության), քաղաքական աշխարհագրության, «առևտրական աշխարհագրության» (տնտեսության) և «թեոլոգիական աշխարհագրության» (կրոնի տարածական տեղաբաշխման) վրա: Իսկ Գեորգ **Հեգելը** (1770-1831) տվեց աշխարհակարգի առաջին վերլուծությունը. համաշխարհային պատմության ասպարեզը, ըստ որի՝ Հին աշխարհը բաժանվում է երեք աշխարհագրական տարածության՝ անջրդի սարահարթ (բարձրավանդակ), գետերի միջոցով ջրվող (գետառատ) ցածրավայրեր, մերձափնյա ծովային պետություններ. թվարկված արեալներից որևէ մեկին պատկանելությունը որոշում է ժողովրդի դերը քաղաքական պատմության մեջ:

Գերմանացի Կարլ **Ռիսերը** (1779-1859) առաջադրեց ծովային և ցամաքային պետությունների հակադրության գաղափարը, իսկ ռուս Նիկոլայ **Ռանիլևսկին** (1822-1885)՝ մշակութա-պատմական տիպերի մասին ուսմունքը որպես պատմական և քաղաքական գործընթացների գլխավոր գործող ուժերի, միջքաղաքակրթական հակասությունների անհաղթահարելիության և միջքաղաքակրթական կոնֆլիկտների առաջնության մասին թեզիսները (Ռանիլևսկին որպես օրինակ վերցնում է սլավոնական և ռոմանա-գերմանական մշակութա-պատմական տիպերը): Ռուս պատմաբան Վասիլի **Կյուչևսկին** (1841-1911) առանձնացրեց երեք գործոններ, որոնք վճռական ազդեցություն են գործում քաղաքական պատմության վրա. դրանք են՝ երկրի աշխարհագրական դիրքը, ժողովրդի խառնվածքը և պատմական ավանդույթները:

Ապացուցված է, որ աշխարհագրական դետերմինիզմի շատ գաղափարներ ու քաղաքական աշխարհագրության՝ որպես ինքնուրույն գիտաճյուղի ձևավորումը պարտական են գերմանացի աշխարհագրագետ Ֆրիդրիխ **Ռաուցելին** (1844-1904): Ըստ Ռաուցելի՝ պետության աճը համընդհանուր է, ունի համապարփակ միտում: Պետության նպատակը նոր տարածքների նկատմամբ քաղաքական վերահսկողության հաստատումն է: Այսինքն՝ էքսպանսիան պետության նպատակն է: Խոշոր պետությունների ծագումն ու աճը տեղի է ունենում փոքր երկրների կլանման ճանապարհով: Էքսպանսիայի գլխավոր օբյեկտները շրջապատի ֆիզիկական օբյեկտներն են՝ ծովային ափերը, խոշոր գետերի հոսանքները, հանքի աղբյուրները: Խոշոր տերությունների ծավալման ձգտումները ոչ միայն ցամաքային, այլև ծովային ուժերի զարգացում են պահանջում:

Շվեդ Ռուդոլֆ **Չելենը** (1864-1922), ինչպես ասվել է, առաջինը օգտագործեց «երկրաքաղաքականություն» («գեոպոլիտիկա») հասկացությունը հետևյալ բովանդակությամբ. *պետությունը պատկերացվում է որպես աշխարհագրական օրգանիզմ՝ մարմնացած տարածության մեջ: Պետությունը սահմանվում է գոյության համար պայքարով, որն ընդունում է կենսա-*

տարածքի համար պայքարի ձև: Այդ պայքարում վճռորոշ դեր է խաղում ուժի գործոնը: Գոյության համար պայքարի պայման են տարածական ընդարձակումը (էքսպանսիա), տարածքային միաձուլվածությունը (մոնոլիտ, կոմպակտ) և տեղաշարժի ազատությունը (վերահսկողություն «հաղորդակցման տարածքի», գլխավորապես ծովային ճանապարհների վրա):

Ամերիկացի ծովակալ Ալֆրեդ **Մահանը** (1840-1914) երկրաքաղաքական գլխավոր գործոն էր համարում ծովային տարածքի վրա հսկողության սահմանումը: Համաշխարհային տիրապետության հասնելու հիմքը «ծովային ուժն» է հետևյալ բանաձևով՝ ռազմական և առևտրական նավատորմեր՝ զուգորդված ռազմածովային բազաներով: Ծովային տերությունները ակնհայտ առավելություններ ունեն ցամաքայինների հանդեպ, որոնց թուլացնելու արդյունավետ միջոցը «հաղորդակցական տարածություններից» նրանց մեկուսացումն է: Իսկ անգլիացի աշխարհագրագետ Հալֆորդ **Մակքինլեյը** (1861-1947) առաջին անգամ մշակեց աշխարհի ռազմավարական/երկրաքաղաքական մոդելը: Ամբողջ աշխարհը Մակքինլեյի կողմից բաժանվեց երեք համակենտրոն (կոնցենտրիկ) զոնաների (երկրաշերտ, երկրագոտի)՝ «**Եվրասիական հարթլենդ**» [հարթլենդ՝ միջուկ-երկիր] (Եվրասիայի կենտրոնական տարածություն), «**ներքին կիսալուսին**» (Եվրասիայի մերձափնյա տարածություն) և «**արտաքին կիսալուսին**» (մնացած ողջ աշխարհը): Ընդսմին «ներքին կիսալուսինը» քաղաքակրթության ամենաինտենսիվ զարգացման երկրաշերտն (զոնա) է, իսկ «Եվրասիական հարթլենդը» տիրապետում է աշխարհի վրա գերիշխելու լավագույն պայմաններին: Մակքինլեյը ձևակերպեց ցամաքային հզորության հիմնական բանաձևը. «Նա, ով վերահսկում է *Արևելյան Եվրոպան, նա տիրում է հարթլենդին, նա, ով տիրում է հարթլենդին, տիրում է Համաշխարհային Կղզուն, նա, ով տիրում է Համաշխարհային Կղզուն, տիրում է աշխարհին*»:

Ֆրանսիացի գիտնական Պոլ Վիդալ **դը լա Բլաշի** (1845-1918) աշխատանքները ընկած են երկրաքաղաքականության «մարդաբանական դպրոցի» հիմքում: Նրա մտակառույցների հիմքում ոչ թե, այս պարագայում, տարածությունն է, այլ մարդը, որը այնպիսի ակտիվ ուժ է, որ վերակազմելու է աշխարհագրական աշխարհը: Վիդալ դը լա Բլաշը առաջադրեց միասնական եվրոպական երկրաքաղաքական տարածքի կառուցման գաղափարը՝ միջպետական համագործակցության և հաղորդակցական ցանցի զարգացման հիմքի վրա: Իսկ գերմանացի գիտնական գեներալ Գարլ **Հաուսհոֆերի** (1869-1946) կարծիքով՝ երկրաքաղաքական գլխավոր հակամարտությունը «ծովային» և «ցամաքային» տերությունների միջև է: Նա գտնում էր, որ պետք է ստեղծել **Բեռլին-Մոսկվա-Տոկիո** առանցքի ցա-

մաքային բլոկ՝ «ծովի ուժերին»՝ Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի միությանը դիմակայելու համար:

Ժամանակին ուրույն մի հայեցակարգ առաջադրեց Նիկոլաս **Սփայքմենը** (1893-1943), այսպես կոչված **ռիմլենդի** (առափնյա հող) հայեցակարգը, որի էությունը հանգում է նրան, որ ԱՄՆ-ը վերահսկողություն սահմանելով ահռելի/հսկայական աղեղի վրա, որ գոտևորում է Եվրասիայի տարածքը, պետք է իր ազդեցությանը ենթարկի հարթլենդը, հատկապես ցամաքային գլխավոր տերությունը՝ ԽՍՀՄ-ը, և նպաստի Եվրասիայում ազատության և ժողովրդավարության հաստատմանը:

Սփայքմենը ձևակերպեց նաև ծովային գերիշխանության բանաձևը. *«Նա, ով տիրում է Ռիմլենդին, նա տիրում է Եվրասիային, նա, ով տիրում է Եվրասիային, աշխարհի ճակատագիրը վերցնում է իր ձեռքերի մեջ»:*

ՀԻՇԵ՛Ք ԱՅՍ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Երկրաքաղաքականություն
- Երկրաքաղաքականության գործառույթներ
- Տարածաշրջան և համաշխարհային երկրաքաղաքականություն
- Ծովային տարածք
- Երկրառագմավարություն
- Ազգային պետություն
- Համակարգային մեթոդ
- Կառուցվածքագործառնական մեթոդ
- Պատմահամեմատական մեթոդ
- Վարքաբանական մեթոդ
- Աշխարհագրական դետերմինզիմ
- Քաղաքական աշխարհագրություն
- Երկրաքաղաքական դարաշրջան
- Ուժային դաշտեր
- Ուժերի հաշվեկշիռ
- Երկրաքաղաքական դասական շրջան
- Երկրաքաղաքական մտքի եվոլյուցիա

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է երկրաքաղաքականությունը:
2. Ո՞րն է երկրաքաղաքականության գլխավոր օրենքը:
3. Որո՞նք են երկրաքաղաքականության հասկացությունները:

4. Ի՞նչ գործառույթներ ունի երկրաքաղաքականությունը:
5. Որո՞նք են երկրաքաղաքական գործընթացների հանդեպ կիրառվող հիմնական հարացույցները:
6. Տվյալ հարացույցները ի՞նչ նշանակություն ունեն:
7. Ինչպե՞ս կարելի է սահմանել երկրաքաղաքականության մեթոդաբանությունը:
8. Ի՞նչ է աշխարհագրական դետերմինիզմը:
9. Ի՞նչ փուլերով է անցել երկրաքաղաքականության ձևավորումը:
10. Ի՞նչ է երկրաքաղաքական դարաշրջանը:
11. Որո՞նք են այդ դարաշրջանները (թվարկել):
12. Ո՞րն է Կոնֆուցիոսի տեսակետը:
13. Ո՞րն է «Արտհաշաստրայի» ասույթի իմաստը:
14. Ո՞ր հեղինակներն են դասական շրջանի հայտնի դեմքերը. ի՞նչ աշխատանքներ են գրել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ալիշան Ղ.* Քաղաքական աշխարհագրություն: Վիեննա, 1853:
2. *Մինասյան Մ.* Հայաստանի պատմության աշխարհագրական հիմքերը: Հայրենիք, Բոստոն, 1925, հուլիս, էջ 41-58, 1925 օգոստոս, էջ 59-81:
3. *Նավասարայան Վ.* Նեղուցները. Վուսիոր և Դարդանել: Թրքական ջրուղիները և Հայ դատը: Կահիրե, 1947, 477 էջ:
4. *Ներսիսյան Ա.* Հայաստանը աշխարհաքաղաքական մեծ խաղատախտակում, Վանաձոր, 2013, 332 էջ:
5. *Շանթ Լ.* Մեր անկախությունը: Պոսթըն, 1925, 306 էջ:
6. *Շիրինյան Լ.* Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, 208 էջ:
7. *Շիրինյան Լ.* Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Եր., 2004, 188 էջ:
8. *Շիրինյան Լ.Ղ.* Մըր Հալֆորդ Ջոն Մակքինդեր: «Նորք», 2004, №3, էջ 150-155:
9. *Շիրինյան Լ.* Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը: <http://armpolsci.com/>
10. *Ոսկանյան Ա.* Աշխարհագրական դետերմինիզմը հայ պատմագրության մեջ, Պատմաբանասիրական հանդես N2, 1996, էջ 42-62:
11. *Վալեսյան Ա., Վալեսյան Լ.* Քաղաքական աշխարհագրություն, Երևան, 2009, 336 էջ:
12. *Василенко И.* Геополитика современного мира. Учебник для бакалавров. 3-е изд., перераб. доп. М., 2013, 420 с.
13. *Геополитика.* Антология. Сост. Н.Н. Ашенкампф, С.В. Погорельская. М., 2006, 1004 с.

14. *Дугин А.* Геополитика: Учебник для вузов. М., 2011, 583 с.
15. *Желтов В.В. Желтов М.В.* Геополитика: история и теория. Учебное пособие. М., 2009, 448 с.
16. *Исаев Б.* Геополитика: Уч. пособие, Сб., 2006, 384 с.
17. *Колосов В., Мироненко Н.* Геополитика и политическая география: Учебник для вузов. М., 2002, 479 с.
18. *Михайлов А.* Эволюция геополитических идей. М., 1999, 184 с.
19. *Мухаев Р.* Геополитика. 2-е изд., перераб. доп. М., 2010, 839 с.
20. *Нартов Н.* Геополитика: Учебник для вузов. М., 2004, 544 с.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ալեքսանյան Ա.** Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր. տեսություն և արդիականություն, Եր., «Վան Արյան», 2009, 300 էջ:
2. **Ալիշան Ղ.** Քաղաքական աշխարհագրություն: Վիեննա, 1853:
3. **Գաբրուլյան Կ.** Քաղաքական մշակույթ. հատուկ դասընթաց, ԵՊՀ, 2007, Եր., 92 էջ:
4. **Ղահրամանյան Կ.** Քաղաքագիտություն. բացատրական բառարան: Եր., 2003, 136 էջ:
5. **Մակլին Ա.** Օքսֆորդի բառարան. քաղաքագիտություն և քաղաքականություն. թարգմ. անգլ., Եր., 2003, 592 էջ:
6. **Մինասյան Մ.** Հայաստանի պատմության աշխարհագրական հիմերը: Հայրենիք, Բոստոն, 1925, հուլիս, էջ 41-58, 1925 օգոստոս, էջ 59-81:
7. **Նավասարդյան Վ.** Նեղուցները. Վոսփոր և Դարդանել: Թրքական ջրուղիները և Հայ դատը: Կահիրե, 1947, 477 էջ:
8. **Ներսիսյան Ա.** Հայաստանը աշխարհաքաղաքական մեծ խաղատախտակում, Վանաձոր, 2013, 332 էջ:
9. **Շանթ Լ.** Մեր անկախությունը, Պոսթըն, 1925, 306 էջ:
10. **Շափադաթյան Հ.** Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, Եր., 2007, 160 էջ:
11. **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Եր., 2004, 188 էջ:
12. **Շիրինյան Լ. Ղ.** Սըր Հալֆորդ Ջոն Մակքինդեր: «Նորք», 2004, №3, էջ 150-155:
13. **Շիրինյան Լ.** Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը: <http://armpolsci.com/>
14. **Շիրինյան Լ.** Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, 208 էջ:
15. **Շիրինյան Լ.** Համարկում՝ տարանջատումով: [Այսրկովկասի համալիր անվտանգ տեսանկյունը]: Դրօշակ, 2010, Թիվ 2, էջ 21-28:
16. **Ոսկանյան Ա.** Աշխարհագրական դետերմինիզմը հայ պատմագրության մեջ, Պատմաբանասիրական հանդես N2, 1996, էջ 42-62:
17. **Մուքիսյան Հ.** Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ: Եր. 2009, 268 էջ:
18. **Վաղեսյան Ա., Վալեսյան Լ.** Քաղաքական աշխարհագրություն, Երևան, 2009, 336 էջ:
19. **Քաղաքագիտություն:** Ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար. Եր., 2006, 586 էջ:
20. **Քաղաքագիտություն:** Հանրագիտական բառարան: Եր., 2004, 487 էջ:
21. **Քեղյան Գ.** Քաղաքական կուսակցություններ, Եր., 1996, 266 էջ:
22. **Քեղյան Գ.** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, 288 էջ:

23. **Քոչարյան Տ.** Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, 374 էջ:
24. **Օրդրիշանյան Է.** Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն: Եր., 2010, 228 էջ:
25. **Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.** Сравнительная политология сегодня: Мировой обзор: Учебное пособие/ Сокр. пер. с англ. А. С. Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля. М., 200, 537 с.
26. **Антология мировой политической мысли.** Т. 2. Зарубежная политическая мысль. XX век М., 1997, 831с.
27. **Арендт Х.** Истоки тоталитаризма. М., 1996, 672 с.
28. **Аристотель.** Политика. Афинская полития. М., 1997, 487 с.
29. **Арон Р.** Демократия и тоталитаризм. М., 1993, 303 с.
30. **Ашин Г.** Современные теории элит. Критический очерк. М., Междунар. отношения, 1985, 256 с.
31. **Бегунов Ю., Лукашев А., Понидленко А.** 13 теорий демократии. Санкт-Петербург, 2002, 242 с.
32. **Бжезинский З.** Великая шахматная доска. М., 1998, 256 с.
33. **Боришполец К.** Методы политических исследований. Учебное пособие для студентов вузов. 2-е изд. испр. и доп. Аспект Пресс, М., 2010, 230 с.
34. **Василенко И.** Политология. 2-е изд., перераб. и доп., Юрайт-Издат., 2009, 398 с.
35. **Вебер М.** Политика как призвание и профессия, Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл. П. П. Гайденко. М., 1990, 808 с.
36. **Гаджиев К.** Политология. Базовый курс. Учебник. 2-е изд., перераб. и доп. М., 2001, 505 с.
37. **Геополитика.** Антология. Сост. Н.Н. Ашенкампф, С.В. Погорельская. М., 2006, 1004 с.
38. **Гончаров Д.** Теория политического участия. Москва, 1997, 208 с.
39. **Грей Дж.** Поминки по Просвещению. Политика и культура на закате современности. М., 2003, 368 с.
40. **Даль Р.** Полиархия. участие и оппозиция. М., 2010, 288 с.
41. **Дугин А.** Геополитика: Учебник для вузов. М., 2011, 583 с.
42. **Дюверже М.** Политические партии, Москва, 2000, 558 с.
43. **Енгоян А.** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. Ер., Изд-во РАУ, 358 с.
44. **Желтов В., Желтов М.** Геополитика: история и теория. Учебное пособи. М., 2009, 448 с.
45. **Жиро Т.** Политология. Пер. с польск., Харьков, 2006, 428 с.
46. **Зарубежная политология:** Словарь-справочник под ред. А.В. Миронова, П.А. Цыганков, М., 1998.
47. **Ирхин Ю., Зотов В., Зогова Л.** Политология. Учебник. М., Юристь, 2002, 511 с.
48. **Исаев Б.** Геополитика: Уч. пособие, Сб., 2006, 384 с.

49. **Кант И.** Метафизика нравов/ Соч. 8, Т. 6. М., 1994, 550 с.
50. **Колосов В., Мироненко Н.** Геополитика и политическая география: Учебник для вузов. М., 2002, 479 с.
51. **Кретов Б., Горбунов А.** Прикладная политология: Учебное пособие. Высшая школа, М., 2009. 303 с.
52. **Лассуэлл Г.** Психопатология и политика. М., изд., РАГС, 2005, 352 с.
53. **Лебедева М.** Мировая политика, М., 2007, 365 с.
54. **Лейпхарт А.** Демократия в многосоставных обществах. М., 1997, 287 с.
55. **Миллс Р.** Властвующая элита, М., 1959, 543 с.
56. **Михайлов А.** Эволюция геополитических идей. М., 1999, 184 с.
57. **Мухаев Р.** Политология. Учебник, М., 2009, 640 с.
58. **Нартов Н.** Геополитика: Учебник для вузов. М., 2004, 544 с.
59. **Ожиганов Э.** Стратегический анализ политики. Теоретические основания и методы. Уч. пос. М., 2009, 272 с.
60. **Парето В.** Трансформация демократии, М.: Издательский дом «Территория будущего», 2011, 207 с.
61. **Платон.** Государство, М., 2005, 576 с.
62. **Политология.** Лексикон. Под ред. А.И.Соловьева М., 2007, 800 с.
63. **Политическая энциклопедия.** Рук. проекта Г.Ю. Семигин. Т. 1, 750 с., Т. 2, 702 с.
64. **Путачев В.** Политология. Справочник студента. М., 1999, 574 с.
65. **Рагозин Н.** Очерки современной демократии. Донецк, 2003, 248 с.
66. **Соловьев А.** Политология. Политическая теория и политические технологии, 2-ое изд., перераб. и доп. М., 2008, 575 с.
67. **Теория попитки:** Уч. пос. под ред. Б.А.Исаева. Спб., 2008, 464 с.
68. **Токвиль А.** Старый порядок и революция. СПб, 2008, 248 с.
69. **Уткин А.** Глобализация. Процесс и осмысление, М., 2001, 254 с.
70. **Фукуяма Ф.** Сильное государство. Управление и мировой порядок в XXI веке, М., 2006, 220 с.
71. **Харрисон Л., Хантингтон С.** Культура имеет значение. М., 2002, 320 с.
72. **Хейвуд Э.** Политология. 2-ое изд., пер. с англ., М., 2005, 544 с.
73. **Цыганков П.** Власть и демократия. Зарубежные ученые о политической науке. М., 1992, 252 с.
74. **Шаран П.** Сравнительная политология, Ч.1. М., 1992, 352 с.
75. **Шестопад Е.** Политическая психология. М., ИНФРА-М, 2002, 448 с.
76. **Шульман Е.** Законотворчество как политический процесс. М., Московская школа гражданского просвещения, 2014, 184 с.
77. **Carsten A., Dag A.** Comparisons, Regimes, Elections, Finland, 2012, 354 p.
78. **Dahl R.** Polyarchy: Participation and Opposition. New Heaven: Yale University Press, London, 1971, 74 p.
79. **Easton D.** The Political System: An Inquiry into the State of Political Science. New York: Alfred A. Knopf. 1953, 320 p.
80. **Held D.** Models of Democracy, Cambridge, 2006, 349 p.

81. **Held D.** A Globalizing World. Culture, Economics, Politics, New York, London, 2005, 199 p.
82. **Heywood A.** Political Ideologies: An Introduction 5th Edition, Palgrave Macmillan; 5th edition, 2012, 392 p.
83. **Jeffrey C. Goldfarb.** Reinventing Political Culture: The Power of Culture versus the Culture of Power. 2011, 200 p.
84. **Kellerman B.** Political Leadership: A Source Book (Pitt Series in Policy and Institutional Studies), University of Pittsburgh Press, 1986, 480 p.
85. **Lijphart A.** Patterns of Democracy, Yale University Press, 1999, 351 p.
86. **Milbrath L.** Political Participation. Chicago, 1965, 364 p.
87. **Robert A. Nye.** The anti-democratic sources of elite theory : Pareto, Mosca, Michels, SAGE, 1977, 60 p.
88. **Sartori G.** Parties and Party Systems: A Framework for Analysis, Volume I by Cambridge, Cambridge University Press, 1976. 370 p.
89. **Zittoun P.** The Political Process of Policymaking, Palgrave Macmillan UK, 2014, 186 p.

Սրբազրիչ՝ Գ.Վ. Անանյան

ԼԻՄՈՒՇ

Չափսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:
Ծավալ՝ 15.5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 300:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ» -ի տպարանում:
ք. Երևան, Ավան, Դ. Մալյան 45,
հեռ.՝ 010 62-22-20, 060-74-22-99, E-mail: info@limush.am